«Նա, ով չի նորոգում և բարձրացնում նախնիների առաքինությունը՝ ամոթ ու նախատինք է իր պապերի համար և մի նոր անեծք» (Սիրաք 20:28)

Ահ· Պատոս Գրքոյրքին ր ոն· Ընտաց Ընտմամարմոց

Սուրբ հայրն Անտոն յայց ել առ քեզ, սբ հայր Պօղոս պաշտպան լեր մեզ:

«Հիշեցեք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծո խոսքն ասացին: Նայելով նրանց կյանքի ընթացքի վիճակին, հետևող եղեք նրանց հավատին» (Եբրայ. 13:7-8):

Գիրք Ը

Աշխարհսիրության և արծաթսիրության մասին

Ծուլության, ձանձրույթի և թախիծի մասին

Ընդհանուր խրատներ

ԱՌԱՋԱԲԱՆ

«Սեր հանուն Հիսուս, սիրով քո ճմլյա, սիրտ իմ քարեղեն»
(սբ. Ներսես Շնորհալի)

Ութերորդ գրքույկով Աստծո ողորմությամբ ավարտում ենք «Խրատանի ապաշխարության» մատենաշարը: Ի՞նչն էր խրատանիի նպատակը, արդյո՞ք միայն այն, որ մենք ճանաչենք ու նմանվենք մեր ճգնավոր հայրերին՝ նմանակելով նրանց ճգնությունները: Իհարկե ոչ, այլ այն միայն, թե ինչպես հայրերն իրենց ճգնություններով հասան այն բանին, թե ինչպես սիրեն իրենց Տեր Աստծուն՝ խոսքի համեմատ, թե. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, և քո ամբողջ հոգով, և քո ամբողջ զորությամբ, և քո ամբողջ մտքով, և պիտի սիրես քո ընկերոջը ինչպես քո անձը» (Ղուկ. 10:27): Սա էր իրականում նրանց կյանքի նպատակը և իրենց փրկության գրավականը, ինչպես որ Տերն ասաց սիրո համար. «Այդ արա և կըփրկվես» (Ղուկ. 10:28): Այո, սիրենք և կփրկվենք, բայց շատերը կասեն, թե. «Դրանից էլ հեշտ բան, էլ ինչի՞ համար են այդքան ճգնություն, ժուժկալություն, առաքինի գործեր, եթե միայն սիրելով էլ կարող ենք փրկվել և, մանավանդ որ, սիրում ենք մեր Տեր Աստծուն և մերձավորին»: Նման ձևով և շատ ավելիով սիրում էր Տիրոջը և Պետրոս առաքյալը, բայց իր անձնազոհ սիրո խոստումներից մի քանի ժամ իսկ չանցած երեք անգամ ուրացավ Նրան: Ուրեմն, պարտ ենք քննել, թե ճշմարի՞տ սեր է առ Տեր, որ մենք ունենք, թե՞ ուղղակի զգացմունքների առատություն է, որի մասին գրված է. «Զգացմունքներին մի վստահեք, քանի որ նրանք անցողիկ են»: Ուրեմն, ի՞նչ սիրո մասին է խոսքը: Պողոս առաքյալը Սուրբ Հոգու

պտուղները թվարկելիս ասում է նաև սիրո մասին: Այսինքն, մի բան, որ տրվում է ի վերուստ, այսինքն, սեր ասելով նկատի չունենք մեր մարդկային տկար զգացմունքները, այլ այն, որ Աստված ինքն է մեզ պարգևում. «Իսկ Հոգու պտուղն այս է՝ սեր» (Գաղատ. 5:22), ուրեմն, եթե վերըստին նորոգվելով արժանանանք դառնալ Սուրբ Հոգու տաճար, այնժամ էլ կպտղաբերենք այս երկնային պտուղը՝ սերը: Ուրեմն, ճգնությունների նպատակը մեկն է, որ արժանանանք այդ երկնառաք սիրուն: Շատերը, ցավոք, տրված մարդկային զգացմունքներին ցընծությամբ և ուրախությամբ են արտաբերում Տիրոջ անունը, բարձրաձայն ալելուաներ և փառքեր տալով, բայց Աստված պաշտվում է «հոգիով և ճշմարտությամբ» և ոչ միայն լեզվով: Իսկ ինչպես ստանալ այս սերը: Հայրերն ասում են, թե հարկ չկա դրա համար աղոթել և խնդրել, ուղղակի պետք է ջանալ և խնդրել, որ Աստծո շնորհով կարողանանք մաքրվել մեր անձի մեջ եղած ամեն տեսակի աղտեղություններից, իսկ Սուրբ Հոգու շնորհները, որոնց մեջ և սերը, ինքնըստինքյան կիջնեն այդ սրբված անոթի մեջ: Այսինքն, ճգնության և ջանքի նպատակը մեկն է՝ մաքրվել մեղքերից, կրքերից և չար սովորություններից, իսկ մնացածը ինքնըստինքյան կլինի: Անտոն Անապատականը մեծ և երկարատև ճգնություններից հետո, որի մղումն ուներ Աստծո երկյուղի պատճառով, այսպես էր ասում. «Ես Աստծուց էլ չեմ վախենում, քանի որ սիրում եմ Նրան»: Տեսնում ենք, որ երկարատև ճգնությունները անապատի խորքում երկար ժամանակ անց նոր պտղաբերեցին ճգնավորի մեջ ճշմարիտ պտուղը՝ սերը: Իսկ մենք անտես անելով մեր մեղքերի մեջ ընկած վիճակը, ճառում ենք սիրուց և անհավատներին էլ ցույց ենք տալիս, թե իբր, ինչ մեծ սեր ունենք Աստծո հանդեպ, որից իրականում, ցավոք, շատ հեռու ենք: Եվ ահա, թե ինչպիսի խորհուրդ է տալիս Պետրոս առաքյալն այդ երանելի սերը ձեռք բերելու համար. «Ամեն ջանք գործադրելով՝ ձեր հավատով առաքինություն ձեռք բերեք, առաքինությամբ՝ գիտություն, գիտությամբ՝ ժուժկալություն, ժուժկալությամբ՝ համբերություն, համբերությամբ՝ աստվածպաշտություն, աստվածպաշտությամբ՝ եղբայրսիրություն, եղբայրսիրությամբ էլ՝ սեր» (Բ Պետրոս 1:5-8):

Տեսնում ենք, որ առաքյալը հավատքի հիմքի վրա կառուցված տան յոթերորդ հարկում դասեց սերը, և եթե այս կառույցի մի հարկն էլ բացակայի, ինքնըստինքյան տունը չի կառուցվի, այսինքն, հինգերորդ հարկի վրա յոթերորդը չենք կարող դնել, մի առաքինությունը, ըստ առաքյալի, բխում է մյուսից, և եթե մենք մեծ նախանձախնդրությամբ չջանանք, որ կառուցենք մեր հոգևոր կյանքում թվարկված ամեն մի հարկը, ուրեմն, ինքնըստինքյան չենք հասնի յոթերորդ հարկին, այսինքն՝ սիրուն: Իսկ այն, ինչը մենք սեր ենք անվանում, առանց անցնելու այս ճանապարհով, ընդամենը խաբեություն է և ուրիշ ոչինչ, ինչպես որ շարունակում է առաքյալը ասելով «Իսկ նա, ում մեջ այս բաները չկան, կույր է կամ կարճատես» (Բ Պետրոս 1:9): Սուրբ հայրերը իմաստությամբ էին քայլում և խուսափում սատանայական խաբկանքներից և ոչ մի արժեքավոր բան, որ շատ էժան գնով էին իրենց առաջարկում, մերժում էին, քանզի գիտեին, որ դա կեղծիք կլինի, որովհետև թանկարժեք բանը մեծ գին է պահանջում: Ուրեմն, եթե խոնարհությունը, հեզությունը, համբերությունը, աստվածպաշտությունը և այլ առաքինությունները ձեռք են բերվում մեծ ճգնությամբ՝ այսինքն՝ մեծ գնով, ուր մնաց սա, բոլոր առաքինությունների գլուխը՝ սերը, որ ամենաթանկարժեքն է: Այն ձեռք բերելու համար է, որ ասվեց, թե. «Գնաց իր ամբողջ ունեցվածքը վաճառեց և եկավ գնեց հողակտորը, որի մեջ գանձն էր»: Չէ՞ որ Սուրբ գիրքն ասում է. «Աստված սեր է», ուրեմն, եթե այդ Սեր-Աստվածը չբնակվի մեր հոգիների մեջ, ինչպե՞ս կարող ենք մենք սիրել, իսկ Աստված, որ բնակվում է սրբություն-սրբոցում, անմերձենալի լույսերի մեջ, երբեք չի իջնի բընակվելու կրքոտ և մեղքերով լեցուն անոթների մեջ: «Երանելի է մարդը, որն իր մեջ ունի Աստծո սերը, որովհետև նա իր մեջ Աստծուն է կրում: Ում մեջ սեր կա, նա Աստծու հետ միասին վեր է ամեն ինչից» (Եփրեմ Ասորի): Դրա համար էլ հարկ է ճշմարիտ պատկերացում ունենալ Աստվածային սիրո մասին, որով որ կոչ է անում լցվել Սուրբ գիրքը: Ուրեմն, «Խրատանի ապաշխարության» մատենաշարի նպատակն այն էր, որ մենք կարողանայինք սրա միջոցով տեսնել մեր միջի արգելքները և ջանալ նրանցից ձերբազատվել Տիրոջ շնորհով և մարդասիրությամբ, դառնա մաքուր և սուրբ անոթ՝

Աստծո փառքի համար գործածվելու «Կարելի է ունենալ շնորհ, շատ ավելի մեծ, քան մեռելներին հարություն տալը, կույրերին տեսողություն շնորհելը և այն բոլորը, որ կար առաքյալների ժամանակ: Ո՞րն է այդ շնորհը: Սերը: Ջանանք ձեռք բերել այդ շնորհը, սիրենք միմյանց: Մենք կարող ենք նմանվել Աստծուն, եթե սիրենք բոլորին, նույնիսկ թշնամիներին: Ճշմարիտ հավատավորներին պետք է սիրել սեփական բարեկամների պես, իսկ աղանդավորներին, հեթանոսներին և հրեաներին խղճալ ինչպես բնությամբ եղբայրներին, որոնք չար և անօգուտ ճանապարհի վրա են կանգնած, և սգալ ու լալ նրանց համար» (Հովհան Ոսկեբերան):

Եթե այս գանձը՝ սերը և եղբայրսիրությունը, գտնելու ճանապարհին այս մատենաշարը օգտակար լինի ընթերցողին, ապա կհամարենք, որ իզուր չեն եղել սրա վրա իրենց մտավոր, հոգևոր և նյութական միջոցները նվիրաբերողները, և ում համար որ, իսկապես, օգտակար է եղել, խնդրում ենք, որ մեզ՝ անարժաններիս, հիշեք ձեր աղոթքներում:

Բայց եթե ոմանք կնախընտրեն ոչ թե հայրերի ճանապարհով քայլել, այլ ինքնակամորեն հիմնվելով իրենց գործերի վրա, որ անում են Տիրոջ համար(գիշեր-ցերեկ քարոզելով, գրելով, երգելով, մարգարեանալով և այլ բաներով) և կանտեսեն բուն նպատակը՝ սերը, որ մեծ գին է պահանջում, ինչպես որ տեսանք, նրանք թող նորից լսեն սուրբ առաքյալի խոսքը և սթափվեն, քանզի Տերը չասաց, թե այդ գործերը փրկության պատճառ են, այլ ինչպես գրված էր սիրո մասին, թե. «Այդ արա ու կփրկվես», այսինքն՝ սիրիր ճշմարիտ սիրով ու կփրկվես: Եվ ուրեմն, ի՞նչ էր ասում առաքյալն այս պարագայի համար. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղողանջում են: Եվ եթե մարգարեություն անելու շնորհ ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդները ու ամբողջ գիտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Եվ եթե ամբողջ ունեցվածքս տամ աղքատներին, բայց սեր չունենամ, ոչինչ չեմ շահի» (Ա Կորնթ. 13:1-3): Եվ ահա տեսանք, որ ոչինչ չենք շահի մեր բոլոր գործերում,

եթե ճշմարիտ սերը ձեռք չբերենք: Այդ երկնային սերն էլ մեզ կառաջնորդի բարի գործեր կատարելու՝ ի սեր Քրիստոսի, քանզի սերը իր մեջ պարունակում է մեծ առաքինություններ. «Սերը համբերող է, քաղցրաբարո է, սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, չի հանդգնում, իրենը չի փնտրում, չի գրգռում չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա, ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում, ամբողջովին հույս է տածում, ամեն բանի համբերում» (Ա Կորնթ. 13:4-8): Եվ եթե այս սերը չունենանք, ինքնըստինքյան, չենք ունենա վերևում թվարկված այս օրհնությունները, որ սերը պարունակում է իր մեջ, և ինքնըստինքյան, չենք կարող առանց դրա որևէ բարի բան անել. «Ով ձեռք չի բերել սեր, նա թշնամու ձեռքին գործիք է և չի գիտակցում, որ քայլում է խավարում» (Եփրեմ Ասորի): Եվ եթե ոմանք էլ բազում պարգևներ և գործեր են արել, սակայն զերծ են սիրուց, միևնույն է, իզուր է, քանզի չեն կարող դրանք որպես փրկության պատճառ ներկայացնել դատաստանին, որովհետև այն ժամանակ դրանք բոլորն էլ սպառված կլինեն, և մենք ձեռնունայն կկանգնենք: Իսկ եթե ձեռք բերեն հավիտյան մնայուն բաներ, ինքնըստինքյան, սրանք կբարեխոսեն մեզ համար ահեղ դատաստանի օրը. «Սերը երբեք չի սպառվում, թե մարգարեությունները պիտի չքանան, թե լեզուները, պիտի լռեն, թե գիտությունը պիտի անցնի» (Ա Կորնթ. 13:8): Ուրեմն, անցողիկ բաներով չհարստանանք, այլ անսպառով, և ջանանք գտնել ամենագնահատելին. «Սիրո հետամուտ եղեք» (Ա Կորնթ 14:1): Իսկ ի՞նչ է նշանակում՝ «հետամուտ եղեք»: Սա հենց մեր միջի արատներից մաքրվելու ուղին է մատնանշում, որի վերջը սերը ժառանգելն է, ուրեմն, չձանձրանանք հարատև ընթերցել այս մատենաշարը և նմանօրինակ գրքեր, որոնք մեզ կառաջնորդեն կատարելության ուղով: Չգտենք արժանանալու ամենամեծ ու անսպառ գանձին. «Բայց արդ՝ մնում են հավատը, հույսը և սերը, սրանք երեքը, և սրանցից մեծը սերն է» (Ա Կորնթ 13:13):

Եվ այսպես, ճիգ ու ջանքով ջանանք մաքրվել և սրբվել և Աստծո ողորմությամբ արժանանալ երկնային սիրուն, իսկ երբ այն կհաստատվի մեր մեջ, մեզ իր թևերի վրա առած կտանի բոլոր նեղություն-

ների, վշտերի, փորձությունների միջով թեթևությամբ և անխափան: Ինչպես որ խափանված մեքենան մի կերպ հրելով ընթացքի մեջ ենք գցում, հետո նա ինքն արդեն հրողներին իր մեջ առած տանում է մեծ արագությամբ և փափկությամբ. «Սերը դա շնորհ է և հոյակապ ճանապարհ՝ մյուս բոլոր շնորհները ձեռք բերելու համար, առանց սիրո մնացած բոլոր շնորհները ոչինչ են» (Հովհան Ոսկեբերան): Իսկ եթե այս մատենաշարի գրվածքները չօգտագործենք երկնային սերը ձեռք բերելու նպատակով, ապա այն կարող է դառնալ պատճառ հպարտության, այսինքն՝ կորստի: Ամեն բան կախված է մեր տրամադրվածությունից, թե ինչպես կնայենք հայրերի գրվածքներին և ինչ նպատակով այն կօգտագործենք մեր կյանքում:

Սուրբ Եփրեմ Ասորու մաղթանքով էլ ավարտենք առաջաբանը. «Թող շնորհի Տերը Իր սերը մեր բոլորի սրտերին, Նրան փառք հավիտյանս հավիտենից. Ամեն»:



ՍԻՐԵՑԵՔ ՄԻՄՅԱՆՑ

«Բարի վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ» (Մարկ. 17:21):

Ո՞ւր են նրանք, որոնք ասում են, թե ինչու սատանան եղավ: Իրականության մեջ բանսարկուն ոչինչ չի անում, այլ՝ մենք: Թեև այս բաներն ասելու իրավունք ունեն ավելի միայնակյացները, որոնք իրենց մտածումները մաքրել են և ինչքերն ու այլ բաներն արհամարհելուց հետո՝ հանձն առել հրաժարվելու իրենց հայրերից ու մայրերից, տներից ու այլ շատ բաներից, սակայն նրանք նման խոսքեր չասացին, այլ միայն նրանք, ովքեր ասելու պատճառ չունեին, և սրրանք են ասում, թե սատանան է ընչասիրության պատճառը և նա է մեր մեջ առաջացնում պոռնկության չար խորհուրդը: Եթե իսկապես նա է պատճառը, պետք է փախչեիր, այլ ոչ թե հանձն առնեիր, իսկ երբ հոժարում ես, այնժամ ոչ թե սատանան է մեղադրելի, այլ դու: Երբ մեկն աղբն իր տանից դուրս թափի իսկ մեկ ուրիշը ամբողջությամբ այն իր տունը տանի, ոչ թե աղբ թափողին, այլ վերցնողին պիտի մեղադրենք և անվանենք անմիտ: Այսպես էլ հիմա գիտես, որ արծաթսիրությունը բանսարկուից է, նաև ժահահոտ ու գարշելի աղբի նման չար և աղտոտ շնության խորհուրդը նա է մեջդ սերմանում, իսկ դու առանց անդրադառնալու պատրաստակամությամբ այն ընդունում ես: Պետք է նմանօրինակ ամեն բանից էլ խույս տալ և կամաց-կամաց ձերբազատվել: Ինչպես որ մեր ճամփան շեղելով հեռանում ենք աղբանոցից, նույնպես և դու փախիր ընչասիրությունից և աղտեղի խորհուրդներից: Թերևս հարցնես. «Ինչո՞ւ փախչեմ»: Եթե հակառակն ասած լինեի, թե՝ ինչքեր ցանկացիր և մարմնի

հեշտանքը սիրիր, կարող էիր տարակուսել, օրինակ, առջևդ ոսկի ու թանկարժեք քարեր եթե լինեին, և քեզ ասեի սրանք անարգիր և փոխարենը կապար վերցրու, այն ժամանակ կարող էիր չհամոզվել և ասել, թե ինչպես կարող եմ այդ անել: Իսկ եթե ասեի կապար մի ցանկացիր, այլ՝ ոսկին, հարցը կդյուրանար: Նմանապես, այս և անդենական կյանքի հեշտության տարբերությունը ոչ միայն ոսկու և կապարի միջև գոյություն ունեցող տարբերության չափն է, այլ՝ շատ ավելին: Ուստի, պետք է զարմանանք ոչ թե այս կյանքի հեշտությունները արհամարհողների վրա, այլ չարհամարհողների, որովհետև գարշահոտ աղբը և անուշահոտ յուղը միմյանցից զանազանել չկարողանալը չափազանց անմտության նշան է:

Եվ ի՞նչ, ցանկանում ես հավիտենական կյանքը ժառանգել և առարկում ես, թե ինչպես ներկա կյանքն արհամարհե՞մ: Ուզում ես արքայական ծիրանի հագնել և ասում ես, թե ինչպե՞ս մերկանամ ցնցոտիներիցս: Թագավորի պալատում պետք է բնակվես ու բազմես և ասում ես, թե ինչպե՞ս ատեմ աղքատիկ հարկս: Իսկապես, ամեն ինչի պատճառը մենք ենք, որ չենք ուզում մեր հայացքը մի քիչ վեր բարձրացնել, մինչ նրանք, որ փորձեցին, շատ հեշտությամբ հաջողության հասան: Դուք ևս հավատ ընծայեք ասածներիս և նախանձախնդիր եղեք ուղիղ բաներին՝ ընկերոջը ձեր անձի պես սիրելով, որի մասին միայն խոսում ենք, իսկ գործով ցույց չենք տալիս: Մտածիր, թե բոլոր բարիքներից որքան ավելի մեծ է ընկերասիրությունը, ոչ օրենքի և ոչ էլ տանջանքների պետք կունենայինք, եթե բոլորն էլ ուրիշներին սիրեին այնպես, ինչպես իրենք կուզեին սիրվել, ոչ ոք ուրիշին չէր զրկի, այլ կռիվներն ու հափշտակությունները, չար նախանձն ու բարկությունը ինչպես նաև այլ ախտերը ամբողջությամբ կանհետանային: Արդարև, սերը բուսնում է առաքինի հոգիների մեջ, իսկ այնտեղ, ուր չարություն կա, այս բույսը չորանում է, համաձայն այն խոսքի, թե. «Երբ անօրենությունը բազմանա, սերը կցամաքի» (Մատթ. 24:12): Ինչպես որ մարդն իր անձին չարիք չի ուզում հասցնել, նույնը կանի և իր ընկերոջ համար, եթե սեր ունենա: Սրա համար է, որ Քրիստոս ճշմարիտ սիրո նշանը ընկերասիրությունը նկատեց և ասաց. «Պետրոս, եթե ինձ սիրում ես, արածեցրու

Իմ ոչխարներին» (Հովհ. 21:17): Տես, ընկերոջ հանդեպ սերը մարտիրոսությունից վեր համարեց, որովհետև չասաց. «Իմ համար մեռիր, այլ՝ ինձ հավատացողներին ծառայիր»: Ահա թե ինչու, առաջին պատվիրանի նման պահանջեց նաև երկրորդը՝ այսպես ասելով Աստծո համար. «Քո ամբողջ սրտով Նրան սիրիր, -իսկ ընկերոջ համար ասաց, -քո անձիդ պես նրան սիրիր»: Եթե իսկապես կարենայիր այս գործադրել, սատանան ոչ հարուստին և ոչ աղքատին, ոչ ամուսնուն և ոչ կնոջը չէր կարող վնասել: Նույնիսկ, հազար սատանա եթե լինեին, և մենք սեր ունենայինք, մեզ ոչինչ չէին կարող անել: Այժմ սովորենք, թե ինչպես կարող ենք իրար սիրել: Ի՞նչն է մարմնական ցանկություններ առաջացնում, եթե ոչ մարմնի վայելչությունը: Ուրեմն մեր հոգին ևս գեղեցկացնենք, այն ժամանակ էլ իրար կսիրենք, որովհետև մարդը ոչ միայն պիտի սիրի, այլ նաև պիտի սիրվի: Ինչպես որ մարմնով գեղեցիկները սիրվում են շատերի կողմից և իրենց նման ուրիշներին են սիրում, այսպես էլ նրանք, որ հոգով գեղեցիկ են, շատերի կողմից սիրվում են և իրենք էլ ուրիշներին են սիրում: Իսկ մենք իրար չենք սիրում, քանզի հոգով գեղեցիկ չենք: Ուստի մեծ իմաստուն է նա, որ սեր է գոյացնում: Արդ, ինչպես առաքյալները քարոզով, մարգարեները՝ սովորեցնելով, նույնպես և դուք Աստծուց մեծ պարգև կստանաք, եթե ճշմարիտ սիրով սիրելիներ բազմացնեք: Ինչպես որ թագն ու ծիրանին ցույց են տալիս, թե ով է թագավորը, իսկ առանց նրանց, եթե նույնիսկ ոսկյա հագուստ էլ ունենաս, նրա թագավոր լինելը չի իմացվի, նմանապես, եթե ամեն տեսակի առաքինություններ ունես և եթե նույնիսկ կարող ես հրաշքներ գործել, սակայն եթե սեր չունես, հայտնի չի լինի թե արդյո՞ք պատկանում ես Քրիստոսին: Սա է կնիքը, այսինքն՝ Քրիստոսի նշանը, այն խոսքի համաձայն թե՝ «Իմ աշակերտներն եք, եթե իրար սիրեք» (Հովհ. 13:35): Ինչպես որ յուրաքանչյուր ոչխար իր կնիքով, այսինքն նշանով ենք ճանաչում, նույնպես և քրիստոնյան ճանաչվում է իր սիրով, որ կնիք է, այսինքն՝ Քրիստոսի նշան է, իսկ կարող ենք այն ունենալ, երբ օգնենք զրկյալներին, ինչը որ անելուց այնքան հեռու ենք:

Մարդիկ ինչքերի պատճառով է, որ այսպես նեղվում են, և շատերին այդպես ատելի են դառնում, իսկ մենք, Աստծո համար մի կտոր

բան մեր բերանից չենք ուզում կտրել, որպեսզի օգնենք զրկյալներին, որպեսզի ոչ ոքի ատելի չլինենք: Շատերը հաճախ կրկնում են. «իզուր սիրիր, բայց զուր տեղը մի ատվիր», թեև Աստծո համար ուրիշների կողմից ատելի դառնալուց ավելի լավ բան չկա: Աստծու համար հանձն առած ատելությունը ավելի շահավոր է, քան՝ Աստծո համար սիրված լինելը: Երբ Աստծո սիրո համար սիրվենք, մենք պարտապան կգտնվենք Նրա սիրուն, իսկ երբ ատվենք Իր համար, Նա պարտապան կգտնվի մեզ: Որքան որ ագահները սիրում են հարստություն, ցավոք, նույնքան էլ մենք չենք սիրում Քրիստոսին, և ինչ օգուտ կստանանք, երբ ինչքեր չենք սիրում, սակայն չենք սիրում նաև Քրիստոսին: Արդարև, ոչ միայն պետք է հավատանք Քրիստոսին, այլև սիրենք նրան, ինչպես Պողոսն է գրում. «Քրիստոսի հանդեպ ունեցած մեր հավատքով ու սիրով» (Բ Տիմ. 1:13): Ինչպե՞ս կարող է մեկը համարձակվել և ասել, թե սիրում է Քրիստոսին, երբ սիրելիի կեցվածք ցույց չի տալիս: Ուստի, ինչպես որ մեկը սիրում է մտերիմ բարեկամի, գոնե այդպես սիրենք Քրիստոսին, ինչը երբեք չեմ տեսնում: Հաճախ բարեկամների համար անարգվում ենք, իսկ Քրիստոսի համար ոչ ոք չի ուզում նախատվել: Երբ տեսնում ենք, որ բարեկամը հեռու երկիր է մեկնում, լացում ենք և նեղվում, իսկ երբեք չենք ցավում, երբ Քրիստոս մեր մեղքերի պատճառով հեռանում է մեզանից: Նրան որպես բարեկամ չունենալը այնքան մեծ չարիք չէ դեռ, քանզի շատ ավելի վատթարը կա, այն, որ նույնիսկ Նրան թշնամի ենք դառնում, ինչպես որ ասում է առաքյալը. «Մարմնի խորհուրդը թշնամի է Աստծու հանդեպ» (Հռոմ. 8:7): Մենք միշտ մարմնի կամքը կատարելով, թշնամություն ենք ցուցաբերում: Նա միշտ մոտենում է մեզ, իսկ մենք անարգելով Նրան, հեռացնում ենք մեզանից՝ մեր չար գործերով: Հետևաբար, աղաչում եմ, սիրենք Աստծուն, ինչպես որ Ինքը սիրում է մեզ: Եթե Նա մեզ սիրեց, երբ Իրեն ատում էինք, որքան ավելի պիտի սիրի մեզ, երբ այսուհետև մենք ևս սիրենք Իրեն: Պետք չէ միայն խոսքերով սիրել, որովհետև Ինքը ևս ոչ միայն խոսքով, այլև գործով ցուցաբերեց Իր սերը:

Արդ, դու ևս գործով ցույց տուր՝ կատարելով Իր կամքը: Թեև Նա կարոտ չէ մեր սիրուն, և սա Իր սիրո մեծ գութն է հայտնում, որով-

հետև երբ մեկը կարիք չունի և սիրում է, ուրիշ ինչ պիտի ցանկանաս, եթե ոչ սիրվել քեզ սիրողից: Ինչպես որ Մովսեսը ևս գրում է. «Աստված ի՞նչ է խնդրում մեզանից, եթե ոչ այն, որ սիրենք Իրեն, հետևելով Իրեն» (Բ Օրինաց 10:12): Երբ Նա խնդրում է, որ սիրենք, դրանով հայտնում է, որ Ինքը ևս սիրում է քեզ: Ոչ մի բան չի կարող մեզ Աստծո շնորհքը տալ, բացի այն բաներից, երբ Նրան և միմյանց սիրենք: Այս բոլորի համար վարք պիտի ստանանք, ինչպես որ ասված է. «Աղոթիր և վարձքդ առ, բարին խնդրիր և վարձքդ ստացիր»: Երբ զավակները առաքինի են լինում, հայրերը վարձատրում են նրանց, նույնը և անում է Աստված, որ ասում է. «Եթե առաքինի լինես, վարձքդ կստանաս և Հորդ կուրախացնես, իսկ երբ չար լինես՝ կզայրացնես ծնողիդ»: Արդ, մտածենք այս բոլորի մասին: Աստծո բոլոր հրամանները մեր հանգստի համար են, որովհետև Նա երբ երանի է տալիս աղքատներին, հեզերին ու սգավորներին, ողորմածներին և ուրիշներին, այս բոլորից ոչ մի օգուտ չի ակնկալում Իր համար, ուղղակի նրանցով մեզ է զարդարում: Երբ ասում է՝ «անոթեցա», Նա տվածիդ կարոտը չէ, Ինքը կարող է աղքատներին կերակրել: Սակայն այդ խոսքով քո բարիքն է ցանկանում, ինչպես որ արևը կարիք չունի մեր կողմից տեսնվելու, և եթե մեկը չնայի նրան, միևնույն է, սա իր պայծառությամբ կմնա, այլ մենք ենք, որ օգտվում ենք նրա ներկայությունից: Այս իրականությունը շատ ավելիով պատշաճում է Աստծուն: Այս մեկը ևս սովորիր, մեր և մժեղի միջև որքան որ տարբերություն կա, նույնքան և առավել կա մեր և Աստծո միջև: Արդ, եթե մենք, որ փառքի կարոտ ենք, սակայն չենք ցանկանա մժեղներից պատիվ ընդունել, որչափ ավելի Աստված, որ անկարոտ բնություն է, չի ուզենա մեր կողմից պատվվել: Սակայն, Աստծու համար պատիվ է, երբ մենք փրկության արժանանանք, քանզի Նա Իր պատիվը թողած, մերն է փնտրում: Նա ասում է. «Եթե մեկից նեղված ես, հրամայում եմ, որ նա թողնելով իր պատարագը, նախ գա քեզ մոտ և ապա նոր պատարագը մատուցի» (Մատթ. 5:23): Նույնը տեսնում ենք և բյուր քանքարներ պարտք ունեցողի ողորմություն գտնելու օրինակով, քանզի երբ նա իր նման ծառայից հարյուր դահեկան պահանջեց, տերը նրան չար ծառա կոչելով՝ պատժեց: Նաև՝ Պողոսը, երբ հալա-

ծում էր առաքյալներին, նրան ասաց. «Ինչո՞ւ ես Ինձ հալածում», իսկ Սամուելին ասաց. «Ոչ թե քեզ անարգեցին, այլ՝ Ինձ»:

Արդ մտածենք այս բոլորի մասին, մանավանդ Նրա, որ մեզ ճանաչեցրեց Իրեն՝ բոլոր բարիքների Գլխին, որ մեզ սովորեցրեց առաքինի գործեր, բոլոր արարածները մեր համար ստեղծեց, իր սիրելի Որդուն մեզ համար մատնեց և Երկնքի արքայությունը խոստացավ: Ամեն ինչ անենք, որպեսզի Իր սիրուն արժանանանք, չսպասենք, որ ուրիշները նախ մեզ ողջունեն, այլ մենք կանխենք նրանց ու մրցենք՝ իրար պատիվ տալու մեջ, և սա նվաստացում չհամարենք: Նաև մեզ չարիք գործողներին երբեք չհիշենք, այլ՝ միայն այն, ինչը որ բարի է: Եթե այս բաներն ուղղենք, կարող ենք սատանայի որոգայթից ազատվել և հասնել Աստծո կողմից խոստացված բարիքներին, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհքով, որին և վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

(Բարսեղ վարդապետ Մաշկևորցի)

ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԵՓՐԵՄ ԱՍՈՐՈՒ ՔԱՐՈԶԸ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայրական ծոցից իջնելով և դառնալով մեզ համար փրկության ճանապարհ, Տերն Իր երանելի և աստվածային ձայնով սովորեցնում է մեզ և ասում. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին» (Մատթ. 9:13) և էլի. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ հիվանդներին» (Ղուկ. 5:31): Եթե ես ասեմ, այս այդ դեպքում դու կարող ես չլսել ինձ: Բայց եթե այս ասում է Ինքը՝ Աստված, ապա ինչո՞ւ ես անտարբեր այս բանի նկատմամբ, և անհոգ՝ կյանքիդ հանդեպ: Եթե տեսնում ես, որ քո մեջ կան խորհուրդների և գործերի թարախակալված խոցեր, ապա ինչո՞ւ ես անհոգ գտնվում այդ թաքնված խոցերիդ հանդեպ: Ինչո՞ւ ես վախենում Բժշկից: Նա դաժան չէ և ոչ էլ անկարեկից և ոչ անողոք, բժշկելու համար գործի չի դնում ոչ մետաղական գործիքներ, ոչ ծանր բուժումներ, և ոչ էլ այրումներ, այլ բժշկում է միայն խոսքով: Թե ցանկանում ես՝ արի Նրա մոտ, քանի որ նա լցված է մարդասիրությամբ և բարությամբ: Քեզ համար խոնարհվեց հայրական ծոցից: Քեզ համար մարմնացավ, որպեսզի դու Նրան մոտենաս առանց վախի, քեզ համար մարդացավ, որպեսզի բժշկի քո ծանր խոցերը: Մեծ սիրով և մեծ բարեգթությամբ Նա կանչում է քեզ Իր մոտ: Մոտեցիր, մեղավոր, և բժշկվիր առանց ջանքի: Վայր նետիր քեզանից մեղքի լուծը, աղոթք մատուցիր և թրջիր նեխած խոցերդ արցունքներով: Քանի որ Երկնային Բժիշկը, որպես բարեգութ, արցունքներով և հոգոցներով է բուժում վերքերը: Մոտեցիր, մեղավոր, բարի Բժշկին՝ բերելով հետդ արցունքներ, քանի որ սա է ամենաբժշկարարը: Քանի որ սա է ցանկալի երկնային Բժշկին, որպեսզի ամեն ոք իր սեփական արցունքներով բժշկի ինքն իրեն և փրկվի: Նման բժշկությունը չի գործում երկարատև, և աստիճանաբար չի, որ առողջացնում է խոցը, այլ հանկարծահաս բժշկում է քեզ: Բժիշկը սպասում է, որ տեսնի արցունքները քո, մոտեցիր, մի վախեցիր: Ցույց տուր Նրան վերքդ՝ բերելով նաև բժշկության համար անհրաժեշտ պարագաները՝ արցունքներ և հոգոցներ: Ահա բաց է ապաշխարության դուռը, ջանա, մեղավոր, մտիր, քանի դեռ այն չի փակվել: Նա ժամանակ չի ընձեռում քո անտարբերությանը և Ինքը՝ Դուռը, տեսնելով քեզ անհոգության մեջ, չի սպասի մինչև քո անփութության վերջը: Ինչո՞ւ ատեցիր քո կյանքը, ո՛վ դժբախտ: Ի՞նչն է քո հոգուց ավելի արժեքավոր, ո՛վ մարդ: Բայց դու մեղավոր, քամահրեցիր այն: Չէ որ չգիտես, ով սիրեցյալ, թե որ ժամին երկնային Բժիշկը կկարգադրի փակել Իր բժշկության դռները: Մոտեցիր, աղաչում եմ քեզ, և աշխատիր բժշկվել: Նա ուզում է քո ապաշխարությամբ ուրախացնել երկնային զորություններին: Արևն արդեն հասել է մայրամուտին, և քեզ համար է միայն դանդաղում, որպեսզի դու արժանանաս երկնային կացարաններին:

Դեռ երկա՞ր պիտի հանդուրժես քո անմաքուր թշնամուն՝ անամոթորեն կատարելով նրա կամքը: Նա ուզում է նետել քեզ կրակը: Ահա թե ինչի համար են նրա ջանքերը: Ահա սա է վարձքը նրանց, ովքեր սիրում են նրան: Նա մշտապես պատերազմ է մղում բոլոր մարդկանց դեմ, խոցելով նրանց վատթար և անմաքուր ցանկություններով, իսկ նա՝ պիղծը, իրեն հնազանդվողներին հասցնում է անհուսության, կարծրացնում է սիրտը, չորացնում արցունքները, որպեսզի մեղավորը վշտանալով չգա զղջման: Ամեն կերպ փախիր նրանից, ով մարդ: Ատիր և գարշանքով վերաբերվիր այն ամենին, ինչը որ նրա համար սիրելի է: Ատելություն տածիր նենգավորի հանդեպ և փախիր դավադրից, քանի որ նա «մարդասպան է ի սկզբանե» և մինչև վերջ (Հովհ. 8:44): Փախիր նրանից, ով մարդ, որպեսզի չսպանի քեզ: Լսիր, սիրելիս, երանելի ձայնը, որ ասում է ամեն օր. «Եկեք Ինձ մոտ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և Ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք Ինձանից, որ

հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև Իմ լուծը քաղցր է և Իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30): Նա ավետում է քեզ հանգստություն և օրեցօր խոստանում կյանք: Մոտեցիր, մի վախեցիր: Տիրակալը գթած է և ոչ մի բանի կարիք չունի և չի պահանջում գիրը բոլոր մեղքերիդ: Նա ապաստարան է բոլոր չարիքներից, բժշկում է վերքերը և կյանք տալիս ավելիով որպես գթասիրտ: Սիրով ընդունում է Իր առջև ընկնողներին, որովհետև Նա Հզոր Աստված է և տեսնող ամեն բանի, գիտի մեր բոլոր մտածումները, և եթե մեկը գալիս է Նրա մոտ բժշկվելու, տեսնում է նրա սիրտը և ամբողջ ջանասիրությունը: Երբ մոտեցողն ունի անփոփոխելի բարեպաշտ կյանք, այնժամ Ինքը՝ օրհնյալ Աստվածը, Իր իսկ գթասրտությամբ նույն ժամին հայտնվում է Իրեն փնտրողին, և մինչ նման մարդը կաղաղակի Աստծուն, Նա ասում է. «Այստեղ եմ Ես»: Մինչ մոտենում է Նրան՝ բացում է գանձարանը փնտրողի առջև, մինչ կհղի արցունքներ՝ սփռվում են գանձերը, մինչ կխնդրի՝ հաշտվում է նրա հետ, մինչ կաղոթի՝ արժանացնում է ողորմության, քանի որ սա է պահանջում և ցանկանում Աստծո սերը, չդանդաղեցնել լսելու նրանց, ովքեր գալիս են Աստծու մոտ անկեղծորեն: Եվ չի հանդիմանում նորից եկող մեղսագործին՝ ասելով. «Ինչի՞ համար դու այսքան ժամանակ ծառայեցիր թշնամուն և կամավոր արհամարհեցիր Ինձ՝ Տիրակալիս»: Չի քննում, թե որքան զղջման պահ անցավ, այլ միայն խոնարհությանը և Իր առջև ընկնողների արցունքներին ու հոգոցներին է նայում ամենակալ Տերը, առանց այլ բան հաշվի առնելու: Քանի որ Նա կանխատես է, որպես մեր Աստված և Արարիչ, հանկարծ ներում է բոլոր մեղքերը, բոլոր սխալները՝ կատարած մտքով և գործով ու ասում, որ տան նրան առաջին պատմուճանը և մատանին դնեն աջ ձեռքին, և բոլոր հրեշտակներին պատվիրում է ուրախանալ գտնված այս մեղավորի հոգու համար:

Երանելի ենք մենք՝ բոլոր մարդիկս, քանի որ մեր Տերը հեզ է, անհիշաչար, գթասիրտ, առատաձեռն, ողորմած, երկայնամիտ, ամեն անգամ ներում է մեր անօրինությունները, եթե իհարկե մենք ինքներս այն ցանկանում ենք: Եվ ահա Նա կանչում է, ահա համբերում, ահա տալիս է մեզ Իր բոլոր բարիքները այս և թե գալիք կյանքում, եթե մենք

ցանկանում ենք այն: Եվ այսպես, ձեռնամուխ լինենք, սկսենք աղոթել, քանի դեռ սրա համար ժամանակ կա: Քանի դեռ մենք այստեղ՝ այս կյանքում ենք, միշտ էլ կարող ենք շարժել Աստծո գթասրտությունը: Դժվար չէ մեզ արժանանալ ներման, մեզ համար բարեպատեհ ժամին ծեծելով Նրա ողորմածության դռները: Արցունքներ հեղենք, քանի դեռ ժամանակ կա, որ այն ընդունելի լինի, որպեսզի գնալով այն կյանքը չլացենք արդեն անօգուտ, քանի որ այնտեղ արցունքներն էլ ոչ մի արժեք չեն ունենա: Որքան որ մենք ցանկանում ենք, այնքան էլ ներում է մեզ բարգութ Աստված: Քանի որ այստեղ լսում է Նա մեզ, եթե դիմում ենք, այստեղ ներում է, եթե դրա համար խնդրում ենք, այստեղ հարթում է մեր անօրենությունները, եթե մենք շնորհապարտ ենք լինում: Իսկ եթե փնտրում ենք այստեղ մխիթարություն, ապա այնտեղ՝ հարցաքննություն, այստեղ՝ ազատություն, այնտեղ՝ դատ, այստեղ՝ անվտանգություն, այնտեղ՝ նեղություն, այստեղ՝ հաճույքներ, այնտեղ՝ տանջանք, այստեղ՝ շահամոլություն, այնտեղ՝ պատիժ, այստեղ՝ ծիծաղ, այնտեղ՝ լաց, այստեղ՝ սառնություն (հոգևոր), այնտեղ՝ մահապատիժ, այստեղ՝ քամահրանք, այնտեղ՝ հավիտենական հուր, այստեղ՝ զգեստներ, այնտեղ՝ անքուն որդեր, այստեղ՝ գոռոզություն, այնտեղ՝ ստորացում, այստեղ՝ հափշտակում, այնտեղ՝ ատամների կրճտոց, այստեղ՝ լիացում ոսկով, այնտեղ՝ խավար և մեգ, այստեղ՝ անհոգություն, այնտեղ ոչ ոքի չներվող արարքներ: Իմանալով այս, սիրելի եղբայրներ, ինչո՞ւ ենք անհոգ մեր փրկության հանդեպ: Թող մեր միտքը չմնա այստեղ գամված: Թող մեզ քաղցր չթվա սերը երկրավոր բաների հանդեպ այստեղ, որպեսզի դառը չլինի մեր արցունքներն այնտեղ: Ինչո՞ւ ենք անփույթ և չենք ցանկանում բժշկվել, քանի դեռ ժամանակ կա: Հանուն այս կարճ ժամանակում թափված մի փոքր արցունքների և հանուն ապաշխարության, Աստված ներում է մեր բոլոր մեղանչումները: Մի քիչ լացիր այստեղ, որպեսզի չլացես այնտեղ՝ հավիտյանս հավիտենից շոշափելի խավարի մեջ: Եղիր շնորհապարտ այստեղ, որպեսզի այնտեղ չգցվես անշեջ կրակների մեջ: Ով մեր համար արցունքներ չի հղի, ով չի լացի մեր վրա: Ատելով կյանքը, սիրում ենք մահը: Ինքդ մտածիր, ով իմ անկեղծ եղբայր, և ընտրիր լավագույնը և օգտակարը հոգուդ համար: Ի՞նչ դժվարություն կա քեզ մեղքերիդ հա-

մար այստեղ լացել և ապաշխարության միջոցով դառնալ աստվածահաճո: Այստեղ աղոթել, որպեսզի չհեղել արցունքներ այնտեղ՝ կրակների մեջ, առանց որևէ օգուտի: Քանզի, եթե հեղես արցունքներ այստեղ, կստանաս թեթևություն և ամեն տեսակի մխիթարություններ, իսկ այնտեղ լացելով իսկ կտրվես պատժի և կպահանջվի քեզանից բազմաթիվ տաղանդներ (ոսկու կշիռ): Վճարիր, մի փոքր խնդրելով Ամենակալին, որպեսզի Նա ների մեր հոգու պարտքերը: Եթե չես ուզում այստեղ շատից քիչը տալ, այնտեղ ստիպված կլինես բազում խոշտանգումներից հետո տալ քո բոլոր պարտքերը: Ասում եմ այս բոլորը՝ ձեր հանդեպ ունեցած սիրուց, ով սիրելի և աստվածասեր եղբայրներ, ոչ որպես արժանավայել մարդ, անխոցելի կյանքով և մաքրություն պահպանող, այլ որպես մարդ, որ մեծ սգի և սրտի տրտմությամբ խորհեցի ինքս իմ մեջ, թե ինչ է մեզ սպասում և ինչի հանդեպ ենք մենք անհոգ: Մաքուր չեմ ես, եղբայրներ, այլ անօրեն իմ կյանքում, գործում և մտածումներում և չեմ տեսնում իմ մեջ ոչ մի բարի բան, այլ հակառակը թե հիմա, և թե մշտապես մեղավոր եմ և տկար իմ հոժարակամության մեջ: Բայց այս ասում եմ ձեր համախոհությանը, որովհետև տրտմությունը պատում է իմ սիրտը Աստծո գալիք ահավոր դատաստանից, քանի որ մշտապես անփույթ ենք և մտածում ենք ապրել այս ունայն աշխարհում դարեդար: Կանցնի այս ժամանակը և այն ամենը, ինչ որ կա նրանում: Եվ այս բոլորի համար մեզանից հաշվետվություն պիտի պահանջվի, սիրելիներ, որպես բարին իմացողներ և չար գործողներ: Այստեղ քամահրանքով վերաբերվելով Աստծու սիրուն և Աստծո արքայությանը, մենք գերադասեցինք այս երկիրը և այն բոլորը, ինչ-որ կա նրա մեջ: Արծաթը և ոսկին մեզ դուրս չեն կորզի կրակներից, իսկ հագուստները և ճոխությունները այնտեղ կծառայեն մեր դատապարտության համար: Եղբայրը չի ազատի իր եղբորը (Սաղմ. 48:8), նմանապես և հայրն իր սեփական որդուն, այլ ամեն մեկը կկանգնի իրեն համապատասխան դասում՝ կամ կյանքում, կամ՝ հրում: Բազում սրբեր, արդարներ և վկաներ շեղեցին իրենց ճանապարհն այս աշխարհից և նրա գործերից՝ իրենց բարի կամեցողության ազատությամբ և Աստծո պատվիրանների վրա բարի ապավինությամբ, համոզված էին, որ Աստծո շնորհով և դրախտի քաղցրություն-

ներով պիտի վայելք ապրեն, քանզի սիրելով Քրիստոսին, գերադասեցին Նրան բոլոր ապականացու բաներից և այս պատճառով մշտապես ցնծում են Աստծով, լուսավորվում Քրիստոսով, անդադար ուրախանում Սուրբ Հոգով: Ուրախանում է նրանց համար Սուրբ Երրորդությունը, ուրախանում են նրանց համար Հրեշտակներն ու Հրեշտակապետերը, ուրախանում է նրանց համար բերկրության դրախտը: Նրանք ճշմարտապես արժանի են գովասանքի, փառքի և հարատև երանության: Հրեշտակները և մարդիկ սիրաշահում են նրանց, քանի որ նրանք Աստծո սերը գերադասեցին ամբողջ աշխարհից: Եվ սուրբ, արդար, ճշմարիտ Աստված շնորհեց նրանց Իր արքայությունը և նրանց տվեց նաև մեծ փառք, որ սուրբ հրեշտակների հետ խնդությամբ նայեն Իրեն:

Մարդկանցից շատերը սիրեցին երկիրը և այն ամեն ապականացում ինչ որ կա նրանում: Նրանց միտքը միշտ գամված է ապականվելուն և, համարյա նմանվելով անասուններին, նրանք բտում են իրենց մարմինը կերակուրներով կարծես թե իրենց այս ունայն կյանքն անվախճան է: Ի՞նչ ես անում դու, ով մարդ, անցկացնելով կյանքդ անասունի պես: Աստված քեզ ստեղծել է բանական, գիտակից, մի նմանեցրու ինքդ քեզ քո անմտությամբ անգիտակից կենդանիներին: Սթափվիր գոնե ինչ որ չափով, ուշքի եկ և որպես բանական, իմացիր, որ քեզ համար երկնքից եկավ ամենակարող Աստված, որպեսզի երկրից վեր հանի քեզ երկիր: Դու կանգնած ես երկնավոր Փեսայի հարսանիքին, ինչո՞ւ ես այսպես անհոգ, ինչի՞ համար ես դանդաղում: Ասա ինձ, ինչպե՞ս պիտի ներկայանաս հարսանիքին՝ չունենալով քեզ հետ հարսանյաց հանդեսի թանկարժեք և պատշաճ զգեստ: Դու չունես լապտեր, ուրեմն, ինչպե՞ս պիտի մտնես: Մի՞ թե անփութությամբ ես ուզում ներս մտնել: Նույն րոպեին կլսես զարհուրելի խոսքերը. «Ընկեր, ինչպե՞ս մտար հարսանյաց հանդեսին՝ չունենալով հարսանյաց հանդերձ» (Մատթ. 22:12)՝ պատշաճ Իմ թագավորությանը, մի՞թե դու քամահրանքով մտար, որպեսզի քո մերկությամբ վիրավորանք հասցնես Իմ հրավիրյալներին: Եվ կկարգադրի Թագավորն Իր ծառաներին. «Կապեք այդ տարաբախտի ձեռքերը և ոտքերը և գցեք նրան հրաբորբոք հնոցը, որպեսզի տանջվի հավիտյանս հավիտենից: Քանի որ Ես Ինքս դա-

րեր առաջ եկա և բոլորին կանչեցի հարսանի-
քի, իսկ սա արհամարհեց Իմ կանչը և իր համար հարսան-
յաց հանդեսներ չպատրաստեց, դրա համար էլ հանձնարարում
եմ ձեզ պատժել այդ դժբախտին այն բանի համար, որ արհամար-
հեց Իմ թագավորությունը»: Մի՞թե չես վախենում այս ամենից, չես դողում, ով մարդ, չէ՞ որ մոտ է ժամանակը, և կհայտնվի Փեսան Իր փառքով: Չգիտե՞ս, արդյոք, որ ամեն ինչ արդեն պատրաստ է, և երկնային փողը սպասում է ազդանշանի: Եվ ի՞նչ պիտի անես այն ժամին, եթե այժմ չպատրաստես աստվածահաճո գործեր: Չէ՞ որ Աստված սիրաշահում է միայն արժանիներին:

Կհնչի երկնքից երկնային փողը և կասի՝ արթնացեք, Քրիստոսի սիրելիներ, ահա եկավ երկնային Թագավորը՝ տալու ձեզ հանգիստ և հավիտենական ուրախություն՝ առաքինի գործերում ձեր ցուցաբերած ջանասիրության համար: Արթնացեք, տեսեք Քրիստոս Թագավորին, անմահ Փեսային, Որին սիրեցիք: Քանի որ սիրելով Նրան, դարձաք պանդուխտներ այս երկրի վրա: Արթնացեք, տեսեք Նրա թագավորությունը, որը պատրաստել է ձեզ համար: Արթնացեք և տեսեք ցանկալի Քրիստոսին: Արթնացեք և խաղաղ ու անհոգ նայեք Տիրոջը, Որին դուք սիրեցիք, հանուն Որի համբերեցիք վշտերին, որի համար և աշխատեցիք: Եկեք այժմ մեծ խիզախությամբ նայենք Նրան, Ցանկալիին և ուրախանանք նրա հետ անճառելի ուրախությամբ. «Եվ ձեր ուրախությունը ոչ ոք ձեզանից չի վերցնի» (Հովհ. 12:22): Եկեք և վայելեք բարիքներ. «Որոնց ոչ աչքն է տեսել, ոչ ականջը լսել և ոչ սիրտն ընկել» (Ա Կորնթ. 2:9), նաև վայելքներ, որ շնորհում է ձեզ Ինքը Ցանկալին, քանի որ պիտի հափշտակվեն սրբերը լուսեղեն ամպերով՝ Նրան ընդառաջ: Կճախրեն արդարները և Աստծուն արժանիները, օդի մեջ բարձունքներում անպատմելի փառքի մեջ, որպեսզի տեսնեն երկնավոր անմահ Փեսային:

Ո՞վ այն ժամին կարժանանա՝ հափշտակության ամպերով և մեծ ուրախությամբ Քրիստոսին ընդառաջ: Բոլոր արժանիները կհափշտակվեն փառքով, իսկ բոլոր անօրենները կմնան ներքևում՝ մեծ ամոթով: Երանություններ և ուրախություն այստեղ՝ ջանասերներին, պատիժ և ամոթ՝ բոլոր մեղավորներին, երանելի է նա, ով այստեղ աշխատեց այն ժամի համար արժանի մեկը լինելու: Խղճալի է նա,

ով իրեն անարժան դարձրեց այն ժամի
համար: Ամպը կվերցնի բոլոր սրբերին երկրից դեպի եր-
կինք: Մեղսագործներին կհափշտակեն, որպեսզի նետեն նրանց
հնոցը, որն այրվում է անշեջ հրով: Ո՞վ իր գլխին կտա հորդառատ
ջրեր և աչքերին՝ աղբյուրներ, որոնք մշտապես և անդադար հեղեին
արցունքներ, որպեսզի լա այն օրվա համար, օր ու գիշեր աղաչելով
Աստծուն, որպեսզի այն օրը Իր հայտնության պահին անարժան
չհամարվի, և չլինի թե լսի Տիրակալից զարհուրելի այն դատավճիռը.
«Հեռացեք ինձանից, գործող անօրենությունների: Չգիտեմ, թե որ-
տեղից եք դուք»:

Ամենամեծն Աստված, միայն անմահ, արժանի արա այն ժամին Քո մեծ առատաձեռնությանը, որպեսզի իմ գաղտնի անմաքրությունները չբացվեն տեսնողների առջև, Հրեշտակների, Հրեշտակապետների, Մարգարեների, Առաքյալների, արդարների և սրբերի առջև: Փրկիր մեղավորին շնորհովդ և առատաձեռնությամբդ և արժանացրու նրան փափկության դրախտին՝ կատարյալ արդարների հետ: Ընդունիր, ո՜վ Ամենակալ, խնդրանքները քո ծառայի, աղոթքներով բոլոր այն սուրբերի, որոնք հաճեցրեցին քեզ: Փառք Քրիստոսին: Ամեն:

ՆԱՐԵԿ

ԲԱՆ ԿԷ

Լքելով բոլոր երախտիքները բարերար Աստծո՝
Հակամետ եղա չարին՝ նրա հետ
Դժոխքի խորքը նայելու համար,
Ես, անարժանս ամեն բարիքի,
Երախտամոռս անշնորհակալ, դրժողս սիրո,
Կաշկանդվածս պիրկ, մեղքի թոկերով,
Խոցվածս խորքից երիկամներիս,
Որ արմավենու ծառ եմ բզկտված,
Աղարտված գինի, հեղեղված ցորեն,
Ջնջոտված մուրհակ, պատառված վճիռ, խարդախված
կնիք,
Դիմափոխված տեսք, այրված հանդերձանք,
Կորած ըմպանակ, խորասուզված նավ,
Փշրված մարգարիտ, ընկղմված գոհար,
Չորացած մի տունկ, խորտակված նեցուկ,
Իսպառ փտած փայտ, եղծված մանրագոր,
Փլատակված տուն, խարխլված խորան, արմատախիլ բույս,
Յուղ՝ թափված աղբոտ հրապարակում,
Մոխրակույտերի վրա հոսած կաթ,
Դժնի մահապարտ՝ քաջերի գնդում:
Քանզի շարունակ անձն իմ ողբալի,
Հին Բաբելոնի օրինակներով,
Երուսաղեմի հետ խրատ լսեց

Մարգարեներից, բայց չխրատվեց:
Եվ ահա, այստեղ անգոսնում գտա,
այնտեղ՝ անարգանք,
Այստեղ՝ դսրովում, այնտեղ՝ պարսավներ,
Այստեղ՝ ծանակում, այնտեղ՝ նախատինք,
Այստեղ՝ դառնություն, այնտեղ՝ կշտամբանք,
Այստեղ՝ վարանում, այնտեղ՝ լքում,
Այստեղ՝ հեծություն, այնտեղ՝ հառաչանք,
Այստեղ՝ կասկածներ, այնտեղ՝ իրացում,
Այստեղ՝ տագնապներ, այնտեղ՝ հատուցում,
Այստեղ՝ փորձություն, այնտեղ՝ դատաստան,
Ուր չի լինի ո՛չ իրավունքի խոսք, ո՛չ ձայն աղերսի,
Ո՛չ օրերը՝ թիվ, ո՛չ ժամանակը վախճան կունենան,
Ո՛չ հուսո շավիղ կգտնես, ո՛չ էլ՝ ողորմության դուռ,
Ո՛չ՝ պահապան աչ, ո՛չ էլ՝ օգնող ձեռք:
Բայց ապավեն ես Դու և փրկություն,
Խնամարկություն և երանություն,
Ողորմում ես Դու, քավում, բժշկում, ո՞վ միակ հզոր,
Կենսաձիր, անճառ, տեր Հիսուս Քրիստոս, բարերար
Աստված,
Օրհնյա՞լ և օրհնյա՞լ և դարձյալ օրհնյա՞լ,
Քո Սուրբ Հոգու հետ բարձրացած հավետ
Մեծիդ իսկության Հոր փառքի համար՝
Հավիտյաններից հավիտյանս. ամեն:

ԱՇԽԱՐՀՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Իմաստուն որդին լսում է իր հոր **խրատը,** բայց ծաղրողը չի լսի հանդիմանությունները (Առակ. 13:1):*

Աստվածաշնչից

1. Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ ինչ որ աշխարհի մեջ է: Եթե մեկը սիրում է աշխարհը, Հոր սերը նրա մեջ չկա, քանի որ այն ամենը, ինչ աշխարհի մեջ կա, մարմնի ցանկություն է, աչքերի ցանկություն և այս աշխարհի ամբարտավանություն, որ Հորից չէ, այլ այս աշխարհից: Թե այս աշխարհն է անցնում, թե՝ ցանկությունը: Իսկ ով կատարում է Աստծո կամքը, մնում է հավիտյան (Ա Հովհ. 2:15-17):

2. Շնացողներ, չգիտե՞ք, որ սերն այս աշխարհի հանդեպ՝ թշնամություն է Աստծո դեմ, քանի որ ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կանի (Հակ. 4:4):

3. Եթե մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին ճանաչելու միջոցով աշխարհի պղծություններից փախչելուց հետո դարձյալ նույն բաներով բռնվեն, մնան, նրանց վախճանը կլինի ավելի վատ, քան առաջին վիճակը (Բ Պետ. 2:20):

4. Սակայն, քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի Խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար (Գաղ. 6:14):

5. Իսկ նրանք, որ սերմանվեցին փշերի մեջ, այն մարդիկ են, որ լսում են խոսքը, սակայն այս աշխարհի հոգսերը և հարստության պատրանքները ներխուժում և խեղդում են խոսքը, և այն անպտուղ է

դառնում (Մարկ.4:18-19):

6. Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի ու տուժի (Ղուկ. 9:25):

7. Այս աշխարհի իշխանը դատապարտված է (Հովհ. 16:11):

8. Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար (Հովհ. 12:25):

9. Եթե աշխարհը ձեզ ատում է, իմացե՛ք, որ նախ Ինձ է ատել: Եթե այս աշխարհից լինեիք, աշխարհն արդեն, որպես իրենը, ձեզ սիրած կլիներ. բայց որովհետև այս աշխարհից չեք, այլ Ես ձեզ ընտրեցի աշխարհից, դրա համար աշխարհը ձեզ ատում է (Հովհ. 15:18-19):

10. Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի Ինձանով խաղաղություն ունենաք: Այստեղ՝ աշխարհում, նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին (Հովհ. 16:33):

11. Այս աշխարհի իմաստությունը հիմարություն է Աստծո առաջ (Ա Կորնթ. 3:19):

12. Սուրբ և անարատ բարեպաշտությունը Աստծո և Հոր առաջ այս է. այցելել որբերին և այրիներին իրենց նեղության մեջ, անարատ պահել իր անձն աշխարհից (Հակոբ. 1:27):

13. Գիտենք, որ ով Աստծուց է ծնված՝ չի մեղանչում և ով Աստծուց է ծնված, պահում է ինքն իրեն, և չարը նրան չի մոտենում: Գիտենք, որ Աստծուց ենք, և ամբողջ աշխարհը չարի մեջ է (Ա Հովհ. 5:18- 19):

14. Նրանք աշխարհից են. դրա համար էլ աշխարհի բաների մասին են խոսում (Ա Հովհ. 4:5):

15. Չէ՞ որ Աստված հիմարացրեց այս աշխարհի իմաստությունը. քանզի աշխարհն իր իմաստությամբ չճանաչեց Աստծուն (Ա Կորնթ. 1:20):

16. Նրանք, որ աշխարհիկ կյանք են վարում, որպես թե՝ վայելած չլինեին. որովհետև այս աշխարհը այնպես, ինչպես որ է, անցնելու վրա է (Ա Կորնթ. 7:31):

17. Դուք այս ներքևից եք, իսկ Ես՝ այն վերևից. դուք այս աշխարհից եք, Ես աշխարհից չեմ (Հովհ. 8:23):

18. Եվ դատաստանը այսպե՛ս իսկ է. որ Լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան Լույսը, որովհետև իրենց գործերը չար էին (Հովհ.3:19):

19. Ես նրանց տվի քո խոսքը, և աշխարհը նրանց ատեց, որովհետև նրանք աշխարհից չեն, ինչպես Ես էլ աշխարհից չեմ:

Այս աղաչում եմ ոչ թե նրա համար, որ նրանց վերացնես աշխարհից, այլ որպեսզի նրանց պահես չարից: Նրանք այս աշխարհից չեն, ինչպես Ես էլ աշխարհից չեմ: Սրբացրու նրանց Քո ճշմարտությամբ, որովհետև Քո խոսքը ճշմարտություն է:

Ինչպես Դու ինձ ուղարկեցիր աշխարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: Ես Ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ (Հովհ. 17:14-19):

***

20. Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության, որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ, որոնք ընկղմում են մարդկանց դեպի կործանում և դեպի կորուստ, որովհետև բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից և իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ (Ա Տիմոթ. 6:9-10):

21. Ինչքա՜ն դժվար է Աստծո արքայություն մտնել նրանց համար, ովքեր հարստություն ունեն (Մարկ. 10:23):

22. Աստված նրան ասաց. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզանից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստծով չի հարստանա (Ղուկ. 12:20-21):

23. Հավատո՛վ է, որ Մովսեսը, երբ մեծացավ, մերժեց Փարավոնի դստեր որդի կոչվել. նախընտրեց չարչարվել Աստծո ժողովրդի հետ, քան միառժամանակ մեղապարտ հաճույքներ վայելել. կարևոր համարեց Քրիստոսի կրած նախատինքները, քան Եգիպտոսի գանձերի առատությունը. որովհետև աչքերը հառած, վարձատրության էր սպասում (Եբր. 11:24-26):

24. Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք,

որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ (Ղուկ. 16:9):

25. Եվ ասաց նրանց. «Ճանապարհի համար ոչինչ մի վերցրեք, ոչ գավազան, ոչ մախաղ, ոչ հաց և ոչ արծաթ դրամ, երկու հագուստ մի ունեցեք» (Ղուկ. 9:3-4):

26. Ոչ մի ծառա երկու տիրոջ չի կարող ծառայել. որովհետև, եթե մեկին ատի, մյուսին կսիրի. կամ եթե մեկին մեծարի, մյուսին էլ՝ կարհամարհի: Չեք կարող և Աստծուն ծառայել, և՛ մամոնային (Ղուկ. 16:13):

27. Արդ, եթե անիրավ մամոնայի մեջ հավատարիմ չեղաք, ձերը ո՞վ կտա ձեզ (Ղուկ. 16:11):

28. Փողասիրությունը թող տեղ չունենա ձեր մեջ, և ինչ որ ձեռք եք բերել, բավարար համարեցեք (Եբր. 13:5):

29. Հույս մի՛ դրեք անիրավության վրա, հափշտակություն մի՛ ցանկացեք, եթե հարստությունն առվի պես իսկ հոսի, թող ձեր սրտերը չցանկանան: Մի անգամ խոսեց Աստված, և երկու անգամ լսեցինք այս բանը (Սաղմ. 61:11-12):

30. Հարստությունը չի օգնի բարկության օրը, բայց արդարությունը կփրկի մահից (Առակ. 11:4):

31. Ով հույսը դնում է հարստության վրա, պիտի կործանվի, իսկ ով հովանավորում է արդարին, պիտի բարգավաճի (Առակ. 11:28):

32. Անիրավությամբ դիզված հարստությունը պիտի պակասի, բայց աստվածպաշտությամբ ձեռք բերված ունեցվածքը պիտի բազմապատկվի (Առակ. 13:11):

33. Ինձ հարստություն կամ աղքատություն մի՛ տուր: Իմ սովորական հացով ինձ կերակրիր: Որպեսզի չլինի թե կշտանամ և քեզ ուրանամ ու «Տերը ո՞վ է» ասեմ: Եվ չլինի, թե աղքատանամ ու գողություն անեմ և իմ Աստծուս անունը պարապ տեղը բերանս առնեմ (Առակ. 30:8-9):

34. Մարդ կա, որ մենակ է և ոչ ոք չունի՝ ո՛չ որդի և ո՛չ էլ եղբայր, բայց նրա աշխատանքն էլ վերջ չունի, և աչքն էլ չի կշտանում հարստությամբ. նա չի ասում, թե՝ «Ո՞ւմ համար եմ ջանք թափում և ինչո՞ւ եմ հոգիս զրկում բարիքից». սա ևս ունայնություն է և դաժան զբաղմունք (Ժողով. 4:8):

35. Ուրեմն այժմ, հարուստնե՛ր, լացե՛ք և ողբացե՛ք այն թշվառությունների համար, որ գալու են ձեր գլխին. որովհետև ձեր հարստությունը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, և ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած, և նրանց ժանգը ձեր դեմ որպես վկայություն պիտի լինի և պիտի ուտի ձեր մարմինը՝ ինչպես կրակը. վերջին օրերի համար գանձեր դիզեցեք: ... Մեղկ կյանքով ապրեցիք երկրի վրա և շվայտացաք, ու ձեր սրտերը պարարտացրիք մորթվելու օրվա համար (Հակոբ. 5:1-5):

36. Բնաջնջվեցին բոլորը, ովքեր հպարտացել էին արծաթով (Սոփոն. 1:11):

37. Նրանց արծաթն ու ոսկին նրանց չի կարող փրկել Տիրոջ բարկության օրը (Սոփոն. 1:18):

38. Ինչո՞ւ ես ցնծում, ... ով անզգամ դուստր, որ ապավինել էիր քո գանձերին և ասում էիր, թե՝ «Ո՞վ պիտի գա ինձ վրա: Ահա ամեն կողմից սարսափ պիտի բերեմ քեզ՝ քո շուրջը բնակվողներից», -ասում է Զորությունների Տերը (Երեմ.49:4-5):

39. Եվ գանձում էին արծաթ ու ոսկի, որոնց վրա հույս դրեցին մարդիկ. նրանց հարստությանը չափ չկար. ովքեր ջանք էին թափում արծաթ ու ոսկի կուտակելու, նրանք իրենց գործով գոյություն չունեցան, մահացան ու դժոխք իջան (Բարուք 3:18-19):

Հայրերից

1. Մի վայելիր աշխարհի հաճույքները, այլապես կմեռնես անարգ մահով (Անտոն Անապատական):

2. Ատիր ամենայն աշխարհայինը և հեռացրու դրանք քեզանից, հակառակ դեպքում դրանք կհեռացնեն քեզ Աստծուց (Անտոն Անապատական):

3. Եթե արհամարհես ամենայն աշխարհայինը, կլինես ավելի թանկագին, քան ինքը՝ աշխարհը (Հովհան Ոսկեբերան):

4. Դժբախտ է նա, ով ապագան զոհում է ներկային (Հովհան Ոսկեբերան):

5. Եթե թողնես աշխարհի բաները, ամեն բան կգտնես: Թող մեղավոր ցանկություններդ ու հոգու հանգստություն պիտի գտնես (Հովհան Ոսկեբերան):

6. Հնարավոր չէ միաժամանակ սիրել թե հոգին, և թե հարստությունը (Հովհան Ոսկեբերան):

7. Աբրահամը կանչվելով Աստծո կողմից մի երկրից մի ուրիշ երկիր, ցույց տվեց այնպիսի հնազանդություն, որ ոչ մի արգելք չկարողացավ նրան կասեցնել, այլ վազում էր և շտապում, ինչպես առույգ երիտասարդ, որպեսզի կատարի Աստծո պատվերը: Իսկ մենք հակառակը, կանչված ենք ոչ թե մի երկրից մյուսը, այլ երկրից երկինք և ցույց չենք տալիս այնպիսի ջանք և համառություն, ինչպես այդ արդարը, այլ առաջ ենք քաշում դատարկ և չնչին պատճառներ: Եվ չի սթափեցնում խոստումի մեծությամբ, ոչ տեսանելիների անկարևորությանը որպես երկրային և ժամանակավոր, ոչ Կանչողի արժանապատվություն, այլ հակառակ, ցուցաբերում ենք այնպիսի անտարբերություն, որ ժամանակավորը գերադասում ենք մշտապես եղողից, երկիրը՝ երկնքից, և երբեք չվերջացողը դնում ենք ավելի ցածր, քան այն, որ անհետանում է ավելի արագ, քան հայտնվում է (Հովհան Ոսկեբերան):

8. Երբ մենք մեր միտքը կատարյալ դարձնենք և ցույց տանք, որ մենք արհամարհում ենք երկրավոր բաները, այնժամ Աստված շնորհում է մեզ նաև երկրայինը, բայց ոչ առաջ, այլ միայն այս բանից հետո, քանի որ մենք կապված ենք երկրավոր բարիքներին, և եթե այն ստանանք, առավել կկապվենք նրան: Ազատվիր նախ ստրկությունից, ասում է Նա, և այնժամ ստացիր, քանզի դու ստացար ոչ թե որպես ստրուկ, այլ որպես տեր: Արհամարհիր հարստությունը և կլինես հարուստ, արհամարհիր փառքը և կփառավորվես, արհամարհիր թշնամուն վրեժխնդիր լինելը, և վրեժդ կլուծվի, արհամարհիր հանգիստը և կստանաս այն, որպեսզի ստանալով, չստանաս որպես ստրուկ (ստացածներիդ), այլ որպես տեր (Հովհան Ոսկեբերան):

9. Լինելով երկնքի քաղաքացի, տիրապետելով երկնային իմաստությանը, ինչի՞ համար ես ստորացնում քեզ հավասարվելով

նրանց ովքեր խորհում են միայն երկրայինը:

Միթե չգիտես դու, որ եթե նույնիսկ վերցնես ամբողջ տիեզերքը տաս անգամ ավելով կամ հարյուր կամ տաս հազար անգամ ավելի կամ այս բոլորը երկու անգամ բազմապատկելով, և այդժամ էլ սա չի կարող համեմատվել ամենափոքրագույն մասին երկնային բարիքների: Ով հիանում է ներկա բարիքներով, նա արհամարհում է գալիք բարիքները: Որքանով, որ մենք խոնարհվենք դեպի երկիր, այնքան ավելի կսկսենք խարդավանքներ գործել միմյանց հանդեպ, նմանվելով գազանների (Հովհան Ոսկեբերան):

10. Նայիր, որպեսզի չբռնկվես աշխարհի կարճատև երջանկությունով, որպեսզի չզրկվես Հավիտենական Կյանքից (Եփրեմ Ասորի):

11. Աշխարհին հաղթել, նշանակում է համբերությամբ հաղթահարել բոլոր նրա ցանկությունները, ոչ մի չար բան չանել ու պահել Աստծո պատվիրանները (Եփրեմ Ասորի):

12. Ինչպես կեղտոտ հայելին չի կարող իր վրա ընդունել պատկերներ և անդրադարձնել, այդպես էլ հոգին, որ զբաղված է այս կյանքի հոգսերով և մթնած է մարմնավոր իմաստության մոլություններով՝ չի կարող իր մեջ ընդունել Սուրբ Հոգու պայծառությունը (Բարսեղ Մեծ):

13. Երկրային բաների հանդեպ սերը ձյութ է, որ կապում է հոգևոր թևերը (Բարսեղ Մեծ):

14. Այս աշխարհը պանդխտություն է և ճանապարհ՝ անցնելու այլ կյանք, և բոլոր նրանք, ովքեր արժանացան հավիտենական կյանքին, և ովքեր արժանի պիտի լինեն, իրենք իրենց ճանաչեցին որպես նժդեհներ և պանդուխտներ և ոչ թե քաղաքացիներ (Օգոստինոս Երանելի):

15. Աշխարհի սերը և Աստծո սերը չեն կարող համատեղ բնակվել մի սրտում, ինչպես որ նույն աչքերը չեն կարող միաժամանակ նայել երկինք ու երկիր (Օգոստինոս Երանելի):

16. Այս աշխարհի հեշտ կյանքի տրտմությունը ճշմարիտ է և ուրախությունը՝ սուտ, աշխատանքը՝ ծանր, և հանգիստը՝ երկյուղալի, երջանկությունը կեղծ է և թշվառությունը՝ իսկական (Օգոստինոս Երանելի):

17. Ինչո՞ւ ես ձգտում հեշտության և ուրախության, եթե քո գլուխը՝ Քրիստոս, որ Հոր իմաստությունն է, փախչելով աշխարհի ուրախ-

թյունից, կամավոր դիմեց մահվան:

Քրիստոս ժխտեց ամեն երկրավոր բան, որպեսզի ցույց տա, որ դրանք մերժելի են (Օգոստինոս Երանելի):

18. Աշխարհը հնոց է, իսկ տառապանքը նրա կրակը: Բարիներն այդ հնոցում ոսկու պես են, ու կրակը միայն մաքրում է նրանց: Իսկ չարերը հարդի պես են, որոնք վառվում են ու կրակից ոչնչանում են (Օգոստինոս Երանելի):

19. Բոլոր նրանք, որ Վերինը չեն փնտրում, այլ այն, ինչ որ երկրի վրա է, Քրիստոսի պաշտոնյաներ չեն, այլ Նեռի (Հերոնիմոս Երանելի):

20. Նույնն են ծաղրածուներին, ինչք տալն ու դներին զոհ մատուցելը (Հերոնիմոս Երանելի):

21. Մի ցանկացիր աշխարհի փառավորներին ընկերանալ, որպեսզի Աստծո փառքը չպակասի քեզանից (Աբբա Եսայի):

22. Մի հետաքրքրվեք ու հարցուփորձ արեք աշխարհի ունայն գործերի մասին (Աբբա Եսայի):

23. Երկրավորները անարգվում են այն ժամանակ, երբ ուշադրության են առնվում երկնավորները (Գրիգոր Աստվածաբան):

24. Ով որ տարված լինի ներկայի քաղցրությամբ, կմատնվի հավիտենական սպանության (Գրիգոր Աստվածաբան):

25. Արտասուքները (որոնք առաջանում են երկյուղի, զղջման, ապաշխարության պատճառով) անմիջապես հանգցնում են աշխարհիկ ցանկությունների բոցը (Գրիգոր Աստվածաբան):

26. Կիրակի օրը պետք է հեռու մնալ ամեն մարմնական աշխատանքից և միայն աղոթքով և գոհություն տալով զբաղվել (Գրիգոր Աստվածաբան):

27. Հին թշնամին, այսինքն՝ սատանան, լպրծուն է, և եթե գլուխը չբռնվի, շուտով բոլորը ներս կսողոսկի (Գրիգոր Աստվածաբան):

28. Ինչքան աշխարհից հեռու, այնքան Աստծուն մոտ (Մարկոս Ճգնավոր):

29. Աշխարհից բաժանվածների դեմ դևերը բացահայտ են մարտնչում (Եվագր Պոնտացի):

30. Ով փախչում է այս աշխարհի ամեն տեսակ նյութական ցանկություններից, նա դևի համար հզոր, անմատչելի աշտարակ է (Եվագր Պոնտացի):

31. Ինչքան որ աշխարհից բան ունես, եթե մեկը այն կորզի քեզանից՝ մի բարկացիր դրա համար (Եվագր Պոնտացի):

32. Նեղության ժամանակ գոհացող եղիր Տիրոջից (Եվագր Պոնտացի):

33. Եթե այս աշխարհում քո ծննդից ի վեր չունես խաղաղավետ հանգստություն՝ անձնատուր եղիր կրոնավորությանը և ամեն ինչ տալով, ստացիր ամենաարժեքավոր մարգարիտը, որպեսզի լինես բազմաշահ վաճառական (Եվագր Պոնտացի):

34. Քո ձեռագործը վաճառելիս, շահեցրու նաև քո վաճառակցին՝ ավելացնելով նրա բաժնի վրա, և մի սիրիր բռնադատել նրան (Եվագր Պոնտացի):

35. Աստծուն չենք կարող տեսնել, եթե այս աշխարհի պատկերը չջնջենք մեր միջից, որ լցված է բազում ախտերով (Եվագր Պոնտացի):

36. Ով հասավ հոգևոր գիտությանը՝ դուրս եկավ այս աշխարհից, իսկ ով մնաց անգիտության մեջ՝ մնաց այս աշխարհում (Եվագր Պոնտացի):

37. Նախ աշխարհն ուրանալն այս է. հանուն Աստծո իմացության թողնել աշխարհի շահը: Երկրորդ՝ ուրանալը չարից հեռանալն է, որ կատարվում է մարդու ջանքերով և Տիրոջ շնորհիվ: Երրորդ՝ ուրանալը տգիտությունից զատվելն է (Եվագր Պոնտացի):

38. Սուրբ միտքը բուրվառ է, որ աղոթքի պահին չի հպվում նյութի (Եվագր Պոնտացի):

39. Աշխարհի ստեղծումը Աստծուց է, իսկ նրանց փառասիրությունը՝ սատանայից (Ամբրոսիոս Մեդիոլանցի):

40. Առանց աշխարհից հեռանալու ոչ ոք չի կարող մոտենալ Աստծուն: Ես հեռանալը անվանում եմ ոչ թե մարմնավոր տեղափոխությունը, այլ աշխարհի գործերից մի կողմ քաշվելը: Աշխարհից հեռանալու օգտակարությունը կայանում է նրանում, որ միտքը չզբաղեցվի աշխարհով (Իսահակ Ասորի):

41. Ճշմարիտ է, որ դժվար և անհարմար է մեր կողմից գործվող հոգևոր սխրանքներն այս կենցաղային գործերի մեջ (Իսահակ Ասորի):

42. Ոչինչ մեզ այնքան չի սարքում մասնակից աշխարհին և աշխարհականներին և նրանց, ովքեր աշխարհում տրված են հարբեցողության և շնության, և այնպես չի հեռացնում մեզ իմաստության գործերից և Աստծուն ճանաչելու գաղտնիքներից, ինչպես ծիծաղկոտությունը և մտքերի աներկյուղ ճախրումը: Եվ սա շնության դևի գործն է: Սրա համար անդադար հանդիմանիր ինքդ քեզ և ասա. «Ավաղ, թշվառ իմ հոգի մոտեցել է ժամը, որ բաժանվես մարմնից: Ինչի՞ համար ես ուրախանում նրանով, որն այժմ իսկ պարտավոր ես թողնել և որն էլ հավիտյան չես տեսնելու» (Իսահակ Ասորի):

43. Ուշադրություն դարձրու քո անցած կյանքին և խորհիր, թե ինչ ես արել և թե ինչու ես այդպես արել, և թե ինչպիսին է քո գործերը, ում հետ ես անցկացրել կյանքիդ օրերը, կամ ո՞վ օգտվեց քո գործերից երկրի վրա, ո՞ւմ ես ուրախացրել քո մարտնչումով, որպեսզի Նա՝ Տերը, ընդառաջ գա քեզ հոգուդ ելքի ժամանակ (Իսահակ Ասորի):

44. Զգուշացիր, զգուշացիր, որպեսզի քո կողմից սիրված բարեկամներդ չորս բոլորդ պատած ջրերի հորձանուտ չդառնան, և չկործանվես աշխարհսիրության հեղեղի մեջ: Մի թուլացիր բարեկամներիդ ու ծնողներիդ արցունքներից, հակառակ դեպքում հավիտենական լացը կժառանգես: Երբ բարեկամներդ շրջապատում են քեզ ինչպես մեղուներ, կամ ավելի լավ է ասել, ինչպես կրետներ և սգում են քեզ վրա, այդ ժամ իսկույն հոգևոր աչքերդ հառիր մահվան վրա և հիշիր քո մեղսալի գործերը: Որպեսզի կարողանաս մի ցավագին վիճակը վանես մեկ ուրիշով: Այս մեր «բարի կամեցողները» պարտավորվում են անել մեր համար ամեն ինչ, ինչ մենք սիրում ենք: Իսկ իրականում նրանց մտադրությունն այն է, որպեսզի արգելք հանդիսանան մեր բարի ձգտումներին, իսկ հետո ներքաշեն մեզ իրենց նպատակների մեջ (Հովհաննես Սանդուղք):

45. Եթե մերժել եք աշխարհը, էլ մի մերձեցեք նրան, քանի որ կրքերը շատ հեշտությամբ ետ են գալիս (Հովհաննես Սանդուղք):

46. Ինչպես մտրակից, խուսափիր այնպիսի վայրերից, որտեղ սայթաքելու և ընկնելու վտանգներ կարող են լինել, քանի որ երբ մենք չենք տեսնում արգելված պտուղը, այդքան անհագորեն չենք ցանկանում այն (Հովհաննես Սանդուղք):

47. Եթե որևէ մեկը մտածում է, թե չունի ոչ մի կապվածություն որևէ առարկայի հետ, իսկ դրանից զրկվելով տխրում է սրտով, ապա

այդպիսին ինքն իրեն լիովին մոլորության մեջ է գցում (Հովհաննես Սանդուղք):

48. Ինչպես ջուրը և հուրը չեն կարող միասին լինել, այնպես էլ Աստծու սերն ու աշխարհի սերը չեն բնակվում մեկ սրտում (Բեռնարտոս):

49. Երբ եկեղեցի մտնես աղոթելու կամ սաղմոս ասելու, քո խճողված մտքերը դրսում թող, որպեսզի կարողանաս միայն Աստծու շուրջը կենտրոնանալ (Բեռնարտոս):

50. Մեծ չարիք է, եթե անարգ որթատունկը կամենում է մեծահարուստ լինել, քանի որ փառաց Աստվածն ու զորության Տերն ուզեց աղքատանալ (Բեռնարտոս):

51. Ցանկանո՞ւմ ես թագավորել, քեզ մեծ թագավորություն ցույց կտամ, նախ տիրապետիր քեզ և այն ժամանակ ամենքը կհնազանդվեն քեզ (Վարդապետների ասածից):

52. Անկարող է որևէ մեկը Աստծո մասին իմանա և որևէ կերպ Նրան հպվի, եթե և՛ զգայությամբ, և՛ իմացությամբ չդադարի նյութական ներգործություններից (Վարդապետների ասածից):

53. Միտքը, որ պատված է երկրավոր ցանկությամբ, աստվածայինի մասին խոկալիս չի կարող ազատ լինել (Վարդապետների ասածից):

54. Ով մարդ, անհոգ մուտք ունես Աստծո մոտ, որովհետև միջնորդ ունես Որդուն, բարեխոս՝ մորը. Որդին Հորը ցույց է տալիս կողի խոցվածը, իսկ մայրը Որդուն ցույց է տալիս կուրծքը և ստինքները, չի կարող դույզն իսկ մերժում լինել այնտեղ, ուր սիրո այնքան նշաններ են հավաքված (Վարդապետների ասածից):

55. Աշխարհի սերը հեռացնում է մեզանից Աստծո սերը (Վարդապետների ասածից):

56. Երեքն են, որ խաբում են մարդուն, այսինքն՝ սատանան, այս աշխարը և մեր մարմինը. աշխարհն աղաղակում է՝ ես պակասելու եմ, սատանան՝ ես խաբելու եմ, մարմինը՝ ես ապականվելու եմ, իսկ Քրիստոս՝ Ես նորոգելու եմ: Ո՛վ մարդ, ընտրիր, թե ում ես կամենում հետևել (Վարդապետների ասածից):

57. Ինչքան կարող ես զգուշացիր աշխարհի ժխորից, որովհետև վտանգավոր են աշխարհիկ զբաղմունքները, նույնիսկ եթե ազնիվ

մտադրություններ ունես: Ունայնությունը կարող է գերել հոգին և հպատակեցնել իրեն (Թովմաս Գեմբացի):

58. Եղիր բարեպաշտ և խաղաղ, և Հիսուս պիտի քեզ հետ ապրի: Կարող ես սակայն հեռացնել Նրան և կորցնել, ո՞վ պիտի քո ապավենը և բարեկամը լինի (Թովմաս Գեմբացի):

59. Աշխարհային ո՞ր մխիթարություններն են համարվում մեղսալի:

Աշխարհային մխիթարություններն են՝ համեղ կերակուր, շքեղ կահավորանք, շքեղ հանդերձանք, զանազան զվարճություններ (հեռուստացույց, երաժշտություն, հաճախակի այցելություններ ծանոթներին, որոնք օգտակար չեն հոգու համար) (Հոգեշահ գրքերից):

60. Քավ լիցի, որդյակ, եթե Աստծո կենաց ժառանգությունից դուրս գաս՝ ժառանգելու համար անցավոր աշխարհը, որը ոչինչ է, այսօր կա և վաղը կկորչի: Հիշիր Տիրոջը, որ մեզ բարձրացնելու համար խոնարհվեց և Իր Արյունը թափեց խաչի վրա, մեր կյանքի ու մեր փրկության համար մահվան մատնվեց: Պահիր Նրան քո մտքում և սրտովդ Նրան օգնության կանչիր (սուրբ Գայանե):

61. Աշխարհի մեջ շատ մոտ բարեկամներ, ազգականներ ու սիրելիներ ունես, հնարավոր է սրանց պատճառով խոչընդոտներ առաջանան քո ճանապարհներին, սակայն հիշիր Տիրոջ խոսքը.«Ով որ իր հորը կամ մորը Ինձանից ավելի սիրի՝ Ինձ արժանի չէ»: Թերևս նրանք անկեղծությամբ են սիրում քեզ, բայց այս սերը հաստատուն և մնայուն սեր չի կարող լինել, որովհետև երբ դու մեռնես, ու մարմինդ նրանց աչքերի առջևից ան-երևույթ լինի, քո հիշատակն էլ կվերանա: Գերեզմանի մեջ ծածկվելուցդ քիչ հետո քո հանդեպ ունեցած սերդ ամենամոտ սիրելիներիդ մեջ անգամ մարող ճրագի պես պիտի նվազի: Մտածիր հիմա, թե արժե՞ նրանց համար անձդ հավիտենական դատապարտության մատնես (Տեր Գաբրիել քահանա):

62. Երբ դու քո մեղքերով դժոխք իջնես, այնտեղ աշխարհը կամ սիրելիներդ քեզ ի՞նչ մխիթարություն կարող են տալ կամ ի՞նչ օգնություն կարող են անել: Նույնպես աշխարհի մեջ վայելած ուրախություններդ դժոխքի մեջ եղող տրտմություններիդ դեմ կարո՞ղ են որպես մխիթարություն լինել. կերուխումը, խաղն ու պարը տակավին

իրենց ազդեցությունները կունենա՞ն, այն ներդաշնակ երաժշտությունների ձայները լսվո՞ւմ են. ո՛չ, ո՛չ, այլ միա՛յն հավիտենական ողբ, հուսահատություն ու հառաչանք: «Ո՞ւր են նրանց աստվածները, որոնց վրա հույս էին դրել, թող ելնեն ու ձեզ օգնեն և ձեզ պաշտպանեն» (Բ Օրին. 32:37-38) (Տեր Գաբրիել քահանա):

63. Քանի որ աղոթքը մտքի համբարձումն է առ Աստված, պետք է, որ աղոթելիս միտքը զերծ լինի բոլոր աշխարհային մտածումներից, և կամքը լինի բարի կամեցողության մեջ (Պողոս Պատրիարք):

64. Մինչև ե՞րբ պիտի սիրենք պարապ, սնոտի և ոչ միայն սուտ, այլև խիստ չար այս կյանքը: Այն, ինչը որ Տիրոջ կամքն է, չենք անում, իսկ երբ այս կյանքից անդենականին անցնենք, մեր անցած օրերի համար պատիժ և վնասներ պիտի կրենք ... Նա զուր տեղը միայն մարմնի պահանջները շարժելու համար չէ, որ այս կյանքում Սուրբ Հոգին բերելով շնորհեց մեզ, այլ որպեսզի այս կյանքով հանդերձյալը շահենք: Նման կյանք պետք է միայն ձիերին, էշերին ու եզներին, որովհետև նրանց ծառայությունը միայն այստեղ է պետք, իսկ մենք, որ անմահ հոգի ունենք, ջանանք մեր համար պատրաստված լավագույն կյանքը ժառանգել, ուր Սուրբ Հոգու միջոցով մարմինը ևս պիտի անմահանա (Բարսեղ Մաշկևորցի):

65. Մտածիր, թե ո՞րչափ պիտի պատժվես Նրա կողմից, որ կյանք է շնորհել քեզ, իսկ դու երկիրն ես սիրում: Աստված ժամանակ է տվել քեզ, որպեսզի քեզ Իրեն հետ հաշտեցնես, մինչ դու այն ժամանակավոր, իզուր մեղքերի մեջ ես մաշեցնում: Երբ պարապ տեղը դրամ ես ծախսում, ցավում ես դրա համար, իսկ երբ ամբողջ օրերդ սատանայի խայտառակության մեջ ես վատնում, չե՞ս ցավում դրա համար (Բարսեղ Մաշկևորցի):

66. Ասա ինձ, եթե զավակիդ արհեստ սովորելու տայիր, իսկ նա միշտ մնար տանը կամ ուրիշ տեղ խաղար, վարպետը չէ՞ր հրաժարվի նրանից, ասելով. «Դու ժամանակ որոշեցիր, որպեսզի զավակդ արհեստ սովորի, սակայն այսքան ժամանակվա մեջ, տակավին ոչինչ չի սովորել, որովհետև երբեք չեկավ իմ մոտ, և այս իրողությունը հարկ է, որ իմացնեի քեզ»: Նույնպես և Աստված ասում է. «Քեզ ժամանակ տվեցի, որպեսզի երկյուղածության, աղոթքի և բարեգործության արվեստը սովորեք, իսկ դուք պարապ տեղը ի՞նչ բանի համար վատնեցիք այդ: Ինչո՞ւ հաճախակի կերպով վարդապետների մոտ գնալով ուշադրություն չդարձրեցիք ասված խոսքերին և առաքինի գործեր չկատարեցիք» (Բարսեղ Մաշկևորցի):

67. Լսիր, թե ինչ է ասում մարգարեն. «Եկեք, որդիներս, լսեցեք ինձ և Աստծո երկյուղը պիտի սովորեցնեմ ձեզ» (Սաղմոս ԼԳ:12), ինչպես նաև՝ «Երանի այն մարդուն, որին Դու ես խրատում, Տեր, և դաստիարակում ես Քո օրենքներով»: Իսկ դու, որ այս ժամանակը պարապ տեղն ես անցկացնում, ի՞նչ պատասխան պիտի տաս (Բարսեղ Մաշկևորցի):

68. Բոլոր նրանք, որ սիրում են այս աշխարհը, նմանվում են մարդու, որ ատելով իր կնոջը, նրանից բաժանվում է և ջանում գրկել նրա ստվերը, կամ մերժում է որդուն և սիրում է նրա շողը: Արդարև, աշխարհը ստվեր է իր բոլոր բարիքներով՝ փառքերով, հեշտություններով և թե այլ բաներով, որի համար էլ մարգարեն ասում է. «Մարդիկ ստվերի մեջ են շրջում», այսինքն՝ արագորեն շուքի ետևից են գնում, և մի ուրիշ տեղ էլ. «ծուխ և խոտի ծաղիկ» է անվանում մարդկանց գործերը: Հետևաբար, պետք չէ սիրել աշխարհի զբաղմունքները, այլ փնտրիր միայն այն, ինչ որ Աստծո կողմից գովված է (Բարսեղ Մաշկևորցի):

69. Արդ, փնտրենք արքայությունը, եղբայրնե՛ր, ոչ այնպես, ինչպես Ղովտի կինը, որ ետ նայեց և աղի արձան դարձավ, քանզի թեև դուրս եկավ Սոդոմից, սակայն ետ շրջվելով՝ կործանվեց: Նույնպես և մենք, եթե արքայությունը փնտրելով՝ թողնում ու ետ ենք դառնում դեպի աշխարհի սերը, կործանվում ենք (Գրիգոր Տաթևացի):

70. Քանզի ո՞վ կարողացավ աշխարհին տիրելու հետ միասին նաև անապականություն ստանալ. կամ ո՞ր թագավորը կարողացավ մահը կյանքի փոխարկել. կամ մարմնավոր ո՞ր երանությունը կարողացավ հավիտենական կյանք տանել (Ներսես Լամբրոնացի):

71. Մեր Տերը մարդասիրության լավ խրատ է տալիս մեզ՝ հաճախ ասելով. «Օ՛, եկե՛ք գնանք այստեղից»(Մատթ. 26:46), այսինքն՝ երկրից երկինք. իսկ մենք երկրից դեռ չենք հրաժարվում, այլ օձի նման երկրի վրա քարշ ենք գալիս (Սարգիս Շնորհալի):

72. Մի տարվիր հարստությամբ, քանի որ դրա հանդեպ ունեցած հոգսը՝ հակառակ քո կամքի, կհեռացնի քեզ Աստծուց (Նեղոս Սինայեցի):

73. Ինչքերի կուտակման մասին միտքը քեզ հուշում են ծերությունը և հիվանդությունները, որպեսզի Աստծո վրա ունեցած մեր հույսը բաժանես ունեցվածքի վրա ունեցած հույսի հետ (Նեղոս Սինայեցի):

74. Անընչասերն ապրում է անհոգ կյանքով, իսկ ընչաքաղցը հարստության մասին հոգսը կրում է որպես մշտական հիվանդություն (Նեղոս Սինայեցի):

75. Արծաթսիրությունն արմատն է ամենայն չարիքի: Ով ուզում է ոչնչացնել կրքերը, թող սկզբից արմատախիլ անի արծաթսիրության արմատը, քանի դեռ մնում է արծաթսիրությունը, ոչ մի օգուտ չես ստանա ճյուղերը կտրելուց, քանի որ եթե նույնիսկ կտրես էլ ճյուղերը, ապա շուտով նրանք նորից կաճեն (Նեղոս Սինայեցի):

76. Մի ուրախացիր իրերով և նրանց փառքով, ապա թե ոչ՝ մեղավորները կխփեն ոչ միայն թիկունքիդ, այլև երեսիդ, որպեսզի ծաղրեն քեզ՝ հրապուրելով և խաբելով անօրեն խորհուրդներով (Նեղոս Սինայեցի):

77. Երբ խոսում է ոսկին, մնացած խոսքերն անզոր են, այն կարողանում է համոզել, չնայած համր է (Գրիգոր Աստվածաբան):

78. Արծաթսիրության մոլությունն էր պատճառը, որ սատանան Հուդայի սիրտը սողոսկեց, ապա այն գրավեց և հետո համարձակաբար հաստատվեց նրա մեջ (Գրիգոր Աստվածաբան):

79. Արծաթասերի ձեռքում հարստությունը նույնն է, ինչ խենթի ձեռքում սուրը (Հովհան Ոսկեբերան):

80. Ինչպես որ ծովն առանց ալիքների համարյա թե չի լինում, այնպես էլ արծաթասեր մարդու սիրտը առանց վշտերի, վախի ու անհանգստության չի լինում (Հովհան Ոսկեբերան):

81. Մարդիկ այլևս ոսկե ու արծաթե կուռքեր չեն պաշտում, այլ պաշտում են ուղղակի ոսկին ու արծաթը, և իրենց հույսը դնում են դրանց վրա (Հովհան Ոսկեբերան):

82. Եթե ուզում ես երկինք գնալ, ապա երկրի վրա ոչինչ մի ունեցիր, որը կարողանա արգելք հանդիսանալ (Հովհան Ոսկեբերան):

83. Ով հաղթել է հարստասիրության մոլությանը, նա է ամենահարուստը (Հովհան Ոսկեբերան):

84. Սարսափելի, ճշմարտապես սարսափելի բան է արծաթսիրությունը: Այն փակում է թե աչքերը, և թե ականջները, դարձնում է գազաններից ավելի կատաղի, թույլ չի տալիս մտածել ոչ խղճի մասին, ոչ ընկերության, ոչ հարաբերվելու մասին, ոչ էլ սեփական հոգու փրկության մասին, սա հանկարծ ետ է դարձնում այս ամենից, և իրենով գերվածներին դարձնում ստրուկներ, ինչպես ոմն դաժան բռնավոր: Եվ ի՞նչն է ավելի վատ, որ այս դառը ստրկության մեջ, սա ստիպում է որպեսզի էլ ավելի իրենով տարվեն, և ինչքան ավելի է տարածվում, ավելի հաճելի է թվում արծաթասերին: Եվ հիմնականում այս բանից է, որ այս հիվանդությունը դառնում է անբուժելի, և սրանից է, որ այս գազանը չի սանձահարվում (Հովհան Ոսկեբերան):

85. Արծաթսիրությունը Գեեզիին աշակերտից և մարգարեից դարձրեց բորոտ, սա կորստի մատնեց Անանիային, նաև Հուդային դարձրեց դավաճան: Սա ծնել է անհամար պատերազմներ, ճանապարհները լեցունացրել է արյունով, քաղաքները՝ սգով ու լացով: Սա և խորհրդավոր ընթրիքի արարողությունը դարձնում է անմաքուր և ճաշկերույթը մերժելի: Դրա համար էլ Պողոսը անվանում է սա կռապաշտություն և ինչո՞ւ, որովհետև շատերն ունենալով հարստություն, չեն համարձակվում օգտվել դրանից, համարելով դա որպես սրբություն և ամբողջովին այն փոխանցում են թոռներին և նրանց սերունդներին, չհամարձակվելով դիպչել դրան, կարծես թե մի բանի, որ նվիրված է Աստծուն: Եվ եթե նույնիսկ երբևէ ստիպված են լինում, այնժամ այնպիսի մի վիճակի մեջ են ընկնում, որ կարծես թե գործել են ինչ-որ անթույլատրելի մի արարք: Մյուս կողմից, ինչպես որ կռապաշտը պահպանում է կուռքը, սրանք արգելափակում են ոսկին դռներով և պարըսպով, տաճարի փոխարեն պատրաստում և արծաթե տարաների մեջ են այն պահում: Դե եթե դու էլ նման ձևով երկրպագում ես ոսկուն, ոչնչով չես տարբերվում կուռքին երկրպագող հեթանոսից (Հովհան Ոսկեբերան):

86. Հեթանոսը ավելի շուտ կտա իր աչքերը և իր անձը, քան թե կուռքը, այդպես և ոսկի սիրողը: Բայց դու կասես, որ ոսկուն չե՞ս երկրպագում: Հեթանոսն էլ նույնն է ասում, որ չի երկրպագում կուռքին, այլ նրա մեջ բնակվող դևին: Այսպես և դու չես երկրպագում ոս-

կուն, սակայն երկրպագում ես դևին, որը խցկվում է հոգուդ մեջ ոսկու տեսքից և նրա հանդեպ քո կրքոտությունից (Հովհան Ոսկեբերան):

87. Արծաթսիրության կիրքը դևից վատթար է և սրա առաջ ավելի շատերն են խոնարհվում, քան հնում կուռքերին: Կուռքերին շատ բաներում չեն լսում, իսկ արծաթսիրությանը ամեն ինչում հնազանդվում են և անում են ամենը, ինչը նա հրամայի կատարել: Իսկ ի՞նչ է նա ասում: Եղիր, ասում է նա, բոլորի հանդեպ թշնամի և հակառակորդ, մոռացիր բնությունը, արհամարհիր Աստծուն, զոհաբերիր քեզ ինձ, և ամեն բան հնազանդվում է սրան: Կուռքին որպես զոհ բերում են անասունների, իսկ արծաթսիրությունը ասում է. «որպես զոհ ինձ մատուցիր քո անձը», և սա կատարում են: Տեսնո՞ւմ ես թե ինչպիսի զոհասեղաններ ունի սա, և ինչպիսի զոհեր է ընդունում: «Ագահները, -ասում է առաքյալը, -Աստծո արքայությունը չեն ժառանգում», բայց սրանք այս խոսքերից էլ չեն զարհուրում (Հովհան Ոսկեբերան):

88. Չնախանձենք հարուստներին և չարհամարհենք աղքատներին, քանզի թե մեկը, և թե մյուսը լինում են Աստծուց, նաև՝ ոչ Աստծուց: Բայց կասես, որ ասված է, թե. «Հարընտությունը և աղքատությունը Աստծուց է» (Սիրաք 11:14): Բայց հարցնենք մեզ հակաճառողներին, բոլոր հարստությունն՞ը են Աստծուց, և արդյոք ամեն մի աղքատությո՞ւն է, որ Աստծուց է: Ով կարող է դա ասել: Քանզի մենք տեսնում ենք, որ շատերն իրենց մեծ հարստությունը հավաքում են հափշտակությամբ, կախարդությամբ և նմանօրինակ այլ միջոցներով: Դե ասա ինձ, կարելի՞ է ասել, որ նման հարստությունը Աստծուց է: Ոչ, ուրեմն որտեղի՞ց է՝ մեղքից: Պոռնիկը պղծում է իր մարմինը և հարստանում, այսպես և գողը՝ ծակելով պատը, հավաքում է անիրավ հարստություն: Եվ ինչ, արդյո՞ք ամեն մի հարստություն է, որ Աստծուց է: Բայց լսիր, որ լինում է նաև աղքատություն, որ Աստծուց չէ: Մի անժուժկալ պատանի ծախսեց իր հարստությունը անառակ կանանց, կախարդների և նմանօրինակ այլ բաների վրա և դարձավ աղքատ, հայտնապես է, որ սա Աստծուց չէ, այլ սեփական անժուժկալությունից: Այսպես է նաև, եթե մեկն աղքատանում է պարապությունից, դառնում է կարիքավոր՝ սեփական անմ-

տությունից, կամ որ արել է բաներ վտանգավոր և անօրեն, պարզ է, որ նման մարդիկ Աստծուց չէ, որ ընկել են նման վիճակի մեջ (Հովհան Ոսկեբերան):

89. Ինչպիսի՞ աղքատությունն է և ինչպիսի՞ հարստությունն է, որ տրվում է Աստծուց: Նա դարձրեց հարուստ Աբրահամին, նրանից հետո նաև Հոբին, ինչպես որ ասում է. «Տիրոջ ձեռքից բարիքներ ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք» (Հոբ 2:10): Հակոբի հարընտությունն էլ այստեղից առաջ եկավ: Լինում է և Նրանից չքավորություն, որը պատճառ է բարիքի, որը և Նա երբեմն առաջարկեց հարուստին հետևյալ խոսքերով. «Եթե ուզում ես կատարյալ լինել, գնա վաճառիր ունեցվածքը և բաժանիր աղքատներին և եկ իմ ետևից» (Մատթ. 15:21): Եվ հիմա կհարցնես, եթե հարուստները օգտակար չեն, ուրեմն, ինչի՞ համար նրանք գոյություն ունեն: Նրանք են անպիտան, ովքեր իրենք իրենց են հարստացրել, իսկ ում հարստացրել է Աստված, նրանք հույժ օգտակար են: Սա կարելի է տեսնել և իր գործերից: Աբրահամը տիրում էր հարստության և հոգուտ բոլոր ճամփորդների օտարականների ու կարիքավորների:

Այսպիսին էր և Հոբ Երանելին. «Իմ դուռը բաց էր բոլոր այցելուների համար» (Հոբ 31:32), «Կույրին աչք էի և կաղ մարդուն՝ ոտք ու խեղճին՝ հայր» (Հոբ 29:15), «Օտարը դրսում չէր օթևանում, իմ դուռը բաց էր եկվորի առաջ» (Հոբ 31:32), «Կորած մեկին անտեսեցի՞ և չհագցրեցի՞» (Հոբ 31:15): Եվ սրանից առավելն էր անում նա:

Իսկ հիմա ուզո՞ւմ ես տեսնել նրանց, որ հարստացան, բայց ոչ Աստծուց, և տեսնել, թե ինչպես էին նրանք վարվում իրենց ունեցվածքի հետ: Նայիր հարուստին, որ հիշատակվեց Ղազարոսի հետ, որ մի հատիկ իսկ չհեռացրեց իրենից, նաև Աբաբին, որ հափշտակեց այգին և նմանօրինակ այլոց (Հովհան Ոսկեբերան):

90. Հիմա կհարցնես. ինչո՞ւ է Աստված թույլ տալիս նման մարդկանց հարստանալ: Որովհետև Նա երկայնամիտ է և ուզում է մեզ բերել ապաշխարության, որովհետև Նա պատրաստել էր գեհենը և օր նշանակել, որում պիտի դատի ամբողջ երկիրը: Եթե նա նույն պահին պատժեր հափշտակությամբ հարստացողին, այնժամ Զակքեոսը ժամանակ չէր ունենա զղջալու և քառապատիկ ավելին տալու իր հափշտակածից, դնելով և իր սեփական ունեցվածքի կեսը, Մատթեո-

սը չէր կարող փոխվել և դառնալ առաքյալ, եթե չունենար համապատասխան ժամանակամիջոց, և նմանորինակ ուրիշ շատերը: Եթե նրանք չուզենան զղջալ և շարունակեն նույնն անել, ուրեմն, նրանց համար է ասել Պողոսը, որ նրանք իրենց. «Խստությամբ և անզիղճ սրտով բարկություն են դիզում իրենց անձի դեմ բարկության օրվա և Աստծո դատաստանի հայտնության օրվա համար» (Հռոմ. 2:5): Որպեսզի մենք խուսափենք այս բարկությունից, ապա հավաքենք երկնային հարստություն և փնտրենք չքավորությունը, որ արժանի է գովասանքի, և այնժամ մենք էլ կարժանանանք գալիք անանց բարիքներին (Հովհան Ոսկեբերան):

91. Զարհուրենք արծաթսիրությունից և փախչենք այս մեղքից: Արծաթսիրությունը խռովքի է մատնել ամբողջ աշխարհը, ամեն ինչ մատնեց անկարգության, նա հեռացնում է մեզ Քրիստոսին ծառայելու երանավետությունից, քանի որ մամոնան լիովին հակառակ է Քրիստոսին: Քրիստոսն ասում է.«Տուր կարիքավորներին», իսկ մամոնան՝ «Խլիր կարիքավորից», Քրիստոսն ասում է. «Ներիր քո հանդեպ չար խորհողին և վիրավորողին», իսկ մամոնան՝ «Խարդավանքներ սարքիր մարդկանց դեմ, չնայած որ քեզ ոչ մի վնաս չեն հասցրել», «Եղիր մարդասեր և հեզ», իսկ մամոնան՝ հակառակը. «Եղիր դաժան և անմարդկային, ոչինչ համարիր կարիքավորների արցունքները», և այս կերպով դատաստանի օրը մեզ համար զարհուրելի է դարձնում Դատավորին: Այնժամ մեր բոլոր գործերը կհառնեն մեր աչքերի առջև, մեր կողմից վիրավորված և զրկվածները մեզ կզրկեն ամեն մի արդարացումից (Հովհան Ոսկեբերան):

92. Արհամարհենք դրամը և փառքը: Այս կրքերից ազատվածը ազատ է բոլոր մարդկանցից առավել և հարուստ է արքայական պատմուճան հագնողից: Չե՞ս տեսնում արդյոք, թե որքան չարիք է լինում դրամի պատճառով: Չեմ ասում, որքան ագահությունից, այլ որքան փողի հանդեպ կրքոտությունից: Օրինակ, մեկը փող է կորցրել և հիմա ապրում է մի կյանքով որ մահվանից ավելի անտանելի է: Ինչի՞ համար ես դու սգում, ով մարդ, ինչի՞ համար ես լացում, արդյոք դրա համա՞ր, որ Աստված ազատեց քեզ ավելորդ հոգսերից: Այն բանի՞ համար, որ էլ չես նստում ահի և դողի մեջ: Եթե մեկը քեզ նստեցներ իր գանձի մոտ և հրամայեր գիշեր ու զօր այն հսկել, դու կդժ-

գոհեիր դրա համար և կտրտնջայիր: Բայց երբ դու ինքդ ես քեզ կապել անտանելի կապանքներով, էլ ինչու՞ ես սգում, որ արձակվել ես այդ կապանքներից (Հովհան Ոսկեբերան):

93. Տերն ասաց. «Երանի հոգով աղքատներին» (Մատթ. 5:3): Մտածիր, թե ինչպիսի օրհնության կարժանանաս Աստծո կողմից, եթե այդ բանը գործով ցույց տաս: Նա մեզանից պահանջում է մի բան, որպեսզի ամեն ինչի համար Աստծուն գոհություն հայտնենք և մենք ունենանք ամեն բան ավելիով: Օրինակ, եթե դու կորցրել ես 100 ոսկի տեղում, իսկ գոհացիր Աստծուց և Իրեն դիմելու և գոհություն հայտնելու մեջ դու կստանաս 100 000-ից ավելի: Եվ սատանան էլ վնասում է մեզ ոչ այն բանի համար, որ հափշտակի մեր ունեցվածքը, քանի որ նա գիտի, թե այդ բոլորը ոչինչ են, այլ որպեսզի այդ բանի միջոցով մեզ ստիպի արտահայտել մի ինչ-որ աստվածհայհոյություն: Այսպես և Հոբ Երանելուն նա ցանկանում էր զրկել ոչ միայն ունեցվածքից, այլև դարձնել նրան աստվածհայհոյող: Երբ չարը զրկեց Հոբին իր ունեցվածքից, տես, թե ինչ ասաց կնոջ միջոցով. «Աստծուն հայհոյիր ու մեռիր» (Հոբ 2:9): Բայց դու, ո՜վ չարք, նրան զրկեցիր ամեն ինչից:« -Ես այն բանին չէի ձգտում, ինչ-որ արեցի, -ասում է նա, -այլ ես ձգտում էի այս բոլորի միջոցով Հոբին զրկել Աստծո օգնականությունից՝Նրա դեմ տրտունջ հարուցելու միտումով, սրա համար է, որ նրան զրկեցի ունեցվածքից, իսկ եթե այդ բանին չհասնեմ, Հոբը ոչ մի վընաս չի կրի, այլ ավելի մեծ օրհնության կարժանանա»:

Տեսնո՞ւմ ես, որ չար ոգին գիտի, թե ինչպիսի վնասներ է լինում նման անհամբերությունից: Դրա համար էլ նա նման խարդավանքներ էր նյութում Հոբի դեմ (Հովհան Ոսկեբերան):

94. Ես չեմ դատում նրանց, որոնք ունեն տներ, դաշտեր, դրամ, ծառաներ և այլն: Այլ միայն ցանկանում եմ, որ նրանք իմաստությամբ և պատշաճ կերպով վարվեն այնպես, ինչպես որ տերը, այլ ոչ թե ստրուկը, այսինքն՝ տիրել հարստությանը և թույլ չտալ, որպեսզի այն տիրի մեզ վրա, օգտագործել այն, բայց չչարաշահել (Հովհան Ոսկեբերան):

95. Դժոխքը չի ասի՝ հերիք է, հարստատենչը երբեք չի ասում, թե՝ բավական է (Բարսեղ Կեսարացի):

96. Ժլատը, քանի դեռ կենդանի է, ոչ մի լավ բան չի անում, միայն նրա մահից հետո է բարիք լինում, երբ կուտակված հարստությունը լույս աշխարհ է գալիս (Բարսեղ Կեսարացի):

97. Ինչքան ծանր են ժլատի սնդուկները, այնքան թեթև է հարազատների վիշտը (Բարսեղ Կեսարացի):

98. Դրամ մի՛ ցանկացիր, և այն կուղարկվի առատությամբ (Եպիփան Կիպրացի):

99. Մի ասա, որ դրամ ես հավաքում աղքատների համար, քանի որ որբևայրի կինը երկու լումայով գնեց Երկնքի արքայությունը (Հովհաննես Սանդուղք):

100. Արծաթսիրությունը հաղթահարողը արմատախիլ է արել հոգսերը, իսկ նրանով տարվածը երբեք մաքուր չի աղոթում (Հովհաննես Սանդուղք):

101. Արծաթսիրությունն սկսվում է ողորմություններ բաշխելու անվան տակ և վերջանում աղքատների հանդեպ ատելությամբ: Արծաթասերը ողորմած է, քանի դեռ դրամ է հավաքում, իսկ երբ դրամը կուտակվում է, այն ժամ պինդ փակում է իր ձեռքը (Հովհաննես Սանդուղք):

102. Տեսել եմ աղքատներ, որոնք ապրելով հոգով աղքատների հետ, հոգեպես հարստացել են և մոռացել իրենց աղքատությունը (Հովհաննես Սանդուղք):

103. Ինչպես որ ոսկին կավի հետ փոխանակողը մեծ վնաս է հասցնում իրեն, այդպես էլ նրանք, որոնք մարմնավոր, նյութական շահի համար խոսում են հոգևոր բաներ (Հովհաննես Սանդուղք):

104. Հարստությունը համարիր ոչ այլ ինչ, քան տատասկ, որն արյունոտում է նրանց, որոնք իրենց ձեռքերով ամուր սեղմում են այն (Օգոստինոս Երանելի):

105. Հարց. -Երբ ինչ-որ մեկի հետ հաշիվ եմ անում, ապա մի ձայն ինձ ստիպում է գոնե մի փոքր թաքցնել, խաբել, համաձայն մեղավոր բնույթի: Ի՞նչ անեմ:

Պատ. -Ընդհակառակն արա, աշխատիր նրան ավելի շատ տալ, ինչքան էլ դժվար լինի քեզ համար: Գոնե մի պղնձադրամ, որպեսզի խուսափես չար վաշխառությունից: Քանզի նա, ով աշխատում է գոնե մի փոքր ավելի տալ, դրանով իսկ հեռացնում է իրեն մեղքից՝ որևէ բան ավել ունենալուց: Փոքրի մեջ մեղանչողը մեծի մեջ է մեղանչում, նաև փոքր կրքերը մեծ կրքեր են դառնում: Թող Աստված քեզ Իր երկյուղի մեջ հաստատ պահի (Բարսիլիսկոս Մեծ):

106. Հարց. -Եթե որևէ մեկը գնում կամ վաճառում է որևէ իր, մեղք չէ՞ արդյոք սակարկելը:

Պատ. - Եթե դա ստիպողաբար չի արվում, այլ ազատ կամքով, փոխադարձ համաձայնությամբ, ապա մեղք չէ տալ կամ վերցնել պայմանավորված գինը: Սակայն եթե մեկն ավելի շատ ձեռք բերեց, քան իրական արժեքն է, ապա նա, ինքնըստինքյան, պետք է վերադարձնի ավելցուկը և հենց դրանով բարի գործ կանի, որի համար էլ երախտագիտության կարժանանա: Իսկ եթե որևէ մեկն իր ենթականերից մեկնումեկի հետ է պայմանագիր կնքում, ապա պետք է զգոն լինի, որպեսզի իր իշխանությամբ ճնշում չգործադրի, քանի որ սա մեղք է: Պետք է նախապես ասել. ես չեմ վիրավորվի, եղբայր, եթե դու չհամաձայնես այն գումարին, ինչ ես եմ առաջարկում, ավելին տալ չեմ պատրաստվում: Այդ պատճառով էլ արա, ինչպես ուզում ես, կամ ինչպես հարմար ես գտնում (Բարսիլիսկոս Մեծ):

107. Ոչ թե հարստություն ունենալ, այլ՝ հարստության կարիք չունենալ՝ ահա մեծ հարստությունը (Աբբա Հովհաննես):

108. Քանի որ ագահն իր գանձերը երկրի վրա դիզելու ետևից է գնում, իհարկե, նրա սիրտն ու սերն էլ երկնքից ու Աստծուց հեռու են (Տեր Գաբրիել քահանա):

109. Աստված մինչև անգամ մեր սննդի և հագուստի և այլ կարիքների համար հոգ անել չի պատվիրում. «Քո հոգսը Տիրոջ վրա դիր, և Նա կխնամի քեզ» (Սաղմ. 55:22): Բայց ագահը գործնական է, ուզում է իր և իր ընտանիքի ապագան ապահով հիմքերի վրա դնել իր իսկ ջանքերով (Տեր Գաբրիել քահանա):

110. Արծաթսիրությունը միայն շատը ցանկանալը չէ, այլ այն ինչ-որ մեր անհրաժեշտությունից առավել է: Մի՞թե ոսկու և թանկարժեք քարերի շատությունն էր, որ մատնողին հրապուրեց, ոչ, եղածն ընդամենը երեսուն արծաթ էր (Բարսեղ Մաշկևորցի):

111. Տեսնում եմ, որ ամենքս էլ արհամարհում ենք Քրիստոսին և պատվում ինչքերին: Մեզանից ո՞վ է արդյոք Քրիստոսին հաճելի լինելու

համար այնքան հոգում և աշխատում, որքան հարստության համար, և կամ ո՞վ է Քրիստոսի հանդեպ այնքան սեր ցույց տալիս, որքան չեմ ասում իր կնոջ և զավակների, այլ կենդանիների, պարտեզների և այգիների համար: Այս բոլորի համար բազմապիսի խընամք ենք տանում, մինչ Քրիստոսի համար՝ երբեք (Բարսեղ Մաշկևորցի):

112. Տակավին ոմանք այնքան չար են ու խիստ, հակառակ այն բանի, որ զավակ չունեն, չեն ուզում իրենց ժառանգությունը այլոց թողնել: Ավելի շուտ փափագում են, որ գետինը բացվի ու այն ծածկի, որպեսզի չտեսնի, որ ուրիշները տիրանում են իր հարստությանը, ինչը որ չար մտքի ծնունդ է: Սակայն դու գրիր որ Քրիստոսին ես ժառանգում հարստությունդ: Սա ողջությանդ ժամանակ պիտի անեիր, որովհետև մեծագույն ողորմությունը կենդանության ժամանակ արվածն է: Քանի որ այդ չես արել, գոնե մահվանիցդ հետո արա, որպեսզի ձախակողմյան ուլերի հետ չդասվես (Մատթ. 25:32,32), թեև գառների հետ չես կարող փառավորվել, սակայն գեթ նրանց շարքերը կանցնես, ինչը որ նվազ բարիք չէ (Բարսեղ Մաշկևորցի):

113. Ով չար վաշխի անօրենություն, որ ստացողների համար մահվան որոգայթ է, և չեն իմանում, որ խեղդակապ է անձին, կապանք՝ հոգուն, առիթը՝ գեհենի, առաջնորդ խավարի, պատրաստող ամեն տեսակի չարչարանքների և հավիտենական ամոթի, որի համար և հարկ է, որ խիստ զգուշությամբ հրաժարվենք ստացվածք տենչալուց: Փախչենք այդ չար ախտից, փախչենք չարաժանի գազանից, խույս տանք սատանայական մեքենայություններից: Որովհետև վաշխառությունը չար օձի վարդապետությունն է, դիվային հնարք է, թշնամու սերմն է, տանջանքների հավաստիքն է, բարեպաշտության խափանարարը, գեհենի ճանապարհը, արքայության զրկումն է, մարմնի խռովքն է և հոգու սատակումը, և բոլոր արդարությունների մերժումը (Բարսեղ Մաշկևորցի):

114. Հարստության ձգտելիս հիշի՛ր, որ հարստությունը ծնում է հպարտություն, սնապարծություն, որովայնամոլություն, վավաշոտություն և ամեն տեսակի շքեղություն: Անկարելի է միաժամանակ մի աչքով երկինք նայել, մյուս աչքով՝ երկիր: Նմանապես անհնար է թե՛ երկրավոր, թե՛ երկնային սիրով Աստծուն հաճելի լինել (Խոսրով Անձևացի):

115. Ագահության նման ուրիշ ոչ մի ախտ չի կարող Աստծո սիրո հանգույցը քանդել. նրանից գերվողը Աստծուն մամոնայի հետ կփոխի, որովհետև դրամի սիրուց կարհամարհի Աստծո պատվիրանները, գեհենի սպառնալիքները և Արքայության պատիվը: Երբ նա արհամարհում է Արքայության Տիրոջը և կորստյան որդի Հուդայի նման Նրան ոսկու փոխարեն ծախում, ապա նրա համար ուրիշ ի՞նչ պատվական բան կմնա: Այսպիսիների վճիռը մեր Տերը Ի՛նքն է, որ բացորոշ կերպով հայտարարեց. «Չե՛ք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթ. 6:24). ուզենալով ասել այն, որ Աստծո ծառան չի կարող ծառայել և հնազանդվել մամոնային. իսկ նա, որ մամոնայի ծառա է, Աստծո ծառայությունից հեռացած է և կռապաշտների հետ պիտի դատվի, որովհետև Պողոսը կռապաշտների հետ է դասում այնպիսիներին՝ ասելով. «Ագահությունը կռապաշտություն է» (Կող.3:5) (Սարգիս Շնորհալի):

116. Տերը մեզ հրամայում է, որ մեր գանձերը պահենք երկնքում, որը գողերի համար անմերձենալի է (Ղուկ. 12:33), իսկ մենք մեր ունեցած գույքը հողի մեջ ենք թաղում և գողերի ու ավազակների համար ենք հավաքում (Սարգիս Շնորհալի):

117. Ծաղկաթափ փառքերի վրա չզարմանանք, երանի չտանք հարուստներին, որովհետև նրանց փառքը ոչ միայն խոտի ծաղիկներից ավելի դյուրաթառամ է, այլ սարդոստայնից ավելի արագ է քանդվում: Ստվերի և երազի պես է նրանց կյանքը և դեռ՝ շատ ավելի դյուրին է ջրի վրա գրելը, քան նրանց հարստությունը, որովհետև այնքան արագավախճան և դյուրափշուր են, որ անձրևի պղպջակներից ավելի դյուրին են պայթում ու անհետանում և իրենց շահից ձեռք գցած մեղքն է, որ տանում են իրենց հետ: Զրկվում են անդենական փառքից՝ հետապնդելով անցողիկ բարիքներ, առանց իսկ սրանք վայելելու: Լանք նրանց համար և մեծապես ողբանք, որովհետև ջանում են ձեռք գցել անցավորը և տեսանելի փառքով պատվվելը, որով և զրկվում են Աստծո փառքից: Ավաղ, նրանց մտքի կուրությանը և չափազանց անզգամությանը (Սարգիս Շնորհալի):

118. Չենք վախենում Աստվածաշնչի դատապարտությունից, որ ասում է. «Հարուստն իր հարստությամբ պիտի թոշնի» (Հակ. Ա 11): Իսկ եթե Աստվածաշնչի պատգամներին չեք հավատում, գեթ նայե-

ցեք անցյալի հարուստներին և սովորեցեք հարստության ունայնությունը, որովհետև սրանք սարդոստայնից ավելի թույլ գտնվեցին, մրրիկից քշված փոշուց ավելի շուտ անհետացան և կարմիր կակաչից ավելի շուտ անհետացան, իսկ աշխարհիկ հարստությունից ոչինչ չտարան իրենց հետ, բացի մեղքից, որն է Աստծո բարկության պատճառը և անդենական տանջանքների առիթը: Որովհետև իր հարստության վրա որքան ավելի դիզի, այնքան իր անձի վրա ցավ կավելացնի և իր համար խավար, որդ և գեհեն կհավաքի (Սարգիս Շնորհալի):

119. Ինքն իր համար հավաքելը և պահելը ուրիշ ի՞նչ կարող է լինել, եթե ոչ ագահություն, որ երկրորդ կռապաշտությունն է: Իսկ նրանք, որ ասում են, թե իրենց զավակների համար են հավաքում և սա որպես հարմար պատճառաբանություն են նկատում, թող իմանան, թե սա բանսարկուի խաբեությունն է: Նա՝ չկարողանալով հայտնապես կռապաշտությամբ խաբել և մահացնել, իրենց զավակների պատճառով նույնն է գործել տալիս և անհույս դարձնում Քրիստոսից: Ով հիմար, Նա որ քեզ ստեղծեց, որդուդ էլ չստեղծե՞ց, Նա որ քեզ ինչքեր տվեց, զավակներիդ չի՞ կարող տալ: Չլինի՞, թե քեզ իրենից ավելի է սիրում, քեզ տվեց, նրան կզլանա՞: Չմտածես, որ նրան հանձնելով քեզ, իր խընամքից հեռացրեց: Եվ ինչպես կարող է մեծը տալուց հետո փոքրը զլանա, մարմինն ստեղծեց, հոգին տվեց, իսկ ինչ որ հոգուն և մարմնին պետք է, մի՞թե պիտի չտա: Չլսեցի՞ր Քրիստոսի խոսքը. «Հոգին կերակրից ավելի կարևոր է, և մարմինը՝ հագուստներից» (Մատթ. 6:25), իսկ եթե լսեցիր՝ ինչո՞ւ ես անհավատ մնում և թույլ չես տալիս Արարչին, որ խնամք տանի: Ինչո՞ւ ես զավակիդ Արարչի խնամքից զրկում՝ տարօրինակ կերպով նրա համար հոգ տանելովդ: Նրանն է ստեղծվածը, Իրեն ապավինիր և վայելուչ առաքինություն սովորեցրու զավակիդ՝ կատարելով Աստծո պատվիրանը (Սարգիս Շնորհալի):

120. Զավակիդ բարեպաշտության օրինակ թող, այլ ոչ թե՝ հարստություն: Աղքատների երամին արած գթությամբդ, զավակիդ վերակացու թող Աստծո անսահման գթությունը և ոչ թե փայլող ոսկի: Սովորեցրու ողորմության բարիքը և ոչ թե տմարդության չարիքը, սովորեցրու Աստծված պաշտել և ոչ թե մամոնա, սովորեցրու

երկնավոր բաներ ցանկալ և ոչ թե երկրավոր: Վարժեցրու պատվասեր լինել երկնային պատվին և ոչ թե մեր սին, ծաղկաթափ կյանքին, սովորեցրու սիրել ոչ թե առօրյա կյանքը՝ անցավորը, որ լի է դառնությամբ, թշվառությամբ այլ կայուն է, մնայուն է և բյուրապատիկ հանգստով լեցուն է (Սարգիս Շնորհալի):

121. Արդ, առաջին հերթին, ինչու՞ Աստծո բարկության պատճառները չես ոչնչացնում՝ բաշխելով և տալով ինչքերդ, այլ նրա բարկությանը կցորդ և բաժնեկից ես դարձնում զավակիդ: Սա ատելության նշան է և ոչ թե սիրո, որովհետև չար գործերի փոխանորդ ես նշանակում զավակիդ, որ քեզանից սովորած անիրավություններն ավելի կատաղի և նախանձախնդիր կերպով է գործածելու: Եթե ճշմարիտ է Սուրբ Գրքում գրվածը, թե. «Հայրերը ազոխ կերան, և որդիների ատամները ցավեց» (Եզեկ. 18:2), և այն էլ, երբ գործով պարտական չեն իրենց հայրերի մեղքերին, հապա, երբ որդիներն իրենց հայրերից էլ անցնեն չարության մեջ, ինչպիսի տանջանքի վրեժ պիտի ընդունեն Աստծուց: Այս բոլորը լսելով, ով հարուստներ, զոջացեք ձեր սրտերի մեջ, շահեցեք ձեր անձերը ու որդիներին, վախեցեք Աստծու դատաստանից և անձերի ու զավակների կորստյան պատճառ լինելուց (Սարգիս Շնորհալի):

122. Այսքանով աղաչում եմ ձեզ, ով Լուսո որդիներ, Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ, հեռու պահեցեք ձեր անձերը երկրորդ կռապաշտությունից՝ ագահությունից, արծաթսիրությունից, որը թեև կարգով երկրորդն է, սակայն զորությամբ և չարիքներով առաջինից ոչնչով նվազ չէ: Լսիր առաքյալին, որ ասում է. «Ամեն չարիքների արմատը արծաթսիրությունն է» (Ա Տիմ. 6:10): Այս բանը լսելով, աղաչում եմ, սիրելիներ, վախենանք և զարհուրենք, միգուցե աստվածպաշտության կերպարանքով մեռնենք և ամեն չարիքների արմատը մեր հետ թաղենք: Սաստիկ երկյուղ և ահավոր տագնապ է սպասվում մեզ, որովհետև քրիստոնյա լինելով հանդերձ, ոչ որպես քրիստոնյա կամ կրոնավոր գերեզմանից հարություն պիտի առնենք և Դատավորի առջև պիտի կանգնենք, այլ որպես կռապաշտ (Սարգիս Շնորհալի):

123. Արդ, եթե իբրև քրիստոնյա պիտի մեռնենք և Աստծո մոտ պիտի մտնենք, այս կռապաշտությանը հակառակը վարվենք, մա-

մոնայի կուռքերը խորտակենք ողորմածությամբ՝ սփռելով և աղքատներին այն տալով: Նա, որ ունի և առատորեն մատակարարում է, իբրև Աստծո կողմից վստահված ինչքեր, նրան կոչում են հոգևոր քսակ, ինչպես Հոբը, Աբրահամը և Կոռնելիոսը (Սարգիս Շնորհալի):

124. Ագահությունը կորստյան պտաճառ է դառնում ինչպես որ գրում է Եսայի մարգարեն ագահի մասին. «Վա՜յ նրանց, ովքեր տուն են կցում և ագարակին ագարակ միացնում, իսկ ընկերոջը արտաքսում են զրկանքներով, թեպետ և մեծամեծ շինություններ էլ կառուցեն, ավերակ են դառնալու»: Գրված է. «Իզուր է տագնապում ու ճիգ թափում, գանձ կուտակում՝ հոգին կորցնելով և չիմանալով, թե ով է ժառանգելու այն», ինչպես որ բազմիցս տեսնում ենք: Այդ աղբն էր, որ գործել տվեց Հուդային և Գեհեզին (Վարդան Այգեկցի):

125. Արծաթսիրությունը ագահության և կռապաշտության ընկերն է, եղբարյն ու գործակիցը: Միապես չար է նրանց և գործը, և խորհուրդը, որովհետև արծաթի (դրամի) սիրո համար շատերն անհոգ գողանում են, զրկում ու սպանում, և հեռանում հավատից (Վարդան Այգեկցի):

126. Ահա վատ գինով հարբելուց բազմապատիկ վատ և դիվահարությունից բազմապատիկ գարշելի է արծաթսիրությունը: Արծաթի սիրուց գործած չար Հուդայի օրինակը բավական է մեզ, քանզի նա արծաթսիրության պատճառով խաչի մատնեց իր Արարչին ու Վարդապետին, Որը եկել էր կյանք տալու ողջ աշխարհին և տվեց անսահման պարգևներ և շնորհներ: Այստեղից սովորիր, թե որքան չարիք է գործվում աշխարհում այս չարագլուխ ախտի պատճառով: Իսկ մեր ժամանակներում շատերը մի քանի արծաթի, փոքր ինչ շահի, այսինքն՝ մեկ դրամի և կամ հինգ խերեվեշի համար չարաչար երդվելով՝ ուրանում են Քրիստոսին և զրկում շատերին (Վարդան Այգեկցի):

127. Հիրավի են ասում, որ գողությունն առավել չար մեղք է, որովհետև դրանով բազում անմեղ հոգիներ են գայթակղվում և կասկածով լցվում: Այս մեղքին հավասարազոր է տոկոս վերցնելը, որին վաշխառություն են անվանում: Մարգարեն գրում է. «Վա՜յ նրան, որ իր արծաթը կամ մի այլ բան փոխ է տվել և վաշխով ու տոկոսով ետ պահանջել»: Որովհետև այսպիսինն Աստծուն հակառակ է գործում՝

ավելացնելով մեղք-մեղքի վրա: Գամլիքի մեծ սյուն Բարսեղը վաշխը բազմագլուխ գազան անվանեց, որովհետև օձի պես գալարվելով՝ պատում է վաշխով տվողի մարմինն ու հոգին և կործանում է նրանից ծնված երեք կամ չորս սերունդներին (Վարդան Այգեկցի):

128. Կան մարդիկ, որոնք նեղության մեջ գտնվելով, աղքատին դահեկան են տալիս՝ հացի, գինու և այլ կարիքների համար, իսկ հետո նեղում են նրան՝ պահանջելով. «Այսքան գինի և այսչափ ցորեն տուր մի դահեկանի դիմաց»: Սա ծածուկ վաշխառություն է, որն ավելի ծանրագույն մեղք է, քան այն, երբ բացահայտորեն են վաշխը վերցնում: Կան մարդիկ, որ գրավ են վերցնում և պահում են աղքատների սեփականությունը, սա նույնպես հավասար է վաշխառության, որովհետև գաղտնի է սատանայի որոգայթը և գաղտնի կերպով է կործանում մարդկանց ոգիները: Այս երեք ախտերը՝ գողությունը, վաշխառությունը և զրկելը կոչվում են զրկանք (Վարդան Այգեկցի):

129. Այս ախտը սատանան սերմանում է ոչ միայն տգետ մարդկանց, այլ նաև քահանաների մեջ, որոնց հրամայվեց աղ և լույս լինել Աստծո ժողովրդի համար: Եվ սա գործել է տալիս արծաթսիրության ագահ ախտը (Վարդան Այգեկցի):

130. Քրիստոսին տեսնում է նա, ով ատում է հարստությունը (Եզնիկ Կողբացի):

Հայրերի վարքից

1. Մի անգամ հայր Մակարը Եգիպտոս էր գնացել: Երբ վերադարձավ, գալով իր խուցը, այնտեղ մի մարդ գտավ, որը թալանում էր իր սենյակը և իրերը հանելով՝ բարձում էր էշի վրա: Իսկ սուրբը, երբ տեսավ, սկսեց օգնել նրան, իբրև օտարական մեկը: Երբ բարձեցին, հանդարտությամբ ճանապարհում էր գողին և ասում. «Ոչինչ աշխարհ չբերեցինք և ոչինչ չենք տանի այստեղից: Տերը տվեց,

Տերն էլ վերցրեց. գնա խաղաղությամբ» (Հարանց վարք):

2. Ոմն վանական Նիտրայում, ավելի տնտեսող, քան ժլատ, մոռանալով, որ Հիսուս Քրիստոս երեսուն արծաթով է վաճառվել, կտավ գործելով հարյուր ոսկի էր կուտակել: Վանականը մեռավ և ոսկիները մնացին: Եղբայրները հավաքվեցին խորհուրդ անելու, թե ինչ անեն այդ փողի հետ: Ոմանք մտածում էին աղքատներին բաժանել, մյուսները եկեղեցուն տալ, ուրիշները՝ մերձավորներին հանձնել: Բայց ծերերից հայր Մակարը, Պավման, Իսիդորը և էլի ոմանք իրենց մեջ գործող Սուրբ Հոգու թելադրանքով որոշեցին փոքրերը իրենց տիրոջ հետ թաղել և ասացին. «Քո արծաթը քեզ հետ թող կորսվի»: Այս դեպքը այնպիսի սարսափ տարածեց Եգիպտոսի բոլոր վանականների վրա, որ այդ ժամանակվանից ծանր հանցագործություն էր համարվում նույնիսկ մեկ ոսկուց ավելի ունենալ: Կատարվածը դաժան է թվում, բայց կատարողները միայն Սուրբ Հոգու գործիքներ էին «Հարանց վարք»:

3. Մի անգամ վանք եկավ մի բարձրաստիճան մարդ: Նա իր հետ մեծ քանակությամբ ոսկի էր բերել և խնդրում էր, որ վանահայրը բաժանի եղբայրներին: Իսկ վանահայրն ասաց. «Եղբայրները դրա կարիքը չունեն», բայց քանի որ բերողը շատ էր խնդրում, որպեսզի իր ցանկությունը կատարվի, վանահայրը նրան առաջարկեց ոսկով արկղը դնել եկեղեցու դռան առջև, իսկ եղբայրներին ասաց. «Ում փող է պետք, թող վերցնի»: Եղբայրներից ոչ ոք ձեռք չտվեց ոսկուն, և նույնիսկ ոչ ոք չնայեց վրան: Եվ ասաց ազնվականին վանահայրը. «Տերն ընդունեց քո զոհողությունը, տար դրանք աղքատներին բաժանիր»: Ազնվականը գնաց իր հոգու համար մեծ օգուտով «Հարանց վարք»:

4. Եղբայրը ծերին ասաց. «Օրհնի՛ր ինձ՝ երկու ոսկի ունենալ, քանի որ տկար եմ մարմնով»: Ծերը, տեսնելով նրա սրտի բաղձանքը, ասաց. «Ունեցի՛ր»: Եղբայրը վերադարձավ իր խուցը: Մտքերը խռովեցրին նրան, և նա մտածեց, ծերը իսկապե՞ս օրհնեց այդ ոսկին ունենալ: Նա դարձյալ գնալով ծերի մոտ հարցրեց. «Աստծո սիրուն, ասա ինձ ճշմարտությունը, որովհետև մտատանջության մեջ եմ այդ երկու ոսկու պատճառով»:

Ծերը պատասխանեց. «Ես տեսա դրանք ունենալու քո բաղձանքը այդ պատճառով էլ ասացի՝ ունեցիր այդ, չնայած այդքան էլ օգտակար չէին քեզ համար, քանի որ հույսդ դրեցիր այդ ոսկիների վրա՝ կորցնելով հույսդ առ Աստված: Դրանք կարող էիր հեշտությամբ կորցնել կամ ծախսել, միաժամանակ կորցնելով հույսդ, որ կապել էիր ոսկու հետ: Քո հույսը դիր միայն Աստծու վրա, որովհետև նա է հոգ տանում մարդկանց համար» «Հարանց վարք»:

5. Մի մեծատոհմիկ և գեղեցկադեմ երիտասարդ մտավ միաբանների վանքը: Ազգականներից մեկը նրան հանդիպելով, խորհուրդ տվեց հենց վաղը նեթ վանքից դուրս գալ. «Լավ է քեզ համար, որ դու հիմա դուրս գաս այստեղից առանց մեղքերի և չվարկաբեկված անվամբ, քան թե հետո, քանի որ դու բարեկեցիկ կյանքով ես ապրել և չես կարող կրոնավորների դժվար վարքին դիմանալ»: Իսկ պատանին պատասխանեց. «Իմ այստեղից դուրս գալու համար բերված քո պատճառաբանություններն ավելի համոզիչ չեն այն պատճառներից, որոնք ինձ բերեցին այստեղ: Ես մտել եմ վանք՝ սրտումս խորհելով. «Եթե աշխարհի հանգիստ կյանքը ինձ չի բավարարում, ինչպե՞ս կարող եմ դժոխքի անտանելի և անթիվ տանջանքները կրել»: Սրա համար էլ հաստատ որոշեցի՝ այս աշխարհում խստակրոն կյանքով ապրել, որպեսզի այն աշխարհի հավիտենական տանջանքները չկրեմ, և կամենում եմ այստեղ աղքատ լինել, որպեսզի հարուստ լինեմ Երկընքի Արքայությունում» «Հայելի վարուց»:

6. Մի անգամ սուրբ հայրապետ Ամբրոսիոս Մեդիոլանցին (Միլանցի) մի խումբ մարդկանցով ճանապարհորդում էր իր հովվական իշխանության տակ եղող բնակավայրերով, և մի վայրում հանդիպեցին մի մեծ և գեղեցիկ դղյակի: Սբ. Ամբրոսիոսը հարցրեց դռնապանին, թե ով է բնակվում այստեղ, և ասաց, որ իր մոտ կանչեն դղյակի տիրոջը: Երբ դղյակի տերն իր շքախմբով եկավ, սբ. հայրապետը ողջունեց նրան և ասաց. «Որդյակ, ասա խնդրեմ, ո՞վ ես դու և ինչպիսի՞ն է քո ապրելակերպը»: «Ես այս վայրերի տերն եմ, սուրբ հայր, և ինչպիսի՞ն պիտի լինի իմ ապրելակերպը, -ասաց դղյակի տերը, -ամեն ինչ սքանչելի է, ոչ մի բանի կարիք չունեմ, քանզի ամեն ինչ լի ու առատ է իմ շտեմարաններում, ունեմ բազում ծառաներ, հո-

տեր, անասուններ, մի խոսքով, ունեցված-
քիցս չեմ դժգոհում, երեխաներս, թոռնիկներս ողջ-առողջ
են, մի խոսքով, ոչ մի հոգս և նեղություն չունեմ, այլ անհոգ և ու-
րախ կյանք եմ վայելում»: Դառնալով դեպի իրեն շրջապատողնե-
րը, ասաց սուրբ հայրապետը. «Լսեցի՞ք, թե սա ինչ ասաց, դե իսկ
հիմա եկեք շուտ փախչենք այստեղից, որպեսզի ինչ որ գալու է այս
մարդկանց գլխին, մեզ էլ չվնասի»: Եվ սկսեց արագ հեռանալ
այդտեղից՝ ի զարմանս դղյակի բնակիչների, նրա հետ նաև փութով
հեռացան իրեն շրջապատողները: Եվ դեռ չէին հասցրել կանգ
առնել, երբ մի ահավոր թնդյուն լսվեց, և գետնի մեջ խորասուզվեց
դղյակն իր ողջ բնակիչներով հանդերձ: Սարսափահար եղած մարդ-
կանց այսպես ասաց սուրբ հայրը. «Զավակներս, այս բանը լավ
իմացեք, որ ումից Աստված Իր երեսն է դարձնում, նրան մատնում է
անհոգ և անվիշտ կյանքի, իսկ ում որ սիրում է, նրան տալիս է վշ-
տեր, նեղություններ, չքավորություն և այլ փորձություններ, քանզի
այս բոլորի միջով անցնելով է, որ մարդ խրատվում և դաստիարակ-
վում է այն խոսքի համեմատ թե. «Ում, որ սիրում եմ, նրան էլ հանդի-
մանում եմ, եթե խրատի համբերող եք, ուրեմն հարազատ որդիների
պես եք»: Իսկ այդ փոսը, որի մեջ խորասուզվեց դղյակը, որպես
վկայություն, կա մինչև օրս (Հոգեշահ գրքերից):

7. Սուրբ առաքյալ Թովմասը քարոզում էր Հնդկաստանում: Այն-
տեղի թագավորներից մեկը ցանկանում էր ունենալ այնպիսի ճոխ
պալատ, ինչպիսին որ ունեին հռոմեական կայսրերը և փնտրում էր
մեկին, որ կարողանար նման մի շինություն կառուցել: Նրան լուր
հասավ, թե իբր սբ. Թովմասը շնորհալի շինարար է և ճարտարա-
պետ: Տիրակալը կանչում է առաքյալին և առաջարկում նրան այդ
աշխատանքը, և երբ առաքյալը չի մերժում, նրան տալիս է մեծ քա-
նակությամբ ոսկի, իսկ ինքը գնում է իր երկրի տիրություններում
պտտելու: Սակայն Թովմաս առաքյալը բոլոր ոսկիները, որ ստա-
ցավ այդ թագավորից, բաժանեց աղքատներին և կարիքավորներին:
Այդ բանը զեկուցեցին արքային: Սա վերադառնալով հարցրեց սբ.
առաքյալին. «Պատրա՞ստ է արդյոք պալատը», «Պատրաստ է, -
պատասխանեց առաքյալը, -միայն թե ոչ երկրի վրա այլ, երկնքում»:
Այս խոսքերը թագավորն ընդունեց որպես ծաղրանք և բանտարկեց

սուրբ Թովմասին՝ զնդան գցելով նրան: Մինչ
հաջորդ օրերին, երբ թագավորը մտածում էր, թե ինչ
պատժով տանջամահ անի սուրբին, այդ ընթացքում ծանր հի-
վանդացավ նրա հարազատ եղբայրը և ընկավ ուշագնաց: Այս վի-
ճակում նրա հոգին տեսավ սքանչելի մի տեսիլք, բարի հրեշտակը
տարավ նրան երկինք, և նրան ցույց տրվեցին տարբեր երկնային
պալատներ, բայց բոլորից գեղեցիկ էր նրանցից մեկը: Եվ այն հար-
ցին, թե այս սքանչելի պալատն ո՞ւմն է, ուղեկցողը պատասխանեց
հափշտակության մեջ գտնվող հոգուն. «Այս տունը պատրաստել է
քո եղբոր համար ճարտարապետ Թովմասը»:

Իսկ երբ հոգին ցանկացավ մնալ, այդ տուն ուղեկցողը պատաս-
խանեց. «Եթե չափսոսաս քո ունեցվածքը և խնդրես Թովմասին, նա
քեզ համար էլ կկառուցի նման պալատ»: Երբ տեսիլքն ավարտվեց,
հիվանդը ուշքի եկավ, ամեն բան պատմեց եղբորը: Թագավորը
զարմանքից քարացել էր՝ լսելով եղբոր պատմությունը և նույն պա-
հին ազատեց առաքյալին, որը երկուսին էլ սովորեցրեց և բերեց
Քրիստոսի հավատքին՝ մկրտելով նրանց: Իսկ նրանք էլ դարձան
ողորմած և բարեգութ քրիստոնյաներ (Հոգեշահ գրքերից):

8. Աֆրիկյան մի երկրում կար մի մաքսավոր՝ Պետրոս անվամբ,
նա երբեք չէր ողորմում աղքատներին և չէր հաճախում եկեղեցի,
Աստծուց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում: Բարեգութ
Մարդասերը չցանկանալով մեղավորի մահը, այլ բոլորի փրկությու-
նը, Պետրոսի հետ էլ վարվեց ըստ իր գթասրտության և փրկեց նրան
հետևյալ կերպ:

Մի անգամ մի տեղ հավաքված աղքատները և թշվառները նստել
էին փողոցում և գովաբանում էին ողորմածներին, իսկ անողորմնե-
րին վատաբանում: Երբ խոսքը վերաբերվեց Պետրոսին, բոլորը մի-
ահամուռ կերպով վկայեցին, որ նրանից ոչ ոք երբեք ողորմություն
չի ստացել: Այնժամ մի աղքատ ասաց. «Ի՞նչ կտաք ինձ, եթե ես
նրանից ողորմություն վերցնեմ»: Պայմանավորվեցին, և աղքատը
գնաց Պետրոսի դարպասների մոտ կանգնեց: Երբ մաքսավորը
դուրս եկավ դարպասներից հացով բարձած լի սայլով, քանզի նաև
մատակարարողն էր արքայական տան, այդժամ նրան մոտեցավ
մուրացիկը և սկսեց համառորեն ողորմություն խնդրել և ամբողջ ճա-

նապարհին գնում էր նրա հետևից և անդադար պաղատում: Եվ ցանկանալով ինչ-որ կերպ ազատվել այդ մուրացիկից, մաքսավորը մի հաց վերցրեց և զայրացած նրանով հարվածեց աղքատին, որը և վերցնելով հացը շտապեց իր եղբայրների մոտ:

Երկու օր անց Պետրոսը ծանր հիվանդացավ և մոտ էր մահվան: Եվ հանկարծ նա սկսեց տեսիլք տեսնել, որ իրեն խոշտանգում են դատաստանի ժամանակ և իր գործերը դնում են կշեռքին, մի նժարին դները դրեցին Պետրոսի բոլոր չար արարքները, իսկ մյուսին լուսավոր հրեշտակները դրեցին ընդամենը մի հաց, որ համառությամբ ստացել էր աղքատը և այնուամենայնիվ հացով նժարը ավելի ծանր եղավ: Այնժամ հրեշտակներն ասացին Պետրոսին. «Եթե նույնիսկ մի փոքր ողորմությունն այսքան օգտակար է, ինչ առավել փրկարար կլինի մեծ ողորմությունը»: Այդ օրվանից Պետրոսը դարձավ մեծ ողորմած և նույնիսկ ինքն իրեն չխնայեց հանուն ողորմության: Նա բաժանեց իր բոլոր ունեցվածքներն աղքատներին, ազատ արձակեց ստրուկներին և թողեց միայն մեկին: Իսկ այս ստրուկին Պետրոսը կարգադրեց, որ ինչ պիտի կատարվի, թող գաղտնի մնա և ասաց. «Գնանք սուրբ քաղաք Երուսաղեմ, և այնտեղ ինձ վաճառիր որպես ստրուկ մի որևէ քրիստոնյայի, իսկ գումարը բաժանիր աղքատներին»: Շատ հակաճառություններից հետո ստրուկն այդպես վարվեց, և այն տունը, որտեղ Պետրոսը որպես ստրուկ մտավ, մեծ օրհնության արժանացավ Աստծո կողմից: Երկար տարիների ծառայությունից հետո մի օր մարդիկ եկան Պետրոսի երկրից այդ տունը և ճանաչեցին նրան ու պատմեցին տան տիրոջը, թե ինչ մեծ մեկն է եղել Պետրոսն իրենց երկրում: Իսկ Պետրոսն իմանալով, որ գաղտնիքը բացված է, չնայած իր հանդեպ տան տիրոջմեծ սիրո և հարգանքի, փախավ այդտեղից և իզուր փնտրեցին նրան: Շատերը վշտացան նրա համար, և փառք տվեցին Աստծուն իր ծածուկ ծառաների համար: Իսկ Պետրոսը փախչելով մարդկային փառքից, թաքնվեց անհայտ վայրերում մինչ Տիրոջ առջև իր երանելի հանդիսանալը (Հոգեշահ գրքերից):

9. Երբ դեռ չար կախարդությամբ կռապաշտության մեջ էի, տեսա բոլոր ախտերի և մեղքերի դներին, որ տեսակ-տեսակ մեղքեր և

անօրենություններ են գործել տալիս մարդկանց: Տեսա նաև անհագության դևին, որն ագահությունն է, նա մեծ գլուխ ուներ և երկար բերան: Ուտում էր լեռները և կամենում էր կուլ տալ ողջ աշխարհը (Կիպրիանոս Կարթագենացի):

10. Մի իմաստասեր տեսնում է, որ գալիս է ծանր բեռնավորված ջորիներով մի զորեղ մարդ: Նրա այն հարցին, թե ի՞նչ է դրա բեռը, և ումն է դա, պատասխանում է մարդն՝ ասելով, թե այնինչ անունով իշխանինն է, ամբողջ բեռը, որ արծաթե ու ոսկյա ամաններ են և այլ անոթներ, իշխանի ճաշի պետքերի համար է: Իմաստասերը հոգոց հանելով, ասում է. «Ա՜խ որդյակներս, իմացեք, նա, ով հավաքել է դրանք, ճշմարտապես կործանել է իր հոգին» (Վարդան Այգեկցի):

ԱՂՈԹՔ

Մի մատնիր ինձ, Տե՛ր, մեղքերի ցանկությանը, աչքերի քնին և մտքի ցանկությանը, այլ պարսպի՛ր երկյուղով և փրկի՛ր ամենահնար չար դևերից և աշխարհական զբոսանքներից:

Եկ, Տե՛ր, փնտրելու մոլորվածիս, որ դեգերելով շրջում եմ Քո պատվիրանների հոտից դուրս, գազանաբեկ եղած և մեղքերով քարկոծված՝ վիրավորվում եմ դևերից. բռնիր և տար հայրենի փարախը և խառնիր Քո հոտի գառներին:

Թեթևացրո՛ւ իմ մարմնի կարիքները, առատացրու իմ մեջ Սուրբ Հոգուդ շնորհները՝ լինելու Քո Աստվածային կամքի տաճար և բնակարան, անհագ սիրով սիրելու Քեզ և ատելու ամենայն ցանկություն և այս աշխարհի սերը, որով եղավ հոգուս կորուստը և մահը:

Հալածի՛ր, Տե՛ր, իմ մտքի խորհուրդներից բոլոր չար երկրաքարշ մտածումները, բարիքների արմատն ամուր տնկի՛ր իմ սրտում և նկարի՛ր իմ հոգում շնորհների պտուղը:

Երբ ճանապարհ ընկնեմ, ինձ մի՛ թողնիր մենակ, այլ առաքի՛ր իմ ետևից Քո օգնականությունը՝ օր ու գիշեր պահելով ինձ սատանայի բոլոր փորձություններից և իմ անկայուն ու թույլ մտքին մի՛ թող մեղանչել, այլ՝ լալ ու կոծել իմ մեղքերի և անօրենությունների համար:

Հետևի՛ր, Տե՛ր, Քեզանից ճողոպրողիս հետքին, արագապես փութա՛, հասի՛ր և բռնի՛ր Քո կանչի ձայնից ապստամբածիս և դի՛ր Քո

Սիրո անխզելի կապանքների բանտը:

Եվ քանզի իմ ցնդած, պղտորված և ցնորված միտքը շրջում է երկրավոր կենցաղի հոսանքներում, Դու՛, Տե՛ր, լուսավորի՛ր հոգուս աչքերը՝ անզբաղ և աներկմիտ, արի և զգաստ ամենահորդոր փութով գալու Քո Աստվածային սիրո ետևից:

Բա՛ց, Տե՛ր, իմ սրտի աչքերը և լուսավորի՛ր Սուրբ Հոգովդ: Պարգևի՛ր ինձ առողջ խորհուրդներ և առաքինի վարք, հանապազ ողբալ, ահ ու դողով ամեն ժամ անզբաղ մնալ Քո առջև:

Նայի՛ր, Տե՛ր, իմ նեխած և թարախած հոգուն և լվա՛ Աստվածային ջրով: Համեմի՛ր հոգևոր աղովդ և օծի՛ր անուշահոտ Սուրբ յուղովդ և ընձեռի՛ր կատարյալ առողջություն:

Պատսպարի՛ր ինձ, Տե՛ր, լեռան քարանձավում կամ անապատ վայրում, ուր և թո՛ղ առաջնորդի ինձ Քո ողորմությունը, որ հանդիպեմ Քո անվան մեծ փառքին, ստանամ Սուրբ Հոգուդ աղավնակերպ թևերը՝ թռչելու և բարձրանալու, խառնվելու արդարների երամին: Ամենամեծդ Աստված, բարեբանյալ ես Դու այժմ և հավերժության մեջ, Հոր և Ամենասուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն (Եփրեմ Ասորի):

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այն մասին, որ աղքատի համար շատ ավելի հեշտ է մտնել Երկնքի արքայություն:

Աղքատներն առավելություն ունեն հարուստների նկատմամբ ոչ միայն կենցաղային գործերում, այլև հոգևոր: Քանզի ի՞նչն է մտցնում Աստծո արքայությունը. հարստությո՞ւնը, թե՞ աղքատությունը: Լսենք, թե ինչ է ասում այս մասին երկնային Տիրակալը: Հարուստների մասին Նա ասում է. «Հեշտ է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծո արքայությունը» (Մատթ. 19:24), իսկ չքավորների մասին ասաց հակառակը. «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառիր քո ունեցվածքը և տուր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս և դու արի Իմ ետևից» (Մատթ. 19:21): Եվ եթե հարկ է, մենք, մի այլ կողմից էլ կարող ենք ցույց տալ ասվածի ճշմարտացիությունը:

«Անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, -ասում է Տերը, -որ տանում է դեպի կյանք» (Մատթ. 7:14), սակայն ո՞վ է գնում նեղ ճանապարհով, արդյոք նա՞, որ կյանքն անցկացնում է հաճույքների մեջ, թե նա որ կյանքն անցկացնում է չքավորության մեջ: Նա որ գնում է առանց որևէ ծանրաբեռնության, թե՞ նա, ով իր վրա կրում է մեծագույն ծանրություններ: Փափկասունը և անհո՞գը, թե՞ հոգատարը և ջանասերը: Դե ինչ, անօգուտ իմաստակելուց ավելի լավ է անցնենք օրինակներին:

Ղազարոսն աղքատ էր և չափազանց աղքատ, իսկ հարուստն անցնում էր նրա մոտով, երբ սա պառկած էր հարուստի դռան մոտ: Նրանցից ո՞ր մեկը մտավ Երկնքի արքայություն, և հանգիստ գտավ Աբրահամի գոգում: Իսկ ո՞վ հակառակը, տանջվում էր կրակներում, և չէր կարողանում խնդրելով ձեռք բերել մի կաթիլ ջուր: Բայց դու կասես, որ աղքատներից շատերը կորսվում են և հարուստներից շատերն էլ պիտի վայելեն այն անճառելի երկնային երանությունները: Ընդհակառակը, պետք է իմանալ, որ միայն շատ քիչ թվով հարուստներ է, որ պիտի ժառանգեն փրկությունը, իսկ աղքատներից կփրկվեն շատ ավելիները: Տես և քննիր ուշադրությամբ այն արգելքները, որոնք առաջանում են հարստության կողմից փրկության դեմ, նաև աղքատության արատները: Չնայած և թե մեկը, և թե մյուսը կախված են հիմնականում ոչ հարստությունից, և ոչ էլ աղքատությունից, այլ նրանցից, ում բաժին է ընկել հարստությունը և աղքատությունը: Ջանանք, ուրեմն, ծայրահեղ դեպքում գոնե ճանաչել սրանց կարևոր և մերձ արատները: Ո՞ր արատն է, որ ավելի մոտ է աղքատությանը՝ սուտը: Ո՞րն է բնորոշ հարստությանը՝ հպարտությունը, որը հանդիսանում է արատների մայրը, որից որ սատանան դարձավ սատանա, որն առաջ այդպիսին չէր: Նորից. «Բոլոր չարիքների արմատը արծաթսիրությունն է» (Ա Տիմ. 6:10): Բայց ո՞վ ավելի մերձեցավ այս արմատին. հարու՞ստը, թե՞ աղքատը: Պարզ է, որ հարուստը, քանզի ով որքան որ առավել շրջապատված է հարստությամբ, նա էլ ավելի է ցանկանում ունենալ: Նաև փառամոլությունը, որ հափշտակում է բազմաթիվ առաքինություններ, իսկ հարուստը բնակվում է փառամոլության բնակարանի մոտ: Իսկ ինչու՞ դու ոչինչ չես ասում աղքատների կրած վշտերի և

նեղ վիճակի մասին՝ կհարցնես դու: Այն բանի համար չեմ ասում, որովհետև այդ բաներում հավասարապես մասնակցում են թե հարուստները, և թե աղքատները, և առաջինն ավելի շատ, քան երկրորդը, այնպես որ տարաբախտությունը, որ կարծես թե վերաբերվում է միայն աղքատներին, ընդհանուր է թե աղքատների, և թե հարուստների համար, ասենք, որ հարուստի դժբախտությունները խոշտանգում են միայն իրեն: Եվ նորից հակառակվելով դու կասես թե չքավորներն ամենաանհրաժեշտ բաների բացակայությունից գործում են բազում չարագործություններ: Ասենք, որ աղքատներից ոչ ոք չի գործում այնքան չարագործություններ չքավորության պատճառով, որքան որ գործում են հարուստները մեծ հարստության տիրանալու փափագից, նաև զգուշավորությունից, որպեսզի չկորցնեն իրենց ամբարներում մթերվածը: Քանզի այնքան աղքատը չէ, որ ցանկանում է ամենաանհրաժեշտը, որքան որ հարուստը ցանկանում է ավելին ու ավելորդը ունենալը: Աղքատը չունի ոչ այդքան ուժ և ոչ էլ հնարավորություն՝ չարիք գործելու համար, որքան որ ունի հարուստը: Այսպիսով, եթե հարուստը ցանկանում է չարիք գործել և առավել կարող է այն գործել, այստեղից պարզ երևում է, որ նա ավելի շատ է չարիք գործում և շատ ավելի վնասակար բաներ անում, քան աղքատը: Այնպես աղքատը չի վախենում սովից, ինչպես որ հարուստը դողում է այն բանի վրա, թե չլինի իրեն զրկեն իր ունեցվածքից, և տանջվում է այն բանից, որ դեռևս չի տիրացել աշխարհի ողջ գանձերին: Եվ այսպիսով, լինելով այսքան մերձ փառամոլությանը, հպարտությանը, արծաթսիրությանը, որը հանդիսանում է բոլոր չարիքների արմատը, փրկության ի՞նչ հույս պիտի ունենա, եթե ցույց չտա իր վրա մեծ և լավ ողջամտություն: Ինչպե՞ս նա կարող է գնալ նեղ ճանապարհով և նրանում կատարել իր ընթացքը: Եվ այս պատճառով որպեսզի, հետևենք շատերի կարծիքին, լավ է քննենք բուն իրերը և գործերը: Քանզի եթե մենք հավատ չենք ընծայում շատերին և մեր փողերը հաշվում ենք և ապա կրկին հաշվում, նորից աչքի անցկացնելով այն, ուրեմն անմտություն չի՞ արդյոք մեր կարևորագույն հարցերը վստահել ուրիշների կարծիքին, երբ մենք այս բանի համար ունենանք վստահելի կշեռք, վստահելի օրինակ և վստահելի կանոն, այ-

սինքն՝ դատաստանը և դատավճիռն ըստ Աստծո օրենքների: Այսպիսով, խնդրում եմ ձեզ և աղաչում եմ ձեզ բոլորիդ, ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, թե ինչպես է մտածում այս մասին նա կամ մեկ ուրիշը, ճանաչենք այս ամենը սուրբ գրքերից, և իմանալով նրանցից, թե որն է իրական հարստությունը, ջանանք այն ձեռք բերել, որպեսզի նրա միջոցով մենք էլ հասնենք խոստացված հավիտենական բարիքներին:

(Հովհան Ոսկեբերան, Հատված կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի ուղերձի մասին 13 զրույցից):

Հարստության և աղքատության մասին:

Հարստությունը անշնորհակալ փախստական է, անհաշտ մարդասպան, ժայռ՝ ամեն կողմից զառիթափ, ստորջրյա քար, անընդմեջ ալեկոծվող ծով, մշտապես հողմակոծվող անթիվ քամիներով, բռնապետ կառավարող՝ ծանրությամբ և խստությամբ, տիրակալ դաժան՝ ամեն տեսակի բարբարոսից, անհաշտ թշնամի, հակառակորդ անխիղճ՝ երբեք չդադարեցնող իր թշնամությունը նրանց հանդեպ, ովքեր տիրում են իրեն: Սակայն այսպիսին չէ աղքատությունը, այլ հակառակն է ասվածի: Նա անվտանգ կայան է, խաղաղ նավահանգիստ, մշտապես հանգստություն, ուրախություն զերծ վտանգներից, մաքուր հաճույք, անխռով և անվրդով կյանք, բարենպաստություն անընկճելի, մայր խոհեմության, բազում սխալ արարքների սանձահարող, տանջանքների դիմակայություն, խոնարհամտության արմատ: Ինչի՞ համար, ասացեք խնդրեմ, ես փախչեմ նման աղքատությունից, դուք վազում եք այն բանի հետևից, որը թշնամական է, մահացու է և կատաղի ամեն մի գազանից: Այսպիսին է արծաթսիրությունը, այսպիսին է մոլեգին կիրքը փողի հանդեպ: Ինչի՞ համար ես մշտապես քեզ մոտ պահում քո մշտական թշնամուն: Ինչու՞ ես զայրացնում գազանին, որին պետք է սանձահարել և հնազանդեցնել: Իսկ ինչպե՞ս այն կարող է դառնալ ձեռնասուն: Ինչպե՞ս այս գազանը կարող է դադարել գազան լինելուց: Ես կարող եմ փոխել նրան, եթե դուք ցանկանաք, քանզի այսպիսին է խոսքի ուժը: Ինչպե՞ս նա կփոխի իր գազանությունը, սրա համար պետք է իմանալ, թե ինչպես

է նա դառնում կատաղի: Ինչպես առյուծը, վագրը և արջը լինելով փակի տակ և բանտարկված, և լինելով մթության մեջ, դառնում են կատաղի և հույժ չարանում, այսպես էլ հարստությունը, եթե նրան փակում են և թաղում, սա դառնում է առյուծից առավել վայրագ և ամեն օր վախ է առաջացնում, և եթե դու նրան դուրս ես հանում խավարից և ցանում աղքատների մեջ, այս գազանը դառնում է ոչխար, դավաճանը՝ պաշտպան, ստորջրյա քարը՝ նավահանգիստ, նավաբեկությունը՝ խաղաղություն: Նույնը և կարելի է տեսնել նավերի մեջ, երբ բեռը չափից ավելի ծանր է լինում, այնժամ նավը խորտակվում է, իսկ եթե իր չափով, ապա նա ընթանում է քամուն համընթաց: Նույնը և լինում է մեր տներում, երբ դու հավաքում ես հարստությունը առավել քո կարիքներից, այնժամ քամու մի փոքր ճնշումն էլ, այսինքն՝ իրավիճակների հանկարծահաս հանգամանքներն էլ, կարող են խորտակել մեր նավը: Իսկ եթե դու հավաքես այնքան, որ բավարարում է քո կարիքներին, այնժամ, եթե ուժգին փոթորիկ էլ լինի, դու անխափան կհասնենս քո նավահանգիստը: (Հովհան Ոսկեբերան:

Աղքատության առավելությունները

Քրիստոսի թշնամիները ոչ միայն անհավատներն են, այլև նրանք, որոնց կյանքը լեցուն է անմաքրությամբ: «Մարմնավոր խորհուրդը թշնամություն է առ Աստված, քանզի այն չի հնազանդվում Աստծո օրենքներին, և նա ոչ իսկ կարող է» (Հռոմ 8:7): Եվ այս պատճառով, չսիրենք հարստության փափագը, այլ միշտ փնտրենք աղքատություն, քանզի այն մեծ բարիք է: Բայց կասես, որ այն մարդուն դարձնում է ստորացված և խղճուկ: Հենց դա էլ մեզ պետք է, քանզի հենց դա է, որ մեզ արժանացնում է մեծ օգտակարության. «Աղքատությունը, -ասում է Իմաստունը, -մարդուն խոնարհեցնում է» (Առակ. 14), այսպես և ասում է Քրիստոսը. «Երանի հոգով աղքատներին» (Մատթ. 5:3): Եվ ինչո՞ւ ես դու վշտանում այն բանի համար, որ կանգնած ես այն ճանապարհին, որը տանում է քեզ դեպի առաքինություն: Մի՞թե դու չգիտես, որ աղքատությունը մեզ տալիս է մեծ անվեհերություն: Իսկ դու կասես, չէ որ. «Աղքատի

իմաստությունն արհամարհված է» (Ժող. 9:10): Կարո՞ղ է, արդյոք, չարիք լինել աղքատությունը կամ հարստությունը, եթե. «Թե հարստությունը, և թե աղքատությունը Տիրոջից է» (Սիրաք 11:14): Ինչո՞ւ է այսպես ասված: Սա ասված էր Հին կտակարանում, որտեղ հարստությունը համարվում էր հույժ կարևոր մի բան, իսկ աղքատությունն արհամարհելի էր: Սակայն հիմա այսպես չէ, երբ առաջինը օրհնություն էր, իսկ երկրորդը՝ անեծք: Իսկ այժմ այսպես չէ, ուզո՞ւմ ես լսել աղքատության գովքը, այն կրեց Քրիստոսը. «Մարդու Որդին, -ասում էր նա, -գլուխ դնելու տեղ էլ չունի» (Մատթ. 8:20): Նաև աշակերտներին էր նա ասում. «Մի ունեցեք ոչ ոսկի, ոչ արծաթ և ոչ էլ պղինձ դրամ ձեր գոտիների մեջ» (Մատթ. 10:9): Եվ Պողոսն էլ ասում էր. «Իբրև թե ոչինչ չունենք, բայց ունենք ամեն ինչ» (Բ Կոր. 6:10), նաև Պետրոսն ասաց կաղին. «Արծաթ և ոսկի չունեմ» (Գործ. 3:6): Եվ հենց Հին կտակարանում էլ, երբ սքանչանում էին հարստությամբ, ովքե՞ր էին առավել սքանչելի մարդիկ հանդիսանում: Եղիան չէ՞, որ ոչինչ չուներ, բացի ողորմածությունից: Նաև Եղիսեն ու Հովհաննեսը (Մկրտիչ): Եվ այսպես, ոչ ոք չպիտի համարվի ստորացված աղքատության պատճառով, աղքատությունը չի ստորացնում, այլ հարստությունը, որ բազում կարիքների մեջ է մտցնում և ստիպում է շատերին սիրաշահել: Ասա ինձ, ո՞վ էր առավել չքավոր Հակոբից, որն ասում էր. «Եթե Տերը ինձ հետ լինի... ինձ ուտելու հաց տա և հագնվելու հագուստ» (Ծնն. 28:20): Չունեի՞ն, արդյոք, համարձակություն Եղիան և Հովհաննեսը և իրենց նմանները: Չմերկացրե՞ց մեկը Աքաբին, իսկ մյուսը՝ Հերովդեսին: Սա ասում էր. «Արժան չէ, որ դու կին ունենաս քո եղբոր Փիլիպոսի կնոջը» (Մարկ. 6:18), իսկ Եղիան անվեհերորեն ասում էր Աքաբին. «Ես չեմ Իսրայելը տակնուվրա անողը» (Գ Թագ. 18:12): Տեսնո՞ւմ ես, թե ինչ համարձակություն է տալիս աղքատությունը: Հարուստը ստրուկ է, որը ենթարկվում է վնասների և հնարավորություն տալիս ամեն մեկին իրեն վնաս պատճառելու, իսկ չքավորները ոչնչից չեն վախենում, ոչ հափշտակումից, ոչ էլ ունեցվածքի բռնագրավումից: Եթե աղքատությունը զրկեր անվեհերությունից, ապա Քրիստոսը չէր պատվիրի Իր աշակերտներին լինել աղքատ, նրանց այնպիսի գործի ուղարկելով, որը պահանջում էր

մեծ համարձակություն: Աղքատը հզոր մարդ է, նա ոչ մի տեղից չի ստանում վիրավորանք կամ կրում վնաս, իսկ հարուստը բաց է,որպեսզի ամեն կողմից հարձակում կրի, նա նման է այն բանի, որ մեկը իր հետևից քաշի երկար պարաններ, որին հեշտությամբ կարող են ամեն կողմից էլ բռնել, իսկ մերկ մարդուն բռնելը հեշտ չէ: Այդպես և պատահում է հարուստի հետ. ստրուկներ, ծառաներ, ոսկի, դաշտեր, բազմաթիվ գործեր, հազարավոր հոգսեր, իրավիճակներ, կարիք, այս բոլորը նրան դարձնում են բոլորի կողմից հեշտությամբ որսացվող: Եվ այսպես, թող ոչ ոք աղքատությունը չհամարի պատճառ անպատվության: Առաքինի գործերի դիմաց ամբողջ աշխարհի հարստությունը ավելի վատթար է աղբից և ավելի ցածր կոճղից: Ամուր բռնեք նրանից, եթե ուզում եք մտնել Երկնքի արքայություն: «Վաճառիր, -ասաց Տերը, -քո ունեցվածքը և բաժանիր աղքատներին, և կունենաս գանձեր երկնքում» և էլի. «Դժվար է հարուստի համար մտնել Երկնքի արքայություն»: Տեսնո՞ւմ ես, որ պետք է փնտրել աղքատություն, եթե այն չունեք: Քանզի ահա այսպիսի բարիք է այն: Նա հանդիսանում է որպես առաջնորդ ճանապարհին, որ տանում է դեպի երկինք, սա մարտ է՝ ի ցույց բոլորի, հանուն արդարության, մեծ և զարմանալի ուսումնարան, անվտանգ նավահանգիստ: Բայց կասես, որ ես ունեմ կարիքներ բազում բաներում և չեմ ցանկանում ոչ ոքից ողորմություն վերցնել: Այս պարագայում հարուստը քեզանից ավելի ցածր վիճակում է: Դու հնարավոր է, որ խնդրես ողորմություն՝ կերակրվելու համար, իսկ նա անամոթաբար խնդրում է անթիվ քանակությամբ բաներ՝ ագահությունից: Հարուստները կարիք ունեն շատ բաների, ինչու՞ եմ ասում ես շատ բաների: Շատ հաճախ նրանք կարիք ունեն այնպիսի մարդկանց, որոնք արժանի չեն իրենց, օրինակ, շատ հաճախ պետք ունեն զինվորների և ստրուկների: Իսկ աղքատները նույնիսկ թագավորի կարիքը չունեն, և այսպես, թող ոչ ոք չմեղադրի աղքատությանը, որպես թե անթիվ չարիքների պատճառ և չհակաճառի Քրիստոսին, Որը այն անվանեց առաքինություն, կատարելություն, երբ ասաց. «Եթե ուզում ես կատարյալ լինել» (Մատթ. 21:19): Սա Նա արտահայտեց խոսքերով և ցույց տվեց գործով, նաև քարոզեց աշակերտների միջոցով: Եվ այսպես, փնտրենք աղքատություն,

քանզի սա մեծագույն բարիք է ուշիների համար: Միգուցե լսողներից ոմանք վախենում են այս բաներից, ինչպես չար կանխանշանից: Կարծում եմ, որ այդպես է, քանզի այնպես հզոր է այս հիվանդությունը շատերի մեջ և այնքան մեծ հարստության իշխանությունը, որ շատերը չեն կարողանում այն տանեն, նույնիսկ խոսքերով և վախենում են դրանից որպես վատ կանխանշանից: Թող հեռանա նման միտքը քրիստոնյաների հոգուց: Չկա ավելի հարուստ այն մարդուց, որն ընտրել է աղքատությունը կամավորապես և հոժարակամ: Առաքինությունները և Աստծո վախն է, որ տալիս է անվեհերություն, իսկ փողը հասցնում է աղքատության: «Նվերն ու կաշառքը կուրացնում են իմաստունների աչքը և ինչպես բերանի կապ կաշկանդում հանդիմանությունը» (Սիրաք 20:31): Տես, թե ինչպես աղքատ Պետրոսը պատժեց հարուստ Անանիային: Հարուստ չէ՞ր արդոք սա և աղքատ նա, սակայն տես, ինչ իշխանությամբ է նա դիմում սրան և ասում. «Ասա դու ինձ, այդչափ գնո՞վ ագարակը վաճառեցիր»: Իսկ սա երկչոտությամբ պատասխանեց. «Այո, այդչափ» (Գործք 5:8): Բայց ես կարո՞ղ եմ Պետրոս դառնալ՝ կհարցնես դու: Քեզ էլ կարելի է Պետրոս դառնալ, եթե ցանկանաս ձերբազատվել այն ամենից, ինչ ունես, բաժանիր, տուր աղքատներին և հետևիր Քրիստոսին ու կլինես այդպիսին: Նա գործում էր հրաշքներ՝ կասես դու: Բայց մի՞թե սա էր, որ Պետրոսին դարձրեց սքանչելի, թե՞ անվեհերությունը, որը ձեռք էր բերվել կյանքով: Չե՞ս լսում Քրիստոսին, որ ասում է. «Բայց մի ուրախացեք, որ դևերը ձեզ հնազանդվում են» (Ղուկ. 10:20): Լսիր նորից Պետրոսին, թե ինչ է ասում. «Արծաթ և ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ՝ այն կտամ» (Գործք. 3:6), հետևաբար, ով ունի ոսկի ու արծաթ, նա չունի այս բոլորը: Ինչո՞ւ է այդպես՝ կհարցնես դու, չէ՞ որ շատերը չունեն ոչ մեկը և ոչ մյուսը: Դա էլ նրանից է, որ նրանք աղքատ են ոչ կամավորաբար, իսկ կտրելով աղքատությունը, հոժարակամ ձեռք են բերում բոլոր բարիքները: Եթե նրանք հարություն չեն տալիս մեռյալներին և չեն բժշկում կաղերին, այնժամ նրանց մոտ կա շնորհ, որ կարևոր է մնացած բոլորից, նրանք ունեն անվեհերություն Աստծո առջև և կլսեն ապագայում երանելի բարբառը. «Եկեք, իմ հոր օրհնյալներ, -ի՞նչ ավելի սքանչելի բան կա սրանից առավել, -

ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը, որովհետև քաղցած էի, և Ինձ ուտելիք տվեցիք, ծարավ էի, և Ինձ ջուր տվեցիք խմելու, օտար էի, և Ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և Ինձ հագցրիք, հիվանդ էի, և Ինձ տեսության եկաք, բանտում էի, և Ինձ այցի եկաք» (Մատթ. 25:34-36):

Ուրեմն, փախչենք ագահությունից, որպեսզի մենք էլ արժանանանք Երկնքի արքայությանը, կերակրենք չքավորներին, որպես թե կերակրած լինենք Քրիստոսին, որպեսզի ժառանգակից լինենք Նրան՝ Քրիստոս Հիսուսին մեր Տիրոջը, որի հետ և Հորը, և Սուրբ Հոգու հետ միասին փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն (Հովհան Ոսկեբերան, Եբրայեցիներին ուղղված ուղերձի վերաբերյալ 18-րդ զրույցը):

Աղքատների մխիթարության մասին:

Ո՞ր մեկը պիտի ասեմ, ո՞ր մեկը պիտի պատմեմ, և կամ ո՞ր մեկը անտես անեմ, այն ինչ որ անկարևոր եմ համարում, սա է լեզուս շարժում, սակայն ուրիշներն են գալիս մտքիս: Եվ քանզի կարևոր եմ համարում ճառիս բովանդակությունը, պիտի պատմեմ և խոսեմ նեղյալների վիատության ու հիմար անօրենության տանող չքավորների մասին, որոնք մինչև իսկ իրենց հետին անմտության մեջ Աստծուն են հայհոյում, Նրան համարելով կողմնակալ ու ակնառու հարուստ ունևորների նկատմամբ: Ասում են. «Աստված սիրում է հարուստների, աչառություն է անում նրանց հանդեպ, հաջողեցնում է նրանց վաստակները և կարևորություն չի ընձեռում տառապյալների զրկանքներին, այլ՝ արհամարհելով, անտեսում է նրանց»: Այսպիսի անօրեն բարբառով աղքատներն ուրանում են Աստծո աղքատությունը և ճշմարտությունը, և նրա արդարությունը դարձնում են որպես գործակից անօրենության: Այսպիսով, հայհոյություն է առաքում երկինք և Աստծո մասին անիրավություն խոսում: Ուրանում են Աստծո ճշմարտությունը և ընկղմվում հերձվածողների անդունդը: Քանզի Աստծո արդարության ճշմարտությունը չեն կարող ունենալ

ոչ հրեան և ոչ էլ հեթանոսը, իսկ այսպես հայհոյողը, ամբարշտանալով, ուրանում է Աստծուն:

Արդ, ինչո՞ւ ես անիրավություն խոսում Աստծո մասին, ով չքավոր և աղքատ մարդ, մի՞թե Աստված Իր ունեցվածքից մի բանով զրկե՞ց քեզ, արդյոք, որպես եղբայրներ հարուստին և աղքատին հավասարապես չբաժանե՞ց, տալով նույն աչքից, ձեռքից և ոտքից, չէ՞ որ արևից, օդից և անձրևից հավասար կերպով ենք օգտվում, և բոլորս էլ հողից և Ադամից ենք: Բոլորի համար էլ եղավ մեկ մկրտություն, մեկ շնորհք, և միևնույն Քրիստոսի մարմինը և արյունը, բոլորին մեկ երկիր, մեկ երկինք և մեկ նյութ: Ահավասիկ որոնք են Աստծո շնորհները, որ հավասարապես բաժանեց աղքատին և հարուստին: Ուրեմն, ի՞նչ բանից զրկեց քեզ և դառավ աչառու հարուստին: Գիտեմ, որ այս մասին առարկելու բան չունես, սակայն ասում ես. «Որտեղի՞ց է սրա մեծությունը»: Հասկացիր, որ նրան ոչ թե Աստված Ինքը տարավ և հարստություններ ցույց տվեց՝ իրեն պարգևելով և նրանից քեզ զրկելով, այլ ոմանք ագահությամբ և հափշտակությամբ դարձան ունևոր, ոմանք անդուլ աշխատանքով, իսկ ոմանք էլ հայրական ժառանգությամբ: Իսկ ինչո՞ւ համար ես դու տրտում, արդյոք այն բանի՞, որ անընչատեր ես և անհոգ, անդարդ և խաղաղ, դյուրավ և հեշտությամբ ես հոգում մարմնիդ կարևոր պետքերը: Իսկ մեծահարուստները դժվարությամբ են պատրաստում իրենց ճաշը և ընթրիքը, և բազում մղձավանջներով լի է նրանց վայելքները, և մանավանդ, երբ սպանությամբ և զրկանքներով է ձեռք գցված լինում այդ կերակուրները՝ նրանք խղճահարությամբ հալ ու մաշ են լինում և իրենց որովայնի աղբի համար բազում փոքրիկներ պարուրում են նրանց միտքը: Սաստիկ ճմեռը ամեն կողմից հարձակվում է նրանց վրա, զգուշանում են գողերից և սարսափում ավազակներից, կրում են զրպարտողների արհավիրքը և տագնապում հարկահավաքներից, կրում են նախանձների ատելությունը, թշնամիների չարախոսությունը և ամեն կողմից հասնող նենգությունների և վարանումների մեջ են ընկնում, քանզի վիշապի նման բոլորի բերանները բացված են իրեն վրա և ուզում են կուլ տալ: Ահավասիկ տեսնում ես, որ ավելի շատ են մեծահարուստների մտահոգությունները և տրտմությունները, քան թե նրանց ուրախություններն ու հանգիստը: Որտե՞ղ է հարուստների ուրախությունները, երբ անդադար երկնքից

անձրև են խնդրում, դաշտերի խնամքն են տանում, գազաններից հոշոտված հոտերի վրա են հոգս անում, դողում են ավազակներից, տրտմում են խաշինքների մեջ ընկած վարակիչ հիվանդություններից, հսկում են գանձերը, իսկ այն պակասելու ժամանակ հյուծվում: Դեռ ինչե՞ր ավելացնեմ վերջին դատաստանի արհավիրքների և դառը տանջանքների ողբերի մասին, քանզի երկրի վրա իսկ պատվիրանների վախից սկսում են դողալ և միշտ սարսափում են, երբ մարգարեների և առաքյալների ընթերցվածքները հանդիմանելով կշտամբում են անողոք և կծծի մեծահարուստներին: Արդարև, ո՞ւր է հարուստների խնդությունը և ուր՝ մխիթարությունը, որին բաղձում և ցանկանում ես, ով չքավոր, քո հեշտական և խաղաղական կյանքի մեջ տխրում ես, դու քեզ թշվառական ես համարում՝ արհամարհելով քո ունեցած բազմապատիկ առավելությունները: Որովհետև ոչ վախ ունես գողերից, ոչ էլ կասկած՝ ավազակներից, չես մտահոգվում ոչ դաշտերի կանաչությամբ, ոչ էլ լեռների արոտատեղերի համար, չես վախենում ոչ քամիների ավերածություններից, ոչ էլ գազանների հափշտակություններից, չես սարսում ոչ բռնավորների բռնությունից և ոչ էլ իշխանների բռնագանձումներից, ոչ նախանձողներն են նախանձում քեզ և ոչ էլ զրպարտողներն են զրպարտում, ոչ ոխակալությունից ես վախենում և ոչ էլ խռովքից, ոչ իշխանների ահը կարող է քեզ զարհուրեցնել և ոչ էլ տերերի սաստերը, ոչ ոք չի կարող աղքատից բան կորզել խռովել և սաստել: Տեսնելով խռովահար և աղմկոտ մեծահարուստներին, աղքատը ծաղրում է նրանց, ամբարտավան իշխանները զայրանում են հարուստների վրա, իսկ աղքատին նրանք ոչինչ են համարում: Երկիրը լի է գողերով և ավազակներով, իսկ աղքատը վախ չունի նրանցից, հրապարակները լի են զրպարտողներով և բռնավորներով, իսկ աղքատը անհոգ է նրանցից, դատավորները գազանացած են և գայլացած, և սակայն աղքատը հանգիստ է նրանց կողմից, քանզի ստացվածք չունենալու պատճառով խաղաղ և անհոգ է իր կյանքը, ազատ բոլորից և բոլորովին զերծ կասկածից, աննախանձ, անվրեժխնդիր և ամեն այլ բազմապիսի ախտերից: Նա կարիք չունի բազում շինությունների և ոչ էլ դռների համար երկաթյա փականների: Աղքատին հիվանդության պարագայում տրտմություն չի տիրում և ոչ էլ աղմուկ, և խռովք է բարձրանում

նրա մահվան պահին, այլ՝ շատ անհոգ են աղքատի օրերը և անզբաղ ու հանգիստ նրա կյանքը: Այս բոլոր ազատություններն ունի աղքատը երկրի վրա: Իսկ խոսելու համար անդենականի մեջ չքավորների համբերության համար պատրաստված մեծության, փափկության, անսպառ բարության մասին, ո՞ր բերանն արդյոք կկարողանա ըստ պատշաճի պատմել, քանզի նա աշխարհի բոլոր թագավորությունների վայելչություններից ցանկալի և փափագելի է: Եթե միայն աղքատը կարենա առանց տրտունջի տոկալ չքավորության մեջ, որովհետև նա օրվա կերակուրն է միայն փնտրում և մեծ ցանկությամբ արհամարհանքը որպես քաղցրահամ կերակուր է ճաշակում և ննջում է անհոգաբար: Իսկ զմայլելի մեծահարուստների համար, ընդհակառակը, ախորժալի կերակուրները լեղի, անպետք և տաղտկալի են թվում: Հարբում են թանկարժեք գինով, թմրում և հիմարանում են, մինչդեռ աղքատն էժանագին հեղուկով ծարավի նույն ցանկությունն է բավարարում և հարբողից ավելի առողջ և զգաստ է մնում:

Արդ, ուրեմն, ինչո՞ւ ես դու քեզ եղկելի և թշվառական համարում, քանզի հեշտավետ և անհոգ կյանքը և կերակուրների քաղցրահամը ու ախորժահամը աղքատի մոտ եմ տեսնում, քանց թե մեծահարուստի: Քանզի զերծ են աղքատները ամեն տեսակի նենգություններից, իսկ մեծահարուստների մոտ են անմաքրությունները և անպարկեշտությունները, նաև՝ շվայտությունները: Նրանք լի են ամեն տեսակի պղծությամբ, քանզի անհիրավությամբ և ագահությամբ են հավաքել, հափշտակելով և զրկելով աղքատին: Սրանց սեղանները պատրաստվում են բազմազան մարդկանց քրտինքով, մեծ վախով և նվազ վայելումով, տեսակ-տեսակ հոգսեր են պաշարում իրենց, շատ քիչ են հանգստանում, այն էլ ծանրաբեռնված բազմաթիվ կասկածներով: Մինչդեռ քիչ լինելով անոթի աղքատի կարիքները, հեշտավետ նինջով են նրանք հանգստանում: Իսկ մեծահարուստին, հազիվ մտած անկողնու մեջ, անմիջապես թշնամիների և պատերազմների նման պաշարում են իր խորհուրդները, իր տան ծառաների հոգսը, զրպարտիչների և գողերի դողը, դրացիների և իշխանների նենգությունը և հարստության մտատանջությունը, թե ինչպես պիտի կարենա իր ունեցվածքն աճեցնել: Դառն է ագահ մեծահարուստների վիճակը, ամենուրեք տրտմության

վրա տրտմություն է բարդվում, որովհետև տեսնում է տան վնասը և մսխումը ու տրտմում՝ տեսնելով անդամտանի կորուստը, նաև տրտմում՝ տեսնելով հոտերի փչացումը, և ամեն կողմից ալիքների նման նրա վրա են գալիս հոգսերն ու տրտմությունները: Տակավին անդենական տանջանքների և գեհենի հրի մասին ինչ ասեմ և ինչ պատմեմ, որ պատրաստված է անողոք ու ագահ հարուստների համար:

Եվ արդ, ով աղքատ և չքավոր մարդ, ինչո՞ւ ես աղքատությանդ խաղաղ նավահանգստի համար նեղվում, տխրում ու տառապում, և հարուստի մրրիկներն ու ալեկոծությունները փնտրում, մի՞թե դու հարուստ չես, երբ գիշեր ու ցերեկ անզբաղ ես, անհոգ՝ թե տանդ մեջ, և թե հրապարակների վրա, աներկյուղ ես՝ ճանապարհիդ վրա և օթևանի մեջ, կասկած չունես բռնավորներից և ակնածանք՝ զրպարտողներից, և մանավանդ, երբ համբերությամբ կարճ ժամանակվա փորձանքների և աղքատության պիտի դիմանաս: Թեև մեծ բան է ստացվածքները աղքատներին բաժանելը, սակայն առավել և մեծ է անձը խոնարհաբար աղքատացնելն ու Աստծուց գոհանալը: Այս մեծությունը մեր Տերն էլ գովեց. «Երանի աղքատներին, -ասաց, -որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը»: Եթե չար բան լիներ աղքատությունը, Քրիստոս ամեն բանի մեջ աղքատություն չէր փնտրի: Քանզի Նա կարող էր թագավորական քաղաքի մեջ երևալ, թագավորի աղջիկների միջոցով ծնվել արքայական պալատներում: Սակայն նա աղքատ կույսից ծնվեց փոքրիկ քաղաքի մեջ, ուր ոչ տուն և ոչ էլ օթևան կար, այլ՝ քարահարկ մի իջևան, ու ոչ մահիճ կար և ոչ էլ՝ օրորոց: Քարանձավ մսուրի մեջ հանգստացավ բոլոր արարածների Տերը, ատաղցագործի խրճիթի մեջ մեծացավ, գետնագնաց ճանապարհորդեց և անչափ խոնարհվեց, որ մինչև իսկ աշակերտների ոտքերը լվաց, ծառայի կերպարանք առնելով: Եվ իր օրինակով նրանք երկնքի մեջ հարստանալ ուզեցին՝ երկրի վրա խոնարհություն ու աղքատություն ընտրելով:

Իսկ դու ինչո՞ւ ես դողում աղքատությանդ մեջ, որի միջոցով երկնքի մեջ պիտի փայլես և փոքր ինչ աղքատությանդ փոխարեն երկնքի անհուն բարիքները ժառանգես: Քանզի երկու տեսակ նեղություններ և հանգստություններ ունի մարդը, մեկը՝ երկրի, մյուսը երկնքի մեջ, կամ հանդերձյալ, հավերժական, չսպառվող բարությունները կժառանգես՝ մերժելով այստեղի անցավորը, կամ մշտնջենականի մեջ կաղքատանաս և կտառապես, կամ այստեղ լալ և սգալ, կամ՝ այնտեղ, կամ այստեղ համբերել և տոկալ նեղություններին կամ այնտեղ: Եղիա մարգարեի նման, որ երկրի վրա տառապեց և աղքատացավ ու երկնքի մեջ մեծ փառքով փառավորվեց: Նույնպես և Հովհաննես Մկրտիչը, որ երկրի վրա աղքատացավ, անոթիացավ և պապակվեց ու երկնքի մեջ ժառանգեց անհաշիվ բարություններ: Նմանապես և բոլոր մարգարեներն ու առաքյալները անցավոր նեղությամբ անսահման կյանքի վայելչություններն ստացան: Նաև մեր առաջին հայրերն, աղքատության կյանք ընտրեցին, որովհետև գիտեին, թե չափազանց դժվար է աշխարհային հարստությամբ երկնքի հարստությունը ժառանգել ու ժամանակավոր փափկությամբ երկնքի անհատնում փափկությունները վայելել: Քանզի ասված է, որ դժվար է փափկասեր մարդու համար Քրիստոսի երեսը տեսնել, իսկ հարուստների համար Աստծո արքայությունը մտնել, որովհետև անդենականի հանգիստը տառապածների ու աղքատների համար է և արքայությունը՝ կարոտյալների: Նրանք, որոնք երկրի վրա բանտի նման աղքատության մեջ են ապրում, նրանց համար արքայության դռները բաց են: Քանի որ Աստված անիրավ չի, որ տառապանքի բանտից հանի նեղյալներին ու չարչարվածներին և դժոխքի մեջ նետի, այլ՝ հանում է սնոտի կյանքից և անսահման ուրախության մեջ հանգստացնում: Եթե միայն նրանք գոհությամբ աղքատությունը շալակեն, քանզի բազում հարստություն և անսպառ հարստություն է իրենց սպասվում երկնքում: Արդ, ուրեմն, ով աղքատ ու չքավոր, ո՞ւր է քո ուրախությունը և բերկրանքը: Այս բոլորի փոխարեն հայհոյություն ես առաքում երկինք և Աստծո մասին անիրավություն խոսում: Ասում ես նաև թե շատ հարստություն ունենալով, բազում ողորմություն կարող է բաշխել ունևորը: Բայց իմացիր, որ աղքատի տված ողորմությունները շատ ավելի ընդունելի են և զարմանալի, քան մեծահարուստինը: Քանի որ, եթե մեկը սիրով մի տառապյալի խնամի, իր սակավ ունեցվածքից բաժին հանի նրան, անոթիներին կերակրի իր տվածով, կանցնի մեծահարուստներից, քանզի Աստված ոչ թե տվածի քանակին է նայում, այլ տվողի կամքին, և քիչը շատի տեղ է ընդունում: Իսկ եթե գույք չունես

կարոտյալին մխիթարելու համար, տուն ունես՝ օտարներին հյուրընկալելու համար, ողորմություն և գութ ունես՝ լալու և հեծկլտալու համար վշտացածների և ախտավոր ցավագարների վրա, որովհետև նման ողորմությունը ավելի մեծ բան է, քան ինչքերի բաշխումը: Պատճառաբանում ես նաև, որ հարուստն իր հարստությունից պատարագներ և պտուղներ է տալիս: Ավելիով աղքատը կարող է գերազանցել հարուստին: Անձդ խոնարհությամբ և անմեղությամբ պատարագ մատուցիր Աստծուն: «Աստծո պատարագը խոնարհ հոգին է»: Եվ սա ավելի մեծ է, քան խոյերի և զվարակների ողջակեզը, քանզի մարգարեն սուրբ սիրտը և խոնարհ հոգին է համարում որպես Աստծուն հաճելի և ընդունելի պատարագ: Երեք երիտասարդներ իրենց մարմինները և հոգիները Աստծուն պատարագ ընծայեցին: Եվ եթե պետք է նախանձես հարուստին՝ Աստծուն բաժին հանած կալի և հնձանի պտղի համար, որ ավելի մեծ է, քան բարեգործությունը, պատարագները, ողորմությունները ու խիստ պահեցողությունը, զոհաբերությունները, որոնց հոտն առնելով որպես անուշ բույր, Աստված օրհնում է նրանց տունն ու աշխատանքը: Բայց այն տնից, որտեղից օրհնության պտուղներ բաժին չեն հանվում եկեղեցիներին, քահանաներին և եկեղեցու սպասավորներին, այն հարկը զրկվում է աստվածային օրհնություններից ու վաստակից, և միշտ նվազության մեջ է մնում այն: Սրա համար է, որ Աստված պատվիրեց Մովսեսին, թե. «Քո արմատներիդ երախայրիքը Ինձ պիտի տաս, ոչխարներիդ, արջառներիդ և հոտերիդ անդրանիկները Ինձ պիտի նվիրես, իսկ Ես, ինչ բանի որ ձեռք զարնեմ, պիտի աճեցնեմ ու բազմացնեմ» (Բ Օրինաց 12:67): Նույնպես և Սողոմոնն է ասում. «Պատվիր Տիրոջը քո արդար վաստակիցդ և պտուղ հանիր Նրան քո արդարության արմատիքներից» (Առակ. 3:9): Եվ ավելացնում է. «Պիտի լցվեն քո շտեմարաններդ ցորենով ու հնձաններիցդ գինի պիտի հորդի»: Եւ այսպես է, եթե ստացվածք չունես, ով չքավոր մարդ, դու էլ պտուղ հանիր քո մարմնիդ անդամներից, քանզի աչքերից քաղված պտուղն է, երբ կույրին առաջնորդում ես և հարթ տեղ ես հանում, ոտների պտուղն է՝ կաղին ձեռնափայտ լինելը և նրա ոտքերի պահանջը գոհացնելը, ձեռքերի պտուղն է՝ անդամալույծին առաջնորդելը և գոսացածին օգնելը, լեզվի պտուղն է՝ մորոյալին ու-

սուցանելը և տրտմածին սփոփելը, ականջի պտուղն է՝ եղբոր հրամանին փութով լսելը ու խոնարհաբար նրա կամքին հնազանդվելը:

Արդարև այս բոլոր ողորմություններն էլ առանց ոսկու, բոլորին էլ տրված է բաշխել և ավելի վարձատրվել, քան ստացվածքի ողորմությունը: Ի՞նչ բան ունես առարկելու, քանզի աղքատի զոհաբերությունները, պտուղները և ողորմությունները ավելի դյուրին և ընդունելի են, քան մեծահարուստինը: Որի համար և բազում ժուժկալությամբ համբերեցեք նեղություններին և գոհությամբ ձեր վարձքն ստացեք: Իսկ եթե տրտմեք և հայհոյեք, պիտի ստանաք ձեր չարագործության հատուցումը, քանզի անսուտ է խոսքը, որ ասում է, թե կան ոմանք որ թե երկրի և թե երկնքի մեջ են տանջվում, այսինքն՝ այստեղ աղքատության նեղություն են քաշում, իսկ այնտեղ՝ իրենց տրտունջների համար արդար Դատավորից հանդիմանվելով կշտամբվում են և գեհենի կրակների մեջ հալումաշ լինում:

Ուրեմն, զգուշանանք այնտեղի տանջանքներին և դատապարտությանն արժանանալուց: Ապաշխարենք մեր մեղքերը, սիրենք աղքատությունը, առաքինությամբ երկիրը ժառանգենք և անհուն բարությունների զվարճությունը վայելենք, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հետ, Որին փառք և պատիվ, հավիտյանս հավիտենից: Ամեն:

(սբ. Հովհան Մանդակունի)

Իսրայելի մասին, երբ նա դեռ անապատում էր

Երբ Իսրայելը անցավ Կարմիր ծովով, դա նրան համարվեց որպես թե **մկրտություն:** Եվ ինչպես որ մկրտվողը խորասուզվում է սուրբ ավազանի ջրում և դուրս հանվում, որպես թե հին մարդը մահացավ, և նորը Քրիստոսով ծնվեց: Իսրայելն էլ անցնելով Կարմիր ծովով, դուրս եկավ Եգիպտոսից, որը խորհրդանշում էր աշխարհը, բայց ինչպես որ մկրտվողը մկրտվելով որդեգրվում է Աստծուն, բայց միանգամից երկինք չի մտնում, նմանապես և Իսրայելը խոստում ուներ Քանանի երկիր մտնելու, բայց այդ խոստմանը արժանանալու համար նա պետք է անխափան անցներ անապատի միջով, որպեսզի ժառանգեր Ավետյաց երկիրը:

Բայց տեսնում ենք, որ մկրտությամբ Եգիպտոսից ելածներից քսան տարեկանից բարձր եղողներից միայն երկուսն արժանացան Քանանին, իսկ մնացածների ոսկորները մնացին անապատում: Այս օրինակով տեսնում ենք, որ մկրտված, դարձի եկած հավատացյալը, նմանությամբ այս հին Իսրայելի, մեծ նեղությունների և վտանգների միջով անխափան պիտի անցնի, որպեսզի չմնա այս կորուսյալ երկրում առանց փրկության: Քանի որ ասվեց, թե նեղ է այս ճանապարհը, և բազում են թշնամիները՝ մռնչացող առյուծներ, մանր աղվեսներ, մխացող նետեր, գառան մորթով գայլեր և այլն: Իսկ ինչո՞ւ զրկվեց Իսրայելը խոստացված բարիքներից, որովհետև հիշողությունից հանեց Եգիպտոսի տառապանքները, նաև չհասկացավ, չընկալեց և չգնահատեց Քանանի արժեքը, և մտնելով անապատ, փոխանակ ամեն բան մոռանալով վազեր դեպի նպատակը՝ դեպի Քանան, դատարկ ու փուչ անապատի մեջ տրվեց բազում կրքերի և ծանրաբեռնեց իրեն բազում ցանկություններով: Մոռանալով այն ընթացքը, որի վերջը կաթ և մեղր բխող երկիրն էր: Ինչպես որ Պողոս առաքյալն էր ասում, թե. «Ամեն բան ետևում թողած, վազում եմ դեպի առաջ, դեպի նպատակ, քանի որ մրցողը աջ և ձախ չի նայում, այլ ակնկալում է առաջինը հասնել նպատակակետին և ստանալ փառաց պսակը» (Փիլիպ. 3:13 -15):

Եվ այսպես, մոռանալով գալիք խոստումը և եգիպտացիների հալածանքը, իսրայելացիներն ընկան գաղջության մեջ: Իսրայելը տարբերվում էր մնացած բոլոր ազգերից նրանով, որ չուներ կայուն բնակավայր, տների փոխարեն վրանների մեջ էին բնակվում, չէին զբաղվում ինչ-որ բան աճեցնելով կամ կառուցելով, որովհետև մի էր նպատակը՝ շուտափույթ հասնել Քանան, ինչպես որ Տերն ասաց՝ Մարդու որդին գլուխ դնելու տեղ անգամ չունի, այնինչ աղվեսներն իրենց բներն ունեն: Իսրայելը զոհել էր ժամանակավոր հանգիստը, որպեսզի իր ժամանակին ժառանգի կաթ ու մեղր բխող երկիրը, ինչպես որ գրված է՝ այս աշխարհի մեջ պանդուխտների պես ապրել: Սակայն Իսրայելը աչքը տնկեց այն ազգերի ապրելակերպին, որոնք անհոգ ապրում էին, և նախանձեց նրանց հանգստին, դժգոհեց իր վիճակի համար: Չհասկացավ այն երանությունը, որ իրեն էր բաժին հասել, այն ամպի և կրակի սյունը, որ իր հետ էր գնում, որը և խորհրդանշում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Ահա Իսրայելը տրտնջաց և ջուր ուզեց, մոռանալով անմահության Աղբյուրին, որ իրենց մեջ էր, հաց ուզեց՝ անտեսելով երկնքից իջած Հացին, որի ճաշակողները հավիտենական կյանք են ձեռք բերում: Միս ուզեց՝ մոռանալով մեր մեղքերի համար խաչված Աստծո Գառանը, հպարտացավ և փառք փնտրեց անապատում, ինչպես Կորխը, Աբրիոնը և Ահարոնի քույր Մարիամը, այնինչ գրված է՝ «Աստված դեմ է հպարտներին», նաև՝ «Ինձ նմանվեք, որ հեզ եմ և սրտով խոնարհ»: Ցանկացավ աշխարհի հարստությունը, ինչպես որ Աքարը, մոռանալով, որ գանձերը Քանանում՝ այսինքն՝ երկնքում պիտի դիզել: Երկրպագեցին հորթին, երկնքի աստղերին և բազում այլ կուռքերի՝ մոռանալով պատվիրանը, որ ասում է. «Միայն քո Տեր Աստծուն պիտի երկրպագես»: Անհոգ գտնվեցին աստվածպաշտության մեջ, ինչպես որ Ահարոնի որդիներն օտար կրակ մատուցեցին Աստծուն, չվստահեցին նաև Աստծո զորությանը՝ զարհուրելով հակառակորդի պարիսպներից ու զորքերից, և մոռանալով Եգիպտոսի տանջանքները և գալիք Քանանի ուրախությունները, անապատում տրվեցին զվարճությունների, ինչպես որ ասվում է. «Ժողովուրդը նստեց ուտելու ու խմելու և ելավ պարելու», և բազում-բազում այլ սխալներ և մեղքեր գործեցին (Կորնթ. 3: 1-3):

Մենք էլ՝ դարձի եկած, մկրտված քրիստոնյաներս, դուրս եկանք աշխարհից, այսինքն՝ Եգիպտոսից, որպես Տիրոջ կողմից կանչվածներ, ցնծությամբ և ուրախությամբ մտանք անապատ, այսինքն՝ մերժեցինք աշխարհը և մեր ընթացքն ուղղեցինք դեպի երկնային Քանան: Բայց ցավոք, ինչպես որ Իսրայելը, այնպես էլ շատերս անապատի մեջ հոգնեցինք, ձանձրացանք, հեղգացանք, ծուլացանք և տրտնջացինք, նայեցինք աշխարհին և սրտերիս մեջ ցանկացանք Եգիպտոսի սոխն ու սխտորը: Հին մարդուն կենդանացրինք մեր մեջ որկրամոլությամբ, աշխարհսիրությամբ, վավաշոտությամբ և դրամապաշտությամբ, հպարտությամբ, փառամոլությամբ, զվարճանքներով և բազում այլ կրքերով, և սրանք էլ, որպես թե ամեն մեկը մի կուռք, մեր մեջ ունենալով, երկրպագեցինք՝ մոռանալով այն կենդանի Ջրի Աղբյուրը, այն Երկնքից իջած հացը, որին հաղորդ եղանք: Ահա գրված է, թե կանչվածները շատ են, իսկ ընտրյալները՝ քիչ, Իս-

բայելն էլ կանչված էր աշխարհի բազում ազգերի միջից, բայց նրանցից էլ շատ քչերն ընտրվեցին: Երկնքի Արքայության մասին գրված առակի մեջ Տերը շեշտում է հենց այն, որ իսկապես միայն կանչված լինելով չի փրկությունը, այլ ընտրված լինելով: Քանի որ ասվեց, թե ինչպես ձկնորսները ցանցը դուրս են հանում և ջոկում ձկները և լավերը վերցնելով՝ անպետքները ջուրն են նետում, այնպես էլ հրեշտակները պիտի ջոկեն և ընտրյալներին ուղեկցեն դեպի կյանք, իսկ մնացածներին որպես անպետքություն, կնետեն կրակե լճի մեջ: Տերն ասաց առաքյալներին, թե դուք մարդկանց որսորդ պիտի լինեք: Դարձի եկած և մկրտված հավատացյալները դրանք հենց առաքելահիմն փրկչարար ցանցի մեջ գտնվողներն են, որոնք բոլորն էլ կանչվածներ են, որոնցից և պիտի ջոկվեն ընտրյալները, իսկ հիմար կույսերը, անպիտան ծառաները, ծույլերը, անհոգները, շեղվածները և մեղքից չհրաժարվողները, չնայած անվամբ քրիստոնյա, չնայած կանչված լինելուն, պիտի նետվեն գեհեն: Դրա համար է, որ եկեղեցում քարոզվում և աղոթք է արվում այս մասին այսպես. «Վասն զի մի ընդ խոտանսն գտանիցիմք հավուրն պատասխանատվության՝ զՏէր աղաչեսցուք: Տէր, ողորմեա»: Թարգմանաբար՝ «Որպեսզի խոտան չգտնվենք պատասխանատվության օրը, Տիրոջն աղաչենք»: Եվ ինչպես որ օվկիանոսի, ծովերի, լճերի, գետերի ձկներից շատ քիչ մասն է, որ ընկնում է ձկնորսների ցանցի մեջ, և նրանց միջից էլ, իր հերթին, ոչ բոլորն են ընտրվում, այսպես մենք էլ՝ մի կողմից կարող ենք ուրախ լինել, որ քրիստոնյա ազգի ներկայացուցիչներ ենք, նաև դարձի եկած և մկրտված, այլակրոն չենք, աղանդավոր չենք, անհավատ չենք, այլ ճշմարտապես կանչվածներ, որին չարժանացան բազմամիլիոն այլակրոններ և անհավատներ, բայց և մյուս կողմից էլ զարհուրենք, որ այսքան առավելություն ունենալով, կարող ենք ընտրյալների մեջ չլինել և արժանանալ այն ճակատագրին, ինչպես որ ցանցում չգտնվող ձկները, այսինքն՝ չկանչվածները: Հիշենք կանչվածներից նրանց, ում մասին ասվում է սերմնացանի առակում: Կանչվածները այստեղ չորս մասի են կարծես դասվում. առաջինը, որ Խոսքը սրտի մեջ չընդունեց, և թռչունը՝ այսինքն սատանան, այն հափշտակեց,

մյուսը չորացավ ժայռի վրա ընկնելով, այսինքն՝ չդիմացավ վերահաս նեղություններին, մյուսը՝ չնայած բավականին աճ ունեցավ, սակայն խեղդվեց մոլախոտերի մեջ, այսինքն՝ աշխարհի գայթակղությունների և դրամապաշտության զոհ լինելով, և միայն մեկն էր այս չորսից, որ պարարտ հող էր, որի մեջ սերմն ընկնելով՝ պտղաբեր եղավ, ինչպես որ ամբողջ Իսրայելից միայն Քաղեբը և Հեսուն և քսան տարեկանից ցածր լինողները, այն էլ ոչ բոլորը: Այս առակում էլ տեսանք, որ կանչվածները չորսն էին, իսկ ընտրվածը՝ մեկը: Եվ ինչպես Իսրայելը, այնպես էլ մենք, եթե չսթափվենք, չզոջանք, չապաշխարենք, ապա մեր ոսկորներն էլ, անկախ մեր մկրտված և դարձի եկած լինելուց, կմնան այս աշխարհի անապատի մեջ, այն խոսքի համեմատ, թե՝ «Հոգով սկսեցիք և մարմնով վերջացրիք»: Իսկ գիտենք, որ ըստ Առաքյալի, մարմնավոր խորհուրդը մահ է: Ուրեմն, չնայենք և չցանկանք աշխարհի մարդկանց ժամանակավոր վայելքներին, այլ մեր խաչը կրենք անտրտունջ, քանի որ գրված է, եթե արդարը հազիվ է փրկվելու, ապա անհավատն ուր մնաց: Եվ եթե չենք ուզում անհավատների պես անհույս կորչել ուրեմն, մերժենք աշխարհը և այն ամենն, ինչ որ նրա մեջ է, և սիրենք անապատի նեղությունները, որի վախճանն են հավիտենական հանգիստը, վայելքն ու երանությունները: Ճիշտ է, Իսրայելը ցանկանում էր կաթ և մեղր բխող երկիրը ժառանգել, բայց չէր ուզում դրա համար մատը մատին խփել, այնինչ այն ժառանգելու համար պետք է ոչ միայն աշխարհը, այլև իրենց ընտանիքները և իրենց անձերը զոհեին և իրենց խաչը վերցնելով, գնային Ամպի և Կրակի սյան ետևից: Երբ Տերն առաքյալներին ասաց իր մոտալուտ խաչելության մասին, նրանցից ոչ մեկը չհամարձակվեց հարց տալ նրան այդ մասին, քանզի սաստիկ վախեցան և լուռ մնացին, իսկ երբ շարունակում էին ճանապարհը, միմյանց հետ վիճում էին, թե Երկնքի Արքայությունում իրենցից որն է ավելի մեծ: Երբ Տերը նրանց հարցրեց, թե ինչի մասին էին վիճում, նրանք նորից լռեցին՝ այս անգամ ամոթից: Ինչո՞ւ, որովհետև խաչելության մասին չուզեցին խոսել՝ հիշելով, որ Տերը ժամանակին ասաց, թե. «Եթե տանտիրոջը Բեհեղզեբուղ անվանեցին, տան անդամներին ի՞նչ կանվանեն»: Դրանից եզրակացնում էին, որ եթե Տերը պիտի խաչվի, ապա

իրենք էլ որպես տան անդամներ նույն ճակա-
տագրին պետք է արժանանային: Ճիշտ է, նրանք ցանկա-
նում էին երկինքը ժառանգել, ինչպես Իսրայելը՝ Քանանը, և նույ-
նիսկ վիճում էին, թե իրենցից ով պետք է մեծ լինի երկնքում, սակայն
խաչի ճանապարհը բռնել չէին ցանկանում, ինչպես որ Իսրայելը՝
անապատի նեղությունները: Բայց հարությունից հետո, երբ արժանա-
ցան Սուրբ Հոգու զորությանը, կարողացան մերժել թե աշխարհը, և թե
իրենց անձը գոհությամբ և ուրախությամբ կրեց իրենց խաչը: Մենք էլ
պարտավոր ենք մեր խաչը կրել գոհունակությամբ և առանց տրտունջի, ավելի խորհել խաչի ճանապարհի մասին, քան աշխարհի վայելքների, և ջանալ Տիրոջ առաջ ծնկել՝ ասելով. «Գոհանում ենք քեզանից, մարդասեր Աստված, որ անարժաններիս արժանի ես անում այս կարճ ժամանակամիջոցում կրելու այս փոքր նեղությունները, որով չարչարանակից ես համարում մեզ Քո սուրբ տառապանքներին այստեղ, և սրանով արժանացնում անանց վայելքների և ուրախությունների՝ Երկնքի Արքայությունում: Շնորհիր մեզ, որպեսզի այս անապատում քայլենք ըստ Հեսուի և Քաղեբի, որ չզրկվենք խոստումից, և մեր ոսկորները ցրիվ չգան այստեղ: Ո՜վ Տեր, ամեն վիշտ, նեղություն և ցավ օրհնյալ ձեռքիցդ գոհունակությամբ ընդունելու շնորհ արա մեզ, որպեսզի ամեն նմանօրինակ իրավիճակներում գոհությամբ փառավորենք սուրբ և պատվական անունդ հավիտյանս. Ամեն:

ՆԱՐԵԿ
ԲԱՆ ՀԲ

Չկա ո՛չ մի մարդ այնքան մեղավոր, այնքան անօրեն,
Այնքան ամբարիշտ, այնքան անիրավ, այնքան չարագործ,
Այնքան մոլորված, այնքան սխալված, այնքան մոլեգնած,
Այնքան խարդախված, այնքան շաղախված,
Այնքան ամաչած ու դատապարտված,
Որքան որ ես եմ.
Միմիայն ե՛ս եմ, և ուրիշ՝ ոչ ոք.
Ե՛ս եմ համայնը, և ամենքինն է պարփակված իմ մեջ:
Ո՛չ ամենևին հեթանոսները, որ անգետ էին,

Ո՛չ հրեաները, քանզի կուրացան,
Ո՛չ տգետներն ու խաժամուժ մարդիկ,
Քանզի զուրկ էին իմաստությունից.
Միայն ե՛ս, քանզի, որպես իմ անձին ամբաստանություն,
Վարժապետ անուն նույնիսկ կրեցի.
Կոչվեցի ռաբբի, ռաբբի՜, եղծելով գովեստն առ Աստված.
Անվանվեցի և բարի, եղկություն ինձ ժառանգելով.
Մարդկանցից նաև սուրբ վկայվեցի,
Երբ անմաքուր եմ Աստծո առաջ.
Դիտվեցի արդար, երբ ամբարիշտ եմ բոլոր կողմերով.
Գովասանքներով մարդկանց՝ հրճվեցի,
Որ Քրիստոսի ատյանում ձաղվեմ.
Դեռ ավազանից կոչվեցի արթուն,
Սակայն ննջեցի մահաբեր քնով.
Հսկող հորջորջում նույնիսկ ստացա օրս փրկության,
Սակայն աչքերս փակեցի ամուր զգաստության դեմ:
Ահա և այժմ՝ արդար դատաստան, հանդիմանություն,
Նոր կշտամբանք, հին դատապարտություն,
Ամոթանք դեմքի ու հոգու տագնապ,
Քննություն՝ փոքր բաների համար,
Որ ունեն կշիռ մեծամեծերի:
Բայց դու, միակ տեր Աստվա՜ծ մարդասեր,
Անքինախնդիր ու երկայնամիտ,
Կսկծեցուցիչ ինքնադատական,
Նախատինքներն այս վերջին օրն ահեղ
Համարի՛ր որպես դատապարտություն մեղապարտ անձիս:
Թող որ չլսեմ այս բոլորն այլևս քեզանից, գթա՜ծ,
Քանի որ դրանք ինքս ինձ անձամբ վերագրեցի.
Ջնջի՛ր, ուրեմն, ու վերացրո՛ւ
Դատապարտության կնիքն ինձանից,
Որ կապված եմ քեզ տենչանքով հոգուս.
Անհետացրու՛ այս ամոթալի
Նախատինքները խայտառակության,
Ծածկի՛ր մերկ մարմնիս տգեղությունը աջով քո կարող,

Պարգևի՛ր հանգիստ մեղքի բեռներով
Սաստկապես ծեծված բազմաչարչարիս,
Կարգի՛ր ինձ բարվոք վերելքի ճամփա՝ կյանքիդ հասնելու,
Որպես հիշատակ քո ողորմության՝
Ապահովի՛ր ինձ կատարյալ կյանքով՝ մահվանից հետո,
Օրհնյա՜լ երկնքում ու երկրի վրա
Եվ բարեբանյա՜լ ըստ ամենայնի՝
Հավիտյաններից հավիտյանս. ամեն:
(սբ. Գրիգոր Նարեկացի)

ԾՈՒԼՈՒԹՅԱՆ ՁԱՆՁՐՈՒՅԹԻ ԵՎ ԹԱԽԻԾԻ ՄԱՍԻՆ

Խրատ սիրողը գիտություն է սիրում, բայց հանդիմանությունն ատողը անխելք է (Առակ. 12:1):

Աստվածաշնչից

1. Ով ծույլ, մրջյունի մոտ գնա, նրա ճամփաներին նայիր և իմաստուն եղիր (Առակ. 6:6):

2. Ով ծույլ, մինչև ե՞րբ պիտի պառկես, քնիցդ ե՞րբ պիտի արթնանաս (Առակ 6:՝):

3. Ծույլը չի հերկում, ասելով՝ ձմեռ է (Առակ. 19:24):

4. Ծույլի ցանկությունը նրան կսպանի, քանի որ ձեռքերը գործի դնել չի ուզում (Առակ. 21:25):

5. Քունը մի՛ սիրիր, որպեսզի չաղքատանաս: Աչքերդ բաց, որպեսզի հացով կշտանաս (Առակ. 20:13):

6. Ծույլի ճանապարհը ծածկված է փշերով, բայց հարթ ու բաց է ջանասերի ճամփան (Առակ. 15:19):

7. Ծուլությունը հատուկ է թուլամորթին, և գործ անել չսիրող մարդը քաղցած կմնա (Առակ. 19:15):

8. Ծույլը թեև նախատվում է, բայց չի ամաչում, ինչպես մեկը, որ ցորեն է փոխ առնում ամռանը (Առակ. 20:4):

9. Մինչև ե՞րբ պիտի պառկես, ո՛վ ծույլ, ե՞րբ պիտի զարթնես քնից: Մի քիչ էլ որ ննջես, մի քիչ էլ նիրհես, մի քիչ էլ հանգստանաս, մի քիչ էլ ձեռքերդ դնես կրծքիդ, եթե այդպես անես, ապա քեզ վրա պիտի հասնի աղքատությունը, ինչպես ուղևոր, և կարիքը՝ արագընթաց սուրհանդակի նման (Առակ. 24:32-34):

10. Երբ ծույլին ուզում ես մի տեղ ուղարկել, ասում է. «Ճանապարհին առյուծ կա, հրապարակում՝ մարդասպաններ»:

Ինչպես դուռը շուռ է գալիս իր ծխնիի վրա, այնպես էլ ծույլն է թավալվում իր մահճում:

Ծույլն իր ձեռքերը թաքցնում է ծոցում և ալարում է նույնիսկ իր բերանը տանել:

Ծույլն իր աչքին ավելի իմաստուն է թվում, քան այն անձը, որ հարստության բարի լուր է ավետում (Առակ. 26:13-16):

11. Հավիտյա՛ն ջանք թափի՛ր, և դու կապրես անվերջ ու ապականություն չես տեսնի (Սաղմ. 48:10):

12. Ծուլության պատճառով շենքի գերանները կընկնեն ցած, և ձեռքերի պարապությունից տունը կկաթի (Ժող. 10:18):

13 . Ծույլը նման է շաղախված կղկղանքի. ամեն ոք զզվանքով կթքի նրա վրա: Ծույլը հավասար է աղբի և թրիքի. ամեն ոք, ով այն վերցնի, թափ կտա իր ձեռքերը (Սիրաք 22:1- 2):

14 . Տերը պատասխան տվեց և ասաց նրան. «Գա՛ր և ծո՛ւյլ ծառա, գիտեիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, և հավաքում այնտեղից, ուր չեմ ցանել. դու պետք է իմ այդ դրամը լումայափոխների մոտ դնեիր, և ես, գալով, տոկոսով միասին պահանջեի այն, ինչ որ իմն է: Արդ, դրանից առե՛ք այդ քանքարը և տվե՛ք նրան, ով տասը քանքար ունի. քանի որ՝ ով ունի, նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի: Իսկ այդ անպիտան ծառային հանեցե՛ք դուրս, արտաքին խավարը. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում» (Մատթ. 25:26 -30):

15. Թող անիծյալ լինի նա, ով Տիրոջ գործը ծուլությամբ կկատարի (Երեմ.48:10):

16. Հոգիս կյանքիցս ձանձրացավ (Հոբ 10:15):

17. Բարի գործելուց չձանձրանանք, որովհետև հարմար

ժամանակին պիտի հնձենք, եթե չթուլանանք (Գաղ. 6:9):

18. Բայց դու ինձ չկանչեցիր, ո՛վ Հակոբ, հապա ինձանից ձանձրացար, ո՛վ Իսրայել (Եսայի 43:22):

19. Եթե ձեզ տխրեցրի էլ այդ թղթով, չեմ զղջում դրա համար, թեպետև զղջացել էի, որովհետև տեսնում եմ, որ այդ թուղթը առժամանակ տխրեցրել է ձեզ: Արդ՝ ուրախ եմ. ոչ որովհետև տրտմեցիք, այլ որովհետև ապաշխարության համար տրտմեցիք, քանի որ ըստ Աստծո ուզածի տրտմեցիք, այնպես որ մեզանից ոչ մի բանով վնաս չկրեցիք, որովհետև տրտմությունը, ըստ Աստծու ուզածի, ապաշխարություն է առաջ բերում փրկության համար, որը զղջում չի պատճառում, իսկ աշխարհի տրտմությունը մահ է առաջ բերում (Բ Կորնթ. 7:8-10):

Հայրեր

1. Ոչ մի բոպեն ծուլությանը մի՛ զոհիր (Անտոն Անապատական):

2. Սիրի՛ր աշխատանքը, մարմնավոր աշխատանքը սրտին մաքրություն է տալիս (Անտոն Անապատական):

3. Այստեղ հանգիստ չփնտրեք, որպեսզի այնտեղ ձեռք բերեք (Հովհան Ոսկեբերան):

4. Աստված մեր փոխարեն չի աշխատում, այլ օգնում է մեզ (Հովհան Ոսկեբերան):

5. Մենք այնքան չենք ջանում մեր փրկության համար, որքան սատանան մեր կորստի համար (Հովհան Ոսկեբերան):

6. Մեղքը պատճառ է անպատվության, իսկ այն ծնվում է անբանությունից: Եթե պարապությունը բարիք լիներ, ապա հողը ամեն բան կտար առանց ցանելու և մշակելու, բայց նա ոչ մի նման բան չի անում (Հովհան Ոսկեբերան):

7. Չնայած որ պատիժ և տանջանք է թվում խոսքերը. «Ճակատիդ քրտինքով քո հացը ուտես» (Ծննդ. 3:19), բայց իրականում նրանցում կան որոշ ներշնչանք և ուսուցում, նաև բժշկություն՝ մեղքից առաջացած վերքերի համար (Հովհան Ոսկեբերան):

8. Պողոսն էլ անդադար աշխատում էր ոչ միայն ցերեկն, այլև գիշերը: Սա ի հայտ է բերում նա, երբ ասում է. «Եղբայրներ, հիշեցեք մեր վաստակը և ջանքը, երբ գիշեր-ցերեկ աշխատում էինք» (Ա Թեսաղ. 2:9): Եվ հաճույքի և հոգևոր հանգստի համար չէ, որ նա աշխատում էր, որ անում էին եղբայրներից շատերը, այլ այնպիսի ջանք էր թափում աշխատանքի ժամին, որ օգնում էր նաև ուրիշներին: Մարդ, որ իշխանություն ունի դևերի վրա՝ լինելով տիեզերալույս վարդապետ, որին որ տրված էր հոգ տանել բոլոր երկրավորների համար, որը և մեծ ջանքով աշխատում էր բոլոր եկեղեցիների համար, որոնք գտնվում էին արևի տակ, նաև հոգում էր ցեղերի, ազգերի և քաղաքների համար, աշխատում էր գիշեր ու զօր և մի փոքրիկ իսկ հանգիստ չէր առնում աշխատանքներից: Իսկ մենք չունենալով իսկ մի չնչին մասը նրա հոգսերի և նույնիսկ անկարող լինել մտովի իսկ պատկերացնել նրա ջանքերը, մեր օրերն անցկացնում ենք պարապությամբ և անգործունեությամբ: Եվ ինչ արդարացում պիտի ունենանք, ասա ինձ, կամ ինչ ներում (Հովհան Ոսկեբերան):

9. Ոչինչ չկա աշխարհի վրա, որ չփչանա անշարժությունից: Այսպես անշարժ լճացած ջուրը հոտում է, իսկ հոսող ջուրը պահպանում է իր մաքրությունը և վճիտությունը: Նաև երկաթը, որ անշարժ ընկած է, դառնում է ավելի թույլ՝ ընկնելով որակից և պատվում է ժանգոտությամբ, իսկ գործի մեջ գտնվողը դառնում է թե օգտակար և թե գեղեցիկ՝ չզիջելով իր փայլով արծաթին: Հողը մնալով հանգստի մեջ, ոչ մի լավ բան չի տալիս, որը կարող է ամեն մեկն էլ տեսնել, այլ միայն անպիտան խոտեր և տատասկ, նաև՝ անպտղաբեր ծառեր, իսկ այն, որ մշակվում է, առատապես տալիս է սննդարար պտուղներ: Եվ ընդհանրապես, ամեն մի էակ անգործունեությունից փչանում է, իսկ իրեն հատուկ գործունեությունից դառնում է օգտակար: Եվ այսպես, իմանալով այս բոլորը, թե ինչքան վնասակար է անգործունեությունը և որքան օգտակարություն կա գործունեությունից, խուսափենք առաջինից և ամուր բռնվենք վերջինից, որպեսզի մենք թե այս կյանքում ապրենք բարեվայելչությամբ և կարիքավորներին էլ օգնենք մեր ունեցվածքից ու կատարելագործելով մեր հոգին, ստանանք հավիտենական բարիքները (Հովհան Ոսկեբերան):

10. Ներկա ժամանակը դա պայքարի ժամանակ է, հետևապես ժամանակ է վերքեր ստանալու, վշտեր կրելու և արյուն հեղելու՝ ոչ ուրիշինը, այլ քո սեփականը: Լսիր, թե ինչ է ասում Պողոսը. «Արդ ես ճիշտ այսպես եմ վազում, ոչ թե աննպատակ, այնպես չեմ կռփահարում, իբրև թե քամի ծեծեի» (Ա Կորնթ. 9:26): Մեր կյանքը համարենք որպես սխրանքների համար նախատեսված, երբեք չփնտրենք հանգստություն և չնայենք նեղություններին և վշտերին, որպես թե մեր համար օտար բաների: Հանգստի համար ուրիշ ժամանակ է հատկացված, իսկ կատարելության հասնելու համար մեզ անհրաժեշտ են վշտեր (Հովհան Ոսկեբերան):

11. Պարապությունը և ճոխությունը ոչնչի պիտանի չեն, այլ ծառայում են միայն սնափառության և հաճույքների համար: Այսպիսի մարդը արհամարհելի է թե տնեցիների կողմից, թե ընկերների և թե բարեկամների: Արդարությամբ կարելի է ասել, որ նա բեռ է երկրի վրա և իզուր է ծնվել և աշխարհ եկել: Ավելի ճիշտ, ոչ իզուր, այլ իր գլխին որպես փորձանք, իր կորստի համար և ի վնաս ուրիշների: Եվ տեսնենք, թե ի՞նչ հաճելի բան կա այդպիսի պարապ և անգործ կյանքում: Ի՞նչ ավելի տհաճ բան կա այն մարդուց, որ չգիտի ինչով զբաղվի: Ի՞նչն է ավելի ամոթալի նրանից, ի՞նչն ավելի խղճուկ (Հովհան Ոսկեբերան):

12. Անձն իր բնությամբ կարիք ունի շարժման և տանել չի կարող անգործությունը: Աստված այն ստեղծել է որպես գործող էակ, դրա համար էլ նա գործում է իր բնության համեմատ, իսկ անգործությունը հակառակ է նրա բնությանը: Ոչ մի այլ ամոթալի բան չկա պարապությունից և անգործությունից, դրա համար էլ Աստված մեր մեջ դրել է աշխատելու կարիքը: Անգործությունը վնասում է ամեն բան և նույնիսկ մարմնավոր անդամները: Քանզի եթե աչքը, կամ ստամոքսը, կամ որևէ մի այլ անդամ մնա անգործության մեջ՝ չկատարելով իր պարտականությունները, այնժամ այն կընկնի ծայր աստիճան հիվանդության գիրկը, բայց ոչինչ այնպես չի տուժում այդ բանից, ինչպես հոգին: Ասենք նաև, որ ոչ միայն անգործությունը, այլև ոչ պատշաճ գործունեությունը նմանապես վնասակար են: Նման այն բանի, որ երբ մարդը ոչինչ չուտի, կփչացնի ատամները, բայց եթե

ուտի ոչ պատշաճ բաներ, կփշրի այն: Այսպես և այս պարագայում, եթե հոգին ոչինչ չի անում, կամ անում է բաներ, որ հարկ չէր անել, այդժամ կորցնում է իր զորությունը: Այս պատճառով իսկ փախչենք թե մեկից, և թե մյուսից: Այսինքն, թե անգործությունից, և թե այնպիսի գործունեությունից, որ առավել վատ է պարապությունից: Իսկ ահա ինչպիսին են այդ գործերը՝ ագահություն, բարկություն, նախանձ և մյուս այլ կրքերը: Նման գործերից փախչենք, իսկ առաքինության գործերը կատարենք ամենայն ջանասիրությամբ, որպեսզի արժանանանք խոստացված բարիքներին (Հովհան Ոսկեբերան):

13. Աղքատությունը ստիպում է աշխատել, այլ ոչ թե գողանալ: Գողությունը տեղի է ունենում ծուլությունից, աղքատությունը մղում է ոչ թե գողության, այլ աշխատասիրության, և այսպես, գողության պատճառը անհոգությունն է (Հովհան Ոսկեբերան):

14. Թող այն լինի մեր հոգածությունը, որպեսզի ներկա ժամանակը դատարկ չանցնի, այսինքն՝ առանց հոգևոր սխրանքի ու աղոթքի (Եփրեմ Ասորի):

15. Որպես արատների մայր համարիր ծույլ անգործությունը, որովհետև հափշտակում է ունեցած բարիքը, իսկ ինչ որ չունես, չի էլ թողնում, որ ունենաս (Նեղոս Սինայեցի):

16. Ոմանք ցած դնելով իրենց վրայից աշխատանքի ծանրությունը, իրենց ծուլությունը ջանում են ծածկել անցածգնացած գործերով, անվստահ և անհամոզիչ կերպով պատմելով և ցուցադրելով այն որպես ականատես վկաների, որոնք ցավոք ներկա պահին ոչ մի տեղ չեն գտնվում (Նեղոս Սինայեցի):

17. Մոտ է վերջը, պատրաստվիր մտրակահարվելու, ով ծույլ (Նեղոս Սինայեցի):

18. Հարկավոր է Աստծո համար ապրել և սիրել կյանքը նույնպես Աստծո համար (Գրիգոր Սքանչելագործ):

19. Վարժվիր աշխատանքում ու արհեստների մեջ, որպեսզի կարողանաս աղքատին մի կտոր հաց տալ, իսկ քեզ պահպանել անգործությունից, քանի որ պարապությունն անկում է ու հոգու մահ (Աբբա Եսայի):

20. Աստվածասերը, երբ լսում է Եկեղեցու, առավոտյան

ժամերգության կանչող զանգերն, ասում է. «Փառք Աստծո», իսկ ծույլն ասում է. «Ավաղ, ավաղ» (Հովհաննես Սանդուղք):

21. Արթուն աչքը մաքրում է միտքը, իսկ երկար քունը կարծրացնում է հոգին (Հովհաննես Սանդուղք):

22. Ամեն երեկո հավիտենական հրի հիշողությամբ քուն մտիր և այդ հիշողությամբ արթնացիր, և ծուլությունը քեզ չի հաղթի սաղմոսելիս (Հովհաննես Սանդուղք):

23. Ծույլերը, երբ տեսնում են, որ իրենց հանձնարարում են ծանր գործեր, այն ժամ հանձն են առնում նախընտրել աղոթքը, իսկ երբ ծառայության գործերը թեթև են լինում, այն ժամ փախչում են աղոթքից, ինչպես կրակից (Հովհաննես Սանդուղք):

24. Ավելորդ քունը պատճառ է մոռացկոտության, իսկ հսկումը մաքրում է հիշողությունը (Հովհաննես Սանդուղք):

25. Հաճախ պատահում է, որ մարդիկ, որ գնում են բարի քրիստոնեական ուղիով, հանկարծ առանց որևէ պատճառի սկսում են իրենց մեջ զգալ հոգևոր ուժերի կաթվածահար եղած ինչ-որ վիճակ, որի հետևանքով նրանց մոտ առաջանում է սառնություն ամեն ինչի հանդեպ, մինչև իսկ նախկին հոգևոր սխրանքների հանդեպ: Նման բան ժամանակ առ ժամանակ բոլորի հետ էլ լինում է: Այս բանի մասին բոլոր հոգևոր գրքեր գրողները անդրադարձել են: Սբ. Մարկոս Ճգնավորը նման երեք ձևերի թշնամիների է ցույց տալիս, անգիտությունը մոռացության հետ, ծուլությունը հեղգության հետ և զգացմունքների քարացումը (Թեոփիլոս Մենակյաց):

26. Բոլորից առավել նման վիճակ ստեղծվում է բարկության, ստության, դատելու, սրտնեղության, հպարտության և այլ նման բաների պատճառով: Մնում է միայն մի բան. աղոթել նման հոգևոր չորության և քարացած անզգայության վիճակից դուրս գալու համար: Սառնության և անզգայության վիճակում մտքերը շատ դժվար է պահել աղոթքի ժամին, սակայն ամեն բան էլ հնարավոր է: Պետք է ջանալ հակառակ անձիդ, ծանրաբեռելով քեզ, և դա կլինի միջոց Տիրոջ ողորմությանն արժանանալու և շնորհի նորից ետ գալուն: Իսկ աղոթքը թողնել ոչ մի պարագայում թույլատրելի չէ: Սբ. Մակարն ասում է. «Տերը կտեսնի, որ ի սրտե ձգտում ես ձեռք բերել շնորհը և

նորից կուղարկի այն»: Սառեցման դեմ եղող աղոթքը պետք է առաքել աղոթական կարգի սկզբում՝ քո իսկ խոսքերով, և նրա վերջում՝ նորից քո սեփական խոսքերով, և կարգի ընթացքում էլ Աստծուն խնդրել՝ ներկայացնելով նրա առջև մեր մեռած հոգին. «Տեսնում ես, Տեր, ինչպիսին է այն: Բայց առաքիր խոսքդ, և այն կբժշկվի»: Այս խոսքերով հաճախ դիմիր Աստծուն օրվա ընթացքում: Կարևորն այն է, որ հոգիդ չթողնես սառչի: Արթուն եղիր, որ լուսավորի մոմը, և ջերմանա հոգուդ վառարանը: Հաճախակի փայտ նետիր, այսինքն՝ սուրբ մտածումներ պահիր մտքումդ: Սառեցումը դառը և վտանգավոր վիճակ է: Տիրոջ ձեռքում այն մեզ համար հանդիսանում է որպես առողջացնող, հասկացնող և շտկող միջոց, բայց այն լինում է նաև որպես պատիժ: Սրա պատճառը լինում է հայտնապես գործած մեղքը, իսկ եթե ձեզ մոտ նման բան չի նկատվում, այդժամ պատճառը պետք է փնտրել ներքին զգացմունքների և տրամադրվածության մեջ: Արդյո՞ք ներս չի խցկվել ինքնամեծարումը, որ դուք այնպիսին չեք, ինչպես մյուսները: Չե՞ք մտածում, արդյոք, որ փրկարար ուղիով քայլեք ձեր իսկ սեփական ուժերով և բարձրանաք լեռը միայն ձեր միջոցներով: Նման մտքերը հասցնում են անհոգության, իսկ անհոգությունն առաջին քայլն է սառեցման: Այս պատճառով իսկ, ջանացեք մտածել, որ դուք կարծես թե նույնիսկ չեք էլ սկսել ձեր հոգևոր գործը: Ունեցեք այն համոզումը, որ չնայած հասել եք մեծ աստիճանի, միևնույն է, ապահովված չեք ընկնելուց: Անհոգությունը և հեղգությունը սառեցման ուղեկիցներն են: Հավաքելով բորբոքող, մղող մտածումներ, մի մտածեք, թե դուք ինքներդ դրանով ձեզ կջերմացնեք: Ջերմացնողն Աստված է, երբ որ ժամանակը հասնի: Իսկ ձեր գործը պիտի լինի միայն ջանք և նորից ջանք գործադրելը: Այս ջանքերին մտովի կցեք աղոթքներն առ Տեր՝ այս խոցից բժշկվելու համար: Մյուս այլ բաները մի կողմ թողեք, ծանրացեք միայն սառեցման դեմ եղող աղոթքի վրա, և հանգիստ մի տվեք ձեզ մինչև չջերմանաք: Ջերմացումը Տիրոջ հպումն է սրտին, իսկ անընդմեջ ջերմությունը՝ Տիրոջ ներկայությունն է սրտի մեջ: Թող շնորհի ձեզ Աստված այդ շնորհը: Մի հեղգացեք և ձեռքներդ ցած մի իջեցրեք (Թեոփիլոս Միայնակյաց):

27. Ոմանք ասում են. «Քեզ պատկերացրու մահացողի տեղում»:

Ոմանք էլ ասում են. «Ավելի լավ է պատկերացրու քեզ դատաստանի ժամին այն պահին, երբ Տիրոջ կողմից պատրաստվում է ազդարարվել քո դատավճիռը»: Չի կարելի չհամաձայնել, որ նման միջոցները կարող են խիստ կակղեցնել քարացած սիրտը: Ահա ձեզ Իսահակ Ասորու խոսքը սառեցման և անզգայության դեպքում. «Մի խռովվիր մտովին և ձեռք մի մեկնիր հոգևոր թուլությանը, այլ համբերիր, կարդա հոգևոր ուսուցիչների գրքերը, ստիպիր քեզ աղոթքի կանգնել և սպասիր օգնության: Նա կգա շուտով այնպես, որ իսկի գլխի էլ չես ընկնի» (Թեոփիլոս Միայնակյաց):

28. Ես կարծում եմ, որ մեր հոգևոր սառնության մեջ անմեղ չէ նաև մեր մարմինը: Քանզի անժուժկալությունը մարմնի հանդեպ բթացնում է հոգևոր զգացումները և տկարացնում է եռանդն ու կորովը: Զանացեք ճնշել այս ստրուկին՝ մարմնին, որպեսզի չբարձրանա և տեր չդառնա: Ես կարծում եմ, ձեզ հայտնի պիտի լինի, որ խոսքը վերաբերվում է կերակրին, քնին և մյուս նման այլ բաներին: Այնպես արեք, որ մարմինն զգա, որ իր վրա ծանր ձեռք կա: Մարմնի հանդեպ ունեցեք անհաշտ անբարյացկամություն: Երբ տկարանում է մարմինը, հոգևոր զգացումները կենդանանում են: Շատ կարևոր է թույլ չտալ մարմնին փլուզվել, այլ պետք է այն պահել ձիգ լարի պես, պահել բոլոր անդամները մկանների ներքին լարմամբ: Սա շատ ուժեղ նպաստում է հոգուն և օգնում է անձին միշտ լինելու սթափ վիճակում: Ձեզ համար որպես օրենք ունեցեք սեղանից ելնել մի քիչ սոված (Թեոփիլոս Միայնակյաց):

29. Մենք ինքներս մեզանից գողանում ենք մեր ժամանակն անգործությամբ, դատարկախոսությամբ, հետաքրքրասիրությամբ, անպտուղ երազանքներով և քնկոտությամբ: Պատկերացրեք, ինչ բարիք կարող էինք գործել՝ ժամանակն անօգուտ չվատնելով: Փրկարար է այն ժամանակը, որ անցկացնում ենք աղոթքով, հոգևոր գրքեր ընթերցելով, Աստծո Տունն այցելելով, աստվածահաճո զրույցներով, բարի գործեր գործելով և աշխատելով («Հարց և պատասխան»):

30. Ով ծուլանում է հաճախել եկեղեցի՝ օրհնաբանելու ու փառաբանելու Տիրոջը, այդպիսինը անհաղորդ է գալիք կյանքին

(Հոգեշահ գրքերից):

31. Ինչպիսի՞ քունն է ճիշտ:

Քնել պետք է ավելի սակավ, քան պահանջում է բնությունը, քունը պետք է երբեմն ընդհատել հոգոցներով և աղոթքներով (Հոգեշահ գրքերից):

32. Ո՞վ հեղգ և միշտ տրտնջացող ծառա, ամոթ քեզ, որովհետև կան մարդիկ, որոնք ավելի եռանդուն են իրենց կորստի համար, քան թե դու քո փրկության: Նրանց համար ունայնությունը ավելի հմայք ունի, քան ճշմարտությունը՝ քեզ համար: Գծուծ շահի համար մարդիկ ձեռնարկում են երկար ճամփորդություն, բայց հավիտենական կյանքի համար քչերն են, որ հոժարում են մի քայլ անել (Թովմաս Գեմբացի):

33. Այնտեղ ծույլերը պիտի խոցվեն հրավառ խթաններով, անժուժկալ մարդիկ պիտի չարչարվեն քաղցից և ծարավից (Թովմաս Գեմբացի):

34. Ո՞վ է ուժերի գերլարումով պայքարում. այն մարդը, ով ձգտում է հաղթել իր «ես»-ին:

Մեր միակ մտահոգությունը պետք է լինի մեր «ես»-ի դեմ պայքարը, օրեցօր ավելի հզոր լինել, քան մեր «ես»-ը: Եվ ամեն օր արձանագրել բարու մեջ առաջադիմելու ևս մեկ աստիճան: (Թովմաս Գեմբացի):

35. Չար միտքը կարող է գալ որպես հետևանք պարապության, համաձայն այն խոսքի, որ «պարապ մարդու միտքը հարմար վայր է դևի համար»: Զբաղված մարդը հսկում է իր մտքերը, նա ուղղում է դրանք, համաձայն իր զբաղմունքի: Ձեռքի աշխատանքով զբաղված մեկն ուղղում է իր մտքերն իր զբաղմունքի վրա, գիտնականը զբաղվում է իր գիտությամբ, հողագործն իր տնտեսությամբ, վանականը՝ աստվածպաշտությամբ: Սակայն մարդը, որ ժամանակը վատնում է պարապությամբ, իր միտքն արձակ է պահում չար մտքերի համար, նա չի հսկում իր միտքը, այլ նրանք են առաջնորդում իրեն (Շենուդա Գ պատրիարք):

36. Ծուլությունն ու անգործությունը ոչ միայն նեղություն ու ձանձրույթ են առաջ բերում, այլ նաև շատ ուրիշ տեսակի մեղքերի են առաջնորդում, որոնցից առաջ է գալիս հոգու մահը: Այսպես է

ասել իմաստուն մեկը. «Եթե վերացնես ծուլությունը, ցանկության աղեղը կկոտրվի»: Չէ՞ որ Դավիթ թագավորն էլ, երբ պատերազմական գործունեությունից վերադարձել էր և իր պալատի մեջ հանգիստ էր վայելում, այն ժամանակ գործեց Աստծո առջև իր ամենածանր մեղքը: Մոլորվեցին ու երկնային պատիժներով պատժվեցին Նոյի ժամանակվա մարդիկ ու Սոդոմ-Գոմորի ժողովուրդը, երբ հանգստության ու ապահովության մեջ գտան իրենք իրենց. ուտում և խմում էին ու իրենց մարմնավոր ցանկությունների ետևից էին գնում (Տեր Գաբրիել քահանա):

37. Քանի որ մեր ոխերիմ թշնամիները՝ մարմինը, աշխարհը ու սատանան, միշտ արթուն հսկում են, մեզ վայել չէ ծուլությամբ խոր քնի մեջ ընկղմվել, քանի որ մեր թշնամիները մեզ կորստի մատնելու համար գիշեր ու ցերեկ անդադար աշխատում են, վայել չէ մեզ ծույլ և անհոգ մնալ: Կարճ է մեր կյանքը ու կատարվելիք գործներս շատ. պարտքեր ունենք Աստծո հանդեպ, պարտքեր՝ նաև մեր անձի ու մեր ընկերների հանդեպ և եթե սրանցից մեկի մեջ թերանանք, մեր հոգիների կորուստը չի ուշանա: Գիշեր ու ցերեկ աշխատելով, հազիվ կարողանանք մեր այս պարտականություններից գլուխ հանել: Ի՞նչ կլինի արդյոք մեր վիճակը, եթե մեր կյանքի օրերը ծուլությամբ ու անհոգությամբ անցկացնենք, արդյունքը հայտնի է. Փեսան հանկարծ կգա, և մենք հիմար կույսերի նման մեր անպատրաստ լապտերներով դուրսը կմնանք, արտաքին խավարի մեջ, որտեղ պետք է լինի լաց և ատամների կրճտոց (Տեր Գաբրիել քահանա):

38. Դառնանք, ուրեմն, և Շնորհալի հայրապետի պես ասենք մեր անձերին. «Փութա, անձ իմ, փախչել չարիքից, փափագել բարուն, քեզ միշտ մահվան և երկնային դատավորի մոտ զգա»: Ո՜վ իմ անձ, կյանքիդ գարնան մեջ ես, տես, ծաղիկները ամեն կողմից բացված, ժրաջան մեղվի նման վեր կաց աշխատելու և մեղրդ պատրաստիր, որովհետև մոտ է մահվան ձմեռը, այնժամ, երբ ուզես աշխատել իսկ, չպիտի կարողանաս, որովհետև ծաղիկները թառամած ու թափված պիտի լինեն, ու քո երիտասարդությունն ու կորովն սպառված (Տեր Գաբրիել քահանա):

39. Դու, որ արարածներից գերազանց ես ու միմիայն Աստծու փառքի համար ստեղծված, ինչո՞ւ ես ծույլ ման գալիս: Ե՛լ, ուրեմն, ով

իմ անձ, մեջքդ կապիր, զորացիր և քաջությամբ դիմագրավիր բոլոր արգելքներին ու փորձություններին: Աշխատիր շարունակ, երբ դեռ ժամանակը քո ձեռքն է, որովհետև շուտով պետք է հասնի գիշերը, որից հետո հոգուդ փրկության համար գործելու ոչ ժամանակ և ոչ էլ կարողություն պետք է ունենաս: Ականջ դիր Պողոս Առաքյալին, որ ասում է. «Ուստի, նայեցեք, թե ինչպիսի զգուշությամբ պիտի քայլենք, ոչ թե անմիտների պես, այլ ինչպես իմաստուններ, ժամանակը ծախու առեք, քանզի օրերը չար են» (Տեր Գաբրիել քահանա):

40. Ծույլը, որ չի ուզում աշխատել, կարծում է, թե աշխատանքը պատճառ է անձի տկարության, գուցեև վաղաժամ մահվան (Պողոս Պատրիարք):

41. Եթե մեկն անգործությունը համարի ամենայն չարիքի աղբյուր, սխալված չի լինի, որովհետև չկա մոլորություն, որ չառաջանա ծուլությունից: Իսկ ժրաջան աշխատասիրությունը մարդու միտքը անմերձենալի է պահում դևերից, որովհետև դևերը չեն կարողանում ազատ ժամանակ գտնել աշխատասերին դեպի չարը հրապուրելու համար (Պողոս Պատրիարք):

42. Արդ, Քրիստոսին աթոռակից լինելու պատեհություն է տրված քեզ, մինչդեռ ծուլության պատճառով չար բաներ ես խոսում (Բարսեղ Մաշկևորցի):

43. Ամեն հնար գտնենք, որպեսզի արթուն մնանք: Չե՞ս տեսել պահակներին, որոնք ոչ մի օգուտ չեն ստացել արթուն մնալուց, որովհետև մի փոքր ննջել են այդ ընթացքում, և այդ կարճ ժամանակամիջոցը առիթ է եղել գողերի համար: Ինչպես որ մենք գողերին չենք տեսնում, սակայն իրենք մեզ տեսնում են, սատանան գողերից առավել հնարներ է գտնում՝ կրճտացնելով ատամները: Ուրեմն, սրանից հետո անհոգ չպառկենք և չասենք, թե վախենալու բան չկա, քանի որ գողը վնասում է այնպիսի տեղեր, որ երբեք մեր մտքով չէր անցնի: Նմանապես չարիքը, որի մասին չէինք մտածում, կարող է մեզ կորստյան մատնել (Բարսեղ Մաշկևորցի):

44. Ինչպես որ լարախաղացը մի ակնթարթ իսկ չի ծուլանում, որը կարող է պատճառ դառնալ, որ նա վայր ընկնելով մահանա, մենք ևս չպետք է ծույլ գտնվենք, որովհետև նեղ ճանապարհով ենք ընթա-

նում, որտեղ չի կարելի երկու ոտքը մի տեղ դնել: Չգիտես, որ լարախաղացները ոչ միայն զգուշանում են կերակրի չափազանց հագեցումից և ըմպելիքներից, այլև լինում են կտրիչ: Ոչ մի ավելի բան չեն շալակում կամ կապում ոտքերին, այլ՝ քայլում են ազատորեն, իսկ մենք բազմաթիվ հոգսեր և երկրավոր բեռներ ենք կրում, և ինչպես կարող ենք այս բոլորով հանդերձ անցնել նեղ ճանապարհով: Քրիստոս իզուր չասաց. «Որքան նեղ և դժվար է ճամփան» (Մատթ. 7:14), և իսկապես որ այսպես է, որովհետև մեր բոլոր խորհուրդների, խոսքերի և գործերի համար պիտի պատժվենք (Բարսեղ Մաշկևորցի):

45. Ասա ինձ, եթե մեկը արքունիք հրավիրված լիներ և խոր ձորերից և քարաժայռերից անցներ, իսկ մեկ ուրիշը մահվան դատապարտված լինելով, քաղաքների հրապարակներում և երգերով և ուրախություններով տարվեր, որի՞ն երանի կտայինք մենք: Պարզ է, որ առաջինին, իսկ կողբայինք նրա համար, որ ընթանում էր ազատ ու հանգիստ: Նույնպես և մենք, այժմ երանի չտանք ճոխության մեջ ապրողներին, այլ նրանց, որոնք նեղության մեջ են, որովհետև այդպիսիները շտապում են երկինք հասնել, մինչ մյուսները՝ գեհեն (Բարսեղ Մաշկևորցի):

46. Ով գարնանը հանգիստ է մնում, ձմռանը սովից ու սառնամանիքից սատկում է (Եզնիկ Կողբացի):

47. Հանգիստն առաջարկեց հոգնածների համար և ոչ թե մարմնասերների, որոնք պիտի որդ գիրացնեն (Եզնիկ Կողբացի):

48. Փափկակեցությունը ու հանգիստը ատի՛ր (Եզնիկ Կողբացի):

49. Վաղը գնալու ես հայրենիք՝ «գերեզման», այնտե՛ղ հանգստացիր (Եզնիկ Կողբացի):

50. Մարմինդ նեղիր գիտությամբ՝ գրքի վկայությամբ (Եզնիկ Կողբացի):

51. Եթե անքուն մնալ չենք կարող, գոնե ողջ գիշերը քնելուն չնվիրենք, որպեսզի ամբողջովին չմոռանանք սաղմոսներն և օրհնությունները (Եղիշե):

52. Զանազան տապախառն հովեր են մեզ շրջապատում՝ բանսարկու գողը ու նրա օգնական մեր մարմինը, մեր գրգռիչ զգայարաններն ու փորձիչի հեշտությունները, անմիջական կարիքներն ու

մեր անմտությունները, խավարեցուցիչ ծուլությունը և նման սաստիկ հեշտացուցիչ ախտերը մեզ միշտ աշխարհին են կապում (Սարգիս Շնորհալի):

53. Մեր Տերը երկնավոր առաքինություն և հրեշտակային վարք է մեզ առաջարկում, մինչ մենք պատվում ենք ծուլությունը և քունը՝ մայրը բոլոր թշվառությունների (Սարգիս Շնորհալի):

54. Անգործ և պարապ մի մնա, որովհետև դատարկ մարդը սատանայի վայր է, իսկ աշխատավորը՝ Աստծո, ինչպես որ ասել է մի սուրբ, թե «Աշխատասեր անձի վրա Սուրբ Հոգին է իջնում» (Հովհաննես Երզնկացի):

55. Գրված է. «Հիսուս գործում էր և ապա ուսուցանում մյուսներին»: Վայ մեզ, եղբայրներ, որովհետև ծուլացանք, որը բոլոր մեղքերի պատճառն է, և հեռացանք Աստծո օրենքներից բոլորս՝ մեծ ու փոքր, այր ու կին, իշխան ու աղքատ, տգետ ու գիտնական, քահանաներ ու ժողովուրդ: Քանդվեց պահքի պնդությունը ու նզովքների կապը հույժ ամրացավ մեր գլխին: Հեղգացանք ու հեռացանք աղոթքներից և զրկվեցինք Աստծո հետ խոսակցությունից (Վարդան Այգեկցի):

56. Հոգևոր առաջնորդները, որոնց Աստված վերակացու կարգեց ժողովրդին, նաև գլխավորներ ու Քրիստոսի հոտի հովիվներ, աշխարհին՝ լույս և մարդկանց՝ անմահության աղ: Նրանք կոչվում են եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ, կանչվեցին Աստծուց՝ ի պետս բոլորի, նստեցին առաքյալների աթոռներին ու վերցրին նրանց իշխանությունը, սակայն ծուլացան, նստեցին անհոգ և չեն խնամում Քրիստոսի հոտը, չեն սաստում և չեն հանդիմանում, չեն մխիթարում և չեն կանչում քաղցրությամբ (Վարդան Այգեկցի):

57. Եվ չկա մեկը որ կարողանա գործել կատարյալ բարիք, թեպետ և դնի սկիզբը, ինչպես որ Տերն ասում է. «Սառեց երկիրը, և սկսվեց բանսարկվի պիղծ թագավորությունը, որովհետև նշանն այստեղից ճանաչիր, որ ծուլացան մարդիկ, և հայտնապես հանդգնեց մեղքը»: Սա է նրա իշխանության սկիզբը: Եվ որքան օրերն անցնեն, այնքան բազմանալու է չարիքը, ու քիչ-քիչ աճելու է մեղքը: Բայց նա, ով կջանա ու մի փոքր բարիք կգործի այս ցուրտ ժամանակներում, Աստված առավել կուրախանա և բազում վարձ կտա նրան,

որովհետև ցանկանում է մեր դարձը դեպի Ինքը: Աստված շատ է սիրում նրան, ով խոստովանությամբ ու արտասուքով ապաշխարում է իր մեղքերն ու անօրենությունները (Վարդան Այգեկցի):

58. Ուստի, աղաչում եմ՝ չծուլանանք, այլ արիաբար միշտ աղոթենք օր ու գիշեր, քուն թե արթուն, քայլելիս թե նստած ժամանակ, առավոտյան թե երեկոյան, աշխատելիս և թե հանգստի պահին, այսինքն՝ միշտ օրհնենք և փառաբանենք Աստծուն, որովհետև, ո՞վ գիտե, գուցե աստվածային այդ շնորհներից մեզ էլ պատահի մի ցանկալի պահ, ջերմ արտասուքը կլվանա մեր հոգու վերքերի շարավը և լույսի յուղ կդառնա մեր լապտերներում (Վարդան Այգեկցի):

59. Որպեսզի ծույլերը չկարծեն, թե շատ աղերսներն անպետք բաներ են, և փոքր-ինչ աղոթելն է լավ, ասում է. «Արթո՛ւն եղեք և ամենայն ժամ աղոթեցե՛ք» (Ղուկ. 2©:56), և Ինքը ողջ գիշեր աղոթում էր Աստծուն (Իգնատիոս Վարդապետ):

***

60. Վհատության ոգին չորացնում է արցունքները, իսկ թախծոտության ոգին խեղդում է աղոթքը (Եվագր Պոնտացի):

61. Եթե եղբայրդ տրտմել է, մխիթարիր նրան, իսկ եթե վշտերի մեջ է, վշտակից եղիր նրան, այդ անելով, կուրախացնես նրա սիրտը և մեծ գանձ կդիզես քեզ համար երկնքում (Եվագր Պոնտացի):

62. Հաստատուն ծառը չի տարուբերվում քամիներից, ձանձրույթն ու տրտմությունն էլ չեն կարողանում խոցել հաստատված հոգուն (Նեղոս Սինայեցի):

63. Երբ գիշերը հսկման մեջ ենք լինում, ապա չնստենք ձանձրույթից մղված, թե չէ կգան դևերը՝ հավաքելով մտային որոմները և իսկույն կցանեն մեր սրտերում (Նեղոս Սինայեցի):

64. Ձանձրույթն առաջանում է մտքի սավառնումից, իսկ մտքի սավառնումը՝ պարապությունից, (ոչ հոգևոր) ընթերցումներից և ունայնաբանությունից կամ էլ որկորի հագեցումից (Իսահակ Ասորի):

65. Մի հեղգացիր, երբ գործն այն բանի համար է, ինչը քեզ կյանք է տալիս, և այդ բանի համար մի ծուլացիր գնալ անձնազոհության, որովհետև փոքրագույնը դա ձանձրույթի նշան է, իսկ անհոգությունը կարևոր բաների նկատմամբ, մայրն է թե փոքրոգության, և թե ձանձրույթի (Իսահակ Ասորի):

66. Ձանձրույթի և տրտմության դևը առաջացնում է դող, գլխացավ, ջերմություն, փորացավ, ճաշի ժամին վեր է հանում անկողնուց, իսկ աղոթքի ժամին դարձյալ ծանրացնում է մարմինը, աղոթողների վրա քուն է առաջ բերում և հորանջումներով շուրթերից խլում է աղոթքի բառերը (Հովհաննես Սանդուղք):

67. Ձանձրույթը հաղթելով կանգնածներին՝ ստիպում է նրանց նստել, նստածներին՝ հենվել, դուրս նայել պատուհանից: Իր համար սգացողը չգիտի ձանձրանալ (Հովհաննես Սանդուղք):

68. Աղոթողին ձանձրույթի չար դևը հիշեցնում է անհրաժեշտ գործերը և ամեն ջանք գործադրում է, որպեսզի որևէ կարևոր պատճառով շեղի մեզ Աստծո հետ զրույցից (Հովհաննես Սանդուղք):

69. Երբ չկա սաղմոսերգություն, այնժամ ձանձրույթի չար ոգին էլ չի հայտնվում: Եվ աչքերը, որ փակվում էին ննջից՝ կարգի (ժամերգության, քարոզխոսության) ժամանակ, իսկույն բացվում են կարգի վերջանալուց հետո (Հովհաննես Սանդուղք):

70. Ձանձրույթի ժամանակ է երևում հոգևոր կյանքում առաջադիմողը, և ոչինչ այնքան պսակների չի արժանացնում, ինչպես ձանձրույթի ոգուն հաղթելը: Պատերազմենք այս տանջարարի դեմ, մեր մեղքերի հիշողությամբ, նաև աղոթքով և ծնրադրումներով, հալածենք աշխատանքով և ապագա երանությունների մասին մտածելով (Հովհաննես Սանդուղք):

71. Բժիշկը հիվանդներին այցելում է առավոտները, իսկ ձանձրույթը վրա է հասնում կեսօրին (Հովհաննես Սանդուղք):

72. Երբ չկա սաղմոսերգություն, ձանձրույթն էլ չի այցելում, և աչքերը, որոնք ծանրանում էին աղոթքի պահին, բացվում են, երբ աղոթքը վերջանում է (Հովհաննես Սանդուղք):

73. Ձանձրույթը հոգու թույլացումն է, մտքի հոգնությունը, հեղգանալը ճգնողական սխրանքներում, ատելությունն ուխտի հանդեպ, աշխարհի բաների գովաբանումը, զրպարտողը Աստծուն, իբր Նա ողորմած չէ և ոչ էլ մարդասեր: Սաղմոսերգությունում նա թույլ է, աղոթքում՝ տկար, իսկ մարմնավոր գործերում ամուր, ինչպես եր-

կաթ, ձեռքի գործերում՝ առույգ, հնազանդության մեջ՝ կեղծավոր (Հովհաննես Սանդուղք):

74. Վանական կյանքն անտանելի է ձանձրույթի համար, իսկ միայնակյացների մոտ նա մշտական բնակիչ է, մինչ մահ նա չի հեռանում նրանցից և մինչ վերջին օրը պատերազմում է միայնակյացի դեմ: Տեսնելով միայնակյացի խուցը ժպտում է և մոտենալով նրան բնակություն է հաստատում նրա մոտ (Հովհաննես Սանդուղք):

75. Երբ կանգնում են աղոթքի, այս նենգ ոգին սկսում է հիշեցնել կարևոր գործերի մասին և գործի է դնում ամեն տեսակի հնարքներ, որպեսզի մեզ Տիրոջ հետ եղող զրույցից շեղի, և այդ բոլորն անում է, կարծես թե բարի պատճառաբանումներով (Հովհաննես Սանդուղք):

76. Քաջասիրտ անձը կենդանացնում է մահացած միտքը, ձանձրույթն ու ծուլությունը մխսում են ամբողջ հարստությունը (Հովհաննես Սանդուղք):

77. Կապենք այժմ այս տանջարարին՝ ձանձրույթին, մեր մեղքերի հիշողությամբ հարվածենք նրան աշխատանքով, ոտնատակ անենք նրան գալիք երանությունների մտածումներով (Հովհաննես Սանդուղք):

78. Կա բնական ձանձրույթ հոգնածությունից, և կա դիվային ձանձրույթ: Եթե ուզում ես տարբերել, տարբերիր այսպես. դիվայինը վրա է հասնում մինչ այն ժամը, որում դու քեզ հանգիստ պիտի տաս, քանզի երբ մարդն սկսում է ինչ-որ (հոգևոր) բան անել, մինչ նա արդեն մոտենում է գործի մեկ-երրորդ կամ մեկ-չորրորդ մասին, դևը ստիպում է նրան թողնել գործը և վեր կենալ: Այդժամ հարկ չէ լսել նրան, այլ պետք է աղոթք անել և համբերությամբ ջանալ գործն ավարտին հասցնել և թշնամին տեսնելով, որ այդ նպատակի համար մարդն աղոթք է անում, դադարում է նրա դեմ պայքարել, քանզի նա չի ուզում, որ պատճառ դառնա աղոթքի համար:

Իսկ բնական ձանձրույթը լինում է այնժամ, երբ մարդը ջանում է իր ուժերից վեր և ուզում է էլ ավելին ավելացնել դրա վրա, և այսպիսով, առաջ է գալիս բնական ձանձրույթ մարմնավոր տիրության պատճառով, այս պարագայում հարկ է փորձել սեփական ուժերը և հանգիստ տալ մարմնին, Աստծո երկյուղով (Բարսիլիսկոս Մեծ):

79. Եթե հոգին գերեվարվում է ձանձրույթի կողմից, այդժամ հարկ է գործել սխրանք նրանից ձերբազատվելու համար: Այո, նենգ ձանձրույթի ոգին՝ հարակցվելով վշտի ոգու հետ և նրա միջոցով ամրանալով, դառնում է առավել կատաղի, տանջալից, անտանելի և ճնշող: Նա առավել մեծ հզորությամբ հարձակվում է միայնակյացների վրա: Երբ հոգու վրա բարձրանում են ձանձրույթի դաժան ալիքները, մարդը կորցնում է հույսը՝ դրա վերջը տեսնելու: Թշնամին նրան մահաբեր միտք է բերում, թե մեծ է նրա տանջանքները ներկա ժամանակում, իսկ հետագայում էլ ավելի կավելանա, որ նա մոռացված է Աստծո կողմից, որ Աստված նրա մասին էլ չի հոգում: Եվ այնպես է ներշնչում թշնամին, որ ամեն ինչ իբր տեղի է ունենում առանց Աստծո նախախնամության, և այն ինչ տեղի է ունենում իր հետ էլ ուրիշ ոչ մեկի հետ տեղի չի ունենում:

Ոչ եղբայրներ, ոչ, Աստված, որդեսեր Հայր է, ոչ միայն մեզ՝ մեղավորներիս, այլ նաև Իր սրբերին, դեռ հնուց, ինչպես Իր երեխաների, ծեծում էր հոգևոր գավազանով՝ ելնելով նրանց հանդեպ սիրուց, որպեսզի էլ առավել առաջանան առաքինի գործերի մեջ: Հոգու նման վիճակը երկար չի մնում, շուտով նրանից հետո հետևում է փոփոխություն, Աստծո ողորմության և մխիթարության ազդեցությամբ (Ներսես Սորսեցի):

80. Այս ձանձրույթի և տրտմության չարանենգ ժամին մարդուն թվում է, թե անհնար է, որ նա մնա իր տեղում, իր կարգավիճակի և գործի մեջ: Թշնամին ամեն ինչ, նույնիսկ ամեն բարի բանը նրան ներկայացնում է որպես թե մի անտանելի և զազրելի բան: Բայց այդ ժամանակամիջոցի անցման հետ, ամեն ինչ լուսավորվում է մարդու համար և ամեն հոգևոր բան սկսում է նրան հաճելի թվալ: Վշտալի բաները չքանում են այնպես, որ կարծես թե դրանք ընդհանրապես չեն էլ եղել: Անձը նորից բորբոքվում է ջերմեռանդության ջերմությամբ, առաքինի գործերի մեջ և զարմանում իր դեպի լավը փոփոխման համար: Եվ այդժամ, նրա որոշումը՝ միշտ ապրել սրբությամբ և աստվածահաճո կերպով, դառնում է էլ ավելի ամուր այն վստահությունից, որ Աստված Իր ողորմությամբ ամեն բան դասավորում է իր հոգու շահի համար և թույլ է տալիս փորձություններ, միայն իր հանդեպ ունեցած սիրուց, իր իսկ հոգու շահի համար: Այնժամ նա առա-

վել ամուր և ջերմ սիրով է սիրում Աստծուն, հասկանալով, որ հավատարիմ է Աստված և երբեք թույլ չի տալիս մեր ուժերից վեր փորձության մատնվել (Բ Կորնթ 10-13) (Ներսես Սորսեցի):

81. Դուք միշտ ախ ու վախ եք անում, կարծում եմ, որ դրա պատճառն այն է, որ ձեր հույսը կապել եք ձեր արած գործերին, որպես թե ձեր փրկության արգասիք: Դա հրեական ճանապարհ է: Իսկ քրիստոնեական արցունքաթաթախ ապաշխարելը և խնդրելը. «Տեր, որ տնօրինում ես ամեն ինչ, փրկիր ինձ»: Չէ որ փրկության համար Տիրոջն ապավինելը քրիստոնյաների պարտականությունն է և իրենց հոգու փրկության գրավականը: Այս կետը շատ կարևոր է: Երբ Տիրոջ հանդեպ ունեցած ապավինությունը կամաց-կամաց շեղվում է, այդժամ բոլոր գործերը ծռվում են, քանզի այդժամ Տերը ետ է կանգնում՝ ասելով. «Դե մնա այն բանի հետ, ինչի վրա որ հույս ես դրել»: Տիրոջն ապավինելու զգացումը մեծ գործ է (Թեոփիլոս Միայնակյաց):

82. Պետք է այնպես քեզ զգաս, ինչպես որ զգում է իրեն ծովում խեղդվողը, որ բռնվել է տախտակամածից և պառկել նրա վրա, որով մնում է ու քշվում անդունդների վրայով: Նա միշտ զգում է, որ պատրաստ է կործանվելու, բայց այդ զգացումի հետ միասին զգում է նաև իր տակ փրկարար փայտը: Սա է ճշմարիտ պատկերը բոլոր հոգիների, որոնք ճշմարտապես փրկվում են Տիրոջով: Նա զգում է, որ ինքն իրենով կորսվում է, բայց միևնույն ժամանակ, զգում է, որ Տիրոջով փրկություն կա՝ հավատով առ Աստված (Թեոփիլոս Միայնակյաց):

Ճանձրույթն առաջանում է նաև փառամոլությունից, նաև լինում է ուժերից վեր բաներ անելուց, վնասակար է ծուլանալ պետքականի մեջ, բայց և անվտանգ չէ չափից ավելի ջանքերը: Առավել պետք է ամուր բռնել երեք բաներից, Աստծո հանդեպ ունեցած երկյուղից, խոնարհությունից և մշտապես ապաշխարությունից (Ամբրոսիոս Անապատական):

84. Վհատությունը մեղք է և սատանայի գործ («Հոգևոր Պատերազմ» գրքից):

85. Ճանձրույթը առույգության և սթափության հակառակն է և բնորոշվում է անգործությամբ, անտարբերությամբ, ըստ այն չափի,

որքան որ անձը ճնշված է ճանձրույթի կողմից:

Միգուցե ոչ բոլորին է հասկանալի, թե ինչու են թախիծը և ճանձրույթը սբ. հայրերը համարում կրքեր: Որովհետև թախիծը և ճանձրույթը սարսափելի են հոգու համար այնպես, ինչպես մյուս կրքերը (Ճանձրույթի մասին գրքից):

86. Ոչ մի դեպքում և ոչ մի իրավիճակում մի ընկեք ճանձրույթի մեջ: Ճանձրույթը դահիճ է, որը ոչնչացնում է եռանդը և կորովը, որը և հարկավոր է, որպեսզի մարդն իր սրտում ստանա Սուրբ Հոգին: Ճանձրացողը կորցնում է աղոթքը և մահանում է հոգևոր սխրանքների համար (Ճանձրույթի մասին գրքից):

87. Թախիծը առյուծի երախ է, որ կուլ է տալիս թախծողին (Ներսես Սինայեցի):

88. Բարբարոսների կողմից գերվածը դրվում է երկաթյա կապանքների մեջ, իսկ կրքերից գերվածը՝ կապվում է թախծոտությամբ (Ներսես Սինայեցի):

89. Ով հաղթել է ցանկություններին, նա հաղթել է կրքերին, իսկ ով հաղթել է կրքերին, նրա վրա թախիծը չի տիրապետի (Ներսես Սինայեցի):

90. Մթությունը տկարացնում է տեսողությունը, իսկ թախիծը բթացնում է մտքի ինքնախոհականությունը (Ներսես Սինայեցի):

91. Ով սիրում է աշխարհը, հաճախ է ընկնում տխրության մեջ, իսկ ով արհամարհում է այն ամենը, ինչ որ աշխարհի մեջ է, հարատևում է ուրախության մեջ (Ներսես Սինայեցի):

92. Հալեցնող վառարանը մաքրում է անմաքուր արծաթը, իսկ Աստծո հանդեպ ունեցած տխրությունը մաքրում է սիրտն ամեն տեսակ պղծությունից (Ներսես Սինայեցի):

93. Աստծո հանդեպ ունեցած տխրությունը նորոգում է հոգին, նրանում բնակեցնում մոտեցող մահվան և դատաստանի վերաբերյալ հոգալու պատրաստությունը, և կամաց-կամաց սովորեցնում է սպասել այդ օրվան (Ներսես Սինայեցի):

94. Տխրությունը հոգու համար նույնքան հարկավոր է ու օգտակար, որքան փոթորիկն ու ամպրոպը տեսանելի բնության համար (Եվագր Պոնտացի):

Հայրերի վարքից

1. Մի ճգնավոր ձանձրացավ ջրի գնալու դժվարությունից: Ջրհորը քսան մղոն հեռու էր իր կացարանից, և որոշեց կացարանը շինել ջրի մոտ: Եվ երբ այդ մտածելով գնում էր, ետ նայելով տեսավ Աստծո հրեշտակին, որը հաշվում էր իր քայլերը, որպեսզի վարձք տա իր ջանքի համար: Եվ ճգնավորը գնաց, հեռացրեց կացարանը ևս հինգ մղոնով «Հարանց Վարք»:

2. Թեբիայում բնակվող մի երևելի ճգնավոր, սովորություն ուներ ամեն երեկո խրատելու իր աշակերտին, աղոթելու նրա համար և ապա միայն ուղարկելու քնելու: Մի անգամ պատահեց, որ խրատելու ժամանակ ծերը քնեց: Իսկ աշակերտը յոթ անգամ նեղվեց խորհուրդներից, որոնք նրան համոզում էին գնալ և նույնպես քնել: Սակայն նա դիմացավ և չգնաց: Երբ ճգնավորը զարթնեց, Տիրոջից երազով իմացավ, որ իր աշակերտը յոթ պսակի արժանացավ «Հարանց Վարք»:

3. Քրիստոնյայի գործն է միշտ հիշել և աչքի առաջ ունենալ Քրիստոսի չարչարանքները, որ մեզ համար կրեց, և ապերախտ չլինել Աստծո մարդասիրության հանդեպ: Այսպիսին էր հայր Ստեփանոսը: Մի օր նրա մոտ եկան երեք ծեր և խոսեցին հոգու փրկության մասին: Իսկ նա միշտ լուռ էր: Եվ ասացին նրան.«Ինչո՞ւ չես խոսում, չէ՞ որ հոգևոր օգուտի համար եկանք քեզ մոտ»: Իսկ նա պատասխանեց՝ ասելով. «Ներեցեք ինձ, ես չհասկացա, թե ինչ էիք խոսում, սակայն ինչ որ ունեմ, այն կտամ ձեզ: Գիշեր-ցերեկ ոչինչ չեմ տեսնում, այլ միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ այն էլ խաչին գամված»: Ծերերն այս լսելով շատ շահեցին և Աստծուց գոհանալով գնացին իրենց սենյակները «Հայելի Վարուց»:

4. Մի վանահայր իր վերակացության տակ ուներ տաս վանական:

Այս վանականներից մեկը շատ անհոգ էր և իր փրկության համար ոչ մի ջանք չէր թափում:

Ծերը հաճախ այցելելով նրան, խնդրում էր. «Եղբայր, ջանա հոգուդ փրկության համար, որովհետև, եթե մահանաս այդ ապրելակերպի պատճառով, հավիտենական տառապանքներից չես խուսափի»:

Սակայն եղբայրը միշտ անհնազանդ էր գտնվում ծերի հանդեպ և չէր լսում նրան: Եվ մահը հանկարծահաս ելավ նրա վրա:

Վանահայրը շատ տխրեց եղբոր համար, քանի որ նա ապրեց մեծ ծուլությամբ և անհոգությամբ: Վշտից աղոթքի մղվելով, նա ասաց. «Տեր Հիսուս Քրիստոս, մեր Աստված, ցույց տուր ինձ եղբոր հոգին»: Եվ այսպես երկար աղոթեց:

Մի անգամ աղոթքի ժամանակ ընկավ տեսիլքի մեջ և տեսավ մի կրակե գետ, գետի մեջ բազմաթիվ մարդկանց, որոնք կրակի մեջ պապակվելով, տառապալից տնքում էին: Իսկ նրանց մեջտեղում իր վանականին, որ մինչև վիզը մխրճված էր կրակների մեջ:

Վանահայրը ասաց աշակերտին. «Օ՜հ, եղբայր և որդի, մի՞թե չէի աղաչում, որ հոգ տանես հոգուդ համար, որպեսզի չընկնեիր այս տառապանքների մեջ»:

Եղբայրը պատասխանեց. «Փառք եմ տալիս Աստծուն այն բանի համար, որ քո աղոթքներով գոնե գլուխս կրակից դուրս մնաց» «Հարանց Վարք»:

5. Անապատի խորքում ապրում էր մի ճգնավոր, որ երկար տարիներ իր անձը վարժեցնում էր պահեցողության և այլ հոգևոր սխրանքների: Նրա մոտ եկան մի քանի եղբայրներ և զարմանալով նրա ապրելակերպի վրա, հարցրեցին. «Հա՛յր, ինչպե՞ս ես դիմանում այս չոր, անպտուղ և անհարմար վայրում»:

Ծերը պատասխանեց. «Բոլոր ճգնությունները, որ այսքան տարի ես կրում եմ այստեղ, չեն կարող համեմատվել գեհենի տառապանքների մեկ ժամվա հետ: Պետք է մեր այս կարճ կյանքի ընթացքում ջանք գործադրենք, պայքարելով մեր մարմնավոր կրքերի դեմ, որպեսզի ձեռք բերենք անանց հանգիստը գալիք հավիտենական կյանքում» «Հարանց Վարք»:

6. Երբ ես սկսեցի ապրել անապատում, ասացի աբբա Մովսես Լիբիացուն, այնտեղի ծերերից մեծագույնին, որ երեկ ես շատ մեծ թուլության մեջ էի ընկել ձանձրույթի պատճառով և ոչ մի կերպ չէի կարողանում նրանից ձերբազատվել մինչև որ չհանդիպեցի աբբա Պողոսին, իսկ նա ասաց. «Ոչ, դու չազատեցիր քեզ նրանից, այլ առավել ես տրվել և ջանացել նրա համար: Քանզի այդ բանից հետո

նա էլ առավել ուժգնությամբ կհարձակվի քեզ վրա, որպես վախկոտի և փախստականի, տեսնելով, որ դու պարտվելով պատերազմում, նույն պահին փախար: Այլ հարկ էր պայքարի մեջ մտնել նրա հետ և ջանալ ետ մղել նրա հարձակումները՝ ոչ խուցդ թողնելով և ոչ էլ խոր քուն մտնելով, այլ համբերությամբ և նրան դիմակայելով»: Եվ այսպես, փորձով է ապացուցված, որ ձանձրույթի հարձակումից ոչ թե փախուստով է պետք ձերբազատվել, այլ հակամարտելով հաղթանակել (Հովհաննես Քասիանոս):

7. Մի գիշեր՝ սատանան բախեց հայր Մակարի խցի դուռը և ասաց. «Ոտքի ել, հայր Մակար, գնանք մասնակցելու ժամերգության աղոթքին, ուր եղբայրները հավաքվել են հսկման համար»: Բայց նա, Աստծո շնորհով լի և խաբեության ենթարկվել չկարողանալով, հասկացավ, որ խոսքը վերաբերվում է սատանայի նենգություններից մեկին: Ասաց. «Ստախոս և ճշմարտության թշնամի: Ի՞նչ գործ ունես դու ժամերգությունների և սրբերի հավաքի հետ»: Բայց սատանան պատասխանեց. «Չգիտե՞ս, Մակար, որ առանց մեզ չեն կատարվում ոչ ժամերգությունները, ոչ էլ վանականների հավաքները: Եկ, ուրեմն, և կտեսնես մեր գործերը»: Այնժամ Մակարը պատասխանեց. «Թող դատապարտի քեզ Տերը, պիղծ ոգի» (Հուդա 9):

Եվ սկսեց աղոթել ու Տիրոջից խնդրել՝ թե արդյո՞ք ճիշտ էր այն, ինչով որ պարծենում էր սատանան: Հետո ելավ, գնաց մասնակցելու ժամերգության, ուր եղբայրները ծիսակատարում էին հսկման արարողությունը, և աղոթքով կրկին աղաչեց Տիրոջը՝ ցույց տալ իրեն, թե արդյո՞ք ճշմարիտ էր այն խոսքը: Եվ ամբողջ եկեղեցին լցված տեսավ սևամորթ եթովպացիների նմանվող պատանիներով, որ վազվզում էին՝ այստեղից այնտեղ ցատկելով: Այդ վանքի սովորությունն այնպես էր, որ բոլորը նստում էին և միայն մեկ հոգի էր կարդում սաղմոսը, մինչ մյուսները ունկնդրում էին և պատասխանում կրկներգով: Եթովպացի մանուկները վազում էին այս ու այն կողմ, քսվում էին նստած վանականներից յուրաքանչյուրին, և երբ երկու մատով հպվում էին ինչ-որ մեկի աչքերին, նա իսկույն քուն էր մտնում: Եթե մեկ մատով հպվում էր եղբայրներից մեկի շուրթերին,

ստիպում էր նրան հորանջել: Իսկ երբ սաղմոսից հետո, եղբայրները աղոթքի համար ծնկի էին իջնում, սևամորթները վազվզում էին մեկից դեպի մյուսը: Եվ վանականների առջև ներկայանում էին կնոջ, մեկ ուրիշին՝ շինարարության վրա աշխատողների կամ բեռներ փոխադրողների կերպարանքով, կամ կարծես թե լուծում էին այս կամ այն հարցը: Այն ամենը, ինչ որ սատանաները ներկայացնում էին նրանց ծաղրելով՝ եղբայրները աղոթքի ժամանակ մտածում էին իրենց սրտում: Եղբայրներից ոմանք, սակայն, հազիվ թե սատանաները սկսում էին իրենց հիշյալ գործերից որևէ մեկն անել, վճռականորեն հեռացնում և պատրաստակամ կերպով վռնդում էին նրանց, այնպես, որ չէին համարձակվում երկար մնալ այդ եղբայրների դիմաց կամ անցնել նրանց կողքով: Գնում էին խաղալու տկար եղբայրների վզին կամ թիկունքին նստած, որովհետև սրանք ուշադիր չէին աղոթքին: Երբ տեսավ սա հայր Մակարը, խորապես դառնացավ, սկսեց հառաչել և արցունքներ հեղել Տիրոջ առաջ, ասելով. «Աստված, քուն մի մտիր, համր ու անգործ մի մնա, ո՜վ Աստված: Ոտքի ել, Աստված, թշնամիներդ թող ցրվեն և փախչեն առջևիցդ, քանի որ մեր հոգին հագեցել է խաբեություններով»: Աղոթքից հետո, սակայն, ստուգելու համար տեսածի իրականությունը, մեկ առ մեկ իր մոտ կանչեց այն եղբայրներին, որոնց առջև տեսել էր, թե ինչպես էին սատանաները կերպարանափոխվում և զանազան պատկերներ ներկայացնում: Նրանցից հարցրեց, թե արդյոք աղոթքի ընթացքում ունեցե՞լ են պոռնկության, ճամփորդությունների կամ ուրիշ մտածումներ, այսինքն, ճիշտ այն երևակայությունները, որոնք սատանաները թելադրում էին նրանցից յուրաքանչյուրին: Ամենքը խոստովանեցին, թե այդպիսիք են եղել իրենց սրտի մտածումները: Այնժամ փաստվեց, որ բոլոր ունայն ու ավելորդ մտածումները, որ յուրաքանչյուր ոք հղանում է սաղմոսերգությունների և աղոթքների ընթացքում, փախուստի են մատնվում նրանց կողմից, ովքեր իրենց սիրտը պահպանում են կատարյալ արթնությամբ: Իրոք, Աստծուն միացած և դեպի Նա ձգտող հոգին, հատկապես աղոթքի պահին, չի հղանում օտար կամ անօգուտ մտքեր «Հարանց վարք»:

8. Մի անապատական երկարաժամկետ ճգնություններից հետո

տկարանալով, տրտնջաց և ասաց. «Ով Տեր, դեռ երկա՞ր պիտի կրեմ այս վշտերն ու նեղությունը»: Այդ պահին նրան մոտեցավ Աստծո հրեշտակը և ասաց. «Քեզ մնացել է երեք տարի, սակայն եթե ցանկանում ես, այդ երեք տարվա փոխարեն կարող ես երեք օր անցկացնել դժոխքում»: Ճգնավորն ուրախությամբ համաձայնեց երեք օրվա կարճությունից ելնելով, և իսկույն հայտնվեց դժոխքում: Պապակվելով կրակի հնոցների մեջ, ճգնավորը անցկացրեց կարծես երկար տարիներ և մտածեց. մի՞թե Տիրոջ հրեշտակն ինձ խաբեց, չէ՞ որ ասաց ընդամենը երեք օր: Եվ հանկարծ Տիրոջ հրեշտակը նորից հայտնվեց և ասաց. «Նորից տրտնջում ես, չէ որ երկրի վրա անցել է ընդամենը մեկ ժամ, ինչ դու իջել ես դժոխք»: Ճգնավորը զարհուրեց և խիստ զղջալով, ընկավ հրեշտակի առաջ և խնդրեց, որ նորից իրեն արժանացնի ճգնարանին, և արդեն գոհությամբ և թեթևությամբ կրեց անապատի իր ճգնությունները (Հոգեշահ գրքերից):

ԱՂՈԹՔ

Նվազեցրո՛ւ, Տե՛ր, իմ աչքերի քունը և թոթափիր նիրհն իմ գլխից, քանզի ծուլությամբ ծանրացած, պաշարում է իմ մարմինը: Ինձ արթուն և պատրաստ դարձրու, Տե՛ր, ամեն ժամ, որ զգաստությամբ և արդարությամբ վարեմ իմ կյանքը:

Բա՛ց, Տե՛ր, իմ սրտի փակված դուռը և ծագեցրո՛ւ ներսում Քո ճառագայթների լուսավորությունը: Սրբի՛ր և իմ մեղքերի աղտը և բժշկի՛ր իմ հոգու վերքերը: Ամրացրո՛ւ Քո երկյուղով և զորացրո՛ւ՝ արդարություն գործելու ամեն ժամ:

Զորացրո՛ւ ինձ, Տե՛ր, հնազանդվելու Քո պատվիրաններին, դողալու և սարսելու Քո դատաստաններից, փնտրելու Քո երեսի արդարությունն ու իրավունքը և ստանալու Քո շնորհների պարգևը:

Սփռի՛ր, Տե՛ր, Քո շնորհներն իմ անդամների վրա, լցրո՛ւ իմ մարմինն արիությամբ ու ժուժկալությամբ և հոգիս՝ երկյուղով ու դողով, սիրտս՝ սիրով ու արդարությամբ և միտքս՝ Քո լույսով ու իմաստնությամբ, խորհուրդներս՝ Քո գիտության հանճարով. զորացրու ոտքերս արդարության շավղով գնալու, բերանս՝ անդադար Քեզ սաղմոսելու գոհությամբ և օրհնությամբ և աչքերս՝ հորդաբուխ արտասվելու, հոտոտելիքս՝ հոտոտելու կյանքի գիտության բույրը և լսելիքս՝ լսելու ավետյաց ձայնը, որ ասում է. «Թողնվա՛ծ լինեն քեզ քո բոլոր մեղքերը»:

Փրկիր ինձ, Տե՛ր, որսորդներից, որոնք գալիս են ինձ վրա՝ բռնելու մեղքով և անժուժկալության ծուլությամբ, մոռացնելու իմ հանցանքները և թույլ չտալու հիշել հատուցման Օրը և սարսափելի պատասխանը, որ ասում է. «Հեռո՛ւ գնացեք Ինձանից, անիծյալնե՛ր, դեպի հավիտենական հուրը»:

Միակ ողորմած և Մարդասեր, հեղիր իմ՝ մեղավորիս վրա Քո մեծ ողորմությունը և Քո շնորհով հեռացրու ինձանից ամեն մի հեղգություն, ծուլություն և անհամբերություն, որպեսզի Քո երկրորդ գալստյան ժամանակ չլսեմ ես զարհուրելի և մերկացնող խոսքերը «Ի՞նչ կրեցիր դու հանուն ինձ»:

Ի՞նչ պիտի պատասխանեմ ես անիծյալս, նենգս, մեղավորս և պիղծս: Նահատակները ցույց կտան իրենց վերքերը, որ ստացան տանջարարներից անդամահատության տրվելով և համբերելով մինչև վերջ: Ճգնավորները կմատնանշեն իրենց ճգնությունները, երկարաժամկետ պահքերը, հսկումները, ժուժկալությունները, արցունքները և մյուս այլ ծանր նեղությունները: Իսկ ես ծույլս և մեղավորս ի՞նչ պիտի ի ցույց դնեմ, բացի որկրամոլության ամոթալի պտուղներից, վավաշոտությունից, քնկոտությունից, ագահությունից, անհամբերությունից, փառամոլությունից և հեղգությունից:

Աղաչում եմ, բարերար և ողորմած Տեր, արթուն և զգաստ պահիր ինձ, ուսուցանիր ինձ՝ գնալու Քո բարի ճանապարհով, որ արժանի լինեմ Քո մեծ փառքին: Առաքի՛ր, Տե՛ր, Սուրբ Հոգուդ ուրախարար բաժակը եղկելիիս, որ ծարավում եմ Քեզ, հագեցրո՛ւ և զվարթացրո՛ւ Քո սիրո եռանդով, լուծի՛ր և ոչնչացրո՛ւ իմ հանցանքների դառնության մրուրը:

Պայծառացրո՛ւ, Տե՛ր, իմ հոգու լապտերն իմաստուն կույսերի պես և շնորհի՛ր արթնությամբ պատրաստվել՝ դիմավորելու երկնավոր Փեսայիդ, որպեսզի դրսում չմնանք հիմար կույսերի պես և արժանավոր լինենք Քո բոլոր սրբերի հետ հավիտենական և երկնային ուրախությանը, և գոհանալով փառավորենք Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ միասին այժմ և միշտ, հավիտյան: Ամեն (Եփրեմ Ասորի):

ՊԵՏՐՈՍ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ

«Ոսկի ու արծաթ չունեմ տալու, բայց ինչ որ ունեմ, այն կտամ»:

Երբ Պետրոսը և Հովհաննեսը տաճար էին մտնում, տեսան ողորմություն խնդրող մեկին, որն ի ծնե կաղ էր, և երբ նա՝ նայելով առաքյալներին, ակնկալում էր մի բան ստանալ նրանցից, Պետրոսն ասաց՝ «Նայի՛ր մեզ», և շարունակեց՝ ասելով. «Արծաթ ու ոսկի չունեմ տալու, բայց ինչ որ ունեմ, քեզ կտամ: Հանուն Նազովրեցի Հիսուս Քրիստոսի վե՛ր կաց և քայլի՛ր» (Գործք 3, 6): Եվ նա, իսկույն ևեթ բժշկված, ոտքի կանգնեց և նրանց ետևից տաճար մտնելով, Տիրոջն էր փառավորում: Եվ շատերը, այս տեսնելով, զարմանքով լցվեցին:

Պետրոսը և Հովհաննեսը արծաթ ու ոսկի չունեին. ի՞նչ արծաթի և ոսկու մասին էր խոսքը: Կար ժամանակ, երբ Պետրոսը շատ հարուստ էր իր գործերով, իր հին մարդու հարստությամբ և առատապես այս ու այն կողմ էր շռայլում իր ոսկին ու արծաթը, չնայած դրանից, այսինքն՝ անձի ունեցած ունայն գործերից, ոչ ոք ոչ մի օգուտ չէր ստանում:

Հիշենք, թե ինչպես Պետրոսը խորհուրդ տվեց Տիրոջը, որպեսզի Նա խուսափի խաչի մահվանից՝ ասելով. «Քավ լիցի, այդ Քեզ հետ չի լինի», և ի պատասխան իր հոգատար խորհրդի, լսեց հանդիմանական պատասխան. «Ետի՛ս գնա, սատանա՛, դու Աստծունը չես խորհում, այլ՝ մարդկանցը». այսինքն՝ այդ մարդկային ոսկին ու արծաթն էր, որ ուզում էր գործի դնել հոգևոր ոլորտում, բայց տեսնում ենք, որ դա ոչնչի պիտանի չէր:

Մի ուրիշ անգամ Պետրոսը վստահորեն հայտարարեց, որ ով էլ որ Տիրոջը թողնի, ինքը մինչև մահ հավատարիմ կմնա: Ի՞նչ վստահություն ուներ նա իր անձի հանդեպ, բայց այս անգամ էլ անձի արծաթն ու ոսկին անարժեք գտնվեցին, որը հաստատեց աքաղաղը:

Եվ երբ Պետրոսն իր Տիրոջը պաշտպանելու համար սրով կտրեց Մաղքոսի ականջը, պարզվեց, որ դա էլ ընդամենը անձի գործ էր, և խանգարում էր փրկարար ծրագրի կատարմանը: Եվ Տերն ասաց.

«Սուրդ տե՛ղը դիր: Ով որ սուր բարձրացնի, սրից էլ կընկնի»: Այսինքն՝ անձի սուրը, այսինքն՝ ոսկին ու արծաթը, կվնասեն թե՛ Տիրոջ գործին, և թե սուր բարձրացնողին:

Հիշենք Հովհաննեսին, թե ինչպիսի դիրք գրավեց նա սամարացի ժողովրդի հանդեպ, երբ նրանք մերժեցին Տիրոջն իրենց մոտ ընդունել. «Երկնքից կրակ իջեցնենք և ոչնչացնենք սրանց»: Ահա անձի մի նոր դրսևորում, մի նոր արծաթ և ոսկի, քանի որ Տերը նորից հանդիմանեց՝ ասելով. «Չեք հասկանում, թե ինչ Հոգուց եք, քանի որ Ես եկա ոչ թե մարդկանց ոչնչացնելու, այլ փրկելու»: Այսինքն՝ ձեր ճամփաները Իմ ճամփաները չեն:

Եվ եկավ մի պահ, երբ առաքյալները տեսան իրենց սնանկությունը, քանի որ երբ բոլորը վստահեցնում էին, թե մինչ ի մահ Տիրոջ հետ կմնան, իսկ քիչ անց այնպես փախան, որ մեկն էլ՝ իր հագուստները թողած, մերկ ճողոպրեց: Այս բոլորից հետո, երբ աքաղաղն էլ կանչեց, եղավ մի ազդարարություն, որ նրանց սնանկ հայտարարեց իրենց անձի գործերից, այսինքն՝ արծաթից և ոսկուց: Եվ որո՞նք էին դրանք՝ այդ գանձերը, եթե ոչ՝ ինքնավստահությունը, մեծամտությունը, հպարտությունը, փառամոլությունը, զգացմունքներին տեղիք տալը, վրեժխնդրությունը, չարին չարով պատասխանելը և այլն: Զարհուրելի է սեփական անձի մասին մեծ կարծիք ունենալ, պատկերացրու ահավոր դատաստանին կանգնած են մեղավորների դասերը, նաև ամենապիղծ Սոդոմի և Գոմորի բնակիչները, քանզի գիտեն, թե իրենց պղծության վարձքը ինչ պիտի լինի: Պատկերացրեք նաև, որ այդ ահավոր պահին դատաստան են մտնում փարիսեցիների դասը, ինքնընտինքյան համոզված, որ մեծ վարձքի են արժանանալու՝ իրենց աղոթքների, տասանորդների և այլ գործերի համար, և մոտենալով ահավոր գահին, ճանապարհին արհամարհանքով նայում են սոդոմացիներին և այլ դատապարտյալների: Եվ հանկարծ իրենց ինքնագոհ կեցվածքին հակառակ լսում են ահավոր բառբառը. «Մի՞թե ես չասացի ձեզ, թե սոդոմացիների ու գոմորացիների համար դատաստանն ավելի տանելի կլինի, քան ձեզ համար»: Ի՞նչ վիճակում կգտնվեն այս պահին նրանք, նույնիսկ սոդոմ-գոմորացիները կծիծաղեին նրանց վրա, եթե միայն այդ պահին դեռ ծիծաղելու ընդունակություն ունենային: Եվ այդժամ է, որ ամոթից ուզե-

նային գետինը մտնել և աչքերը կգցեին լեռների վրա, որ ընկնելով իրենց վրա, ծածկեն ահավոր դատաստանի սարսափից: Հանկարծ կարծես սառը ջուր կլցնեն նրանց գլխին, և դա սպասվում է բոլորին, որոնք իրենց մասին մեծ կարծիք ունեն, իբր թե մեծ երախտավորներ են Տիրոջ ճանապարհում: Դրա համար բոլոր սուրբերն իրենց միշտ խոնարհեցնելու ջանք են թափում: Գրիգոր Նարեկացին համարում էր, որ իրենից վատ մարդ ոչ առաջներում է եղել, ոչ ներկայում և ոչ էլ ապագայում կլինի:

Եվ այսպես, Պետրոսը դառնապես լացեց և ինքն իրեն ոչինչ համարեց և, թողնելով առաքելական կոչումը, վերադարձավ իր նախկին գործին՝ ձկնորսությանը՝ իրեն ոչ մի բարի բանի համար պիտանի չհամարելով: Այսպես վարվեցին նաև մյուս առաքյալները:

Եվ այդ երեք օրը՝ մինչև հարությունը, և Պողոսի երեք օրվա կուրությունը նմանվեցին Մովսեսի 40 տարվան: Առաքյալները սրբվեցին հին մարդուն պատկանող բոլոր գանձերից՝ ոսկուց և արծաթից և դարձան մաքուր և սուրբ անոթ, որոնք և պիտանի դարձան լինելու վերստին նորոգված անոթներ՝ Սուրբ Հոգու տաճար:

Եվ այդ ժամանակ էր, որ Պետրոսն ասաց, միգուցե մեծ ուրախությամբ, թե՝ ես արծաթ ու ոսկի չունեմ, այսինքն՝ ազատվեցի այդ ախտից, և հիմա ինչ որ ունեմ՝ այն կտամ: Եվ դրա համար էլ համարձակությամբ ասաց. «Մեզ նայիր, քանի որ մեզ նայելով մեզ չէ, որ պիտի տեսնես, այլ Քրիստոսին մեր մեջ»: Եվ դա այն զորությունն էր, որ խոստացել էր Աստված, Սուրբ Հոգու զորությունը, որը փոխարինեց անձի փուչ զորությանը, և դարձավ պատճառ, որպեսզի կաղը բժշկվի և տաճար մտնելով, Տիրոջը փառավորի, և շատերի համար զարմանքի պատճառ լինի: Եվ շատերս այսօր քայլում ենք որպես քրիստոնյաներ, բայց ոչ՝ Քրիստոսի զորությամբ, այլ՝ մեր անձերի, որով միայն խորհուրդներ կարող ենք տալ, որոնք համարյա ոչ մի ազդեցություն չեն ունենա. կմխիթարենք, և չեն մխիթարվի, կքարոզենք, և ոչ ոք դարձի չի գա: Ով էլ որ գա, ավելի աճ չի ունենա, կդառնա այնպիսին, ինչպիսին իրեն քարոզողներն են՝ իր պես մարմնավոր խորհուրդներով բռնված: Զեբեդեոսի որդիները, երբ մայրը խնդրեց, որ մեկը աջ կողմում նստի, իսկ մյուսը՝ ձախ, այդժամ Տերը հարցրեց. «Կարո՞ղ եք խմել այն բաժակից, որ ես պիտի խմեմ», և

նրանք առանց երկար-բարակ մտածելու ասացին, թե կարող են: Տերը գիտեր, որ չեն կարող, բայց և պիտի խմեն, քանի որ մարդկայնորեն անհնարին էր այդ գավաթը խմել: Բայց Սուրբ Հոգու գալստից հետո նրանք պիտի ասեին, որ. «Ես էլ չեմ ապրում՝ ապա Քրիստոսի մեջ», այսինքն, ինչպես որ Տերը խմեց Գեթսեմանիում այդ դառը գավաթը, նույնը Տիրոջ զորությամբ և սեփական հոժարությամբ, արդեն կարող էին անել և առաքյալները: Բայց ինչո՞ւ ինքնավստահ հայտարարեցին, թե կարող են: Որովհետև, նախ, պատկերացում չունեին այդ գավաթի պարունակության մասին, որը խաչի ճանապարհն էր, երկրորդ, դա ապագայի բան էր, որ նույն պահին կատարվելիք չէր, դրա համար էլ ինքնավստահ էին: Եվ դա շատ լավ երևում է հացի բազմացման ժամանակ, երբ Հիսուս ի պատասխան առաքյալների, որոնք ասացին, թե ժողովուրդն ուտելու բան չունի, ասաց. «Դուք տվեք նրանց ուտելիք», և առաքյալները հետևաբար չասացին՝ կտանք, ինչպես որ ասացին՝ կխմենք այդ գավաթից, որովհետև դա հենց նույն պահին եղող բան էր: Չէ որ Տերը գիտեր, դա անհնար է նրանց համար, ինչո՞ւ նման բան ասաց: Որպեսզի հասկանան, որ առանց Իրեն ոչինչ չեն կարող անել: Ինչպես որ չասաց, թե գնացեք Իմ անունով քարոզեցեք, այլ նստեք Երուսաղեմում, մինչև վերից զորություն ստանաք: Այսօր շատերս աճապարում ենք ինչ որ բան անելու, այն որ նույնիսկ առաքյալներին չէր արտոնված մինչև զորություն առնելը:

Եվ եթե մենք էլ մեր մեջ չտեսնենք այդ անձի գործերը՝ հին մարդն իր երկրաքարշ իմաստությամբ, և չաշխատենք դրանցից ազատվել, մենք ոչ մի բարի բանի համար պիտանի չենք լինի: Քանի որ բարին միայն Աստված է: Բայց այնպիսի անոթներ, որոնք իրենց մեջ կրում են օտար կրակ, աստվածային հուրն այնտեղ չի իջնի:

Ուրեմն, մենք էլ մաքրվենք ամեն աղտեղությունից, որոնք մեր աչքին արծաթ և ոսկի են երևում, որպեսզի ճշմարիտ գանձը մեր մեջ կրելու արժանանանք: Եվ որով և կարող ենք պատճառ դառնալ, որպեսզի շատերը հոգևոր կաղության և շատ այլ բազում հիվանդություններից բժշկվեն և, եկեղեցի մտնելով, Աստծուն փառավորեն և շատերի համար էլ վկայություն լինեն:

Այն առակի մեջ, որ Տերը պատմեց գանձ գտնողի մասին, ասաց,

թե նա թողեց գանձը, գնաց վաճառեց իր ունեցվածքը և եկավ գնեց այն հողակտորը, որի մեջ գտնվում էր գանձը: Եվ քանի որ գանձ ձեռք բերել կարելի էր միայն այն գնով, որով ամեն ինչ՝ ամեն ոսկի և արծաթ պիտի վաճառեր, ուրեմն մենք էլ այդ գանձը, այսինքն՝ երկնքի արքայությունը շահելու համար պետք է կարողանանք հրաժարվել բոլոր ունայն ու փուչ գանձերից, որպեսզի ճշմարիտը ձեռք բերենք: Ինչպես որ այրի կինն իր երկու լումայով ձեռք բերեց, իսկ շատ հարուստներ իրենց արծաթ ու ոսկու պատճառով միայն հանդիմանություն ձեռք բերեցին: Այդ երկու լուման և այն հարուստների գանձերը նույն բանն էին, այսինքն՝ երկու լուման այրի կնոջ ամբողջ ունեցվածքն էր, իսկ հարուստների գանձերը՝ իրենց ունեցվածքը: Ուրեմն, երկնային գանձը ձեռք բերելու համար շատ ու քչի հարց չի դրված, այլ քո ամբողջ ունեցվածքը՝ դա կլինի երկու լումա, թե հազարավոր քանքարներ: Հարուստ երիտասարդը տխուր-տրտում հեռացավ Փրկչից՝ երկնային գանձի գինն իմանալով, չնայած նրա ունեցածը դարձյալ երկու լումա էր, որ սատանան նրան ներկայացրել էր իբրև մեծ հարստություն:

Այդ իսկ պատճառով առակում Տերը չասաց շատ ու քչի մասին, այլ ասաց. «Իր ամբողջ ունեցվածքը վաճառեց և գնեց հողակտորը, որում գանձն էր թաքնված»: Տերը միայն հողակտորի գինն է պահանջում, որպեսզի տա գանձը. դա նույնն է, թե անգին մի ադամանդի համար քեզանից ուզեն միայն այն տուփի գինը, որի մեջ գտնվում է այդ գանձը: Դրա համար ասաց. «Եթե չուրանաք ձեր հորը, մորը, քրոջը, եղբորը, կնոջը, երեխաներին և եթե ինքներդ ձեզ էլ չուրանաք, չեք կարող ձեր խաչը վերցնել և Իմ ետևից գալ»: Այսինքն, այդ տուփի՝ հողակտորի համար մենք պիտի վճարենք, իսկ փրկությունը, այսինքն, ադամանդը, Աստծո ջրի շնորհն է, քանզի դրա գինը միայն Նա տվեց Գողգոթայի խաչի վրա: Եւ հարկ է հասկանալ, որ այն, ինչ գանձ եք համարում և չեք կարողանում նրանից ազատվել, դա ընդամենը անարժեք երկու լումա է, ոչ ավելին,

որ պահանջվում է մեզանից: Իսկ որո՞նք են անձի ունայն գանձերը, որոնք մենք պիտի ուրանանք: Այն կարող ենք գտնել այս մատենաշարի և նմանօրինակ այլ գրքերի մեջ, եթե աղոթքով փնտրենք:

Շատերը, դարձի գալով, ուրախանում են և սկսում աղաղակել

փրկության մասին, որ կարծես թե գտել են իրենք: Ճիշտ է, գտել են, բայց արդյոք սեփականացրե՞լ են, թե՞ ուզում են և՛ գանձն իրենցը լինի, և այն ամենը, ինչ ունեն, որը պարտ էին վաճառել՝ գանձին տիրանալու համար: Խելոք մեկը, հայտարարելու փոխարեն, թաքուն կծածկեր ըստ առակի գտած գանձը և իր սրտի պարունակությունը, այսինքն՝ անձի արծաթն ու ոսկին անմնացորդ կվաճառեր, որպեսզի սեփականացներ այն:

Եվ եթե չասեր էլ, թե գանձ է գտել, այլ լռին այն սեփականացնելու մասին մտածեր, այնժամ առանց իր հայտարարության էլ մարդիկ կտեսնեին նրա կյանքում բազում փոփոխություններ, այսինքն՝ ճշմարիտ հարստության բոլոր նշանները: Քանի որ «Ես դարձի եկած և ապաշխարած մեկն եմ» ասելու փոխարեն, մարդիկ կտեսնեն մեկին, որ իսկապես հարուստ է՝ առանց հարստության մասին իսկ ճառելու, որովհետև այնժամ կտեսնեն հպարտության փոխարեն խոնարհություն, կտեսնեն երկնային խաղաղություն, հեզություն, սեր, համբերություն, երկնային իմաստություն և շնորհներ թե՛ հրաշագործության, թե՛ մարգարեության, թե՛ բժշկության և այլն: Եվ միայն նման գանձերով հարստացածներն են, որ կարող են իրենց բարի գործերով փառավորել Հորը, որ երկնքում է: Ամեն:

ՍԲ. ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԹՈՒՂԹԸ ԱՆՕՐԵՆ և ԴԻՎԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քանզի հնում թատրոններն էին համարվում քրիստոնյաների համար մերժելի մի բան, և հիմնականում ուրիշ շատ ավելի աչքի ընկնող նման մերժելի բան չկար, իսկ մեր այս վերջին ժամանակներում նման զվարճալիքների թիվն ու տեսակը բազմաթիվ են ու բազմազան, դրա համար էլ այս բոլորն ընդհանրացնելու նպատակով թատրոն բառը վերափոխեցինք հեռուստացույցով, քանզի սա իր մեջ պարունակում է ոչ միայն թատրոն այլև հավատավոր քրիստոնյաների համար մերժելի բազում այլ բաներ: Այս կտրուկ փոփոխությունը միգուցե տարօրինակ թվա, բայց ավելի դյուրին ընթերցելու և ընկալելու նպատակով, սա արեցինք ընդհանուրի շահի համար: Չնայած որ հեռուստահաղորդումներում կան նաև օգտակար բաներ, սակայն վնասակարն այնքան

շատ է, որ կարելի է այդ մի փոքր օգտակարն էլ զոհել, որպեսզի չվարակվենք վնասակարով:

Ո՞ւր գնամ, որպեսզի խաղաղվեմ և լամ ահեղ անօրենություններս, որ ճմլում են ինձ, կամ որտե՞ղ թաքնվեմ անձայն, թախծյալ մտքերովս և մաշած չարալուր և զազրելի համբավովս, որ միշտ ճնշում է սիրտս, և աղիքներս ու որովայնս ողբից գալարվում են: Այս տրտմություններն ինձ հալեցնում են և խեղդում, որովհետև ամեն վայրկյան անառակ պղծության մասին եմ լսում և անօրեն ամբարշտություններ տեսնում: Սրտիս բազում թախանձանքներից ոսկորներս հողին մեխվեցին և մարմինս գետնին զարնվեց, քանզի մտային հուզումներիս երկար լռությունից փայտի նման այն չորացավ և դարձավ անշունչ պատկեր, և մտքիս ապշությունից իմ սխալները մոռացա և հանապազ քննում եմ ձեր սխալները: Քանի որ չար լուրը և զազրելի համբավը միշտ հնչում են իմ ականջներում, որից ժանտության և նեխության թարախ է գարշահոտում: Եվ գարշելի հոտը դեպի վեր տարածվելով, տաղտկեցնում է սբ. եկեղեցին, որի մեջ արդարները ջերմեռանդությամբ ողբում են իրենց անօրենությունները:

Իսկ ես բեռնավորված հեծեծանքներով, միշտ սգում և հեծծում եմ, որովհետև ձեր զազրելի անօրենությամբ, սատանայական թատրոնները (հեռուստահաղորդումները) միշտ ցնծում են խայտալով, իսկ Քրիստոսի եկեղեցին ողբում է դառնապես: Քանզի գրավելով սուրբ եկեղեցու զավակներին, սատանան նրանց կապեց հեռուստացույցի պիղծ, աղտոտ և անառակ տեսարաններով: Սա միշտ ձգտում է հեռացնել մարդկանց Աստծո ողորմությունից և ամենապայծառ անանց բարությունից, և նրանց որպես բաժին արձանագրել է տալիս ահեղ տանջանքներին, որի համար իմ բազում հանցանքներս անտես անելով, դառնում եմ ձեր վշտերին վշտակից և ողբում եմ ձեր անձերի աներևույթ բեկման վերքերը: Որովհետև մերժելով արհամարհեցիք Աստծո պատվիրանները, ոտնահարելով կոխկրտեցիք Առաքելական Եկեղեցու հավատքը, և առ ոչինչ համարեցիք Քրիստոսի մարմնի և արյան սրբությունը, որը միշտ ընդունում եք ահավոր և սոսկալի սեղանից: Եվ այժմ, խորապես ընկղմված եք ձեր դիվական մոլորության մեջ և գերեվարված սատանայի խորհուրդներից, շտապում եք ընկնել նրա դառնահամ որոգայթի մեջ՝ բազմելով հեռուստացույցի առջև, լսելու համար ականջները խաբող

ապականիչ, ախտեղի, զազիր և պիղծ ձայներ, անօրեն և չարալուր կերպով կատաղած գուսանների (ռոք, դիսկո, ռեպ և այլն), որոնք մշտապես հալածում են Սուրբ Հոգու շնորհները և սատանայի մահաբեր և պիղծ խորհուրդները սերմանում են ձեր սրտի և մտքի մեջ: Որից և առկայծելով, ձեր մեջ վառում է ցանկության կրակը և տեսակ-տեսակ ախտերի բոցով բորբոքելով, տոչորվում են ձեր մարմինները, փշի և տատասկի մեջ թաղվածի պես վիրավորվում են մեր անձերը, և ձեր կորուսյալ հոգիների վրա կուտակվում են դժվարակիր բեռներ: Եվ տակավին, այրիչ հուրը և սատակիչ սուրը ձեր անձերի վրա ստանալով, հեռուստացույցի առջևից դուրս եք ելնում կարեվեր և հաստատախոց սատանայի գաղտնի նետերից, որ չարաչար վիրավորում է մարդու հոգին՝ մեծամեծ անօրենությունները փոքրիկ բան կարծել տալով, որից հարկ է սոսկալ և դողալ հանապազ և փախչել մեծ երկյուղով: Քանզի սովորությունը չար է, և չար է հորդորիչը՝ սատանան, և մոլորվում են մտքերը ցոփագնացությամբ և լիրբ վավաշոտությամբ բոլոր նրանց, ովքեր հոժարակամ են և դյուրահավան՝ ընդունելու սատանայի չար սերմերը: Մանավանդ, թեթևամիտ և շվայտաբարո դասակարգն այն անօրեն կանանց, որոնք դյուրահավան, արագալուր, դյուրախաբ և լպիրշությամբ փութում են դեպի հեռուստացույցը, աներկյուղ շտապում՝ տեսնելու անօրեն հեռուստաֆիլմերը և սատանայական էկրանի առջև մի տեղ նստում և սկսում են խորհել և դիտել չարության մեջ իրենց նմանակներին: Թեպետ և նրանք անմիջապես անօրեն գործ չեն ձեռնարկում, սակայն սատանայի սատակիչ նետերը տանում են իրենց սրտի մեջ, որից ուշ կամ շուտ պիտի մեռնեն, ինչպես որսորդի նետից վիրավոր գազանը, որը թեև այդ ժամին թակարդից պրծավ, սակայն նետը հետը տանելով, մահվան պիտի մատնվի: Եվ արդարև, ինչպե՞ս պիտի դադարեցնենք նրա ցոլացող բոցի ահեղ տոչորումը, կամ ինչպե՞ս պիտի կարենանք աներևույթ վերքերի համար դարման գտնել, կամ ի՞նչ ձևով պիտի վերացնենք պիղծ հեռուստադիտումները, որը մահաբեր որոգայթ է, բազմաշարժ ժողով և ամեն տեսակ ախտերի արվեստանոց: Որովհետև այդտեղից է, որ կույսերը մղվում են պոռնկության, ամուսնացածները՝ շնության: Կանայք դառնում են մարդկանց ատելի, իսկ այրերը՝ կանանց արհամարհելի: Եվ այդտեղից է, որ որդիները հակառակվում են

հայրերին, իսկ ծառաներն՝ իրենց տերերին:

Այստեղից է ծերունիների անհամությունը և երիտասարդների վավաշոտությունը, պառավների բամբասկոտությունը և երիտասարդ աղջիկների կեղտոտությունը, մարդկանց լկտիությունը և կանանց կատաղությունը: Այստեղից են կնաթողությունը, մանկասպանությունը և զրկանքները, որոնք լինում են զարդերի և պաճուճանքի պատճառով: Այստեղից են սնափառությունը, պճնությունը և բազում չարաչար ախտերի հնարքները, այլազան պղծությունները, որը հիշելն իսկ ամոթ է: Հեռուստացույցը անհատին ուսուցանում է նաև լպիրշություն, հոգու մեղկություն, մտքի քայքայում, աչքերի հրայտություն, լեզվի դատարկախոսություն, գործերի հեղգություն և պարապեցնում է չարիքներով, որոնք այլասերելով՝ հեռացնում են մեզ Աստծո սիրուց և դուրս հանում քրիստոնեական կարգից:

Տակավին տեսակ-տեսակ և բազմազան չարիքների կերպարանքները չեմ կարող թվել, որոնք մեզ ուսուցանում են հեռուստածրագրերը: Այսպես՝ ամբարտավանություն, հայհոյություն, նենգություն, շողոքորթություն, չարակնություն, նախանձ և բամբասանք, որոնց համար և որոնց պատճառով Աստծո պատիժները հեղվում են երկրի վրա, և Նա՝ մեզ սաստիկ տանջանքների է դատապարտում: Ահավասիկ այս բոլոր անօրենություններով վարակվում են նրանք, որոնք նստում են հեռուստացույցի առջև և իրենց մարմինների մեջ աճեցնում են սատանայի սերմերի չար պտուղները:

Արդ, ո՞ր մի բերանը բավական է ողբալու և լալու համար այսպիսի ախտյալների և պղծյալների համար, կամ ո՞ր լեզուն պիտի կամենա պատմել անթիվ տառապանքների բազմությունը, որ ստանում են հեռուստադիտումներից, և կամ որ միտքը կկարողանա ցույց տալ ահեղ տանջանքների բազմությունը, որ պատրաստված է գեհենի կրակի հոսանքների մեջ աստվածամարտ սատանայի հետ միասին նրանց համար, որոնք խավարայինը ախորժելով ընդունեցին: Եվ արդ, ինչո՞ւ այդպիսի տանջանքների մատնվես և ինչի համար պիղծ հեռուստաֆիլմերը դիտես, ցոփություն և թեթևսոլիկություն, որոնք ոչ մի օգուտ չունեն, այլ անթիվ աղետների բազմություն են միայն բերում մեզ: Թեպետ և պագշոտների համար ցանկալի են պիղծ տեսարանները հեռուստացույցի, որոնք միշտ ախտերի ցանկությամբ են այրվում: Իսկ առողջ

մարդկանց համար նրանք տաղտկալի են թվում, որպես պղծություն և ամոթալի վավաշոտություն: Կանայք անբարոյական կենցաղի մեջ են ընկնում, իսկ այրերը՝ ձիերի նման մատակամոլ են դառնում և անօրեն զազրաբանությամբ, անասուններից ավելի են ստորանում և շների փխսածից ավելի ախտոտ խոսքերի գարշահոտություն են դուրս տալիս, որից նեխության շարաֆ և զազրելի հոտ է ելնում, և երկյուղածների անձերը զզվեցնում: Իսկ դևերին այս բաները ցանկալի են լինում, որովհետև այսպիսի խայտառակությունների մեջ սատանան է միշտ շրջում: Քանզի ուր աշխարհի գովք անող երաժիշտներ և միմոսներ կան, այնտեղ լկտի երգեր և ծաղր է տեղի ունենում, այնտեղ դևերն են նրանց պարակից, որոնք և զեխ մարդկանց մտքի մեջ սերմանում են ախտեղություն: Եվ առավել ևս, բորբոքվում է աշխարհային երաժշտությունների մոլեգնությունը, որոնք պիղծ հալածողներ են շնորհքի սրբության, բորբոքիչներ ցանկության կրակի, արհամարհիչներ պատվիրանների, կարապետները սատանայի խորհուրդների և անօրենությունների, թշնամիները ու աստվածամարտերը արդարության: Սրա՝ հեռուստացույցի առջև, մարդիկ նստում են ողջանդամ և դուրս են ելնում վիրավոր, Քրիստոսից մերկանալով՝ սատանայով են հանդերձավորվում և շնորհքի Հոգին հալածելով, լցվում են դևերի պիղծ հոգով: Որովհետև բոլոր նրանք, որ հավատով և երկյուղածությամբ են մոտենում Քրիստոսին, Սուրբ Հոգով են լուսավորվում և օրըստօրե առաքինի գործերով բարձրանում են՝ հեռանալով սատանայի խաբեություններից: Իսկ նրանք՝ հեռուստադիտումների պղծությամբ, մշտապես հպվում են դևերին, խավարային վարքով միգապատված մթնում են ու լցվում են սատանայի պիղծ ոգով և օրըստօրե անօրենությամբ ծանրանալով, ներքև են գլորվում, մինչև որ հեռանալով Աստծո պատվիրաններից ու երկյուղից, դառնում են անոթ՝ սատանայական խորհուրդների: Եվ սրա համար ավելի ախորժանքով են հաճախում դևերի բանակատեղին, փութալով սատանայի կոչին, քան թե Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն: Քանզի հեռուստաֆիլմերը դևերի համախումբ են, և հեռուտադիտողներն այնտեղ ունկնդրում են գուսանամոլ գինարբուքներ, ուր զեխանում ու պագշոտում են անառակ կերպով, անաստվածորեն արձակում են լեզվի սանձերը ու բերանի կապերը, միանգամայն ուտում և շվայտանում են կերակուրներով: Եվ

նրանք խոսում և խորհում են սատանայի կամքը և արձակում նրա չար նետերը, հարվածում է սատանան և ապա խաղաղեցնում և զգացնել չի տալիս, որ ապաշխարությամբ չբժշկվեն, քանզի գող է և ուղիղ ճանապարհով չի ընթանում, վախենալով, որ կզգուշանանք: Այլ գաղտնորեն նետեր է արձակում և անպարկեշտորեն արհամարհել է տալիս պատվիրաններից ամենակարևորները, և որպես անմեղ բան է կարծել տալիս, որպեսզի չզգուշանանք: Դիտի նա, թե պատվիրաններն արգելում են տգեղ և դատարկ խոսքը, բամբասանքը և հայհոյանքը, և սրա համար այս բաները առավել չափով թափվում են վավաշոտ հեռուստածրագրերից, որոնք են՝ խեղկատակությունները, հիմարաբանությունները և գարշաբանությունները, արհամարհանքը, խայտառակությունը և հայհոյանքը, որ հոսում են նրանց բերաններից մշտապես: Քանզի ծաղրանքի խայտառակության և խառնախոսության ընթացքին, դևերը փութալով հասնում են և բերելով բազում ախտեր, խմեցնում են բոլոր նրանց, որոնք ունկնդրում են այս ամենը: Հարկ է լալ ու կոծել այսպիսի անառակությունները և մանավանդ՝ մտակորույս կատակները, որ տեղի են ունենում լկտի հումորիստների և ծաղրածուների կողմից: Սրանք այսահարների նման ծռմռվում են, ճմլվում, ոստոստում և իրենց ախտոտ բերաններով զազրեցնում են բոլորին: Ոմանց հայհոյում են, ոմանց բամբասում, ոմանց հակառակում և ոմանց էլ խայտառակում ու ամոթով կորացնում: Ոմանց ստում են և հպարտությամբ սնափառ դարձնում: Վերջապես կատաղած շան նման առհասարակ բոլորին կծոտում են:

Ի՞նչ ես անում, ով թշվառական, ինչո՞ւ չես շտապում մաքրվել չար ամբարշտությունից: Ինչո՞ւ չես սգում անզգամությունդ՝ վերստին խելքի գալու համար: Ինչո՞ւ չես գթում կորուսյալ հոգիդ, ինչո՞ւ չես լացում ու կոծում անօրենություններդ, ինչո՞ւ ես կրակի վրա կրակ ավելացնում, մեջը դառնորեն այրվելու համար: Ինչո՞ւ ես հանապազ քայլում կայծակների և փշերի վրայով, ինչո՞ւ ես մշտապես կորանում մեղքի բեռան տակ: Ինչի՞ համար քարավեժ և գահավեժ լինես: Ինչո՞ւ ես թուր սրում և նրանով ինքդ քեզ խոցում, որովհետև չկա մեկը, որ կրակը կրակով մարի և ոչ էլ չարիքով բարուն հանդիպի: Ո՞վ է նա, որ փուշ գտնելով՝ խաղող է հավաքում, կամ որոմ ցանում և ցորեն հնձում, այսպես էլ ոչ ոք անառակ վարքով Քրիստոսին չի տեսնի և արքայությունը չի ժառանգի, այլ՝ թունավոր որդերի մեջ, գեհենի կրակին պիտի դատապարտվի: Եվ նա, որ այսպիսի անօրեն և լկտի վարքով ապրի և դիվային հեռուստադիտումներով ու աշխարհական ծաղրածու երաժշտություններով ժամանակը վատնի, նա կրակի տանջանքներից խույս տալ ամենևին թող չակնկալի: Հիշիր ահավոր խոսքը, թե վայ նրանց, որ ծիծաղում են երկրի վրա, որովհետև նրանք պիտի սգան, վայ նրանց, որոնք խնդում են այժմ, որովհետև նրանք պիտի լան և ողբան: Վա՜յ նրանց որ գինի են խմում հարբելու համար և օծվում անուշահոտ յուղերով: Վա՜յ մեծահարուստներիդ, որ երկրի վրա ստացաք ձեր բարության հատուցումը, որովհետև բազում նեղություններ է հարկավոր Աստծո արքայությունը մտնելու համար: Արդ, Քրիստոս լալ ու սգալ հորդորեց աշխարհին, իսկ դու ծիծաղում ես ու ցնծում և չես դողում ու զարհուրում Աստծո ահեղ դատաստանից, որ մանրամասն պիտի քննի կամովին թե՛ ակամա ծուլությամբ, թե՛ մոռացությամբ գործած բոլոր մեղքերդ:

Արդարև, փութա անձդ մաքրել հրայտությունից, լեզուդ՝ դատարկախոսությունից, ականջներդ՝ պղծություն լսելու սովորությունից և միտքդ՝ սատանայի մահաբեր խորհուրդներից: Ընկիր Աստծու առջև և ասա. «Մեղա երկնքի և Քո առջև»: Մի հեղգացիր ապաշխարության վաստակից, քանի դեռ ժամանակ կա: Քանզի ահա մոտ է ահեղ և սոսկալի խավարային ու աղջամղջային գիշերը: Հիմա ճանաչիր մեղքերիդ բազմությունը, մտաբերիր, թե վաղը մեռնել կա: Նկատի առ հոգուդ ելքը մարմնից և մշտապես մտածիր մեծ և ահեղ դատաստանի օրվա մասին, անշեջ կրակի, խավար աղջամղջի, ապականության գուբի, գեհենի տարտարոսի և մեղավորների դառը ողբի մասին, որ պիտի լինի ահեղ դատաստանի Դատավորի առջև: Որտեղ խոսքերը կսպառվեն և գործերը կթագավորեն, որտեղ խորհուրդները և գործերը պիտի պահանջվեն, որտեղ իզուր են խնդրանքները և անտեղի մտածմունքների հաշիվները:

Արդ, հանապազ մտքիցդ անցկացրու այս բոլորը, հիշիր և հոգոց հանիր, ողբա և հեծկլտա և անդադար լացիր, որովհետև թերևս փրկվես ահեղ վշտերի տանջանքներից և աննշույլ խավարից և արժանանաս խոստացված և չսպառվող բարիքներին՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հետ, Որին փառք, հավիտյանս: Ամեն:

ՆԱՐԵԿ

ԲԱՆ (Դ)

Արդարությունս նվազել է ու չքացել իսպառ.
Մեղքերս բացվել են ու բազմապատկվել.
Չարիքները իմ մնացական են, ես՝ կորստական.
Թեթևացել է սաստիկ նժարը իրավունքներիս,
Անիրավության կողմը՝ ծանրացել.
Հալվել, ցնդել է բերքը բարիքիս,
Իսկ սխալներս՝ հաստատվել ամուր.
Ավանդը կորցրել, դատակնիքն եմ գտել այժմեն իսկ.
Մահվան մուրհակս գրված է արդեն,
Իսկ ավետիքի կտակը՝ ջնջված:
Երախտավորը տխրել է սաստիկ,
Իսկ նենգ բանսարկուն ցնծում է ուրախ.
Թախծում է գունդը հրեշտակների,
Սատանան՝ պարում լիրբ հռհռոցով.
Ողբերի մեջ է զորքը վերնական,
Ստորինները բերկրում են զվարթ.
Մահ տարածողի մթերանոցը լցված է բերքով,
Եվ կողոպտված է գանձն Ստեղծողի.
Օտարի կողմը անպակաս է, իսկ
Տիրոջ պարգևը տրված է քամուն.
Շնորհն հաստողի մոռացվել է, իսկ
Կորստաբերի վարմերը՝ պահվել.
Երախտիքները Փրկչի հեգնելով՝
Զվարճանում է բելիարը նենգ.
Կենաց աղբյուրս խցվել է անդարձ,
Գոռոզի ժանգն է ժամանել ժանտիս:
Ավելի լավ չէ՞ր, ինչպես որ Գիրքն է ասել նախօրոք,
Ո՛չ սաղմնավորվել բնավ արգանդում,
Ո՛չ ձևավորվել որովայնի մեջ,
Ո՛չ ծնունդ առնել, ո՛չ լույս աշխարհ գալ,
Ո՛չ մարդկանց թվում երբևէ գրվել,
Ո՛չ հասակ առնել, աճել, զարգանալ,

Ո՛չ օժտվել խոսքով, բանականությամբ,
Քան թե ենթարկվել այսքան սաստկագույն
Ու սարսափելի տառապանքների,
Որոնց դիմանալ կարծրակոփ ժայռերն անգամ չեն կարող,
Ո՞ւր մնաց տկար մարմինները լույծ:
Տու՛ր ինձ, բարեգու՜թ, աղաչում եմ Քեզ, տու՛ր ողորմություն.
Չէ՛ որ Դու Ինքդ Քո խոսքով այդպես մեզ պատվիրեցիր,
Ասելով՝ տվեք այդ նվերն Աստծուն՝
Ի փրկություն ձեր և մաքրագործվեք.
Զի Ես ձեզանից ողորմություն եմ ուզում, ոչ թե զոհ:
Ահա բարձրացի՛ր վերստին՝ խնկված այդ խոսքն հիշելով,
Դու, որ ամեն ինչ ունես լիապես
Եվ ամեն ինչի աղբյուրն ես միակ.
Բոլորից քեզ փա՜ռք հավիտյանս. ամեն:
(սբ. Գրիգոր Նարեկացի)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՐԱՏՆԵՐ

Տիրոջ վախը իմաստության **խրատն է... Խրատը** լսի՛ր և կրթություն ընդունիր, որպեսզի ապագայում իմաստուն լինես» (Առակ. 15:33, 19:20):

Աստվածաշնչից

1. Չգիտե՞ք, թե անիրավներն Աստծու արքայությունը չեն ժառանգելու. մի՛ խաբվեք. ո՛չ պոռնիկներ, ո՛չ կռապաշտներ, ո՛չ իգացողներ, ո՛չ արվամոլներ, ո՛չ գողեր, ո՛չ ագահներ, ո՛չ հարբեցողներ, ո՛չ բամբասողներ, ո՛չ հափշտակողներ Աստծո արքայությունը չպիտի ժառանգեն (Ա Կորնթ. 69-10):

2. Ով գողանում էր, այլևս թող չգողանա (Եփես. 4:28):

3. Ձեզանից ոչ ոք թող չտանջվի որպես մարդասպան կամ որպես գող, կամ որպես չարագործ, կամ որպես ուրիշի գործին խառնվող. իսկ եթե տանջվում է որպես քրիստոնյա, թող չամաչի, այլ

փառավորի Աստծուն այդ անվամբ (Ա Պետ. 4:15-16):

4. Մի՛ գողացեք, մի՛ ստեք, ոչ մեկն իր ընկերոջը թող չզրպարտի: ... Քո ընկերոջը մի՛ զրկիր իր իրավունքից և նրա ունեցածը մի՛ հափշտակիր: Վարձկանի վարձը մինչև հաջորդ առավոտ թող քեզ մոտ չմնա (Ղևտ. 19:11-13):

5. Ով բաժնեկից է դառնում գողերին, նա ատում է իր հոգին (Առակ. 2՝:24):

6. Անիրավություն մի՛ արեք նաև չափելու, կշռաքարերի ու կշռելու մեջ: Կշեռքները ճիշտ պետք է լինեն, կշռաքարերը՝ ճշգրիտ (Ղևտ. 19:35-36):

7. Վրեժխնդիր մի՛ լինիր և քո ժողովրդի դեմ ոխ մի՛ ունեցիր (Ղևտ. 19:18):

8. Մի՛ ասա, թե՝ վրեժ պիտի առնեմ թշնամուց, այլ համբերություն ունեցիր Տիրոջ հանդեպ, որ Նա օգնական լինի քեզ (Առակ. 20:22):

9. Եթե թշնամիդ ցած գլորվի, մի՛ ուրախացիր, ու երբ ոտքը սահի՝ քո սիրտը թող չցնծա: Չլինի, որ Տերը տեսնի, ու Իրեն անհաճո երևա, և Իր բարկությունը նրա վրայից հետ դարձնի (Առակ. 24:17):

10. Երազը հոգսերի շատությունից է գալիս (Ժող. 5:3):

11. Ահա ես դեմ եմ այդ մարգարեներին, որոնք մարգարեանում են սուտ երազներ, - ասում է Տերը, - պատմում են դրանց մասին և իրենց ստությամբ ու իրենց խաբեությամբ մոլորեցնում իմ ժողովրդին. բայց ես նրանց չեմ ուղարկել, պատվեր չեմ տվել նրանց, և նրանք որևէ օգուտ չեն կարող տալ այդ ժողովրդին,- ասում է Տերը (Երեմ. 23:32):

12. Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որն իր տղային կամ աղջկան կրակի բովից անցկացնի, կախարդությամբ կամ գուշակությամբ զբաղվի, թռչուններին նայելով կանխագուշակումներ անի, մոգությունով զբաղվի, վհուկ կամ սուտ մարգարե լինի, ոգեհարցությամբ զբաղվի, որովհետև Տիրոջ համար պիղծ է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով. այդպիսի գարշելի բաների համար է, որ Տերը նրանց վերացնում է քո միջից: Քո Տեր Աստծու առջև կատարյալ պետք է լինես: Քո ժառանգելիք երկրի մարդիկ հավատում են հմայություններին ու կախարդություններին, բայց քո Տեր Աստվածը քեզ

այդպես վարվելու հրաման չի տվել (Բ Օր. 18:10 - 12):

13. Մի՛ թողեք, որ կախարդները ապրեն (Ելք 22:18):

14. Ես եմ Տերը, որ անում, կատարում եմ ամեն ինչ, միայնակ տարածեցի երկինքը և հաստատեցի երկիրը: Էլ ո՞վ է, որ ի չիք դարձրեց վհուկների կախարդությունները և դյութությունները՝ սրտերից (Եսայի 44:25):

15. Երանելի՜ են նրանք, որ պահում են Նրա պատվիրանները: Նրանք իրավունք ունեն ուտելու Կենաց ծառից և մտնելու քաղաքի դռներով: Իսկ շները ու կախարդները, մարդասպաններն ու կռապաշտները և բոլոր նրանք, որ սիրում են սուտը, դուրս պիտի նետվեն (Հայտ. 22:1-15):

16. Հաղորդակից եղեք սրբերի կարիքներին. հետամուտ եղեք հյուրասիրությանը (Հռոմ. 12:13):

17. Եղբայրսիրությունը թող հաստատ մնա ձեր մեջ: Մի՛ մոռացեք օտարասիրությունը, որովհետև դրա շնորհիվ ոմանք հրեշտակներ հյուրընկալեցին՝ առանց իմանալու: Հիշեցե՛ք բանտարկյալներին, որպես թե դուք բանտարկված լինեիք նրանց հետ (Եբր. 13:1-3):

18. Հյուրասեր եղեք միմյանց հանդեպ առանց տրտնջալու (Ա Պետ. 4:՝):

19. Հիվա՞նդ է ձեզանից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, և նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուղով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի: Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցե՛ք և միմյանց համար աղո՛թք արեք, որպեսզի բժշկվեք. քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է (Հակ. 5:14-16):

20. Ձեր մարմնի վրա դաջվածք մի՛ արեք (Ղևտ. 19:28):

21. Եթե ձեր երկրում օտարական հաստատվի, նրան չնեղեք: Ձեր երկրի տեղաբնակի պես ընդունեցեք նրան (Ղևտ. 19:33-34):

22. Ալեհեր մարդկանց առաջ ոտքի կկանգնեք և կպատվեք ծերերին (Ղևտ. 19:32):

23. Եթե արծաթ ես փոխ տալիս աղքատ եղբորդ, նեղը մի՛ գցիր նրան և տոկոսներ մի պահանջիր նրանից (Ելք 22:25):

24. Որևէ մեկից ակնածելով՝ պարտքի համար անձդ երաշխավոր մի՛ դարձրու, որովհետև եթե չունես, որտեղից պիտի վճարես, և ինչո՞ւ առնեն տանեն քո անկողինը, որի վրա հանգստանում են կողերդ (Առակ. 22:26-27):

25. Զինվորները նույնպես հարցնում էին նրան. «Իսկ մե՛նք ի՞նչ անենք»: Նա ասաց նրանց. «Ոչ ոքի մի՛ նեղեք, ոչ ոքի մի՛ զրպարտեք, ձեր ռոճիկը թող ձեզ բավարար լինի» (Ղուկ. 3:14):

26. Խելացի որդին հնազանդ է հորը, բայց անհնազանդ որդին կորստյան պիտի մատնվի (Առակ.13:1):

27. Անմիտ որդին հոր տրտմությունն է և դառը ցավ է իր ծնողների համար (Առակ. 17:25):

28. Լսի՛ր որդյա՛կ, քեզ ծնող հորը և մի՛ արհամարհիր քո մոր ծերությունը (Առակ. 23:22):

29. Ով հայհոյում է իր հորն ու մորը, նրա լույսը պիտի հանգչի. նրա աչքերի բիբերը պիտի զգան խավարը (Առակ. 20:20):

30. Քո խրատը մի՛ խնայիր երեխային, որովհետև եթե գավազանով էլ խփես նրան՝ չի մեռնի, դու նրան կհարվածես գավազանով, բայց հոգին կփրկես մահից (Առակ. 22:13-14):

31. Անմտությունը բորբոքված է երիտասարդի սրտում. ուրեմն՝ գավազանը և խրատը հեռու են նրանից (Առակ. 22:15):

32. Երիտասարդը դաստիարակվում է ըստ իր ընտրած ճանապարհի և ծերության ժամանակ էլ չի հեռանում դրանից (Առակ. 22:6):

33. Կաշառակերը սպանում է իր հոգին, բայց կաշառք ատողը պիտի ապրի (Առակ. 15:27):

34. Կաշառքի համար գիրկը բացողը հաջողություն չի գտնի իր ճամփին (Առակ. 17:23):

35. Հանճարեղ մարդու երեսն իմաստուն է, իսկ անմիտ մարդու աչքերն այս ու այն կողմ են նայում (Առակ. 17:24):

36. Ստախոս վկան առանց պատժի չի մնա, և չի փրկվի նա, ով զուր տեղն է մեղադրում (Առակ. 19:5):

37. Գինին անառակության է մղում, հարբեցողությունը՝ թշնամության, և ով անձնատուր է լինում դրանց՝ խելացի չէ (Առակ. 20:1):

38. Լավ է բաց օդի մեջ մի անկյունում ապրել, քան

անիրավությամբ ծեփված և խառնակ տան մեջ (Առակ. 21:9):

39. Չարաչք մարդու հետ հաց մի՛ կեր և մի՛ ցանկացիր նրա կերակուրը, քանզի նա ուտում և խմում է այնպես, ինչպես մեկը մազ կուլ տա: Նրան մի՛ ընդունիր քո տունը և քո հացը մի՛ կեր նրա հետ, քանի որ նողկանք կպատճառի քեզ և կապականի քո բարի խոսքերը (Առակ. 23:6-8):

40. Մի փոփոխիր վաղեմի սահմանված նշանները (Առակ. 23:10):

41. Շողոքորթների խոսքերը փաղաքշող են, բայց դառնում են կռվի բուն (Առակ. 25:22):

42. Ընկերոջ համար հոր փորողը ինքն է ընկնելու նրա մեջ. ով քար է գլորում ուրիշի վրա, ինքն իր վրա է գլորում այն (Առակ. 26:27):

43. Որքան որ ուխտ անես՝ կատարի՛ր, քանի որ լավ է ուխտ չանել, քան թե ուխտ անել և չկատարել (Ժող. 5:4):

Հայրեր և ժամանակակիցներ

1. Դժբախտ է այն մարդը, որ իր հոգու արժեքը չիմանալով՝ թավալվում է մեղքի աղբանոցում (Հերոնիմոս Երանելի):

2. Ընկերություն մի՛ արա և մի՛ բնակվիր Քրիստոսի եկեղեցու թշնամիների, հերետիկոսների և հերձվածողների հետ: Լավ է խուսափել այն մարդկանցից, որոնք Աստծուց չեն վախենում և չեն պատվում Նրան («Հարց և պատասխան» գրքից):

3. Կարելի՞ է լողալ և արևի տակ պառկել ուրիշների ներկայությամբ:

Սուրբ հայրերը արգելում են մերկացնել մարմինը, իհարկե և լողալը («Հարց և պատասխան» գրքից):

4. Մի խաղացեք և մի դիտեք ֆուտբոլ և նմանօրինակ կրքեր բորբոքող բաներ, քանի որ դրանք էլ դևերի հորինվածք է, սրանց հետևողները շատ ծանր վիճակների մեջ կընկնեն («Հոգևոր պատերազմ» գրքից):

Շատ անգամ հանդիմանված մարդը, եթե իր պարանոցը խստացնի, հանկարծակի պիտի կոտրվի ու բժշկություն պիտի չգտնի (Առակ. 29:1):

5. Որտեղ պարը, այնտեղ և սատանան:
Պարերը չպետք է թույլատրվեն (Հովհաննես Ոսկեբերան):

6. Զարմանալի չէ, երբ դու ամուսնացնում ես դստերդ և դժբախտություն չես համարում, եթե ամուսինը նրա հետ հեռավոր երկիր է գնում և ապրում այնտեղ երջանիկ, որովհետև կարոտի թախիծը փարատվում է նրանց բարեհաջողության մասին լուրեր լսելով, իսկ այստեղ ոչ թե մարդը, այլ Աստված ինքն է Իր մոտ վերցնում քո հարազատին, և դու թե տխրում, և թե դժգոհում ես (Հովհան Ոսկեբերան):

7. Անարժան քահանաները ամենևին չեն խանգարում մեզ Աստծուց շնորհներ ստանալ՝ Սուրբ խորհուրդների ժամանակ (Հովհան Ոսկեբերան):

8. Աշխարհիկ բանաստեղծությունը, երաժշտությունը և երգեցողությունը միայն կրքեր են բորբոքում (Հոգեշահ գրքերից):

9. Մեղքերից հեռու մնալու համար պետք է միտքը պահել վատ և չար, դատարկ և փուչ մտածումներից, հայացքը՝ աշխարհի հրապույրներից, սիրտդ՝ չար ցանկություններից և ինքնահավանությունից (մեծամտությունից), լսողությունը՝ ունայն և ծիծաղաշարժ զրույցներից, առավելապես մերձավորների հասցեին արվող չարախոսություններից, լեզուն՝ դատելուց և տրտնջալուց, որովայնը՝ քաղցրասիրությունից և գինու անչափավոր գործածումից և փախչել անգործությունից (Հոգեշահ գրքերից):

10. Իզուր չեն ննջեցյալների համար խնդրվածքները: Իզուր չեն աղոթքները, իզուր չեն ողորմությունները: Այս բոլորը Սուրբ Հոգին է սահմանել, որպեսզի մենք միմյանց միջոցով օգուտ ստանանք (Հովհան Ոսկեբերան):

11. Մեծ մեղք է չափազանց մտահոգվելը ազգականների համար: Նրանք իրենք էլ կարող են հոգալ իրենց հոգսերը, իսկ դու զբաղվիր հոգուդ փրկությամբ, չէ՞ որ մահը ոչ թե սարերի ետևում է, այլ մեջքիդ է կանգնած (Հոգեշահ գրքերից):

12. Եթե մտադիր եք որևէ ճիշտ դիտողություն անել, արեք այն՝ նախապես աղոթելով և խորին խոնարհությամբ (Հոգեշահ գրքերից):

13. Դրամ սիրող քրիստոնյան կռապաշտ է, մարդկային փառքը սիրողը՝ սատանայի զինվոր է, մարմնավոր կրքերին անձնատուր

եղածը՝ մեղքի և սատանայի ծառա (Հոգեշահ գրքերից):

14. Վատ երազները հետևանք են չխոստովանած մեղքերի, դատելու և շատակերության (Հոգեշահ գրքերից):

15. Երբեմն դևերը նույն երազը կրկնում են երեք անգամ, որպեսզի մարդուն մոլորեցնելով հավատացնեն, թե այն Տիրոջից է (Եփրեմ Ասորի):

16. Հրեշտակային երազներն ուրախացնում են հոգին, իսկ դիվայինները խռովեցնում են այն (Եվագր Պոնտացի):

17. Օրվա ընթացքում մի մտաբերիր երազական անուրջները, քանի որ դա էլ է դևերից, որպեսզի երազանքներով պղծեն զգաստության մեջ եղողներին (Հովհաննես Սանդուղք):

18. Հաճախ քնից արթնանում ենք մաքուր և խաղաղ, և դա լինում է սուրբ հրեշտակների օրհնաբեր գաղտնի ներգործությամբ, մանավանդ, երբ քնել ենք բազում աղոթքներով և սթափությամբ, երբեմն արթնանում ենք անմաքուր և անխաղաղ, պատճառը լինում են վատ երազները (Հովհաննես Սանդուղք):

19. Դևերը հաճախակի վերափոխվում են՝ նմանվելով լուսո հրեշտակների և ընդունում են մարգարեների կերպարանք: Եվ ներկայանում են մեզ երազներում այնպես, որ կարծես թե մենք ենք նրանց մոտ գնացել, իսկ երբ արթնանում ենք՝ մեզ լցնում են ուրախությամբ և մեծամտությամբ: Քեզ համար սա թող լինի հմայության և խաբկանքի նշան, քանի որ հրեշտակները մեզ ցույց են տալիս տանջանքները, Ահեղ դատաստանը և բաժանումը: Իսկ արթնանալիս լցված ենք լինում վախով և տրտունջներով (մեր անձի հանդեպ): Եթե երազների մեջ տեղիք տանք դևերին, ապա նրանք արթուն ժամանակ էլ մեզ կհայհոյեն: Ով հավատ է ընծայում երազներին, նա բոլորովին էլ հմուտ չէ, իսկ ով չի հավատում նրանց՝ նա իմաստուն է: Այսպիսով, հավատա միայն այն երազներին, որոնք քեզ ազդարարում են դատաստանի և տանջանքների մասին, իսկ եթե քեզ բերում են հուսահատություն, ուրեմն դրանք էլ դևերից են (Հովհաննես Սանդուղք):

20. Փառասիրության դևերը մարգարեներ են երազների մեջ: Լինելով թափանցող և խցկվող, նրանք գալիքի մասին կողմնորոշվում են արտաքին պարագաներից և իրավիճակներից ելնելով, և

այն հայտնում են մեզ, որպեսզի մենք այս տեսածն արդեն կատարված տեսնելով՝ զարմանանք և համարենք, որ արդեն մոտ ենք պայծառատեսության շնորհին և մեծամտանանք ներքուստ: Ով հավատում է դևին, նրանց համար նա հաճախ լինում է որպես մարգարե, իսկ ով արհամարհում է նրան՝ այդպիսիների հանդեպ նա միշտ դուրս է գալիս որպես ստախոս: Որպես ոգի նա տեսնում է դեպքերն օդային տարածությունից և նկատելով, օրինակ, որ ինչ որ մեկը մահանում է, նա այդ հայտնում է թերահավատին՝ երազի միջոցով: Դևերը ոչինչ չգիտեն գալիքի մասին նախատնօրինությամբ, բայց հայտնի է, որ բժիշկներն էլ կարող են կանխատեսել մոտալուտ մահը (Հովհաննես Սանդուղք):

21. Մտքերը և կրքերը կարող են ծնել երազներ, մտքեր և տեսիլքներ, քանի որ դուք կարող եք երազել այն մասին, ինչի մասին մտածում եք կամ ինչին ձգտում եք: Այս ձևով մարդը կարող է պատասխանատու լինել իր երազների համար, ու որքանով մարդու սիրտն ու մտքերը սրբված են, այնքանով նրա երազները մաքրված կլինեն: Երբ դուք երազ եք տեսնում մի բանի մասին, որը չի համապատասխանում ձեր մտքերի ու ցանկությունների ուղղվածությանը, դուք կարող եք հուզվել և արագորեն արթնանալ, անկարող կլինեք շարունակել ձեր երազը երկար ժամանակ (Շենուդա Գ):

22. Ով հավատում է երազների, նման է մի մարդու, որ վազում է իր ստվերի ետևից և ջանում է բռնել նրան: Երազները ավելի հաճախ լինում են առօրյա մտածումների արդյունք, որով չարը խաղալով մեր երևակայության հետ՝ մեզ գցում է դիվային զվարճությունների և հայհոյությունների մեջ: Երազներին հավատալով և նրանցով առաջնորդվելով շատերը մոլորվեցին և կործանվեցին («Հարց և պատասխան» գրքից):

23. Սուրբ հայրերը խորհուրդ չեն տալիս հավատալ երազներին, մանավանդ, երբ դրանք հուսահատության կամ փառամոլության մեջ են գցում, ակնհայտ է, որ դրանք դևերից են («Հարց և պատասխան» գրքից):

Ամբարիշտ մարդը իր երեսը կպնդացնի, բայց ուղիղը իր ճամփաները կշտկի (Առակ 21:28):

24. -Ի՞նչ կասեք ծխելու մասին:

-Տերն ասում է. « Եթե դուք չար եք և ձեր որդիներին բարիք անել գիտեք, ուրեմն, ի՞նչ առավել ձեր Երկնավոր Հայրը, որ բարի է, ձեզ բարի պիտի ցանկանա»: Ուրեմն, եթե մարդը չար է և իր երեխային բարի ցանկանալով՝ արգելում է ծխել, ուրեմն, ինչպես առավել Աստված, որ բարի է՝ չի ցանկանա, որ իր որդիները ծխեն: Եթե աշխարհը ծխելը չարիք է համարում, և աշխարհի շատ երկրներում այն արգելված է, և պատիժ է սահմանված այն խախտողների համար, ապա Աստված մի՞թե գոհունակությամբ պետք է նայի աշխարհը մերժած քրիստոնյաներին, որոնք ծխում են:

Ծխախոտն օգտագործում են հիմնականում հուզմունքի պահին, կամ զայրույթը զսպելու համար, կամ սգո և տրտմության պահին՝ մխիթարվելու նպատակով, կամ ուղղակի հաճույքի համար: Այնինչ այս բոլոր բաների դեմ պետք է դիմակայել աղոթքով, Աստծո երկյուղով, պահքով և Աստծո Խոսքով: Ցավոք, շատ քրիստոնյաներ, որպես զենք, այս բոլոր նեղությունների դեմ օգտագործում են ծխախոտը: Բայց Աստծո կողմից մեզ առաջարկած սպառազինության մեջ ոչ մի տեղ մենք ծխախոտի չենք հանդիպում: Ուրեմն, այս զենքը Տիրոջից չէ: Իսկ թե ումի՞ց է, շատ հեշտ է գլխի ընկնել, միայն թե ուշ չլինի (Հոգևոր փորձառությունից):

25. -Իսկ ինչպե՞ս կարելի է ազատվել ծխելու ցանկությունից:

-Ծխախոտի, չար գերությունից ազատվելու համար նախ պետք է, ի սրտե այդ ցանկանալ, առանց ինքնախաբեության: Իսկ եթե առերես ուզում ես թողնել ծխելը, բայց սրտում փափագում ես այն, այդ դեպքում ոչինչ չի ստացվի, և ոչ ոք քեզ չի կարող օգնել: Ուրեմն, նախ պետք է հասնել այն բանին, որ ատելով ծխախոտը՝ ուզենաս ի սրտե այդ մոլուցքից ազատվել, դրա համար պետք է նախ ունենալ Աստծո հանդեպ մեծ երկյուղ, հիշելով մահվան, դժոխքի և ահեղ դատաստանի մասին, և ամեն մի արձակված ծխի հետ աշխատել հիշել, որ կրակե լիճը նետված մեղավորների ծուխը պիտի բարձրանա հավիտյանս հավիտենից: Եվ երբ կզգաս ծխախոտի հրեշավորությունը, զզվանքով ու ատելությամբ կվերաբերվես, որպես քեզ Երկնքի Արքայությունից հեռացնող մի բանի: Այն ժամանակ նոր կարող ես Տիրոջ անունը կանչելով ազատվել ծխելու մոլուցքից: Երբ

ծխելու ցանկությունը գլուխ կբարձրացնի, կարող ես 33 անգամ հանդարտորեն կատարել Հիսուսի անվան աղոթքը. «Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, ողորմի՛ր մեղավորիս» կամ յոթ անգամ. «Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն եւ բեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհենոյն եւ զսէր արքայութեանն, զի զոչացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»: Եվ նույնը արա այնքան ժամանակ, մինչև Աստծո ողորմությամբ իսպառ կազատվես այդ ախտից (Հոգևոր փորձառությունից):

26. Ծխախոտով թշնամին ջանում է դուրս մղել Աստծո շնորհը, որը քրիստոնյան ստանում է Սուրբ Հաղորդության շնորհիվ («Հոգևոր Պատերազմ» գրքից):

27. Ով ծխախոտ է ծխում, նա իր միջից դուրս է մղում Սուրբ Հոգուն («Հարց և Պատասխան» գրքից):

28. -Արդյոք հեռուստացույցը քրիստոնյայի համար վտանգ չի՞ ներկայացնում:

-Հեռուստացույցը աշխարհի լայն բացված դարպասներն են, որտեղից և մեր տներն են հեղեղվում աշխարհի հոգեկորույս հմայքները և կորստաբեր խորհուրդները՝ մեր տները վերածելով համերգասրահների, սպորտդահլիճների, խաղահրապարակների և ակումբների, պատերազմի դաշտի, ռեստորանների և հասարակաց տների՝ լեցուն ամեն տեսակի անառակ կանանցով, գողերով, մարդասպաններով: Երբեմն մեր տներն են պղծվում Աստված հայհոյող ֆիլմերով և զրույցներով, նաև խեղկատակություններով ու բազում այլ մեղսառատ հաղորդումներով: Հեռուստացույցի առջև գտնվող քրիստոնյան մի քանի ժամում մերձենում է ամենատարբեր մեղքերի հետ՝ մեկ անգուսպ ծիծաղում է, այնինչ ասաց. «Թող ձեր ծիծաղը սուգի փոխվի»: Մեկ բարկանում է, որ մահացու մեղք է, մեկ աչքով տեսնում է և սրտով ցանկանում, որ շնություն է, մեկ էլ փափագում է աշխարհի առաջարկներին, գովազդային ներգործումից դրդված, որ ագահություն է: Մեկ էլ վառվում է վրեժխնդրությամբ, չնայած որ ասվեց. «Վրեժխնդրությունը Իմն է»: Եվ այս բոլոր մեղքերի հետ ցիրուցան է անում նաև իր ժամանակը, որի համար ասվեց, թե «Ծախու

առեք»: Չարը խաբում է մեզ՝ ներշնչելով, որ հեռուստացույցի մեջ ոչ մի ահավոր բան չկա: Կարող ես նայել լուրեր, նաև եղանակի տեսություն, բայց շատ սահուն ձևով են դրանք վերափոխվում անառակության և ամեն տեսակի պղծություններով ներծծված ֆիլմերի ու հաղորդումների: Եվ որ ամենասարսափելին է՝ այս դիտումներով մենք փաստում ենք, որ սիրում ենք աշխարհը: Ուրեմն, վախենանք այն օրվանից, երբ կանգնելու ենք ահավոր ատյանի առջև, որովհետև կարող ենք դասվել Աստծո թշնամիների հետ, քանի որ «Աշխարհի հանդեպ ունեցած սերը թշնամություն է Աստծո դեմ» (Հոգևոր փորձառությունից):

29. Թատրոնները (կինոթատրոնները, դիսկոտեկները և այլն) քաղաքներում կառուցել է սատանան (Բարսիլիսկոս Մեծ):

30. -Որո՞նք են ավելի վտանգավոր՝ պարտքերը, թե՞ մեղքերը:

Պարտքերը մեղքից վատթար են: Մեղքերի համար կապաշխարես, և Աստված կների, իսկ պարտքերը կկեղեքեն ոչ միայն այս, այլև հանդերձյալ կյանքում, որոնցից Աստված մեզ ազատի (Հոգեշահ գրքերից):

31. Ով տանջանքները չի մտաբերում, տանջանքից չի խուսափի (Հոգեշահ գրքերից):

32. Եթե որևէ բարի և օգտակար գործ ենք ձեռնարկում առանց Տիրոջից շնորհ և օգնություն հայցելու, ապա թեև մեր գործերը ինքնըստինքյան սուրբ լինեն, միևնույն է, նրանց վերջը կլինի տխուր և նույնիսկ մեղսալի (Հոգեշահ գրքերից):

Իր հանցանքները ծածկողը հաջողություն չի գտնի, բայց խոստովանողը և մեկ կողմ նետողը ողորմություն կգտնի (Առակ. 28:13):

33. Ես գիտությունը չեմ մերժում. մերժում եմ միայն այն, երբ մարդիկ առանց Աստծո իմաստասիրել են ուզում (Խրիմյան Հայրիկ):

34. Նա, ով քահանային է պատվում՝ Աստծուն փառավորած ու պատված կլինի, իսկ ով արհամարհում է նրան, Աստծուն արհա-

մարհած կլինի (Հովհան Մանդակունի):

35. Մեծ հերձված և անբժշկելի չարիք է տգետ առաջնորդը, որովհետև մարդիկ ավելի օրինակին են նայում, քան ճշմարտությանը (Եզնիկ Կողբացի):

36. Անասունի միս չեն ուտում, իսկ եղբորինն ագահաբար են ուտում, գինի չեն խմում, իսկ հոգիներս արյունով են շաղախում: Ամուսնացածներին արհամարհում են, բայց պոռնկանում են պիղծ խորհուրդներով: Զգեստների վատն են հագնում, իսկ ագահությունից այրվում են: Այդպիսիներից փախչել է պետք ու չհարաբերվել հետները (Եզնիկ Կողբացի):

37. Նախանձ մարդն եթե ուրախանում է քո ձախորդությունների վրա, դա թող քեզ չտրտմեցնի, որովհետև ժամանակ կգա, որ դու կուրախանաս, և նա կտրտմի: Որովհետև ինչ չափով որ չափում է մեկը, նրանով էլ կչափվի նրան (Պողոս Պատրիարք):

38. Աստվածսիրությունը Գրքից է ծնվում մարդու մեջ: Աղոթքների և արտասուքների, պահքի և ողորմության, խոնարհության ու սիրո հանդեպ սերը Գրքից է ծագում մարդկանց մտքում: Արիության և համբերության, հուսո և երկյուղի և բոլոր բարեգործությունների պատճառը մեզանում Սուրբ Գիրքն է լինում՝ մաքուր մտքով կարդալիս (Խոսրով Անձևացի):

39. Հարց. -Ներիր ինձ, աբբա, Հայրերն ասում են, որ պիտի անտեսել մարմինը, բայց և ասում են, որ պետք է կառավարել այն մտածված, ուստի, խնդրում եմ, բացատրիր այս երկուսի միջև եղած զանազանությունը:

Պատ. -Առաքյալը մեզ բացատրում է հետաքրքրող հարցդ: Նա ասում է. ,Մարմնին խնամք մի տարեք՝ ցանկությունները գոհացնելու համարե (Հռոմ. 13:14), և դարձյալ ասում. ,Որովհետև ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում և խնամում է այնե (Եփես. 5:29): Եվ ասպես, եթե տեսնում ես, որ բուռն ցանկություն է արթնանում քո մեջ, այդ ժամանակ ատիր մարմինդ: Եթե տեսնես, որ մարմինդ հիվանդացել ու տառապում է, այդ դեպքում ջերմացրու և սնիր այն՝ Աստծու երկյուղով, որպեսզի հոգևոր ծառայություն կատարելիս քեզ ծառայի (Բարսիլիսկոս Մեծ):

40. Հարց. -Եթե որևէ մեկը ծառայության ժամանակ մտնի

եկեղեցի և դուրս գա նախքան ավարտը, մի՞թե մեղք չէ:

Պատ. -Կատարյալ և աստվածահաճո գործն այն է, երբ եկեղեցի մտնողը լսի Գրվածքները և ծառայության մեջ գտնվի մինչև ավարտը. քանզի առանց հարգելի պատճառի խորհուրդ չի տրվում ծառայության կեսից դուրս գալ, որովհետև դա անարգանք է համարվում: Իսկ եթե կարիք է զգացվում, ապա դա ներելի է: Սակայն այս դեպքում մարդը չպետք է ինքն իրեն արդարացնի, այլ պետք է ներում հայցի Աստծուց՝ ասելով. ,Տեր Աստված, ողորմիր, հարկ եղածը չկատարեցիե (Բարսիլիսկոս Մեծ):

41. Հարց. -Եթե անհարժեշտություն զգացվի սեփական կարիքների կամ հայրերին հանդիպելու համար դուրս գալ, արդյոք խիղճս չի՞ ծանրանա, որ եկեղեցական ծառայության չեմ գնացել:

Պատ. -Եթե դու ստիպված ես տանից դուրս գալ քո կարիքների համար կամ հայրերի պատվերով, աշխատիր քո գործն Աստծու երկյուղով անել, և թող ծառայության չմասնակցելու պատճառով առաջացած կասկածը քեզ չանհանգստացնի, այլ վերադարձիր քո կացարանը և այնտեղ հիշիր քո մեղքերը: Իսկ եթե դուրս ես գալու տանից՝ ցրվելու կամ ծուլության պատճառով, ապա ավելի օգտակար է այցելել եկեղեցական հավաքի, և ոչ թե մտացրիվ կանգնել, այլ կենտրոնանալ (Բարսիլիսկոս Մեծ):

42. Հարց. -Կարելի՞ է արդյոք եկեղեցում զրուցել:

Պատ. -Բնավ, ոչ ոք եկեղեցում Սուրբ Պատարագի ժամանակ Աստծո տանը չպետք է զրուցի, այլ աղոթի և ջանադրաբար լսի, թե Սուրբ Գիրքն ինչ է պատվիրում անել մեր հոգիների փրկության համար: Իսկ եթե հարկ լինի որևէ բան ասելու, ապա պետք է ասել կարճ, երկյուղածությամբ և վախով, և համարել զրույցը ոչ այլ ինչ, քան անձի դատապարտություն (Բարսիլիսկոս Մեծ):

43. Հարց. -Ներքին մի ձայն ինձ ասում է, որ ես իմ տանից հաճախ դուրս չգամ, բայց այնպես է պատահում, որ շաբաթվա ընթացքում մի քանի անգամ եկեղեցական ծառայություն է լինում. պե՞տք է արդյոք մասնակցել, թե՞ ավելի լավ է տանն աղոթել:

Պատ. -Եթե գիտես, որ տանից դուրս գալը քեզ վնասում է, ապա քեզ համար ավելի լավ է տանից հաճախ դուրս չգալ, անգամ

եկեղեցական ծառայությանը մասնակցելու, այլ ժամանակ առ ժամանակ, քանզի լռակյացությունը մեզ ազատում է բազում չարիքներից (Բարսիլիսկոս Մեծ):

44. Հարց. -Ինձ տանջում է այն միտքը, որ ես չեմ կարող կերակրել իմ տնեցիներին, և դրա հետևանքով թախիծն ինձ տանջում է: Սա ի՞նչ է նշանակում:

Պատ. -Սա մարդկային թախիծ է: Եթե մենք հույսներս Աստծու վրա դնենք, ապա Նա Ինքը մեզ կառաջնորդի՝ համաձայն Իր կամքի: Եվ այսպես. ,Հոգսդ դիր Տիրոջ վրաե (Սաղմ. 54:23), և Նա ի զորու է քեզ և քո տնեցիներին տալու անհրաժեշտ ամեն ինչ՝ առանց վշտի ու ողբի: Ասա Նրան, թող Քո կամքը լինի, և Նա չի թողնի քեզ վշտի և ողբի մեջ անհրաժեշտ ամեն բան կտա: Թող մեզ ողորմի Տերը և Պահպանի Իր աջով: Ամեն (Բարսիլիսկոս Մեծ):

45. Հարց. -Մեղք չի՞ համարվում կիրակի օրով որևէ գործ անել:

Պատ. -Աստծո փառքի համար որևէ բան անելը մեղք չէ, քանզի Առաքյալն ասաց. «Գիշեր-ցերեկ աշխատում էինք՝ ձեզնից որևէ մեկի վրա ծանրություն չլինելու համար» (Ա. Թեսաղ. 2:9), իսկ եթե որևէ բանով զբաղվում ենք՝ ոչ թե հանուն Աստծո, այլ արհամարհելով կիրակին, ստոր վաշխառություն կամ շահասիրություն եք անում՝ մեղք է: Ընդ որում, առհասարակ, օգտակար է կիրակի, Տերունական, Սուրբ առաքյալների հիշատակի օրերին կտրվել գործերից և եկեղեցի գնալ: Սուրբ Առաքյալների ուսմունքն էլ այս է պատվիրում (Բարսիլիսկոս Մեծ):

46. Հարց. -Եթե հրեան կամ հեթանոսն ինձ կանչեն իրենց տոնական ճաշկերույթին, կամ էլ ընծաներ ուղարկեն, ընդունե՞լ դրանք, թե՞՝ ոչ:

Պատ. -Մի ընդունիր, որովհետև սուրբ եկեղեցուն հակադիր է, և պետք էլ չէ նրանց հյուր գնալ (Բարսիլիսկոս Մեծ):

47. Հարց. -Այլահավատ մարդկանցից ոմանք առևտրականներ են և իրենց տոներին ապրանքներ են վաճառում: Վայե՞լ է, արդյոք, մեր կարիքները հոգալու համար գնումներ կատարել նրանցից:

Պատ. -Անվայել չէ, որովհետև Առաքյալն ասում է. «Պետք է գնել և խղճմտանքի պատճառով խտրություն չդնել» (Ա Կորնթ. 10: 25) (Բարսիլիսկոս Մեծ):

48. Հարց. -Եթե որևէ գործ անելու հարցում կասկածներ ունեմ, արժե՞ այդ գործը ձեռնարկել: Ասա, ինչպե՞ս վարվել:

Պատ. -Եթե քեզ որևէ գործ պատահի, երեք անգամ աղոթիր դրա համար Աստծուն, խնդրիր Նրան, որպեսզի Նրա կամքից չշեղվես: Եթե հնարավորություն չկա հայրերին հարցնելու, բայց աղոթքից հետո էլ միտքդ հոգում է անել այդ գործը, ապա կատարիր, քանի որ ակնհայտորեն այդ դիտավորությունն Աստծուց է, այլ ոչ թե քեզանից (Բարսիլիսկոս Մեծ):

49. Հարց. -Կարո՞ղ եմ ես հետաքրքրվել Սուրբ Հաղորդության Աստվածային Խորհուրդներով, և մերձենալով դրանց, արդյո՞ք որպես մեղավոր և անարժան մեկը չեմ դատապարտվում:

Պատ. -Սուրբ տաճարում Քրիստոսի Մարմնին ու Արյանը հաղորդվելու եկող մարդը, հաղորդություն ստանալով, պետք է կենտրոնանա և անվերապահորեն հավատա Խորհրդի ճշմարտությանը: Իսկ թե ինչպե՞ս է դա լինում, հետաքրքրասիրություն հանդես մի բեր, համաձայն խոսքի. ,Առեք, կերեք, այս է Իմ մարմինը (Մատթ. 26:26, Մարկ. 14:22): Հույս ունենք, որ ով հավատում է, չպիտի դատապարտվի, իսկ ով չի հավատում, արդեն դատապարտված է: Եվ այսպես, քեզ մեղավոր համարիր և հիվանդ և այդպես գնա կործանվողին փրկող Ամենակարողի առաջ (Մարկ.18:11, Ղուկ. 19:10) (Բարսիլիսկոս Մեծ):

50. Ի՞նչն է մարդու հոգուց հանում Աստծո մասին հիշողությունը՝ բարկությունը, արհամարհանքը, սովորեցնելու մարմաջը և այս աշխարհի դատարկաբանությունը: Իսկ երկայնամտությունը, հեզությունը և ամեն Աստծո գործ իր կողմն է գրավում Աստծո սերը (Հայր Հերոնտիոս):

51. Ընկնելով մի՛ հառաչիր, առաջադիմելով մի հպարտացիր (Ներոս Սինայեցի):

52. Խնայեցե՛ք իրար և մի՛ ատեք իրար: Մի նախանձեք, ոխ մի՛ պահեք, մի՛ մատնեք, մի՛ զրկեք, մի՛ չարախոսեք, մի՛ անարգեք, խռով մի՛ մնացեք, մի՛ խփեք, անողորմ մի՛ եղեք, մանր բաների համար ու փոքր բաների պատճառով մի՛ վիճեք, մի՛ կռվեք և մի՛ հակառակվեք, որովհետև ամեն դատարկ, զուր և անիրավ բանի

համար հաշիվ պիտի տանք դատաստանի օրը (Հովհաննես Երզնկացի):

53. Խոստովանության ժամանակ պետք չէ աշխատել, որպեսզի արցունքներ հայտնվեն. ասա այն, ինչ որ կա խղճիդ վրա և ոչինչ ավելի (Հոգեշահ գրականություն):

54. Չկա այնպիսի պատվիրան, որն ուրիշներից պահանջի սեր և շտկված կյանք (Հոգեշահ գրականություն):

55. Դուք երեխաներ չունեք և ուզում եք ունենալ: Դա բնական է: Բայց երբեմն դա ոչ թե ուրախության պատճառ է լինում, այլ մեծ սուգի և տրտմության: Ապավինենք Տիրոջ կամքին՝ «Տեր, Դու գիտես մեր կարիքները մեր խնդրելուց առաջ: Օրհնի՛ր Քո կամոք այն ամենը, որ մեր հոգու շահն է» (Հոգեշահ գրականություն):

56. Աստծուն մի պատկերացրու որպես ահեղ պատժողի. Նա շատ ողորմած է (Հոգեշահ գրականությունից):

57. Վարժեցրո՛ւ անձդ մահվան հիշողության և աղոթիր Աստծուն, որպեսզի Նա տա մահվան հիշողությունը (Հոգեշահ գրականություն):

Վերքերի նշանները ու փորի շտեմարանը հասնող հարվածները չարության դեմ մաքրողական դեղեր են (Առակ 20:30):

58. Աչքերիդ սանձ դիր, որ ամեն կողմ չնայի (Հովհան Ոսկեբերան):

59. Հարց. -Արդյո՞ք պետք է բժշկություն ընդունել:

Պատ. -Եղբայր, նրանք, ովքեր բժշկի են դիմում, և նրանք, ովքեր չեն դիմում, երկու դեպքում էլ հույսն Աստծու վրա են դնում: Ովքեր դիմում են բժշկի, հանուն Տեր Աստծու, իրենց հանձնում են բժիշկներին, և բժշկի ձեռքով թող Աստված իրենց բժշկի: Իսկ նրանք, ովքեր բժիշկներին չեն դիմում՝ ապավինելով Աստծուն, Աստված էլ բժշկություն է տալիս նրանց: Այսպիսով, եթե դու բժիշկներին դիմես՝ մեղք չես գործի, իսկ եթե առանց բժշկության ապաքինվես՝ մի գոռոզացիր: (Բարսիլիսկոս Մեծ):

60. Հիվանդությունները մեզ ուղարկվում են Աստծո կողմից՝ մեր մեղքերի համար... Պետք չէ այդպես մտածել, Տիրոջ ճամփաները

անքննելի են, և մեր սահմանափակ միտքը ամեն բան չէ, որ կարող է ըմբռնել (Հոգեշահ գրականություն):

61. Ծանր հիվանդների վրա դևն ավելի ուժգնորեն է հարձակվում, գիտենալով, որ քիչ ժամանակ է մնացել (Հոգեշահ գրականություն):

62. Երբ մարմնի առողջություն ենք խնդրում և գերությունից կամ չար տերերից՝ ազատություն, ապա խնդրում ենք, որպեսզի առողջությամբ բարի՛ն գործենք, Տիրոջը ծառայենք, պահք պահենք և աղոթենք: Իսկ երկար ապրելու համար մարմնի առողջություն և հեշտություն խնդրելը հեթանոսների սովորություն է, որոնք ավելորդն են խնդրում (Գրիգոր Տաթևացի):

63. Երբեմն հիվանդությունն ուղարկվում է մեղքերից մաքրվելու համար, երբեմն էլ՝ խոնարհեցնելու նրան, ով մեծամտացել է (Հովհաննես Սանդուղք):

64. Հարց. -Եթե ես կորցնեմ որևէ իր, և մեղադրանքից վախենալով, չեմ դատապարտում նրան, ում կասկածում եմ, որ վերցրել է: Սակայն կասկածը կրծում է սիրտս. արդյո՞ք անպարկեշտ է իմանալ, իրո՞ք նա չի վերցրել, քանզի չեմ հարմարվում կորցնելու մտքի հետ:

Պատ. -Որպեսզի իմանաս, արդյո՞ք նրա մոտ է քո իրը, ամոթ չէ հարցնելը: Իսկ եթե պարզվի, որ քո իրը նրա մոտ է, ապա մի փորձիր ամաչեցնել նրան, գոհացիր նրանով, որ իրդ գտար (Բարսիլիսկոս Մեծ):

65. Երբ մենք հիվանդանում ենք, կատարելագործվում են մեր առաքինությունները, իսկ հավատը փորձությունների մեջ հաստատ մնալով՝ արժանացնում է պսակի: Հենց սա է մեր և այն մարդկանց միջև եղած տարբերությունը, որոնք չեն ճանաչում Աստծուն և չարչարվելիս բողոքում են ու տրտնջում (Կիպրիանոս Կարթագենացի):

66. Պահեցիր և սեփականացրեցիր գտած իրդ: Սրբերը չէին վերցնում անգամ սիսեռի հատիկը, որ ընկած էր ճանապարհին: Չես դրել, ուրեմն քոնը չի: Գտա՞ր, աշխատիր գտնել կորցնողին, իսկ եթե չգտար, բաժանիր աղքատներին («Խոստովանություն» գրքից):

67. Միգուցե գնե՞լ եք ինչ-որ մեկից գողացված բան: Հիշեցե՛ք, գողացվածը գնելով՝ դուք դառնում եք այդ հանցագործության մասնակից: Երբեք մի՛ մտցրեք ձեր տուն այդ ճանապարհով ձեռք բերված ապրանքներ («Խոստովանություն» գրքից):

68. Արդյոք դուք գողացե՞լ եք պետությունից էլեկտրաէներգիա՝ բանեցնելով ամենատարբեր հնարքներ: Սա խայտառակություն է քրիստոնյայի համար: Այսօրվանից դադարեցրեք այդ ամոթալի արարքով կեղտոտել ձեր խղճմտանքը (Հոգեշահ գրականություն):

69. Մարդկային սիրտը չի կարող առանց հաճույքի մնալ: Եթե նա հոգևոր առաքինությունների մեջ այն չգտնի, ապա զգայական հաճույքների մեջ պիտի փնտրի այն (Գրիգոր Մեծ):

70. Խաչից ու Հիսուսի անունը տալուց դևերը փախուստի են մատնվում, կախարդությունները դադարում են, թույնը կորցնում է ուժը, և մարդիկ խուսափում են խաբեությունից (Աթանաս Մեծ):

71. Մեր սիրո չափի համաձայն էլ Աստված մեր պարտքերն է կրճատում (Մաղաքիա Օրմանյան):

72. Եթե մարմնավոր սերն այնքան է գերում հոգին, որ ամեն ինչից հեռացնելով կապում է սիրելիին, ապա ինչեր չի անի Քրիստոսի հանդեպ սերը ու Նրանից բաժանվելու երկյուղը (Հովհան Ոսկեբերան):

73. Ինչ-որ մեկը կասի, որ միշտ խորհում է Աստծու մասին: Իսկ ինչի՞ մասին պիտի խորհենք, եթե ոչ Աստծո: Չէ՞ որ Նա ստեղծել է մեզ, որպեսզի մենք հավիտյան Իր հետ ապրենք և տեսնենք Նրա փառքը: Ով ինչ սիրում է, նրա մասին էլ խոսել է ուզում, իսկ հետո ձևավորվում է սովորություն: Սովորում ես Աստծո մասին մտածել, այսպես էլ կսկսես Նրան միշտ հոգուդ մեջ կրել, սովորում ես աշխարհի մտածումներին՝ այդպես էլ միշտ մտքով նրա հետ կլինես: Սովորում ես մտածել Տիրոջ չարչարանքների մասին, հավիտենական հրի մասին, այդպես էլ կհաստատվի քո մեջ: Բարու մեջ Աստված է օգնական, իսկ չարի՝ թշնամիները: Շատ բան կախված է նաև մեր կամքից: Պետք է ինքներս մեզ ստիպենք բարին գործել, բայց չափավոր (Հայր Սիլուան):

74. Երանելի է նա, ով կենդանիներին է խղճում (Մակար Մեծ):

75.Աստծո ամենամեծ պատիժը հայր Լոնգինը համարում էր չար կնոջը, որ զենք դառնալով սատանայի ձեռքում և իրեն է կործանում, և ամուսնուն է իր հետ քաշում դեպի կորուստ («Հոգևոր պատերազմ» գրքից):

76. Եթե ունեցածդ նախանձահարույց է, թաքցրու նախանձոտներից (Ներսես Սինայեցի):

77. Զգուշացի՛ր մանրուքներից, որ հանկարծ հանցանք չգործես, և մի՛ արհամարհիր փոքր բաները, որպեսզի ծանր մեղքերի մեջ չընկնես (Հայր Սրապիոն):

78. Եթե չես ուզում չարչարվել, մի ցանկացիր չարություն անել, որովհետև առաջինը կրնկակոխ հետևում է վերջինին: Ով ինչ ցանում է, այն էլ հնձում է (Աբբա Իսիքիա):

79. Առանձնությունը իմաստնության ուսուցիչն է, առանձնացումը երկրային դրախտն է երկրի վրա (Հոգեշահ գրքերից):

80. Առանձնությունը սեր է բորբոքում Աստծո հանդեպ (Հոգեշահ գրքերից):

81. Զրպարտողի հետ մի համաձայնիր, նրա չարախոսությամբ մի տարվիր, բայց և ատելություն մի տածիր նրա հանդեպ, ով իր մերձավորին է անարգում (Ամբրոսիոս Անապատական):

82. Եթե տկարության պատճառով նստես եկեղեցում կամ կարիքի պատճառով դուրս գաս, ապա հանդիմանիր և քեզ համարիր որպես անարժան մեկը («Հոգևոր պատերազմ»):

83. Երբ կարդում ենք սուրբ հայրերի գրվածքները, մեզ հետ զրուցում են սրբերը՝ իրենց գրվածքներով խրատելով մեզ (Հոգեշահ գրքերից):

84. Հյուրընկալության և բարեպաշտության շնորհիվ Ղովտն անվնաս դուրս եկավ Սոդոմից, մինչ շրջակա երկիրը պատժվեց հրով ու ծծմբով: Հավատքի և հյուրընկալության համար փրկվեց պոռնիկ Ռախաբը (Կղեմես Հռովմեացի):

85. Նախանձն ու խռովությունը ոչնչացրել են մեծ քաղաքներ և բնաջնջել են հզոր ժողովուրդների (Կղեմես Հռովմեացի):

86. Առհասարակ բոլոր հավատացյալներիդ այս պատվիրանն էլ ենք տալիս, որ ձեր մանուկներին Աստծո երկյուղո՛վ սնուցեք՝ խրատելով նրանց, որ մանուկ տարիքից լինեն աստվածասեր, ողորմած և

աղոթասեր: Աղո՛թք սովորեցրեք նրանց և սաստեցե՛ք, որ աղտոտ խոսքեր և հայհոյանքներ չսովորեն, քանզի մանուկ հասակում ծնողների խրատը ավելի անջնջելի հիշողությամբ է դրոշմվում մանուկների մտքում, դրա փոխարեն բարիքների վարձքը պիտի ընդունեք Տիրոջից (Ներսես Շնորհալի):

87. Թող որևէ մեկը սատանայական կախարդության ու աղանդավոր դեղատվության չհետևի. եթե այլ մեղքերը վնասում են հավատքի գործերին, ապա սա՝ հավատքին, քանզի կախարդությունը սատանայից է: Եթե մեկը նախ Աստծուց չհեռանա և իրեն սատանայի պաշտոնյա և երկրպագու չանի, չեն հաջողվի կախարդությունները: Հետևաբար, աղաչում ենք՝ հեռացե՛ք այդպիսի մեծ և անհերելի չարիքներից, որպեսզի սատանայի հետ գեհենի հրին չդատապարտվեք, քանզի սա կռապաշտների՛ գործն է և ոչ՝ քրիստոնյաների, և Քրիստոս Իր գալստյամբ վերացրեց կուռքերի մոլորությունները ու սատանայի չար գործերը:

Արդ, թող ոչ ոք վերստին գործակից չլինի սատանային՝ կախարդության չար գործերով, և նրա հետ գեհենի հրում հավիտյան չայրվի (Ներսես Շնորհալի):

88. Ըստ կարգի խոսենք նաև զինվորներիդ դասերի մասին, որ իշխանությունների ու պետությունների եք ենթակա: Նախ և առաջ ձեզ հիշեցնում ենք առաքելական խոսքը, որ պատվիրում է ամեն ինչում հնազանդվել ձեր տերերին. «Ցուցադրաբար մի՛ ծառայեք որպես մարդահաճներ, այլ՝ սրտի միամտությամբ՝ որպես Աստծուն» (Եփես. 6:6): Եթե ձեր տերերը ձեզ որևէ գործի վերակացու կարգեն կամ որևէ բան տնօրինելու ուղարկեն, արդարությամբ և իրավունքո՛վ վարվեք հպատակների հետ, անխղճորեն և անիրավաբար որևէ մեկին մի՛ նեղեք, անկարեկից հոգով մի՛ զրպարտեք որևէ մեկին՝ դահիճների օրենքով հանդես գալով նրանց առաջ, և ձեզ հրամայվածից ավելի մի վերցրեք՝ ըստ սուրբ Մկրտչի խրատի (Ղուկ.3:13): Ողորմությամբ և սիրով վարվեք բոլորի հետ, որպեսզի դուք և՛ս ողորմություն գտնեք Աստծուց (Ներսես Շնորհալի):

89. Զինվորությունը պատճառ թող չլինի, որ արհամարհեք Աստծո պատվիրանները, քանզի ամեն ժամ թշնամիների սրի դեմ եք պատերազմում: Բացի ընդհանուր պատերազմի մեջ գործված սպանություններից, որոնք թագավորների հրամանով են լինում, ձեր բոլոր գործածների համար Աստված ծանր և անաչառ դատաստանով հաշիվ պիտի պահանջի ձեզանից: Զենքերից ավելի հավատքի՛ զենքերով սպառազինվեցեք, այսինքն՝ աստվածպաշտությամբ, արդարությամբ, սրբությամբ, պահքով և ողորմությամբ, որպեսզի պատերազմում Աստված լինի ախոյանը ձեր թշնամիների և հալածի նրանց ձեր առջևից (Ներսես Շնորհալի):

90. Պատվիրում ենք նաև քաղաքացիներիդ, առևտրականներիդ և արհեստավորներիդ, որ ուղիղ և անարատ կենցաղվարությամբ վարեք ձեր կյանքը: Թող որևէ մեկը խաբեությամբ և նենգությամբ իր ապրանքները չվաճառի անմեղ գնողներին, և մանավանդ, չխաբի ռամիկին ու տգետին՝ ստախոսությամբ և սուտ երդմամբ, քանզի Դատաստանի Օրը այդպիսին պիտի դատվի գողերի և հափշտակողների հետ, և Աստված, վերցնելով Իր բարեգործությունը, պիտի տա նրանից զրկվածներին (Ներսես Շնորհալի):

91. Մի՛ հարբեք գինով, որում զեխություն և հիմարություն կա, որ մայրն է պոռնկության, ամեն տեսակ պղծությունների, անիրավության, վեճի, անարգալից աղտոտ խոսքերի, որից լինում են նաև սպանություններ, որպեսզի, ըստ առաքելական խոսքի, մարդասպանների և չարագործների հետ չարտաքսվեք Աստծո արքայության ժառանգությունից (Գաղ. 5:20-21) (Ներսես Շնորհալի):

92. Եկեղեցու մեջ ոչ մի մեղքի համար այնքան անեծքներ չեն լինում, որքան՝ գողության: Եվ թող ոչ ոք մեղքերի կարգում սա փոքր չհամարի, քանզի քարեղեն տախտակների վրա Աստծու մատով գրված օրենքների մեջ սպանությունից, շնությունից հետո, երրորդը սա է կարգված: Թող ոչ ոք չկարծի, թե միայն մեծ բաների հափշտակությունն է գողություն համարվում, իսկ փոքրերը՝ ոչ (Ներսես Շնորհալի):

93. Իմացեք, որ եթե գողը, զրկողը ու հափշտակողն ամեն մի դրամի փոխարեն մի ոչխար միս մատաղ անեն, անօգուտ է. միայն այն ժամանակ թողություն կգտնեն, երբ գողացվածը տիրոջը վերադարձնեն և իրենք ետ դառնան մեղքերից ու ապաշխարեն: Այլապես կզրկվեն Արքայությունից և դժոխք կմտնեն: Գողություն է համարվում նաև այն, որ երբ մեկը բան է գտնում և չի վերադարձնում տի-

րոջը, երբ տերը հայտնվում է (Հովհաննես Երզնկացի):

94. Ոչ ոք իրեն իրավունք չհամարի կա՛մ գողացվածը սեփական աշխատանքի վարձք անվանել և կա՛մ որևէ սուտ պատճառաբանություն հորինելով, ինքն իրեն անպատիժ համարել Աստծո դատաստանից: Այսպիսին թող զգաստանա նախկին՝ Անանիայի և Սափիրայի օրինակից (Ներսես Շնորհալի):

95. Ինչպե՞ս կարող ենք առաջնորդ լինել այնպիսիներին, որոնք չեն կամենում առաջնորդի հետքերով դեպի երկինք տանողհասցնող արքունական ճանապարհով ընթանալ, այլ գնում են լայն և ընդարձակ պողոտայով, որ դժոխքի հատակն է տանում (Ներսես Շնորհալի):

96. Բարու հակառակ չարն՝ այսինքն սատանայի, սերմանած մեղքերը պետք է ատել և հեռանալ՝ ըստ Դավթի, թե՝ «Մեղքերն ատեցի և անարգեցի և Քո օրենքները սիրեցի» (Սաղմ.119:163): Նաև հարկ է ատել չարասերներին ու չզղջացողներին և հեռանալ նրանցից, որոնցից Տերն է պատվիրում հրաժարվել և նրանց համարել հեթանոս ու մաքսավոր, որոնք բազում անգամ խրատվելուց հետո ևս դարձի չեն գալիս (Մատթ. 18:15) (Ներսես Շնորհալի):

97. Սիրեցեք եկեղեցին և սիրվեցեք եկեղեցուց: Եկեղեցին քաղցրացրեց թագավորներին, գազաններին ընտելացրեց, գայլերին գառներ դարձրեց, ձեզ պայծառացրեց, ճշմարտության թշնամիներին ամաչեցրեց (Հովհան Մանդակունի):

98. Եկեղեցու սուրբ քահանաների ձեռնադրության պատիվը մարդկանցից չէ, այլ Սուրբ Հոգուց առաջացած շնորհից, այդպես և սրանց բոլոր առողջ խորհուրդներն են, որ լսողին դարձնում են դեպի երկինք (Վարդան Մամիկոնյան):

99. Իրենց երեխաներին ինչպես հարկն է չդաստիարակող ծնողները, նրանց ծնում են այս ժամանակավոր կյանքի համար և բացում են նրանց առջև հավիտենական մահվան դռները (Հերոնիմոս Երանելի):

100. Վախկոտությունը հանկարծահաս դժբախտության սպասումով շեղում է հավատից: Դա նաև հաստատուն հույսից զուրկ լինելն է (Հովհաննես Սանդուղք):

101. Վախկոտները փառասերներն են, բայց ոչ բոլոր անվախներն են, որ խոնարհամիտ են (Հովհաննես Սանդուղք):

102. Հարկավոր է սիրել ծնողներին, բայց գերադասել Փրկչին (Օգոստինոս Երանելի):

103. Բազում պատճառներով ծնողները պատվի են արժանի: Նախ, որ Աստծո պատկերն են և խորհրդավորաբար Աստծուն տրվելիք պատվին են արժանի՝ որպես ծնող: Երկրորդ, քանի որ գործիք են Աստծո պատկերը մեր վրա ձևավորելու համար, որովհետև առանց ծնողների Աստված ոչ հոգի է ստեղծում և ոչ էլ մարդ կազմավորում որովայնի մեջ (Գրիգոր Տաթևացի):

104. Դուք ձեր զավակներին այնպես օրհնեցեք, որ նրանք երկնային իմաստությունը ճանաչեն ու բարձր համարեն ու աշխարհիս շնչավոր իմաստության վրա չպարծենան (Խրիմյան Հայրիկ):

105. Դուք ձեր զավակներին օրհնեցեք այնպես, որ նրանք հայրենատուր սուրբ կրոնը, հավատը, սուրբ ավանդություններն անարատ ու անեղծ պահեն, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին սիրեն, Թադեոսի, Բարդուղիմեոսի և Լուսավորիչ հոր հոտից ու փարախից չբաժանվեն: Օրհնեցեք, որ նրանք Ավետարանը գրկեն և սովորեն նրա սիրո դասերը, եղբորը սիրեն, ընկերոջը սիրեն ու մարդասեր լինեն (Խրիմյան Հայրիկ):

106. Նրանք, ովքեր սովորաբար սուտ կամ ճիշտ՝ փողոցների ու հրապարակների վրա Աստծո ահավոր անունը զուր տեղը իրենց բերանն են առնում մեծ, սաստիկ ու դառը պատիժ պիտի կրեն Աստծուց արդար դատաստանի օրը, եթե ետ չդառնան այդ չար սովորությունից (Հովհաննես Երզնկացի):

107. Բոլոր ստախոսները, եթե ետ չդառնան ու չապաշխարեն, սատանայի հետ կորստի պիտի մատնվեն, համաձայն այն խոսքի, թե. «Տերը կկործանի բոլոր ստախոսներին» (Սաղմ. 5:7): Ճշմարտախոս բերանը Սուրբ Հոգու դուռն է, իսկ ստախոս բերանը դժոխքի դուռն է և դևերի մուտքը: Հետևաբար, ձեր բերանը ճշմարտության վարժեցրեք, որպեսզի Սուրբ Հոգին ձեր մեջ բնակվի (Հովհաննես Երզնկացի):

108. Կիրակին Տերունական օր է կոչվում, որովհետև Աստծու բաժինն է և մեր հոգու փրկության օրը. հրաման չկա մարմնական որևէ գործ անելու և խոսելու, այլապես անեծքի դատապարտության կենթարկվենք: Ոմանք կիրակի օրերը թեև չեն աշխատում, սակայն արբենալով ու ծաղրելով են մեղանչում, ինչը որ ավելի մեծ չարիք է, քան աշխատելը, և աններելի մեղք է (Հովհաննես Երզնկացի):

109. Քրիստոնյան չպետք է կնունքի կամ հարսանիքի ժամանակ պարի ու երգի, ինչպես անում են դևերի մեհյաններում՝ ամոթն ու պարկեշտությունը մոռացածները (Հովհաննես Երզնկացի):

110. Հայհոյողները փակում են Աստծո ողորմության դուռը, թույլ չեն տալիս Արարչին ողորմած աչքով իր արարածներին նայի և արգելում են սրբերին աշխարհի համար բարեխոսելու (Հովհաննես Երզնկացի):

111. Երանի հայհոյողի ականջը կտրեին և բերանին կարեին, որ լսեր, թե ինչ է խոսում: Իսկապես, եթե հայհոյողը լսեր իր հիշոցները, ամոթից կփակեր իր բերանը: Լավ է բերանը համր և մաքուր լինի, քան խոսող և անմաքուր (Պողոս Պատրիարք):

112. Մենք հավատում ենք ամենատարբեր նշանների և ասում ենք, թե չի կարելի դրանց չհավատալ, որովհետև դրանք կատարվում են: « Իսկ դու մի՛ հավատա, և դրանք չեն կատարվի» (Պողոս Պատրիարք):

113. Աստծու համար ատելի են դևերը, և քանի որ կախարդները (մոմ թափողներ, սուրճի բաժակ նայողներ, օկուլտիստներ, գրբացներ, բախտագուշակներ, էքստրասենսներ և այլն) բարեկամացել են դևերի հետ, ուրեմն ատելի են Աստծու համար նաև նրանք: Նաև խորշելի են դառնում նրանք, ովքեր գնում են կախարդների մոտ, բժշկության կամ այլ մարմնավոր օգուտի ակնկալիքով, քանի որ մերձենում են դիվական կախարդությանը, դրանով իսկ թշնամանալով Աստծո հետ: Այսպիսով, արժանի են դատապարտության թե կախարդները, և թե նրանց հետևողները (Պողոս Պատրիարք):

114. Կախարդները կռապաշտներից վատթար են, քանի որ գիտեն Աստծուն և ոչ թե Նրան, այլ դևերին են ապավինում՝ խնկարկելով և պաշտոն մատուցելով նրանց (Պողոս Պատրիարք):

115. Եթե ծանր հիվանդանում ես, շատերը քեզ համոզում են գնալ կախարդների մոտ: Դու քո հույսը դիր Աստծո վրա, համբերիր, իմացիր, որ այդ չարչարանքները, որ կրում ես՝ փառաց պսակի են արժանացնում և ազատում են գալիք տանջանքներից:

Եթե մենք քրիստոնյաներ ենք, ուրեմն, հնազանդվենք Քրիստոսին և չգնանք Աստծո թշնամիների մոտ, քանի որ նրանք հակառակ են Աստծուն: Ավելի լավ է մահանալ, քան թե գնալ Աստծո թշնամիների մոտ: Ի՞նչ օգուտ մարմինը բժշկելուց, եթե հոգին պետք է կործանվի, ի՞նչ շահ դրանից, այստեղ ընդունել մի փոքր մխիթարություն, իսկ այնտեղ դևերի հետ տանջվել հավիտենական կրակների մեջ (Հովհան Ոսկեբերան):

116. Հաղորդություն ստանալով մեր մարմինը շփվում է Քրիստոսի մարմնի հետ, և միանալով անմահությանը, անմահ է դառնում (Գրիգոր Նյուսացի):

117. Դուք պարտավոր էիք չմոռանալ ձեր սուրբ հայրերի՝ ձեր խրատիչների ճիգն ու ջանքը, որոնք շարունակ տքնում էին ձեր հոգիների փրկության համար: Դուք պետք է սեր ունենայիք նրանց նկատմամբ, որոնք Աստծո խոսքն ուսուցանելով՝ ձեզ հոգեպես երկնեցին և նորից ծնեցին (Դանիել Մեծ Քորեպիսկոպոս):

118. Ամփոփելով մեր խոսքը, այս ենք ասում. թող ձեր խորհուրդները, խոսքերն ու գործերը, հոգու և մարմնի ամեն շարժում պարկեշտ և աստվածավայել լինեն, որպեսզի Աստծո անվանը ... հայհոյանքի և պարսավանքի պատճառ չլինեն, այլ տեսնողների և լսողների գովասանքի և փառավորման առիթ տան: Որպեսզի ձեզանից ոչ մեկը հին Իսրայելի պես չլսի Աստծո մարգարեից, թե՝ «Իմ անունը ձեր պատճառով հայհոյվում է հեթանոսների մեջ» (Ես. 52:5): Այլ մանավանդ, պայծառ առաքինությամբ արժանի լինենք լսելու տերունական խոսքը՝ ուղղված Իր աշակերտներին. «Թող ձեր լույսն այսպես լուսավորի մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. 5:16):

Եվ ի Փառս Աստծո, թող ավարտվի աշակերտող եղբայրներիդ ուղղված մեր այս համառոտ խոսքը (Ներսես Շնորհալի):

Հայրերի վարքից

1. Միրոգեն անունով մի ծեր այնպիսի խստակյաց կյանքով էր ապրում, որ երբ հիվանդացավ ջրգողությամբ, մյուս ծերերը գալիս էին նրան բժշկելու: Նա միշտ ասում էր բոլորին. «Հայրեր, աղոթեցե՛ք ինձ համար, որպեսզի իմ ներքին մարդը նման հիվանդության չենթարկվի, իսկ ինչ մնում է ներկայիս հիվանդությանը, ես Աստծուն խնդրում եմ, որ միանգամից ինձ չազատի դրանից» (Հարանց Վարք):

2. Երբ դեռ Նիտրական լեռան վրա էր ապրում հայր Ամոնը, պատմում են, որ նրա մոտ բերեցին շղթաներով կապված մի տղայի, որին կատաղի շուն էր կծել: Անտանելի ցավերի մեջ տղան կծոտել էր ինքն իրեն: Սուրբ Ամոնը տեսնելով նրա ծնողներին, որոնք եկել էին խնդրելու իրենց որդու համար, ասաց նրանց. «Ինչո՞ւ եք ինձ չարչարում՝ պահանջելով ինձանից այն, ինչ իմ ուժերից վեր է: Բժշկությունը պատրաստ, ձեր ձեռքերում է: Վերադարձրեք այն որբևայրու փողը, որի եզը գաղտնի մորթեցիք, և ձեր տղան կլավանա»: Ահաբեկված այդ մերկացումից, նրանք իսկույն կատարեցին ասվածը: Եվ Հայր Ամոնի աղոթքով տղան բժշկվեց (Հարանց Վարք):

3. Մի ծեր ամեն տարի ծանր հիվանդանում էր, և երբ մի տարի չհիվանդացավ, տխրեց և լալով ասաց. «Մոռացավ ինձ Աստված» (Հարանց վարք):

4. Մի մարդ տղա ունեցավ և այնքան էր սիրում նրան, որ միշտ երես էր տալիս: Իսկ երեխան նման դաստիարակությունից դարձավ սանձարձակ և հայհոյող, և երբ մանուկ հասակում մահամերձ հիվանդացավ, նրա աչքին սկսեցին երևալ խավար և սահմռկեցուցիչ կերպարանքներ: Երեխան սարսափած աղաղակում էր և խնդրում էր հորը, որ քշի դրանց, բայց հայրը ոչինչ չտեսնելով, անելանելի վիճակի մեջ էր ընկել և չէր կարողանում օգնել որդուն: Իսկ տղան՝ վերջին շնչում, հայհոյելով այդ խավար կերպարանքներին, հոգին ավանդեց (Հոգեշահ պատմություններ):

5. Եղբայրներից մեկը յոթը տարի շարունակ աղոթել էր Աստծուն և խնդրել, որ բժշկություններ կատարելու պարգևաշնորհ ստանա, ստանալով այն նա գնում է այցելելու ծերերից մեկին և հայտնում է նրան կատարվածը: Ուրախանալու փոխարեն ծերը մեծապես տխրում է ու

ասում. «Եթե կամենում ես ապրել Քրիստոսի համար, գնա և յոթը տարի շարունակ աղոթիր Աստծուն, որպեսզի ետ վերցնի քեզանից այդ պարգևաշնորհը և այլևս չլսի նման աղոթքներդ»: Եղբայրը վերադառնում է տխուր, որովհետև անօգուտ գործով էր զբաղվել և այդքան ժամանակ կորցրել: Նա հետևում է ծերի խորհրդին: Աղոթում է, մինչև որ պարգևաշնորհը ետ է վերցվում իրենից: Այնժամ ճանաչում է խոնարհության և հոչակավոր չլինելու շնորհը, և փառավորում է Աստծուն: Այսպես հայրերից ոչ մեկն իր աշակերտներից ոչ մեկին երբեք չի քաջալերել Աստծուց խնդրել Սուրբ Հոգու տեսանելի հայտնությունները: Ընդհակառակը, եթե տեղեկանում էին, թե եղբայրներից մեկը նմանօրինակ զգացումներ է սնում, իսկույն ետ էին կանգնեցնում նրան այդ ճանապարհից (Հոգեշահ գրքերից):

6. Երբ սուրբ Եպիփանը հեռացավ Ծոփաց գավառից, իր մենախցից, որ Մամփրե էր կոչվում, այնտեղ թողեց շատ եղբայրներ-միաբաններ, հավատացյալ քրիստոնյա կրոնավորներ, լեռնաբնակ միանձնյա ճգնավորներ և մի քահանայի նրանց վրա գլխավոր նշանակեց: Նրանց մեջ կային այնպիսիք, որ մանկությունից բնավ ուրիշ կերակուր չէին կերել, բացի բանջարեղենից և ջրից: Գինու համն էլ չէին առել, թե ինչպես է:

Նրանց մեջ կար մի խստակրոն եղբայր, որ մութ կյանք էր վարում և բոլորովին հրաժարվում էր ճաշակել հարության հույսի կենարար բաժակից, այսինքն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի արյունից: Որովհետև նա չէր կարող հավատալ, թե երբ այդ գինին սուրբ սեղան է բերվում և քահանայի ձեռքով բաշխվում, իսկապես Աստծո Որդու արյունն է դառնում, այլ կարծում էր, թե լոկ գինի է մնում, այս պատճառով էլ հաճախ վիճում էր շատերի հետ: Օրերից մի օր, երբ գոհության պատարագի խորհուրդն էին կատարում այն վկայարանում, որ շինել էր սուրբ Եպիփանը, և սուրբ հացն ու գինին բերին, պատարագի սեղանի վրա դրին, որպեսզի արյուն դառնա, այդ անհավատ եղբայրն էլ այնտեղ էր գտնվում՝ վկայարանում: Քահանան ելել-կանգնել էր սեղանի առաջ, և նախքան պատարագ մատուցելը՝ ձեռքերը բարձրացնում է սեղանի վրա և ասում.

«Զորությունների Տեր Աստված, որ բոլոր արարածները ոչնչից ստեղծեցիր, մարդուն հողից ստեղծեցիր կենդանի և անապական. մարդիկ Քո պատվիրանը զանց արին և իրենց պատվիրանազանցության

պատճառով մահվան դատապարտվեցին, և Դու արդար դատաստանով նրանց դուրս արիր փափուկ դրախտից այս աշխարհը, որտեղից ստեղծել էիր, և նրանք դատապարտվեցին մահով մեռնելու: Բայց Դու, բարերար Աստված, նրանց ձեռքից չթողիր, այլ Քո Միածին խնամքով ու շնորհով Քո ստեղծածները երկրորդ ծնունդով նորոգեցիր և շատ կերպերով այցելու եղար Քո արարածներին: Մարգարեներ ուղարկեցիր, տեսակ-տեսակ զորություններ ու հրաշքներ գործեցիր Քո սրբերի ձեռքով, որոնք Քեզ հաճելի եղան, օրենքներ տվիր օգնության համար, հրեշտակներ ուղարկեցիր վերակացության համար, իսկ երբ ժամանակների վերջը հասավ, մեզ հետ խոսեցիր Քո Միածին Որդու միջոցով, որի հետ աշխարհն ստեղծեցիր, որ պատկեր է Քո փառքի, կերպարանք է Քո էության, որ կրում է ամեն ինչ զորավոր խոսքով, որ ոչինչ չհափշտակեց Հոր էական բնությունից Իր անձի պատվի համար, այլ հավիտենական Աստված երկրի վրա երևաց, մարդկանց հետ շրջեց, սուրբ Կույսից մարմնացավ, ծառայի կերպարանք առավ և մեր տկարությանը նմանվեց, որպեսզի մեզ նմանակից դարձնի Իր փառքին: Դու մեզ փրկեցիր ամեն տեսակի գայթակղությունից և մոլորությունից, աշխարհից վերցրիք որևէ անհույս թերահավատություն և քո բոլոր արարածներին շնորհեցիր հարության հույս ու հավատ և նմանություն Քո պատկերին և կերպարանքին, և բոլորին առհասարակ կյանք շնորհեցիր այն հավատով, որը զորացրիր մարդկանց մեջ: Այս բոլորը արիր ոչ թե մեր որևէ արդարության համար, որովհետև մենք աշխարհիս վրա ոչ մի բարիք չենք գործել, այլ Քո ողորմության և գթության շնորհիվ, որ մեր վրա սփռեցիր, համարձակվում ենք խնդրել Սրտագետիցդ, որ քննում ես մարդկանց սրտերը ու երիկամունքը: Դու Տեր, որ բոլորի սրտերը գիտես, դու ճանաչում ես այս մարդու ճշմարիտ ճգնությունները, որ խստակյաց կյանք է վարում իր ճգնողական կյանքում, սակայն սրա մեջ պակասում է հավատ, արդ՝ տուր սրան հավատ մի մանանեխի հատիկի չափ, որպեսզի չկորչի: Ո՜վ քաջ Հովիվ, որ դուրս եկար կորած ոչխարը փնտրելու, որ Քո անձը դրիր Քո խաշների վրա, սրան ևս փրկիր թերահավատությունից, որով բռնված է, որպեսզի թշնամին սրան չհափշտակի, և այս Քո ստեղծածը, որ Քո կերպարանքի նմանությունն է կրում, հավիտենական կորստի չմատնվի»:

Այս աղոթքն արեց քահանան պատարագը մատուցելուց առաջ, հետո սկսեց պատարագը և ամբողջ պատարագամատույցը վերջացրեց: Երբ նա ասաց. «Հայր մեր, որ յերկինս ես», ծածուկ ծունկի եկավ և երկար աղոթք արեց: Եվ մինչ նա ծունկի եկած աղոթք էր անում, թերահավատ եղբայրը ոտքի կանգնած, ներքևից՝ բեմից նայում էր դեպի սեղանը և բաց աչքերով մեծամեծ հրաշքներ սկսեց տեսնել: Նա տեսնում էր Քրիստոսին, որ իջել էր սեղանի վրա, բացել էր կողքի վերքը, որ գեղարդով խոցելուց էր գոյացել, և կողքի վերքից արյունը կաթկթելով հոսում էր պատարագի սկիհի մեջ, որ դրված էր սեղանի վրա: Թերահավատ կրոնավոր եղբայրը այս որ տեսավ, զարհուրեց ու դողաց. հուզված, շփոթված գետին կործանվեց, բերանը կարկամած, ուժասպառ, շնչասպառ ուշաթափ եղավ:

Իսկ քահանան վեր կենալով, Սուրբ պատարագի խորհուրդը վերջացրեց, և երբ սուրբ օրենքը բեմից իջեցնում էր, տեսավ այն եղբորը, որ ուշաթափ ընկած էր գետնին: Ջուր բերեց, բերանին սրսկեց. երբ նա վերջապես շունչ քաշեց և ուշքի եկավ, վեր կացավ ու պատմեց իր տեսած հրաշքները: Ապա քահանան կամեցավ սուրբ օրենքով նրան ճաշակել տալ, բայց նա հանձն չառավ, չհամաձայնվեց, որովհետև իրեն անարժան էր համարում: Այլ նա իր համար մի հոր փորեց և մեջը մտնելով յոթը տարի ապաշխարեց իր թերահավատության մեղքը, և յոթ տարուց հետո համարեց, որ իր ապաշխարությունն արժանացել է թողության, դուրս եկավ ուրիշների հետ միասին հաղորդվելու: Բայց էլի նույն հորն էր իջնում բոլոր իր կյանքի օրերում և նույն հորումն էլ այդ եղբայրը վախճանվեց: Ապա քահանան էլ վախճանվեց, և երկուսը միասին այն վկայարանի ներսում դրվեցին, Եպիփանի եղբայրանոցում որտեղ այս հրաշքը երևաց (Փավստոս Բուզանդ):

Աղոթք

Ով բարերար և մարդասեր Տեր, առանց չարչարանքների և ժուժկալության ինչպե՞ս ազատվեմ իմ մեղքերի բազմությունից, քանզի մարմնավս տկար եմ և հոգով՝ խավար. ողորմի՛ր, Տե՛ր, և, ինչպես կամենում ես, օգնի՛ր ինձ:

Հաստատի՛ր, Տե՛ր, իմ սասանված անձը, որ լի է մեղքերով և անթիվ հանցանքներով և այրված ու տրոհված բոլոր անդամներովս՝ ոտքից մինչև գլուխ ապականված, և չկա բժշկության հնար Քեզա-

նից բացի, Տե՛ր իմ Հիսուս, խոնարհվի՛ր դեպի կախարդությամբ վիրավորվածս և մի՛ գարշիր չարահոտ ախտացածիցս:

Պատկերի՛ր, Տե՛ր, Քո անխուսափելի Գալուստն իմ աչքերի առաջ և դողացրու՛ իմ մարմինը՝ անդադար լալու և սգալու Քո Ահեղ Դատաստանի երկյուղից և մի՛ փակիր Քո արարչական սիրո գութը Քո ստեղծվածիցս, որ մեռած եմ մեղքերով:

Կանգնեցրո՛ւ ինձ գլորումից, Տե՛ր, և բազմամեղ անդնդային խորությունից Սուրբ Հոգուդ թևերով վե՛ր հանիր և բարձրացրո՛ւ վայելուչ աղոթքների, մտքի նորոգության և լուսավորության, մեղքերի բնաջնջման և Քո սուրբ պատվիրանների կատարման:

Խաղաղություն շնորհիր, Տե՛ր, Քո սուրբ Եկեղեցուն և բոլոր հավատացյալներին՝ թագավորներին և իշխաններին, զորքերին և զորավարներին պատերազմների ճակատում՝ հաղթել անօրեն բռնավորներին:

Ողորմի՛ր, Տե՛ր, Եկեղեցու առաջնորդներին, հայրապետներին և վարդապետներին, երեցներին, սարկավագներին, դպիրներին և Եկեղեցու ուխտի բոլոր մանուկներին՝ ամեն ժամ կատարելու իրավունք և արդարություն, հովվելու Քո ժողովուրդը, տքնելու նրանց հոգիների համար՝ ասելով. «Ահավասիկ ես՝ և իմ մանուկները, որ տվեցիր ինձ»:

Աղաչում եմ, Տե՛ր Հիսուս, և ընկնում Քո սուրբ Խաչի առաջ. սրա բարեխոսությամբ ընդունի՛ր աղաչանքներս, կատարի՛ր խնդրվածքներս և սրա զորությամբ զորացրու ինձ կոչմանս մեջ, որի համար կանչվեցի և Քո պատվիրաններում, որոնք սովորեցի: Տու՛ր ինձ, Տե՛ր, սա որպես զորություն և ժուժկալություն, որպես զգաստություն և առողջություն՝ պահապան լինելու իմ անձին օր ու գիշեր և բոլոր ժամերին՝ ննջելիս և վեր կենալիս, գնալիս և կանգ առնելիս, գործերում և վաստակներում, աղոթքում և պահքում, և տու՛ր Քո կամքի համար հաճելին կատարել: Սա թող ամուր բերդ լինի ինձ և հզոր աշտարակ՝ թշնամու առաջ, զարդարի՛ր ինձ սրանով՝ հոգեղենների զարդով և անիմանալի լույսով: Եվ Գաբրիելի ահեղ բարբառի օրը՝ սուրբ խաչիդ երևալիս, լուսավորի՛ր խավարած հոգիս՝ լույսով բարձրանալու անմահ Փեսայիդ ընդառաջ, խառնվելու հայրապետների երամներին, մարտիրոսների դասերին և հրեշտակների գնդերին, որպեսզի նրանց հետ փառաբանեմ Ամենագութ Մարդասիրությունդ: Եվ փառք Քեզ՝ Արարողիդ և ինձ բարիքներ պարգևողիդ հավիտյանս հավիտենից: Ամեն (Եփրեմ Ասորի):

ՆԱՐԵԿ

Քանի որ, ահա, սակավամասնյա
Կտակամատյանն այս ...
Իր վախճանին է մոտեցել արդեն,
Այնպե՛ս արա, Տե՜ր, որ ինքնանախատ
Ու կշտամբական այս խոսքերի հետ
Դադարեն ընդմիշտ և չար ու հոռի սովորություններն իմ:
Կամքովդ թող, Տեր, սա մնա անեղծ,
Պատժապարտիս դեմ բարձրացած որպես
Անաչառ դատող, անդուլ կշտամբիչ,
Անպատկառ բասրիչ, անխիղճ նախատող,
Անգութ պարսավող, անհաշտ ծանակիչ,
Անողոք մատնիչ, անողորմ տանջող,
Անկաշառ դահիճ, անխնա հայտնիչ,
Անզգամ ու բիրտ հրապարակող
Եվ ամբաստանող մի աշխարհալուր.
Բարձրագոչ փողով անլուռ, անդադար ազդարարելով՝
Թող որ հանցանքներն իմ խոստովանի:
Այս գիրքն իմ ձայնով անձիս փոխարեն
Իբրև ես՝ պիտի միշտ աղաղակի,
Տարածի այն, ինչ ծածկված է եղել,
Ինչ որ գաղտնի էր, պիտի հռչակի,
Կատարածներս կականի ողբով,
Մոռացվածները բերի ասպարեզ,
Ինչ որ եղել է անտեսանելի ու աներևույթ,
Մերկացնելով՝ դուրս հանի հանդես,
Բարուրանքներս պիտի տարփողի,
Հրապարակի՝ ինչ որ թաղված է եղել խորքերում,
Մեղքերս պատմի, թաքնվածները
Ցուցադրի բուն կերպարանքներով:
Սրանով պիտի խայծերն ի հայտ գան,
Որոգայթներն ու կարթերը բացվեն,
Երևան հանվեն անպատումները,

Չարիքների ողջ մնացորդները լիովին քամվեն:

Եվ իմ ցամաքած, գոս ոսկորների գանձապահեստում
Թող թագավորի Քո շնորհների
Ու ողորմության շունչը, Քրիստո՜ս,
Որ կենդանանար գարնանամուտի սկզբնալույսին՝
Կենսանորոգման այն օրը պայծառ՝
Անմահ փրկության Քո ցավով աճած
Ու բարունակած հոգևոր բարյաց ընձյուղները պերճ՝
Անթառամելի վերամբարձությամբ
Դալարեմ դարձյալ ու ծաղկեմ կրկին,
Համաձայն շնչով Քո՝ գրված գրքի հուսադրության:
Եվ Քեզ՝ Փրկողիդ միակ և Հոգուդ, Հորդ փառակից,
Միասնական Քո տերության՝ անճառ Սուրբ Երրորդության,
Գովեստով փա՛ռք ու երկրպագությո՜ւն հավիտյանս. ամեն:

Սբ. Գրիգոր Նարեկացի

ՎԵՐՋԱԲԱՆ

«Պիտի օրհնեմ Տիրոջը, որ ինձ խրատեց» (Սաղմոս 16:7):

Այս վերջին ութերորդ հատորով ահա ավարտեցինք «Խրատանի Ապաշխարության» մատենաշարը:

«Մենք անպիտան ծառաներ ենք, քանզի ինչ որ պարտական էինք անելու, այն արեցինք» (Ղուկ. 17:10):

Հուսով ենք, որ Տիրոջ ողորմությամբ շատերն իրենց հարցերի պատասխանը գտան այս մատենաշարի էջերում: Եվ քանզի մեծ փորձառություն չունեինք նման հոգևոր ձեռնարկ լույս տեսցնելու գործում, ուստի և հայցում ենք ձեր ներողամտությունը՝ տեղ գտած թերությունների համար:

«Թեպետ և իրոք առավել եղկելի ենք, քան ամեն ոք, այսուհանդերձ, որքան որ կարողություն ունենք, պարտավոր ենք խոսքի արծաթը տալ սեղանավորներին, որպեսզի չդատվենք որպես քանքար թաքցնողներ, քանզի ժամը մերձեցել է, և Դատաստանը Տիրոջ տանից է սկսվելու» (Խոսրով Անձևացի):

Հուսով ենք, եթե Տիրոջ կամքը լինի, ձեր՝ ընթերցողներիդ աղոթքով մի նոր մատենաշար լույս կտեսնի, որի ամեն մի հատորը կծանոթացնի սուրբ հայրերից մեկի կենսագրությանը և աշխատություններին, և մի այլ մատենաշար էլ, որ կներկայացնի մեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը և սրբերի վարքը՝ ծաղկաքաղ արված տարբեր դարաշրջանների պատմիչն:

Եվ այսպես, Աստծո ողորմությամբ, վերջացնելով այս մատենաշարը, նորից խնդրում ենք ձեզ՝ ընթերցողներիդ, որպեսզի ձեր աղոթքներում հիշեք այս մատենաշարի պատրաստմանը թե մտավոր, թե հոգևոր և թե նյութական աջակցություն ցուցաբերողներին, դրանով իսկ դուք էլ կարող եք համարել, որ ձեր լուման եք ներդրել այս հոգեշահ ձեռնարկի լույս տեսնելու համար կատարված ջանքերին:

«Սուրբ Գրքի գրվածքները, սրբերի կանոնական հրամանները, խրատները ու խորհուրդները ծաղկաքաղ անելով, մեկտեղ հավաքեցինք, նման բուրաստանից քաղված ծաղիկի՝ որպես դեղ, ցավով լի այս կյանքի համար, ցորենի հատիկի նման ձեր սրտերի մեջ սերմանելու՝ բազմապատիկ պտուղներով արդյունավորելու համար: Սա թող լինի զորավոր գավազան ձեր ձեռքի մեջ՝ գտնելու անցման հունը մեղքի հորձանահոս գետերի փորձանքների միջից, կամ որպես կյանքի երազական քնից արթնացնելու սթափեցնող խթան. «Ով իմաստուն է, կհասկանա այս բաները, ով հանճարեղ է, կիմանա սրանք, քանի որ ուղիղ են Տիրոջ ճանապարհները. արդարները դրանցով կանցնեն, իսկ ամբարիշտները կսայթաքեն դրանց մեջ» (Օսէ 14:10):

Հետևաբար, աղաչում եմ, որ հեռանաք չարից և ընտրեք բարին, համեմիչ աղ լինեք և լուսավորիչ լույս: Որպեսզի լինեք սուրբերի ցնծության արժանի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով և մարդասիրությամբ. Ամեն»: (Հովհաննես Երզնկացի): Տա Աստված որ շատերիս համար այս մատենաշարը պատճառ դառնա, որպեսզի ձերբազատվելով բազում հոգևոր արատներից, արժանանանք քրիստոնավայել կենցաղավարությամբ, ըստ սուրբ հայրերի խրատների, փառավորել ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, Որին վայել է փառք, պատիվ և իշխանություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

«Յիշեսցէք զաշխատասիրողս բարի աղօթիւք ի Տէր, և Աստուած զձեզ զյիշեցողդ և զյիշեցեալքս յիշէ. Ամեն»: